

Հավելված  
ՀՀ կառավարության 2010 թվականի  
հունվարի 29-ի N 71-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆԴԱՍԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳԻՐՋ**

Երևան  
2009թ.

## Բացատրագիր

### Կենդանատեսակների գնահատման համար օգտագործված կատեգորիաների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կենդանիների տեսակների առկա վիճակը գնահատվել է համաձայն Բնության Պահպանության Միջազգային Միության կողմից մշակված սանդղակի («Կարմիր ցուցակի կատեգորիաներ և չափորոշիչներ» IUCN, 2001, տարբերակ 3.1), որին համապատասխան տեսակները գնահատվել են ըստ անհրաժեշտ չափանիշների՝ դրանց թվաքանակի, աշխարհագրական տարածվածության, որակական մի շարք ցուցանիշների, բազմացման առանձնահատկությունների և այլն: Դրա հիման վրա տեսակներին տրվել են հետևյալ կատեգորիաները:

1. Անհետացած տեսակ (EX): Տարսոնը համարվում է անհետացած, եթե չկա որևէ կասկած, որ դրա վերջին առանձնյակը վերացել է: Տարսոնը գնահատվում է անհետացած, եթե հայտնի և/կամ ենթադրվող բնակմիջավայրի ողջ պատճական արեալում տարբեր ժամանակահատվածների ընթացքում /սեզոնային, տարեկան, օրական/ հետևողական ուսումնասիրության արդյունքում ոչ մի առանձնյակ չի հայտնաբերվել:

2. Տարածաշրջանում անհետացած տեսակ /RE/: Տարսոնը համարվում է տարածաշրջանում անհետացած, եթե չկա որևէ կասկած, որ դրա վերջին առանձնյակը այդ տարածքից վերացել է: Այն դեպքում, եթե տարսոնը նախկինում պարբերաբար ներթափանցում էր տարածաշրջան, այն նույնականացնելու համարվում է անհետացած, եթե տարածաշրջանի վայրի բնությունից վերացել է դրա վերջին առանձնյակը:

3. Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR): Տարսոնը համարվում է «Կրիտիկական վիճակում գտնվող», եթե ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Կրիտիկական վիճակում գտնվող» կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման չափազանց բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

4. Վտանգված տեսակ (EN): Տարսոնը համարվում է «Վտանգված տեսակ», եթե ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Վտանգված տեսակ» կատեգորիայի որևէ չափանիշով (A-E ) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման չափազանց բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

5. Խոցելի տեսակ (VU): Տարսոնը համարվում է «Խոցելի տեսակ», եթե ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է «Խոցելի տեսակ» կատեգորիայի որևէ չափանիշով (A-E ) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

6. Տվյալների անբավարարություն (DD): Տարսոնը պատկանում է «Տվյալների անբավարարություն» կատեգորիային, եթե առկա տեղեկությունները դրա թվաքանակի և/կամ արեալի մասին անհամապատասխան են անհետացման ռիսկի ուղղակի կամ անուղղակի գնահատման համար: Այդ կատեգորիայի տարսոնը կարող է լինել լավ ուսումնասիրված, իսկ կենսաբանությունը՝ լավ հայտնի, սակայն դրա առատության և/կամ տարածման վերաբերյալ համապատասխան տվյալները գնահատման համար կարող է լինեն անբավարար: «Տվյալների անբավարարություն» կատեգորիան չի հանդիսանում անհետացման ապառնալիքի կատեգորիա: Տարսոնի ընդգրկումը այդ կատեգորիայում ցույց է տալիս, որ պահանջվում են ավելի շատ տեղեկություններ, և ընդունվում է, որ ապագա ուսումնասիրությունները կարող են հնարավոր դարձնել նրա պատկանելիությունը անհետացման սպառնալիքի որևէ կատեգորիայում ընդգրկելու համար:

**ԲԱԺԻՆ I**  
**ԱՆՈՂՆԱԾԱՐ ԿԵՆԴԱՎԱՀՆԵՐ**

## ՀՀ Կարմիր գրքի անողնաշարավոր կենդանիների ցանկ

### Տիպ Փափկամարմններ - Mollusca

#### Դաս Փորոտանիներ - Gastropoda

##### Կարգ Ակավառակառուանիներ - Discopoda

###### Ընտանիք Բիթինիդներ - Bithyniidae

1. Տրոշելի խխունջ - *Bithynia troscheli* Paasch, 1842 – CR B2a.

###### Ընտանիք Լիթոգլիփիդներ - Lithoglyphidae

2. Ակրամնվակուու շաղինիս - *Shadinia akramovskii* (Shadin, 1952) – CR B2a.

##### Կարգ Նստաչքավորներ - Basommatophora

###### Ընտանիք Աքրոլորսիդներ - Acroloxidae

3. Լճային խխունջ - *Acroloxus lacustris* (Linnaeus, 1758) - RE.

###### Ընտանիք Տափակակընդներ - Planorbidae

4. Կատարավոր խխունջ - *Planorbis carinatus* (O.F. Muller, 1774) – CR B1a+ B2a.

5. Սպիտակաբերան խխունջ - *Anisus leucostomus* (Millet, 1813) - RE.

6. Սպիտակ խխունջ - *Gyraulus albus* (O.F. Muller, 1774) - EN B 1a+B2a.

7. Հարթ խխունջ - *Gyraulus laevis* (Alder, 1838) - EN B1a+B2a.

8. Կանոնավոր խխունջ - *Gyraulus regularis* (Hartmann, 1841) – CR B2a.

##### Կարգ Ցողունաչքավորներ - Stylommatophora

###### Ընտանիք Նեղ խխունջներ - Vertiginidae

9. Սյունաձև խխունջ - *Columella columella* (Martens, 1853) – CR B2a.

10. Նեղ խխունջ - *Vertigo angustior* Jeffreys, 1830 – CR B1a+ B2a; IUCN (ver 2.3) – LR/CD; Annex II

###### Ընտանիք Օրկուլիդներ - Orculidae

11. Խճարարային խխունջ - *Orculella ruderalis* Akramowski, 1947 – CR B1a+B2a.

12. Բուլղարական խխունջ - *Orculella bulgarica* (P.Hesse, 1915) – CR B1a+ B2a.

###### Ընտանիք Էնիդներ - Enidae

13. Սանդղաձև խխունջ - *Turanena scalaris* (Naegele, 1902) – CR B2a. -

###### Ընտանիք Կլասիլիդներ - Clausiliidae

14. Ակրամնվակուու խխունջ - *Euxina akramowskii* (Likharev, 1962) – CR B1a+ B2a.

##### Դաս Երկինքներ - Bivalvia

#### Կարգ Աստարափիդներ - Astartida

###### Ընտանիք Պիզիդիդներ - Pisidiidae

15. Սեղմված խխունջ - *Musculium strictum* (Normand, 1844) – CR B2a.

16. Անանդղաձև խխունջ - *Odhneripisidium annandalei* (Prashad, 1925) – CR B2a.

### Տիպ Հողվածոտանիներ - Arthropoda

#### Դաս Միջատներ - Insecta

##### Կարգ Շնորհականներ - Odonata

###### Ընտանիք Լեստիդներ - Lestidae

17. Մեծաչք ճպուու - *Lestes macrostigma* (Eversmann, 1836) – VU B 1b+B 2b

18. Սիմպեկմա ճպուու - *Sympetrum paedisca* (Brauer, 1877) – VU B 1b+B 2b

###### Ընտանիք Նետիկներ - Coenagrionidae

19. Նետիկ զինված - *Coenagrion armatum* (Charpentier, 1840) – CR B 1a + B 2a.

20. Նետիկ նրբագեղ - *Coenagrion scitulum* (Rambur, 1842) – EN B2a.

21. Վան Բրինկի նետիկ - *Coenagrion vanbrinkae* Lohmann, 1993 – VU B 1b+B 2b.IUCN (ver.3.1) - DD

22. Լինդենի նետիկ - *Erythromma lindenii* (Selys, 1840) – CR B2a; KK CCCP

###### Ընտանիք Պլատիքնեմիդներ - Platycmenidae

23. Չպուու տափակառու - *Platycnemis pennipes* (Pallas, 1771) – EN B 1a + 2a.

###### Ընտանիք Շերտփազիդներ - Aeshnidae

24. Կապուտ ճպուռ - *Aeshna cyanea* (Mueller 1764) – EN B2a
25. Սղոցակիր ճպուռ - *Aeshna serrata* Hagen, 1856 – EN B2a.
26. Թամբակիր ճպուռ - *Hemianax ephippiger* (Burmeister, 1839) – EN B 1ab(iii)+B2ab(iii)

#### **Ընտանիք Գոմֆիդներ - Gomphidae**

27. Ուրաղչի ճպուռ - *Gomphus ubadschii* Schmidt, 1953 – VU B 1b+B 2b
28. Նմանաձև ճպուռ - *Onychogomphus assimilis fulvipennis* (Schneider, 1845) – VU B 1b+B 2b; IUCN (ver 3.1) VU A2ac+3c KK CCCP

#### **Ընտանիք Իսկական ճպուտներ - Libellulidae**

29. Շահճային ճպուռ - *Leucorrhinia pectoralis* (Charpentier, 1825) – CR B1a+ B2a ; Annex II
30. Ալծովյան ճպուռ - *Libellula pontica* Selys, 1887 – EN B B2ab(iii); IUCN (ver 3.1) NT; KK CCCP
31. Սարինա ճպուռ - *Orthetrum sabina* (Drury, 1773) – EN B2a
32. Տափակ ճպուռ - *Sympetrum depressiusculum* (Selys, 1841) – EN B 1a+ B2a
33. Ճպուռ-ծառա - *Crocothemis servilia* (Drury, 1773) – EN B 1a+B 2a

#### **Կարգ Ուղղաքներ - Orthoptera**

#### **Ընտանիք Սորեխներ - Acrididae**

34. Սորեխի ելունդավոր - *Nocarodes nodosus* Mistschenko, 1951 – CR B2a
35. Սորեխի հայկական - *Gomphocerus armeniacus* (Uvarov, 1931) – VU B 1a +B 2a.

#### **Ընտանիք Հաստածղիդներ - Bradyporidae**

36. Հաստածղիդ լայնազած - *Bradyporus dilatatus* Stål, 1875 – EN B 1a+B2a.

#### **Ընտանիք Ծղրիդներ – Tettigoniidae**

37. Սղոցապոչ անդրկովկասյան - *Poecilimon geoktshaicus* Stshelkovnikov, 1910 – EN B 1a+B2a.
38. Սղոցապոչ հայկական – *Poecilimonella armeniaca* Uvarov, 1921 – EN B 1a+B2a.
39. Ֆիտոնդրիմաղուզա հայկական – *Phytodrymadusa armeniaca* Ramme, 1939 – EN B 1a+B2a.
40. Սատունինի սկոտոնդրիմաղուզ – *Scotodrymadusa satunini* Uvarov, 1916 – CR B 1ab(iii)+ 2ab(iii).
41. Ոյնզելի երկգույն ծղրիդ - *Bicolorana roeseli* Hagenbach, 1822 – CR B1a.
42. Սազա տափաստանային – *Saga pedo* Pallas, 1771 – CR B1a+B2a; IUCN (ver 2.3.) VU B1+2bd; Annex II.

#### **Կարգ Հավասարաքներ - Homoptera**

#### **Ընտանիք Հակա որդաններ - Margarodidae**

43. Արարատյան որդան կարմիր - *Porphyrophora hammelii* Brandt, 1833 – CR B1b(i,ii,iii) + 2ab(i,ii,iii); KK CCCP

#### **Կարգ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera**

#### **Ընտանիք Գնայուկ բզեզներ - Carabidae**

44. Ֆալտիի կողմջակեր ցայտազնայուկ - *Procerus scabrosus fallettianus* Cavazzutti, 1997 -VU B 1ab(iii)+B 2ab(iii)
45. Աւանյան գնայուկ - *Dyschirius sevanensis* Khnzorian, 1962 – EN B 1a+B2a
46. Դարչնագույն առվակային գնայուկ - *Trechus infuscatus* Chaudoir, 1850 – CR B2a
47. Ստեփանավանյան առվակային գնայուկ - *Duvalius stepanavanensis* Khnzorian, 1963 – CR B2a
48. Յացենկո-Խմելեվսկու առվակային գնայուկ - *Duvalius yatsenkokhmelevskii* (Khnzorian, 1960) – CR B2a
49. Խնձորյանի գնայուկ - *Deltomerus khnzoriani* Kurnakov, 1960 – CR B2a
50. Ալեքսանդրի գնայուկ - *Chylotomus alexandri* Kalashian, 1999 – CR B2a
51. Տոնական գնայուկ - *Poecilus festivus* (Chaudoir, 1868) – VU B 1b(iii)+B 2b(iii).

52. Արենիական գնայուկ - *Pristonychus arenicus* Kalashian, 1979 – CR B2a

#### Ընտանիք Խողեվիդներ - Cholevidae

53. Քալաշյանի մրջնասեր բղեղ - *Philomessor kalashiani* Khnzorian, 1988 – CR B1a+ B2a

#### Ընտանիք Թերթիկարելավորներ - Scarabaeidae

54. Հայկական բնդեռիկ - *Glaphyrus calvaster* Zaitzev, 1923 – EX

55. Կովկասյան բնդեռիկ - *Glaphyrus caucasicus* Kraatz, 1887 – EN B 1ab(iii)+B2ab(iii)

56. Ռուբենյանի բնդեռիկ - *Adoretus rubenyani* Kalashian, 2002 – CR B1a+ B2a

57. Ռեյթերի հացարզեղ - *Anisoplia reitteriana* Semenov, 1903 – EN B 1ab(iii)+B2ab(iii)

58. Կովկասյան փառավոն - *Pharaonus caucasicus* (Reitter, 1893) – CR (B1ab(ii, iii, v), B2ab (ii, iii, v)

59. Արարյան բնդեղ - *Tanyproctus araxidis* Reitter, 1901 – EN B 1a+B2a

60. Վելիական բնդեղ - *Tanyproctus vedicus* Kalashian, 1999 – CR B1a+ B2a

61. Մեղմեղի բնդեռիկ - *Pseudopachydemus medvedevi* Khnzorian, 1971 – CR B1a+ B2a

#### Ընտանիք Չրիսկաններ - Elateridae

62. Զարդավոր չրիսկան - *Aeoloides figuratus* (Germar, 1844) – CR B2a

63. Սևազրի չրիսկան - *Drasterius atricapillus* (Germar, 1824) – CR B2a

64. Սամրաբեղ չրիսկան - *Ctenicera pectinicornis* (Linnaeus, 1758) – VU B 1b

65. Արարյան չրիսկան - *Cardiophorus araxicola* Khnzorian, 1970 – CR (B1ab(ii, iii, v), B2ab (ii, iii, v)

66. Կեղծ խոտային չրիսկան - *Cardiophorus pseudogramineus* Mardjanian, 1977 – EN B1a

67. Սոմխետական չրիսկան - *Cardiophorus somcheticus* Schwarz, 1896 – CR B1+ B2a

68. Փոքր չրիսկան - *Craspedostethus permodicus* (Faldermann, 1835) – VU B 1b(iii)+B 2b(iii)

#### Ընտանիք Ուկերզեղներ - Buprestidae

69. Մորդիավոր ուկերզեղ - *Acmaeoderella pellitula* (Reitter, 1890) – EN B 1a+B 2a

70. Կարճամարմին ուկերզեղ - *Anthaxia breviformis* Kalashian, 1988 – CR B1a+B2a

71. Հպարտ ուկերզեղ - *Anthaxia superba* Abeille de Perrin, 1900 – CR B1a

72. Աղարարյանի ուկերզեղ - *Sphaerobothris aghababiani* Volkovitsh & Kalashian, 1998 – CR Ba +B2a

73. Գեղարդյան ուկերզեղ - *Sphenoptera geghardica* Kalashian & Zykov, 1994 – EN B 1ab(iii)

74. Խմանորյանի ուկերզեղ - *Sphenoptera khnzoriana* Kalashian, 1996 – CR B2a

#### Ընտանիք Թարախահաններ – Meloidae

75. Թամբակուրծք թարախահան - *Mylabris sedilithorax* Sumakov, 1924 – EN B 1a

#### Ընտանիք Ծաղկեփոշեկերներ – Alleculidae

76. Նմանաձև ծաղկեփոշեկեր - *Cteniopus persimilis* Reitter, 1890 – CR B1a

77. Հայկական ծաղկեփոշեկեր - *Isomira armena* Khnzorian, 1976 – EN B1a

#### Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae

78. Օրդուրադյան սևամարմին - *Adelphinus ordubadensis* Reitter 1890 –EN B1a

79. Հայկական սևամարմին - *Armenohelops armeniacus* Nabozhenko, 2002 – EN B1a

80. Երևանյան սևամարմին - *Cylindronotus erivanus* (Reitter, 1901) – EN B1a

81. Բողաշկի սևամարմին - *Ectromopsis bogatchevi* (Khnzoryan, 1957) – CR B2a b(iii)

82. Սևամարմին աքսորված - *Entomogonus amandanus* Reitter, 1901

83. Նեղ սևամարմին - *Laena constricta* Khnzorian, 1957 – EN B 1ab(iii)+B2ab(iii)

84. Մեմյոնվի սևամարմին *Cyphostethus semenovi* Reitter, 1895 – EN B 1ab(iii)+B2ab(iii)

#### Ընտանիք Երկարաբեղիներ - Cerambycidae

85. Կապանյան երկարաբեղիկ - *Cortodera kaphanica* Danilevsky, 1985 – EN B 1a

86. Կաղնու մեծ երկարաբեղիկ - *Cerambyx cerdo acuminatus* Motschulsky, 1852 – VU B 1a+B 2a; IUCN (ver 2.3) VU A1c+2c; Annex II; KK CCCP (*C. c. cerdo* Linnaeus, 1758)

87. Ալպյան ոռուալիս - *Rosalia alpina* (Linnaeus, 1758) – EN B 1a+B2a; IUCN (ver 2.3) VU A1c+2c; Annex II; KK CCCP

88. Աղարարյանի երկարաբեղիկ - *Asias aghababiani* Danilevsky, 1999 – CR Ba +B2a

89. Կազիկոպրանյան երկարաբեղիկ - Dorcadion kasikoporanum Pic, 1902 – CR B1a
90. Երկգիծ երկարաբեղիկ - Dorcadion bistriatum Pic, 1898 – EN B 1a+B2a
91. Գորբունվի երկարաբեղիկ - Dorcadion gorbunovi Danilevsky, 1985 – EN B 1a
92. Կիսափայլ երկարաբեղիկ - Dorcadion semilucens Kraatz, 1873 – EN B 1a+B2a
93. Սոխարազույն երկարաբեղիկ - Dorcadion cineriferum Suvorov, 1909 – EN B 1a+B2a
94. Ալզյան երկարաբեղիկ - Dorcadion sevliczi Danilevsky, 1985 – CR B1a
95. Քալաշյանի երկարաբեղիկ - Conizonia kalashiani Danilevsky, 1992 – CR B1a
96. Պիկի երկարաբեղիկ - Phytoecia pici Reitter, 1892 – EN B 1a
97. Կոռոստելյովի երկարաբեղիկ - Agapanthia korostelevi Danilevsky, 1985 – EN B 1a+B2a

#### **Ընտանիք Տերևակերներ - Chrysomelidae**

98. Արարյան տերևակեր - Cryptocephalus araxicola Khnzorian, 1968 – EN B 1ab(iii)

#### **Ընտանիք Փղիկներ կամ Երկարակնճիրներ - Curculionidae**

99. Ոխտերի փղիկ - Cyclobaris richteri Ter-Minasian, 1955 – CR B 1ab(iii)+B2ab(iii)
100. Զարմանահրաշ փղիկ - Baris mirifica Khnzorian, 1958 – CR B 1ab(iii)+B2ab(iii)

#### **Կարգ Թեփուկաքներ կամ Թժիթեռներ - Lepidoptera**

##### **Ընտանիք Սուպաստարիթեռներ - Papilionidae**

101. Մնեմոնինա կամ սև ապոլոն - Parnassius mnemosyne jabovi Sheljuzhko, 1935 – VU B 1a. AnnexII
102. Ապոլոն - Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko, 1908 – VU B 1a; IUCN (ver 2.3, VU A1cde); Annex II
103. Ալեքսանոր արագաստարիթեռ - Papilio alexanor orientalis Romanoff, 1884 – VU B 1ab(iii)+B 2ab(iii); AnnexII

##### **Ընտանիք Ճերմակարիթեռներ - Pieridae**

104. Բողովենի ճերմակարիթեռ - Artogeia bowdeni (Eitschberger, [1984]) – EN B1a+B2ab(iii)
105. Ավորինա դեղնարիթեռ - Colias aurorina Herrich-Schaffer, [1850] – VU B 1b(iii)+B 2b(iii)
106. Կանաչավուն դեղնարիթեռ - Colias chlorocoma Christoph, 1888 – VU B 1ab(iii)+B 2ab(iii)

##### **Ընտանիք Սատիրներ - Satyridae**

107. Աֆրիկական փրոբերեիս - Proterebia afra hyrcana (Staudinger, 1901). VU B 1a+B2a

##### **Ընտանիք Նիմֆալիդներ - Nymphalidae**

108. Բրենթի Ին - Brenthis ino schmitzi Wagener, 1983 – VU B 1a+B2a
109. Վեղիական մելիթես Melitaea vedica Nekrutenko, 1975 – EN B 1a+B2a

##### **Ընտանիք Կապտարիթեռներ - Lycaenidae**

110. Տարազոյգ կապտարիթեռ - Thersamonolycaena dispar rutila (Werneburg, 1864) – CR B1a+B2a
111. Ռոմանովի թռմարես - Tomares romanovi (Christoph, 1882) – VU B 1ab(iii)+B 2ab(iii)
112. Ալկոն կապտարիթեռ - Maculinea alcon monticola (Staudinger, 1901) – VU B 1a+B2a
113. Արիոն կապտարիթեռ - Maculinea arion zara Jachontov, 1935 VU B 1a+B2a; IUCN (ver 2.3, LR/NT), AnnexII
114. Արմաղաղին կապտարիթեռ - Maculinea nausithous (Bergstrasser, [1779]) – VU B 1a+B2a ; IUCN (ver 2.3, LR/NT); AnnexII
115. Անդրկովկասյան կապտարիթեռ - Plebejus transcaucasicus (Rebel, 1901) – EN B1a+B2ab(iii)
116. Դիանա կապտարիթեռ - Neolysandra diana (Miller, 1923) – EN B1a+B2a

117. Դամոնիդես կապտաքիթեն - *Agrodiaetus damonides* (Staudinger, 1899) – CR  
B1ab(i,ii,iii)+B 2b (i,ii,iii)
118. Երևանայան կապտաքիթեն - *Agrodiaetus eriwanensis* Forster, 1960 – EN  
B1a+B2a
119. Հովերտի կապտաքիթեն - *Agrodiaetus huberti* Carbonell, 1993 – EN B1a+B2a
120. Իփիգենիա կապտաքիթեն - *Agrodiaetus iphigenia araratensis* De Lesse, 1957 – EN B1a+B2a
121. Անտեսված կապտաքիթեն - *Agrodiaetus neglectus* Dantchenko, 2000 – EN  
B1a+B2a
122. Նինայի կապտաքիթեն - *Agrodiaetus ninae* Forster, 1956 – EN B2a
123. Սուռակովի կապտաքիթեն - *Agrodiaetus surakovi* Dantchenko et Lukhtanov,  
1994 – EN B1a+B2a
124. Թուրլական կապտաքիթեն - *Agrodiaetus turcicus* Koçak, 1977 – EN B2a

#### **Ընտանիք Խիլկարքիթեններ - Sphingidae**

125. Կապուկի խիլկարքիթեն - *Hyles hippophaes caucasica* (Denso, 1913) – VU B  
1a+B2a; IUCN (ver 2.3, DD); AnnexII
126. Պրոռետրայնա խիլկարքիթեն - *Proserpinus proserpina* (Pallas, 1772) – VU B  
1a+B2a; IUCN (ver 2.3, DD); AnnexII.

#### **Ընտանիք Երկրաչափ թիթեններ - Geometridae**

127. Ավետյանի երկրաչափ թիթեն - *Cidaria avetianae* Wardikian, 1974 – EN B  
1a+B2a
128. Ալեքսանդրի երկրաչափ թիթեն - *Eupithecia alexandriana* Wardikian, 1972 – EN  
B 1a+B2a
129. Սերգեյի երկրաչափ թիթեն - *Eupithecia sergiana* Wardikian, 1972 – CR B2a
130. Համլետի երկրաչափ թիթեն - *Eupithecia hamleti* Wardikian, 1985 – CR B2a
131. Կուզնեցովի երկրաչափ թիթեն - *Ortholitha kuznetzovi* Wardikian, 1957 – EN B  
1a+B2a

#### **Ընտանիք Արջարքիթեններ – Arctiidae**

132. Կարելինի մոայլ արջարքիթեն - *Axiopoena karelini* Ménétrier, 1842 – VU B  
1a+B 2a

#### **Կարգ Թաղանթաքեներ - Hymenoptera**

##### **Ընտանիք Մեղախիլիդներ - Megachilidae**

133. Մեղու - *Lithurge fuscipenne* Lepeletier, 1841 – VU B 1a+B 2a
134. Մեղու Դեսեպտորիա - *Megachile despectoris* Peres, 1884 – VU B 1a+B 2a
135. Մոնախոտի մեղու - *Osmia cerinthoides* F. Morawitz, 1876 – VU B 1a+B 2a
136. Մազու մեղու - *Archianthidium pubescens* Morawitz, 1872 – CR B2a

##### **Ընտանիք Անթոփորիդներ - Anthophoridae**

137. Մոխրագույն մեղու - *Anthophora cinerea* Friese, 1919 – VU B 1a+B 2a
138. Ամրակազմ մեղու - *Anthophora robusta* Klug, 1845 – VU B 1a+B 2a
139. Երկարալեզու մեղու - *Tetralonia macroglossa* Illiger, 1806 – EN B2a
140. Մանուշակագույն մեղու-ատաղձազործ - *Xylocopa violacea* Linnaeus, 1758 –  
VU B 1a+B 2a

##### **Ընտանիք Խվական մեղուներ - Apidae**

141. Իշամեղու հայկական - *Bombus armeniacus* Radoszkowski, 1877 - VU  
B1a+B2a.
142. Իշամեղու մարգագետնային - *Bombus pratorum* Linnaeus, 1761 – VU B 1a+B  
2a
143. Իշամեղու գետնային - *Bombus terrestris* Linnaeus, 1758 – VU B 1a+B 2a
144. Իշամեղու ձևափայլ - *Bombus niveatus* Kriechbaumer, 1870 – VU B 1a+B 2a
145. Պորշինսկու իշամեղու - *Bombus portshinskii* Radoszkowsky, 1884 – VU B  
1a+B 2a

146. Իշամեղու ալազյողյան - *Bombus alagesianus* Skorikov, 1937 – EN B 1a  
 147. Իշամեղու դաղեստանյան - *Bombus daghestanicus* Radoszkowsky, 1888 – VU  
 B 1a+B 2a

**Ընտանիք Մրջյուններ - Formicidae**

148. Ո-ավազինի մրջյուն - *Myrmica ruginodis* Finzi, 1923 – EN B 1a+B 2a  
 149. Կարմրավում մրջյուն - *Manica rubida* (Latreille, 1802) – EN B 1a+B 2a  
 150. Կիսաստամ մրջյուն - *Crematogaster subdentata* (Mayr, 1877) – EN B 2a  
 151. Զուլիայի մրջյուն - *Diplorhoptrum juliae* Arakelian, 1991 – CR B2a  
 152. Հարք մրջյուն - *Tetramorium levigatum* Karawajew, 1926 – CR B2a  
 153. Մախմալ մրջյուն - *Cataglyphis machmal* Radtschenko & Arakelian, 1991 – CR  
 B2a

**Կարգ Երկրներ - Diptera**

**Ընտանիք Գիշաճանմեր - Asilidae**

154. Հսկա գիշաճանմ - *Satanas gigas* Evermann, 1885 – VU B 1ab(iii)+B 2ab(iii);  
 KK CCCP  
 155. Երևանյան գիշաճանմ - *Machimus eravanensis* V. Richter, 1963 – EN B 1ab(iii)  
 +B2ab(iii)

Ծանոցում՝

Annex II - տեսակը ընդգրկված է Բնունի կոնվենցիայի Հավելված II-ում

IUCN – տեսակը ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում

KK CCCP – տեսակը ընդգրկված է ԻՍԱՀՍ Կարմիր գրքում

## **Փորոտանիներ – Gastropoda**

## 1. Տրոշելի խխունջ

Bithynia troscheli Paasch, 1842

Կարգ՝ Սկավառավառտամիներ - Discopoda

Ընտանիք՝ Բիթինիներ - Bithyniidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Սառցային շրջանի ռելիկտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին բարձր կոճածն է, բավականին լայն, դեղնաեղերագույն, կրային կափարիչով, խեցու բարձրությունը մինչև 8,5 մմ է:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Արևմտյան Միջիք, Ղազախստան, Կովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Գեղաքունիքի մարզ, Մասրիկ գետ՝ Սևանա լիճ թափվելու հատվածում:

**Ապրելավայրերը:** Գետի արագահոս ափամերձ շրջաններ:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Կենդանիները նստում են բույսերի ստորքրյա մասերի վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բարձր չէ, թվաքանակի փոփոխությունները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործունները:** Մասրիկ գետի հիդրոլոգիական ռեժիմի խախտում և ջրի աղտոտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի սահմաններում տեսակի տարածման շրջանի բնապահանական ռեժիմի խստացում, Մասրիկ գետի ջրի որակի հսկողություն, գետի հունի վերին հատվածներում տեղակայված բնակավայրերում մաքրման համակարգերի ներդրում:

## 2. Ակրամովսկու շաղինիա

Shadinia akramovskii (Shadin, 1952)

Կարգ՝ Ակրամովսկառտամիմեր – Discopoda

Ընտանիք՝ Լիթոգլիֆիդեր - Lithoglyphidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով և կտրատված ապրելավայրերով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին բարձր կոնաձև է, մինչև 4,5 մմ բարձրությամբ, պտույտները ուղղած են, մոխրավարդագույն, ելանցքի մոտ կրային կափարիչով:

**Տարածվածությունը:** Իրան, Իրաք, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարատյան հարթավայրի մի քանի կետերից՝ Արմավիրի (Սև ջուր գետի ակունքներ՝ Արատաշեն գյուղի մոտակայքում) և Արարատի (Արևարույր և Զրահնվիտ գյուղերի շրջակայք) մարզերում:

**Ապրելավայրերը:** Հզոր աղբյուրներ և դրանցից սկիզբ առնող գետակների վերին հոսանքներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Տարածման վայրերում բավականին բարձր է, թվաքանակի փոփոխությունները հայտնի չեն:

**Վտանգման իմննական գործոնները:** Գետերի հիդրոլոգիական ռեժիմի խախտում՝ պայմանավորված մելիորատիվ աշխատանքներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

### 3. Լճային խլունջ

*Acrolochus lacustris* (Linnaeus, 1758)

Կարգ՝ Նստաչքավորներ - Basommatophora

Ընտանիք՝ Աքրոլոքսիդներ - Acrolochidae



**Կարգավիճակը:** Հայաստանում, հավանաբար, անհետացած է, վերջին անգամ հավաքվել է 1929 թ-ին: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով ներկայում գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին առանց պարույրագծի է, գլխարկանման: Խեցու երկարությունը (Ելանցը) մինչև 8 մմ է՝ երկու անգամ մեծ իր լայնությունից և երեք անգամ՝ բարձրությունից: Գագարը գտնվում է խեցու ձախ կողմում:

**Տարածվածությունը:** Արևմտյան Սիրիի, Ալբայ, Միջին Ասիա, Եվրոպա, Հյուսիսային Իրան, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերվել է միայն Սևանա լճում՝ Սևան ք. մոտ:

**Ապրելավայրերը:** Լճեր, լճակներ, հարթավայրային գետերի ափամերձ մասեր:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Հանդիպում են բույսերի ջրասույզ ցողունների և տերևների վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** 1929 թ-ից հետո Հայաստանում չի հավաքվել:

**Վտանգման իիմնական գործուները:** Սևանա լճի մակարդակի իջեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

#### 4. Կատարավոր խխունջ

*Planorbis carinatus* (O.F. Muller, 1774)  
 Կարգ՝ Նստաչքավորներ – Basommatophora  
 Հնտանիք՝ Տափակ խխունջներ – Planorbidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Կրճատվող թվաքանակով հազվագյուտ, սառցային շրջանի ռելիկտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին սկավառակաձև է, բավականին խոշոր (խեցու բարձրությունը մինչև 3 մմ է, լայնությունը՝ 18 մմ), արագ աճող պտույտներով, որոնց թիվը հասնում է հինգի, վերջին պտույտի ծայրամասում, բարձրության մեջտեղում՝ լավ արտահայտված սուր կատարով:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Արևմտյան Սիբիր, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սևանա լճի ավազան: Նախկինում ապրում էր հենց լճում (հայտնի էր լճի հյուսիս-արևելյան ափամերձ տարածքից՝ Ծափաբաղ և Արեգունի գյուղերի միջև ընկած հատվածում), սակայն մակարդակի իջեցումից հետո հավաքներում չի հանդիպել: Լճի դուրս հանդիպման միակ վայրն Արգիշիի գետահովիտն է՝ Վաղաշեն գյուղի քոչավայրերից վեր:

**Ապրելավայրերը:** Լճի ափամերձ բուստափակ հատվածներ, ներկայում՝ լեռնահովիտով քոյլ թերությամբ հոսող գետը:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Կենդանիները հանդիպում են բույսերի ստորջրյա մասերի վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը կտրուկ կրճատվել է: Դատելով նատվածքներում եղած դատարկ խեցիներով, նախկինում մեծաքիվ էր Սևանա լճի բուստափակ հատվածներում: Արգիշի գետում ներկայացված է եղակի առանձնյակներով:

**Վտանգման իիմնական գործոնները:** Տեսակի ապրելավայրերի չորացում՝ պայմանավորված Սևանա լճի մակարդակի իջեցմամբ: Արգիշի գետի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն և աղտոտություն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

## 5. Սպասակարերան խխուն

## Anisus leucostomus (Millet, 1813)

Կարգ՝ Նստապազրություններ – Basommatophora  
Ընտանիք՝ Տափակ խլունցներ - Planorbidae



©L.Harutyunova

**Կարգավիճակը:**Հայաստանում, հավանաբար, անհետացել է, վերջին հավաքն եղել է 1925 թ-ին: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով նեղայում գնահատվում է որպես՝ ‘Կորդիկական միջակում գտնվող’՝ CR B1a+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին սկավառական է, 6 դանդաղ աճող պտույտներով: Վերջին պտույտն՝ ելանցքի մոտ ներքեւում, 1,5 անգամ նախավերջինից լայն է: Խեցու բարձրությունը մինչև 1,2 մմ է, լայնությունը՝ 7 մմ:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Աիրեմ՝ մինչև Բայկալ և Լենա գետի ավազան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն մեկ կետից՝ Փարաքար գյուղի մոտակայից (Արմավիրի մարզ):

**Ապրելավայրերը:** Ժամանակավոր, ամռանը չորացող, մանր ջրամբարներ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Հայտնի չեն:

**Թվաբանակը և դրա փոփոխության միտումները:** Հայաստանից հավաքված է ընդամենը մեկ նմուշ:

**Վատանգման իիմնական գործունելքը:** Տեսակի ապրելավայրերի ոչնչացում՝ այսպիսավորված լանջուաֆիլի գործադրութեամբ լուրզացնելով:

**Պահանջնեալի իրավանական միջուածու մէնք:** Եթի իրավանականը:

Պահպատճենության կազմակերպության պահպատճենության վեհականությունը:

Կազմակերպյան անձագիրը՝ պաշտոնականը։ Օսմակը դիմում սպառցն արքայան շրջանում, հայտնաբերման դեպքում՝ կլիմայավարժեցում «Խոր-Վիրապ» արգելավայրի տպապատճենում։

## 6. Սալիտակ խխունջ

Gyraulus albus (O.F. Muller, 1774)

Կարգ՝ Նստաչքավորներ – Basommatophora  
Հնտանիք՝ Տափակ խխունջներ – Planorbidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Ոչ մեծ, ընդհատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին սկավառակածն է, բաց գունավորված, 4,5 արագ աճող պտույտներով: Վերջին պտույտն՝ ելանցքի մոտ վերևից, երկու անգամ նախավերջինից լայն է: Խեցու մակերեսը պարուրածն կողերից կազմված պարզ ցանցածն նախշով է և ավելի բարակ, շեղ դասավորված գծերով: Խեցու լայնությունը մինչև 6 մմ է, բարձրությունը՝ մինչև 2 մմ:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Արևմտյան Սիբիր, Ալթայ, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Գեղարքունիքի (Սևանա լիճ՝ Սևան ք. մոտ և նախկին Գիլի լճի տեղում գտնվող ջրանցքներ) և Լոռու (Մթեփանավան ք. շրջակայքում գտնվող լճակ) մարզերից:

**Ապրելավայրերը:** Խոշոր լճակներ, լճեր և գետեր:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Կենդանիները հանդիպում են ջրասույզ բուսականության վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Փոքրաքանակ է, հանդիպում են եզակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Սևանա լճի ջրի բաց բորում և դրա հետ կապված տեսակի գոյատևման պայմանների փոփոխություն: Այլ ջրամբարներում, որտեղ հանդիպում է տեսակը՝ հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

## 7. Հարթ խլունջ

Gyraulus laevis (Alder, 1838)

Կարգ՝ Նստառշաղակիրներ – Basommatophora  
Ընտանիք՝ Տափակ խլունջներ – Planorbidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Լտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրություն:** Խեցին սկավառակաձև է, դեղնավուն-եղջերագույն: Խեցու մակերեսն առանց պարուրաձև մանրագծերի է, հարթ, 4 արագ աճող պտույտներով: Վերջին պտույտը՝ ելանցրի մոտ վերևից, 1,8 անգամ նախավերջինից լայն է: Խեցու լայնությունը մինչև 4 մմ է, բարձրությունը՝ մինչև 1 մմ:

**Տարածվածություն:** Եվրոպա, Արևմտյան Աֆրիկա, Արևմտյան Սիրիի, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Սևանա լճի մոտակայքում գտնվող ոչ խոշոր ջրամբարներից՝ Սևան ք. և Նորաշեն գ. մոտակայքից, Հրազդան գետի ակունքներից:

**Ապրելավայրեր:** Աղբյուրամերձ ճահիճներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Տարածման վայրերում բավականաշափ բարձր էր: Հայաստանում վերջին 50 տարիների ընթացքում չի հավաքվել:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ջրամբարների հիդրոլոգիական ռեժիմի խախտում՝ պայմանավորված Սևանա լճի մակարդակի իջեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի հայտնաբերման դեպքում ջրամբարների պահպանություն:

## 8. Կանոնավոր խխունջ

*Gyraulus regularis* (Hartmann, 1841)

Կարգ՝ Նստաչքավորներ – Basommatophora  
Ընտանիք՝ Տափակ խխունջներ - Planorbidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Ծայրաստիճան սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին շատ փոքր է (երկարությունը չի գերազանցում 2 մմ-ը)՝ սկավառակաձև է, եղջերագույն, 3,5 բավականին արագ աճող պտույտներով: Ելանցքի վերևում գտնվող վերջին պտույտը նախավերջինից 1,5 անգամ լայն է: Խեցու մակերեսար հարք է:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Կովկաս՝ տեղ-տեղ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է միայն Սեղրի քաղաքի մոտակայքում (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը՝** Աղբյուրամերձ ճահիճ՝ լեռնային գետի մոտ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Միակ հայտնի պոպուլյացիան կազմված է մի քանի հարյուր առանձնյակներից: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Ջրամբարի հիդրոլոգիական ռեժիմի խախտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

## 9. Սյունաձև խխունջ

*Columella columella* (Martens, 1853)

Կարգ՝ Ցողունաչքավորներ - *Stylommatophora*  
Ընտանիք՝ Նեղ խխունջներ - *Vertiginidae*



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է, սառցային շրջանի ռելիկտ: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակով գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին սյունաձև է, վերին կարծ կլորացած մասով: Խեցու բարձրությունը մինչև 2,8-3,5 մմ է, լայնությունը՝ 1,3-1,5 մմ: Պտույտները 6,5-8 են, խիստ ուռուցիկ, ելանցրի մոտ առանց ատամիկների:

**Տարածվածությունը:** Հյուսիսային Եվրոպա, Կենտրոնական Եվրոպայի լեռներ, Սիբիր, Ղրիմ՝ Յայլա, Հայաստան, Միջին Ասիայի լեռներ, Հյուսիսային Ամերիկա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն մեկ կետից՝ Քաջարան քաղաքի մոտակայքից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Վերին անտառային և ենթալպյան գոտիների արոտավայրեր:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, կենդանիները հանդիպում են խոտաբույսերի վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի են եզակի նմուշներ: Թվաքանակի փոփոխության միտումներն ուսումնասիրված չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Անասունների գերարածեցում, արոտավայրերի հերկում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընգրկում «Քաջարան» արգելավայրի տարածքի մեջ:

## 10. Նեղ խլունճ

Vertigo angustior Jeffreys, 1830

Կարգ՝ Ցողունաչքավորներ - Stylommatophora  
Ընտանիք՝ Նեղ խլունճներ - Vertiginidae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է, Հայաստանում ներկայացված է միակ ռելիկտային պոպուլյացիայով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+B2a: Տեսակը ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver 2.3)՝ LR/cdն կարգավիճակով և Բնոնի կոնվենցիայի Հավելված II-ում:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին կարճ գլանաձև է, ձախս-ոլորված, շատ բարակ և համաչափ կողաձև մանրազծված, կարմրաշագանակագույն, 4,5-5 ոտուցիկ պտույտներով, վերջին պտույտը դեպի ներքև խստ ներացած է, խոշոր հիմային ելուստով, ծոծրակի վրա երկար և խորը երկայնակի ակոսով: Խեցու բարձրությունը մինչև 1,6-1,8 մմ է, լայնությունը՝ 0,8-0,9 մմ:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Հայաստան, Հյուսիսային Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է միայն Լռու մարզում՝ նախկին Լռու սովորություն և Ստեփանավան ք. մոտակայքում:

**Ապրելավայրերը:** Խոնավ մարգագետիններ՝ խոտերում և մամուռում:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Պարզված չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի են ոչ մեծ թվով առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Տեսակի ապրելավայրերի մելորացիա:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերին բնության հուշարձանների կարգավիճակի սահմանում:

## 11. Խճաքարային խխունջ

Orculella ruderalis Akramowski, 1947

Կարգ՝ Ցողունաչքավորներ - Stylommatophora

Հնտանիք՝ Օրկուլիդներ - Orculidae



**Կարգավիճակը:** Ծայրահեռ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին փոքր է (բարձրությունը մինչև 6 մմ, լայնությունը՝ մինչև 2,25-2,5 մմ), 8-9 գրեթե տափակ պտույտներով, ելանցքի մոտ երկու ատամիկներով՝ մեկական վերին և ստորին կողմերում:

**Տարածվածությունը՝ Հայաստանի էնդեմիկ տեսակ է:**

**Տարածվածությունը՝ Հայաստանում:** Հայտնի է միայն Գնիշիկ գյուղի շրջակայքից (Վայոց Ձորի մարզ):

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստանային գոտու չորային արոտավայրեր՝ 1600-1800 մ ծ.մ.ր.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, կենդանիները հանդիպում են քարերի և խճաքարերի, ինչպես նաև լեռնային ապարների ճեղքերում և բարձածն փշոտ կիսարթիերի տակ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Տարածման տիպիկ վայրերում բավականին բարձր է: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Անատունների գերարածեցում, արոտավայրերի հերկում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ:

## 12. Բուլղարական խխունջ

*Orculella bulgarica* (P.Hesse, 1915)

Կարգ՝ Ցողոմաշքավլրմեր - Stylommatophora

Ընտանիք՝ Օրկուլիդմեր - Orculidae



©L.Hantukova



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով, հազվագյուտ, հավանաբար, ռելիկտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+ B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին բավականին ուռուցիկ է, գլանաձև, վերին կարծ կոնաձև հատվածով: Խեցու բարձրությունը մինչև 6,5-8,0 մմ է, լայնությունը՝ 3,0-3,2 մմ, պտույտների թիվը՝ 8-9,5, ելանցքի վերին հատվածում մեկ ատամով: Խեցին ժամացույցի սլաքի ուղղությամբ պտտելիս՝ հայտնաբերվում է նաև կոնաձև թմբիկ:

**Տարածվածությունը:** Իսպանիա, Բուլղարիա, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի են միայն մեռած առանձնյակներ, որոնք հավաքվել են Մարիկ գետի արտանետումներից՝ Սևանա լճի մոտ, որտեղ, հավանաբար, բերվել են ջրի հոսքով մոտակա լանջերից:

**Ապրելավայրերը:** Տափաստանամարգագետիններ՝ ալպյան կամ ենթալպյան գոտիներում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի հայտնաբերում և դրանց՝ ԲՀՊՏ-ի կարգավիճակի սահմանում:

### 13. Սանդղաձև խխունջ

Turanena scalaris (Naegele, 1902)

Կարգ՝ Ցողունաչքավորներ - Stylommatophora

Հնտանիք՝ Էնիդներ - Enidae



©L.Hantukyanova



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին կոնաձև է, բարձրությունը մինչև 6,5-7,0 մմ, լայնությունը՝ 3,5-4,0 մմ, պտույտների թիվը՝ 5,5-6,0, ելանցքի հատվածում առանց ատամների:

**Տարածվածությունը:** Հյուսիս-Արևմտյան Իրան, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միակ ապրելավայրից՝ Գնիշիկ գ. շրջակայրից (Վայոց Ձորի մարզ):

**Ապրելավայրերը:** Քսերոֆիլ նոսրանտառներ՝ ուղղաբերձ ժայռերի ճեղքեր:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Պոպուլյացիան կազմված է հարյուրավոր առանձնյակներից: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ:

#### 14. Ակրամովսկու խիստնշ

Euxina akramowskii (Likharev, 1962)

Կարգ՝ Ցողունաչքավորներ - Stylommatophora

Հնտանիք՝ Կլաուզիլիդներ - Clausiliidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+ B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին խոշոր չափի է, իլիկաձև, 12,5 պտույտներով, շագանակագույն, սպիտակ կարով, մակերեսը խիտ կողաձև-խծրծված, կողերի միջև հեռավորությունը հավասար է դրանց լայնությանը, ելանցքից դեպի հետ՝ հիմնային մեկ ողնուցով: Խեցու բարձրությունը մինչև 22,25 մմ է, լայնությունը՝ 5,25 մմ:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միակ տեղանքից՝ Խուստուպ լեռան հյուսիսային լանջերից՝ Կապան քաղաքից դեպի հարավ (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Կաղնու և բոխու անտառներ՝ ժայռածերեր:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Չափավոր մեծաքանակ է: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմբնական գործուները:** Սիջավայրի պայմանների փոփոխություն՝ պայմանավորված անտառահատումներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերին ԲՀՊՏ-ի կարգավիճակի սահմանում:

**Երկխեղի փափկամարմիններ – Bivalvia**

## 15. Սեղմված խխունի

*Musculium strictum* (Normand, 1844)

Կարգ՝ Աստարտիդներ - Astartida

Ընտանիք՝ Պիզիդիդներ - Pisidiidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ ռելիկտային տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին փոքր է (երկարությունը մինչև 4,2 մմ, լայնությունը՝ 3,7 մմ), կարճ ձվածե, խխատ ուղած: Վերին ծայրը շատ կարճ է, ուսուցիկ, նկատելիորեն առանձնացած խեցու մյուս մասերից:

**Տարածվածությունը:** Ֆրանսիա, Գերմանիա, Դանիա, Վրաստան (Բորժոմի շրջակայք), Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն մեկ կետից՝ Զան լճից (Գորիս ք. շրջակայք, Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Բարձրեռնային լիճ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Տարածման վայրում բավականին բազմաթիվ է: Թվաքանակի տատանումների միտումներ բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ջրամբարի աղտոտում և հիդրոլոգիական ռեժիմի խախտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ջրամբարի վիճակի հսկողություն, անհրաժեշտության դեպքում՝ դրա շրջակայրում մարդու տնտեսական գործունեության սահմանափակում:

## 16. Անանդալեի խլսունջ

Odhneripisidium annandalei (Prashad, 1925)

Կարգ՝ Աստարտիդներ - Astartida

Ընտանիք՝ Պիզիդիդներ - Pisidiidae



©L.Harutyunova



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում զտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խեցին փոքր է (երկարությունը մինչև 2,6 մմ, լայնությունը՝ 1,8 մմ), կարծ ձվաձև, ուռուցիկ, շատ նուրբ և գրեթե կանոնաձև մանրագծված, մոխրագույն, փայլատ:

**Տարածվածությունը:** Աղբեջան, Թուրքիա, Սիրիա, Իսրայել, Իրան, Աֆղանստան, Հնդկաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն մեկ կետից՝ Մեղրի ք. շրջակայքից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Աղբյուրից սնվող գետամերձ ճահճիկ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնաբերված են քիչ քանակությամբ առանձնյակներ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Ջրամբարի հիդրոլոգիական ուժիմի խախտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

## Սիջաստներ – Insecta

## 17. Մեծաչք ճպու

Lestes macrostigma (Eversmann, 1836)

Կարգ Ճպուներ - Odonata

Ընտանիք Նետիկներ - Coenagrionidae



©Thorsten Stegmann



**Կարգավիճակը:** Սահմանափակ կտրատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1b+B 2b:

**Համառոտ նկարագրությունը:** Բարեկազմ մարմնով, փոքր չափի ճպու է (մարմնի երկարությունը 40-47 մմ), կործքը, փորիկի հիմքը և գագաթն երկնագույն են՝ քիչ բե շատ լավ արտահայտված մետաղական փայլով, փորիկի միջնամասի հատվածները մուգ կանաչ են՝ պղնձե փայլով: Պտերոստիգման շատ խոշոր է:

**Տարածվածությունը:** Միջերկրական ծովի երկրներ, Հարավային Եվրոպայից մինչև Արևմտյան Սիրիի, Սիջին Ասիհա, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերվել է Արարատի (Երասխ և Սիս գյուղերի մոտակայք) և Սյունիքի (Ներքին Հանդ գյուղի մոտակայք) մարզերում:

**Ապրելավայրերը:** Գտնվել է լճացած ջրերով ոչ մեծ ջրամբարների մոտ, հայտնի է կիսաանապատային և անտառային գոտիներից:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգանում են խիտ ճահճային բուսականությամբ ծանծաղ ջրերում, աղակալած ներքին ճահճացումներում, տափաստանային լճերում: Զարգացման շրջանը միամյա է: Հայաստանի պայմաններում թուշքը դիտվել է մայիս-հունիս ամիսներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրաստիճան հազվադեպ են, հայտնի են եզակի առանձնյակներ: Փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իինական գործունները:** Հիդրոլոգիական ռեժիմի փոփոխութուն՝ պայմանավորված մելիորատիվ աշխատանքներով, գյուղատնտեսական նպատակներով տեղանքի յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արարատյան հարթավայրում տեսակի տարածման վայրերի բացահայտում և պահպանում:

## 18. Սիմպեկմա ճպուտ

Sympetrum paedisca (Brauer, 1877)

Կարգ Ճպուտներ - Odonata

Ընտանիք Նետիկներ - Coenagrionidae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1b+B 2b:

**Համառոտ նկարագրությունը:** Բարեկազմ մարմնով, փոքր չափի ճպուտ է (մարմնի երկարությունը 36-39 մմ), գունավորումը դեղնադարչնագույն է, գլխի վերին մասը, կրծքի և փորիկի տերզիտների միջնամասերը սովորաբար թիզ թե շատ լավ արտահայտված մետաղական փայլով և բավականին լայն շագանակագույն գոլով են: **Տարածվածությունը:** Կենտրոնական և Հյուսիսային Եվրոպայից մինչև Շապոնիա, Առաջնային Ասիայում և Կովկասում ներկայացված է մեկուսացած օջախներով:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Տավուշի (Դիլիջան ք. մոտակայք), Արմավիրի (Քագարան գ.), Արագածոտնի (ք. Աշտարակ, Արագած լեռ՝ Անտառուտ և Բյուրական գգ. մոտ, Արայի լեռ), Կոտայքի (Գողթ և Գառնի գգ. մոտակայք), Արարատի (Արտաշատ ք., Երասխ, Արմաշ գգ. մոտակայք), Վայոց Ձորի (Եղեգնաձոր և Վայք քք. մոտակայք) մարզերից, Երևան քաղաքից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից: **Ապրելավայրերը:** Տարբեր լանդշաֆտային գոտիների լճացած ջրերով ջրամբարներ՝ 900-2000 մ ծ.մ.ր.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգանում են լճացած ջրերով տարբեր տիպի ջրամբարներում: Զննում է հասուն միջատը, ձվադրումը 2-3 ամիսների ընթացքում, նոր սերնդի առանձնյակները դուրս են թռչում հովհանքաւունքի ամիսներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ոչ մեծաքանակ տեսակ է: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն, ջրամբարների աղտոտություն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արագած լեռան հարավային լանջերին և Արայի լեռան տարածքում ԲՀՊ-ների ստեղծում, Արմաշի ձկնաբուծական տնտեսություններին բնապահպանական կարգավիճակի սահմանում:

## 19. Նետիկ զինված

Coenagrion armatum (Charpentier, 1840)

Կարգ Շապումներ - Odonata

Ընտանիք Նետիկներ - Coenagrionidae



©Sebastian Szepanski



**Կարգավիճակը:** Ծայրահեղ հազվագյուտ տեսակ է, մեկուսացած ռելիկտային պոպուլյացիա: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B 1a + B 2a:

**Համառոտ նկարագրությունը:** Բարեկազմ մարմնով, փոքր չափի ճպուռ է (մարմնի երկարությունը 30-32 մմ), կրծքի կողքային մասերը, փորիկի 1-3-րդ և 8-րդ հատվածները բաց երկնագույն են, կրծքի վերին մասը, փորիկի միջին հատվածները, ինչպես նաև 1-3-րդ ու 8-10-րդ հատվածների բժերը և տրամակալերը՝ սևարոնզագույն են:

**Տարածվածությունը:** Եվրոպա՝ Անգլիայից դեպի արևելք մինչև Կամչատկա, Մոնղոլիա: Կովկասում ներկայացված է ռելիկտային պոպուլյացիաներով:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Արփի լճի շրջակայքից (Շիրակի մարզ):

**Ապրելավայրերը:** Ծանծաղ տարածքներ՝ Carex, Equisetum և նմանատիպ այլ բույսերի առկայությամբ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգանում են լճացած ջրերով, սովորաբար ափամերձ բուսականությամբ հարուստ մեզոտրոֆ ջրամբարներում: Զարգացումը տևում է մեկ տարի: Հայաստանում հայտնաբերվել է հովիսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ տեսակ է, հայտնաբերվել է մեկ անգամ: Թվաքանակի փոփոխությունները հայտնի չեն:

**Վտանգման իմմնական գործուները:** Հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն, ճահիճների մելիորացիա:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արփի» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում ազգային պարկի արգելոցային գոտու տարածքի մեջ:

## 20. Նետիկ նրբազեղ

Coenagrion scitulum (Rambur, 1842)

Կարգ Շապումներ - Odonata

Ընտանիք Նետիկներ - Coenagrionidae



©Jean-Michel Faton



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով ծայրահեղ հազվագյուտ տեսակ է:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Բարեկազմ մարմնով, փորք ճպուռ է (մարմնի երկարությունը 30-32 մմ), գունավորումն երկարության է, կրծքի վերին մասը սև է՝ մեկ գույզ նեղ, երկնագույն երկայնական գոլերով, փորիկի հատվածները տարբեր լայնությամբ սև գույնի օղակներով են, 6-րդ, 7-րդ, 10-րդ հատվածները գրեթե լիիվ սև են, 8-րդն ու 9-րդը՝ գրեթե անբողոքյամբ երկնագույն: Պոտերոստիզման խոշոր է:

**Տարածվածությունը:** Միջերկրական ծովի երկներ՝ դեպի արևելք մինչև Հյուսիսային Իրան, Վրաստան, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է հայտնաբերման միակ վայրից՝ Ալբարա գյուղի շրջակայրից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Կիսաանապատային գոտու տաք, երբեմն դանդաղահոս ջրավազաններ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգանում են տաք, ջրածահճային բուսականությամբ հարուստ ջրավազաններում: Ջվաղրում են լողացող բուսականության վրա: Թոփշը՝ մայիսի վերջից մինչև հուլիսի վերջը, երբեմն շարունակվում է մինչև սեպտեմբեր, զարգացումը տևում է մեկ տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրահեղ հազվադեպ է: Հայտնի են եզակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման հիմնական գործումները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

## 21. Վան Բրիմկի նետիկ


Coenagrion vanbrinkae Lohmann, 1993

Կարգ Շպոտներ - Odonata

Ընտանիք Նետիկներ - Coenagrionidae



©Antoine van der Heljden



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a+B2a: Տեսակը ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3.1.) «Անբավարար տվյալներ» DD կարգավիճակով:

**Համառոտ նկարագրությունը:** Բարեկազմ մարմնով, փոքր ճպուռ է (մարմնի երկարությունը 30-32 մմ), գունավորումը վառ երկրագույն է, կրծքի վերին մասը սև է՝ մեկ գույզ նեղ, երկնագույն երկայնական զոլերով, փորիկի հատվածները տարրեր լայնությամբ սև գույնի օղակներով են, որոնք լայնանում են առջևից դեպի հետ՝ մինչև 7-րդ հատվածը, 8-րդ հատվածը գրեթե ամբողջությամբ երկնագույն է, 10-րդը՝ սև գույնի: Եզր կանչաերկնագույն է կամ դեղնականաշագուն՝ արովի նախշին գրեթե նման սև նախշով:

**Տարածվածությունը:** Թուրքիա, Իրան, Վրաստան և Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Շիրակի (Գյումրի քաղաքի շրջակայք), Արմավիրի (Տարոնիկ գ. մոտ), Արարատի (Մասիս ք., Ուրցի լեռնաշղթայի հարավային լանջեր՝ Սուրենավան գ. մոտակայք), Սյունիքի (գ. Վագուղի մոտ) մարզերից և Երևանի շրջակայքից:

**Ապրելավայրերը:** Թույլ հոսող ջրով ջրամբարներ, ջրանցքներ, առուներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թոշում է գարնանը՝ մայիսի վերջից մինչև հուլիսի կեսերը: Գերադասում է բազմացման վայրերը՝ ջրի մերձակայքը: Զարգացման ցիկլ տևում է մեկ տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բնակության վայրերում հաճախակի է հանդիպում: Փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ջրամբարների աղտոտում և հիդրոլոգիական ռեժիմի խախտում՝ պայմանավորված մելիորատիվ աշխատանքներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

## 22. Լինդենի մետիկ

*Erythromma lindenii* (Selys, 1840)

Կարգ Շապումներ - Odonata

Ընտանիք Նետիկներ - Coenagrionidae



©Antoine van der Heijden



**Կարգավիճակը:** Սամանափակակ արեալով ծայրահեղ հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a: Գրանցված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր ճաղուռ է (մարմնի երկարությունը 30-34 մմ): Գումավորումն երկնագույն է, երբեմն կանաչավուն շողողոյունով, ունի սև զարդանախչ: Արովի գունավորումն ավելի վառ է, կրծքի վերին մասը սև գույնի է՝ զույգ նեղ, երկնագույն երկայնական զղերով, փորիկի 2-6-րդ հատվածները նետաձև են, սև բծերով, 7-8-րդ հատվածները վերևից համարյա ամբողջությամբ սև են, 9-րդն երկնագույն է, 10-րդը վերին մակերեսի վրա ունի սև գույնի զոր: Սեռահասուն էզի փորիկի միայն միջին 3-4 հատվածներն են երկնագույն, մյուսները ձիթապտղականաց են կամ դեղնավուն:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպա, Հյուսիսային Աֆրիկա, Փոքր Ասիա, Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն մեկ տեղավայրից՝ Տարոնիկ գյուղի շրջակայքից (Արմավիրի մարզ):

**Ապրելավայրերը:** Հոսող և կանգնած ջրով, թթվածնի հարուստ պարունակությամբ ջրամբարներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում հայտնաբերվել է հովիսին, արեալի մյուս հատվածներում բոլիչը դիտվում է մայիսի վերջից մինչև սեպտեմբերի կեսերը: Զարգացման ցիկլ տևում է 1 տարի: Զվարդում են ջրային բուսականության վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրահեղ հազվադեպ է, հանդիպել է մեկ անգամ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Զրամբարների աղտոտում և հիդրոլոգիական ռեժիմի խախտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի հայտնաբերում և պահպանում:

### 23. Չպուտ տափակառ

*Platycnemis pennipes* (Pallas, 1771) - 150

Կարգ՝ Շնորհներ - Odonata

Ընտանիք՝ Պլաստիքնեմիդներ - Platycnemididae



©Pascal Dubois



**Կարգավիճակը:** Սամանափակակ արեալով ծայրահեղ հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մանր չափի գեղակազմ ճպուռ է (մարմնի երկարությունը 35-37 մմ): Արուն բաց երկնագույն է, էգը՝ կրեմագույն կամ դեղին՝ կանչավուն շողշողունով: Կուրծքը վերևից մուգ գույնի է, ունի բաց գունավորված երկու գույգ երկայնական զոլեր: Փորիկի 1-6-րդ հատվածների հետին եզրին կան փոքր սև բծեր, 7-9-րդ հատվածները վերևից սև են՝ մեղ, երկնագույն միջին զոլով, 10-րդ հատվածը երկնագույն է՝ երբեմն կողքերին գույգ սև բծերով: Ոչ սեռահատուն առանձնյակներն ունեն շատ բաց գունավորում, փորիկի մուգ զարդանախջր թույլ է արտահայտված:

**Տարածվածությունը:** Եվրոպա՝ Անգլիաից դեպի արևելք մինչև Ենիսեյ գետը, Փոքր Ասիա, Կովկաս և Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է ք. Երևանից (Քանաքեռ՝ Հրազդան գետի մոտ) և Արգելի քաղաքի շրջակայրից (Կոտայքի մարզ):

**Ապելավայրերը :** Դանդաղ հոսող կամ կանգնած ջրերով ջրավազաններ, այդ թվում արհեստական ջրամբարներ՝ ջրանցքներ և ձկնարուծական լճակներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բազմանում են խիտ բուսականությամբ ծածկված, բույլ հոսող և կանգնած ջրով ջրամբարներում: Զվարդում են լողացով բուսականության վրա: Թոշում են հունիսին-հուլիսի սկզբին, ավելի քիչ քանակներով հանդիպում են նաև օգոստոսին: Զարգացման ցիկլը տևում է 1 տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իմմնական գործուները :** Ջրավազանների հիդրոլոգիական ռեժիմի խախտում և աղտոտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկող միջոցառումները:** Հրազդան գետի կիրճում ԲՀՊՏ-ի ստեծում, ինչը նախատեսված է Երևան քաղաքի զարգացման գլխավոր հատակագծով:

## 24. Կապույտ ճպու

*Aeshna cyanea* (Mueller 1764)

Կարգ՝ ճպուներ - Odonata

Ընտանիք՝ Շերեփազիներ - Aeshnidae



**Կարգավիճակը:** Արեալի ռելիկտային հատվածում գտնվող ծայրահեղ հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր ճպու է (մարմնի երկարությունը 67-76 մմ): Գումավորումը սև է՝ երկնագույն, բաց կանաչավուն կամ դեղնականաչավուն զարդանախշով, կուրծքը վերևից բաց գույնի բծերով է, կրծքի կողքերը՝ լայն, շեղ դասավորված, բաց գույնի գոլերով, փորիկի հատվածների բծերը կարծ են և լայն, իսկ 9-10-րդ հատվածները միացած են մեկ ամբողջական տրամակապով:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Ալժիր, դեպի արևելք՝ մինչև Ուրալ: Կովկասում և Անդրկովկասում գտնվում են տեսակի արեալի ռելիկտային հատվածները:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Պարզ լճի շրջակայրից՝ Դիլիջան քաղաքի մոտ (Տավուշի մարզ):

**Ապրելավայրերը:** Հայաստանում հանդիպում է անտառային գոտու կանգնած ջրով ոչ մեծ ջրամբարներում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգանում է կանգնած ջրով ոչ մեծ ջրամբարներում, 2 տարվա ընթացքում: Զվարդում է ջրի ափամերձ շրջանում, երբեմն խոնավ մամուսի մեջ: Եվրոպայում թոփշը դիտվում է հունիսի սկզբից մինչև հոկտեմբեր: Հայաստանում հայտնաբերվել է օգոստոսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի է հայտնաբերման միայն մեկ նշում: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման հիմնական գործումները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընդգրկում ազգային պարկի արգելոցային գոտու տարածքի մեջ:

## 25. Աղոցակիր ճպու

Aeshna serrata Hagen, 1856

Կարգ՝ ճպուներ - Odonata

Ընտանիք՝ Շերտավազիներ - Aeshnidae



©Lars Iversen



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է, հանդիսանում է տեսակի հիմնական արեալից հեռու գտնվող, մեկուսացած ռելիկտային պոպուլյացիա: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Լտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ըստ խոշոր ճպու է (մարմնի երկարությունը 71-86 մմ): Արուների մարմինն ունի ընդհանուր երկնագույն ֆոն, իսկ էգերինը՝ կանաչա-երկնագույն, որի վրա թե էգերի, թե արուների մոտ կա սև և սպիտակ գույնի զարդանախչ: Գունավորմամբ տեսակը ընդհանուր առմամբ նման է *Aeshna cyanea*-ին:

**Տարածվածությունը:** Հյուսիսային Եվրոպա (Ծվեդիա, Ֆինլանդիա): Սիրիայում՝ Ուրախ արևելյան լանջերից մինչև Տումսկ, Հյուսիսային Ղազախստան, Մոնղոլիա: Հյուսիս-Արևելյան Թուրքիայի (Վանա լիճ), Հարավ-Արևմտյան Վրաստանի (Ախալքալակի քարձրավանդակ) և Հայաստանի տարածքների պոպուլյացիաները համարվում են ռելիկտային:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Արդենիս գյուղի մոտ գտնվող Գելլի լճի տարածքից (Ծիրակի մարզ):

**Ապրելավայրերը:** Կովկասում հանդիպում է բարձրենային գոտում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թրթորի զարգացումը տևում է 2-3 տարի՝ ջրածահճային հարուստ բուսականությամբ, ճահճացած, թթու ու աւազայով ջրերում: Արեալի այլ հատվածներում կարող է հանդիպել նաև թույլ աղիավուն, կանգնած ջրով ջրամբարներում: Թրթորները կարող են երկար գոյատևել ջրից դուրս պայմաններում: Եվրոպայում թոշում են հուլիսին-սեպտեմբերին: Հայաստանում հայտնաբերվել են օգոստոսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրահեռ հազվադեպ է, հայտնի է հայտնաբերման մեկ գրանցում: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործուները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արփի» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի տարածքի գոտիավորման ընթացքում տեսակի բնակավայրերի ընդգրկում արգելոցային գոտու տարածքի մեջ:

## 26. Թամրակիր ճպուռ

*Hemianax ephippiger* (Burmeister, 1839)

Կարգ՝ Շնորհներ - Odonata

Ընտանիք՝ Երեխազիներ - Aeshnidae



©David Vilasis



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է, ներկայացված է արեալի սահմանաեզրին գտնվող մեկուսացած պոպուլյացիայով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչիներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab(iii)+2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր ճպուռ է (մարմնի երկարությունը 61-66 մմ): Գունավորումը դեղնադարչնագույն կամ ավագագույն է, արուի փորիկի երկրորդ հատվածն ունի վառ կապույտ, իսկ էգինը՝ մանուշակագույն բիծ, որը մասամբ անցնում է 3-րդ հատվածի վրա: Փորիկի հատվածներն ունեն մուգ շագանակագույն, անհարք լայնակի գոլ և նեղ, մուգ գունավորված միջիատվածային օղեր:

**Տարածվածությունը:** Հյուսիսային Աֆրիկայի անապատներ, Միջերկրական ծովի երկրներ, դեպի արևելք՝ մինչև Հյուսիսային Հնդկաստան և Միջին Ասիա, Կովկաս (Գլխավոր լեռնաշղթա), Վրաստան և Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարատյան հարթավայրի որոշ կետերից՝ Արմավիրի (գգ. Եղեգնավան, Արաքս, Արագավ, Մարգարա) և Արարատի (Արարատ ք. մոտ) մարզերից:

**Ապրելավայրերը:** Կիսաանապատային գոտու մասն, տաք, հաճախ՝ ժամանակավոր, ջրամբարներ և լճեր:

**Կենաքանության առանձնահատկությունները:** Թոշում են մթնշաղին, երբեմն՝ դեպի լույսի աղբյուր: Եվրոպայում հանդիպում են գլխավորապես մարտի վերջին և հոկտեմբերին, Հայաստանում՝ հուլիսին (ձվադրման պահին) և օգոստոսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ոչ մեծաքանակ, տեղ-տեղ հանդիպող տեսակ է: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Տարածքի գյուղատնտեսական նպատակներով յուրացում, ջրամբարների հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն՝ պայմանավորված, գլխավորապես, մելիորատիվ աշխատանքներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արարատյան դաշտում տեսակի զարգացման վայրերի հայտնաբերում և պահպանում:

## 27. Ուրաղի ճպու

*Gomphus ubadchii* Schmidt, 1953

Կարգ՝ ճպուներ - Odonata

Ընտանիք՝ Գոմֆիդներ - Gomphidae



Christian Fischer



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ VU B1b+B2b:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի ճպու է (մարմնի երկարությունը 50-53 մմ): Գունավորումը բաց դեղին կամ սպիտակավուն է, լավ արտահայտված սև նախշով:

Կուրծքը երեք գույզ և գույնի գոլերով է, փորիկի հատվածների կողքերին ճգվում են լայն և գույնի գոլեր՝ միջին գծով տեղադրված բաց գունավորված երկայնակի բժերով:

**Տարածվածությունը:** Վրաստանից և Թուրքիայից մինչև Սիրիա, Իրան և Միջին Ասիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Արարատյան դաշտից՝ Արմավիրի (գ. Մարգարա) և Արարատի (գ. Քուրաստան) մարզերից:

**Ապրելավայրերը:** Ավագային, տղմուն հատակով խոշոր գետեր:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Զարգանում են համեմատաբար դանդաղ հոսացող խոշոր գետերում: Թրթուրը բնակվում է տղմավազային հատակին, զարգացման շրջանը տևում է 3-4 տարի: Հասուն առանձնյակները հանդիպում են ավազոտ ափերին: Հայաստանում թոփշը դիտվել է հունիսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրահեղ հազվադեպ է, հայտնի են եղակի հայտնաբերումներ: Փոփոխության միտումները պարզած չեն:

**Վտանգման իմննական գործոնները:** Գետերի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն՝ պայմանավորված հիդրոշինարարությամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի հայտնաբերում և պահպանում:

## 28. Նմանաձև ճպու

*Onychogomphus assimilis fulvipennis* (Schneider, 1845)

Կարգ՝ ճպուներ - Odonata

Ընտանիք՝ Գոմֆիդներ - Gomphidae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է, ոչ մեծ, կտրատված, հավանաբար, ռելիկտային արեալով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1b+B2b: Տեսակը ընդգրկված էր ԲՊԱՄ-ի Կարմիր ցուցակում (ver 3.1.) որպես «Խոցելի» VU B1a+B2a: Ընդգրկված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի ճպու է (մարմնի երկարությունը 50-55 մմ), սևադեղնավուն հակադիր գունավորմամբ: Վերին շրթունքն ունի լավ արտահայտված սև գույնի եզրակ: Կրծքի կողքերը սև գույնի լայն գոլերով են, փորիկի տերզիտները՝ կողքերին երկար, նեղ ելուստներ ունեցող սև քծերով:

**Տարածվածությունը:** Հայտնի է Առաջավոր Ասիայից, Կովկասի և Հարավային Թուրքմենիայի մի շարք մեկուսացած տեղավայրերից:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Տավուշի (Իջևան ք. շրջակայք), Վայոց Ձորի (Վայր ք. և Գետափ ու Վերնաշեն գյուղեր) և Սյունիքի (Քարահունջ գյուղ) մարզերից:

**Ապրելավայրերը:** Մասամբ ստվերու և հաճախ սառը նախալեռնային գետեր՝ ինչպես կիսաանապատային, այնպես էլ անտառային գոտում:

**Կենարանության առանձնահատկությունները:** Թոշում են հունիս-հուլիս ամիսներին, հանդիպում են գետերի ափերին, հաճախ նստում են քարերի վրա: Զվերը դնում են դանդաղ հոսացող ջիր մեջ: Չարգացումը տևում է 2-3 տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են առանձին առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իմնական գործունները:** Գետերի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն՝ պայմանավորված հիդրոշինարարությամբ, ջրի աղտոտում:

**Պահպանության իրավանացվող միջոցառումները:** Շեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընդգրկում «Իջևան» արգելավայրի տարածքի մեջ, գետերի վրա՝ որտեղ բնակվում է տեսակը, հիդրոշինարարության սահմանափակում:

## 29. Ծպոտ ճահճային

*Leucorrhinia pectoralis* (Charpentier, 1825)

Կարգ՝ Ծպոտներ - Odonata

Հնտամիք՝ Խոկական ծպոտներ - Libellulidae



©Kai Rösler



**Կարգավիճակը:** Ծայրահեղ հազվագյուտ տեսակ է: Հանդիսանում է տեսակի արեալի սահմանագծին գտնվող ռելիկտային պոպուլյացիա: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a: Ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի, գեղակազմ ծպոտ է (մարմնի երկարությունը 24-27 մմ): Մարմինը մուգ կապույտ է՝ ավելի բաց գույնի նախշազարդով: Կուրծքը վերևից ծածկված է կարմրաշագանակագույն կամ դեղնավում բծերով: Փորիկի հատվածների վրա՝ վերևից, կամ դրանց մակերեսի մեծ մասը ծածկված կամ դեղնավուն խոշոր բծեր, 7-րդ հատվածը միշտ մեծ դեղնի բծով է:

**Տարածվածությունը:** Եվրոպա՝ Ֆրանսիայից ու Շվեյցարիայից դեպի արևելք՝ մինչև Արևմտյան Սիրիի և Ալբայ: Թուրքիայում, Կովկասում և Անդրկովկասում ներկայացված է ռելիկտային օջախներով:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Ստեփանավան քաղաքի շրջակայից (Լոռու մարզ):

**Ապրելավայրերը:** Ճահճացած տորֆահողեր, անտառային գոտում՝ ջրային և ջրամերձ բուսականությամբ ոչ մեծ լճեր:

**Կենարանության առանձնահատկությունները:** Եվրոպայում թշում են ապրիլի վերջից մինչև հուլիսի սկիզբը: Հայաստանում գտնվել են հուլիսին: Զվարդում են՝ նետելով ձվերը ջրի մեջ: Թրթուրը զարգանում է կանգնած ջրով, մեծամասամբ, ճահճացած ջրամբարներում: Զարգացումը տևում է 2 տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնարերումներ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իմմնական գործուները:** Տեսակի ապրելավայրերի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն՝ պայմանավորված ճահճներում մելիորատիվ աշխատանքներով և տորֆի արտահանումներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ստեփանավան քաղաքի շրջակայրում ՔՀՊՏ-ի ստեղծում:

### 30. Սևծովյան ճպուտ

*Libellula pontica* Selys, 1887

Կարգ՝ ճպուտներ - Odonata

Ընտանիք՝ Իսկական ճպուտներ - Libellulidae



©Jean-Pierre Boudot



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2ab(iii): Ընդգրկված է ԲՊՄՄ-ի (ver 3.1.) Կարմիր ցուցակում որպես «Վտանգված վիճակին մոտ գտնվող» NT: Գրանցված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի ճպուտ է (մարմնի երկարությունը շուրջ 45 մմ): Մարմինը կարմրավուն կամ շիկակարմրավուն է, փորային տերգիտների միջին զծի երկայնքով կան փոքրիկ բծեր: Սեռահատուն արուի մարմինը կապույտ փոշեծածկով է: Փորիկի վերին մասով ձգվում է նեղ, սև գույնի զոլ, որը փոքր-ինչ լայնանում է առջևից դեպի հետ: Թևերի հիմքում կան ոչ մեծ, շագանակագույն մգացումներ:

**Տարածվածությունը:** Թուրքիա, Եգիպտոս, Հայաստան, Ադրբեյջան, Արևելյան Հայաստան, Հայաստանի Հարավյալ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից (Արարատի մարզ):

**Ապրելավայրերը:** Եղեգով աճած ջրանցքներ և գետեր կիսաանապատային գոտում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թոշում են ամառվա առաջին կեսին: Զվարդում են ջրի մեջ՝ փորիկի ծայրով հարվածելով ջրի մակերեսին: Թրթուրը զարգանում է մեկ տարվա ընթացքում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրահեղ հազվադեպ է: Հայտնի է մեկ հայտնաբերման փաստ:

**Վտանգման իմնական գործուները:** Ջրամբարների հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն և աղտոտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի զարգացման վայրերի հայտնաբերում և պահպանում:

### 31. ճպուռ Սարինա

*Orthetrum sabina* (Drury, 1770)

Կարգ՝ ճպուռներ - Odonata

Ընտանիք՝ Իսկական ճպուռներ - Libellulidae



©F.K.Kakkassery



**Կարգավիճակը:** Արեալի սահմանաեզրին գտնվող հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի, շատ բարեկազմ մարմնով ճպուռ է (մարմնի երկարությունը 45-48 մմ): Գունավորումը հիմնականում սև է, բաց դեղնավուն գարդանախշով՝ երբեմն կանաչավուն երանգով: Կուրծքը կողքերից ունի շեղ դասավորված, նեղ, բաց գույնի զոլեր: Փորիկը սև միջնազծով է, որը 4-6րդ հատվածների վրա առջևի մասում և հետեւից խիստ լայնացած է, 7-9-րդ հատվածները գրեթե ամրողությամբ սև են, 10-րդը՝ մեծ մասամբ բաց գունավորված:

**Տարածվածությունը:** Կովկասից դեպի հարավ և արևելք՝ մինչև Շապոնիա և Ավստրալիա:  
**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Սյունիքի մարզից՝ Մեղրի քաղաքի և Աղդարա գյուղի մոտակայքից:

**Ապրելավայրերը:** Հայաստանում կիսաանապատային գոտու կանգնած և դանդաղ հոսող ջրով ջրամբարներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգանում է բույլ հոսանքով բավականին տաք ջրամբարներում: Թողիքը՝ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են առանձին հայտնաբերումներ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իմնական գործունները:** Հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն և ջրամբարների աղտոտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

## 32. Տափակ ճպուռ

Sympetrum depressiusculum (Selys, 1841)

Կարգ՝ Ճպուռներ - Odonata

Ընտանիք՝ Իսկական ճպուռներ - Libellulidae



©Jean-Michel Faton



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Անհետացող»՝ EN B 1a+ B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մասն ճպուռ է (մարմնի երկարությունը 32-37 մմ): Եզի և ոչ սեռահասուն արուների գունավորումը դեղին է՝ վերևից փոքր-ինչ ավելի մուգ, սեռահասուն արուների մարմնի վերին մասը կարմիր է, փորիկի 4-8-րդ հատվածների կողքերին կան սև գույնի, նեղ, եռանկյունաձև երկայնակի բժեր:

**Տարածվածությունը:** Ալֆիր, Եվրոպա՝ Հոլանդիայից և Ֆրանսիայից դեպի արևելք՝ Սիրիի հարավով մինչև Խարարովսկ և Մանջյուրիա, տեղ-տեղ հանդիպում է Սիչին Սսիայում, Աղրբեջանում և Հայաստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Սյունիքի մարզից՝ Կապան քաղաքի և Արծվանիկ գյուղի շրջակայքից:

**Ապրելավայրերը:** Բնորոշ է կանգնած ջրերով ջրավազաններին, Հայաստանում հանդիպում է անտառային գոտում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բազմանում են, սովորաբար, բավականին խոշոր, բայց ոչ խորը ջրամբարներում՝ ներառած ջրածածկ դաշտերը: Ունի գաղթելու ձգուում և կարող է հանդիպել նաև ջրից հեռու վայրերում: Եվրոպայում բոհշքը դիտվում է հունիսից մինչև նոյեմբեր ամիսներ, Հայաստանում բոհշքը գրանցվել է հուլիսին: Ընդունակ է տարվա ընթացքում տալ 2 սերունդ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

### 33. Ծպուտ-ծառա

*Crocothemis servilia* (Drury, 1773)

Կարգ՝ Ծպուտներ - Odonata

Ընտանիք՝ Խովական ծպուտներ - Libellulidae



©André Günther



**Կարգավիճակը:** Արեալի սահմանաեզրին գտնվող ծայրահեղ հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի ծպուտ է (մարմնի երկարությունը շուրջ 34-37 մմ): Էգերի և ոչ սեռահասուն արուների մարմնի գունավորումը քիչ թե շատ մուգ ուղեղեղնավուն է, սեռահասուն արուներին՝ վառ կարմիր: Փորիկի հատվածների (բացի 10-րդից) միջազդի երկարությամբ վերևից ձգվում է նեղ, փոքր-ինչ անհավասար, մուգ գույնի զոլ:

**Տարածվածությունը:** Հարավային Ասիա, արեալի արեելքում հասնում է Շապոնիա, արևմուտքում՝ Հարավ-Արևելյան Թուրքիա և Իսրայել, Անդրկովկասում հայտնի են մեկուսացած օջախներ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Գտնվել է միայն Սեղրի քաղաքի մոտակայքում (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Գրեթե բոլոր տաք, կանգնած ջրերով բաց ջրամբարներ: Հայաստանում հայտնաբերվել է Արաքս գետի մոտ գտնվող լճակից:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգանում է ջրաճահճային հարուստ բուսականությամբ տաք, կանգնած ջրերով ջրամբարներում: Զարգացման ցիկլը, ինչքանով հայտնի է, տևում է մեկ տարի: Հայաստանում հասուն առանձնյակները գրանցվել են հունիսին: Գերադասում են ափամերձ բուսականություն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրահեղ հազվադեպ է, հայտնի է հայտնաբերման մեկ փաստ: Թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման հիմնական գործուները:** Ջրամբարների աղտոտում բուսաքիմիկատներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայր հանդիսացող լճակին տալ Բնության հուշարձանի կարգավիճակ:

#### 34. Սորեխս ելունդավոր

Nocarodes nodosus Mistschenko, 1951

Կարգ՝ Ռողաքևեր - Orthoptera

Ընտանիք՝ Սորեխսներ - Acrididae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր մարմնով (արողի մարմնի երկարությունը 19,2-22,5 մմ է, էգինը՝ 36,5-48,5 մմ) և ամոր ու անհարթ ծածկույթներով անթև մորեխ է: Գունավորումը՝ մոխրագույն-շագանակագույն, մոխրագույն, դեղնա-շագանակագույն:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ տեսակ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարատի մարզի մի շարք կետերից (Վեդի ք. շրջակայք, Քաղցրաշեն գյուղի մոտակայք, Գոռավանի ավագուտներ):

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի կիսաանապատներ, ավազոտ անապատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բուսակեր են, բազմակեր: Զմեռում են հավանաբար բրուրները և հասուն առանձնյակները, հայտնվում են մարտ-ապրիլ ամիսներին, զուգավորվում են մայիս-հունիսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է՝ հանդիպում են եզակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Խոպան հողերի հերկում, վտանգված չոր էկոհամակարգերում անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Գոռավանի ավագուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի բնապահպան ռեժիմի խստացում, անասունների արածեցման արգելում:

### 35. Սորելի հայկական

*Gomphocerus armeniacus* (Uvarov, 1931)

Կարգ՝ Ուղղաթևեր - Orthoptera

Ընտանիք՝ Սորելիսներ - Acrididae



**Կարգավիճակը:** Սահմանափակ, մասնակի ընդհատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a +B 2a:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի մորեխիկ է (արոտի մարմնի երկարությունը 12,5-17,2 մմ է): Գունավորումը կանաչ է, ճակատն երբեմն խոշոր մուգ պուտով է: Վերնաթևերը և թևերը լավ են զարգացած, երկու սեռերի վերնաթևերն ել միագույն են՝ զագարային հատվածից դեպի առաջ զորշագույն ջղերով և թույլ սպիտակ պուտիկով, էզինը՝ երբեմն նաև մուգ պտերով: Թները թափանցիկ են:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Շիրակի (գգ. Վարդադրյուր, Զաջուռ, Արքիկ, Փոքրաշեն), Արագածոտնի (գ. Քուչակ, Արագած լեռան լանջեր), Կոտայքի (Գեղարդ, Ծաղկաձոր, Հանքավան, Ակնալիճ), Գեղարքունիքի (ք. Աևան, գ. Շորժա, Արգիշի գետահովիտ) և Սյունիքի (Վողջի գետի վերին հոսք, Տաշտուն գ. շրջակայք) մարզերից:

**Ապրելավայրերը:** Ալպյան և ենթալպյան գոտիների (1300-1500 մ ծ.մ.բ.), մարգագետիններ և գորգեր:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թրթուրները դուրս են զալիս հունիսի կեսին, հասուն անհատները հանդիպում են հուլիսի սկզբից, զանգվածաբար՝ օգոստոսին, հազվադեպ կարող են հանդիպել նաև սեպտեմբերին: Հետսաղմնային զարգացումը տևում է 45-55 օր: Բուսակեր են, բազմակեր:

**Թվաքանակը և դրա փոփոխության նիտումները:** Հանդիպում են եզակի առանձնյակներ, թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործնները:** Խոսան հողերի հերկում, Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անատունների գերարածեցնամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Աևան», «Արփի» և «Արևիկ» ազգային պարկերում և «Զաջարան» արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արփի» և «Արևիկ» ազգային պարկերի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

### 36. Հաստածղիդ լայնացած

*Bradyporus dilatatus* Stål, 1875.

Կարգ՝ Ռողաքներ - Orthoptera

Ընտանիք՝ Հաստածղիդներ - Bradyporidae



© G. Karagyan



**Կարգավիճակը:** Ընդհատված, ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Շատ խոշոր, ծանրաքաշ մարմնով ծղրիդ է (արոի մարմնի երկարությունը 55,0-65,0 մմ է, եզինը՝ 41,0-70,0 մմ, ձվադրինը՝ 11,0-13,0 մմ): Գունավորումը սև է՝ բրուկագույն փայլով, առաջնամեջքի հետին մասը և փորիկի կողղերով ձգվող երկու երկայնակի զղերը կանաչ են կամ կանաչագորշագույն: Վերնաքննությունը խիստ թերզարգացած են՝ բարնված առաջնամեջքի եզրի տակ:

**Տարածվածությունը:** Փոքր Ասիա, Հյուսիս-Արևմտյան Իրան, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Շիրակի (Արփի լճի հարակից տափաստաններ, Ամասիա ք. շրջակայր), Կոտայքի (Հրազդան ք., Ֆռնտան և Գառնի գգ. շրջակայր) և Գեղարքունիքի (Սեմյոնովկա գ. շրջակայր) մարզերում:

**Ապրելավայրերը:** Զարգացած ճիմածածկով լեռնատափաստաններ՝ 1500-2100 մ ծ.մ.ք.:

**Կենսաբնության սոանձնահատկությունները:** Բուսակեր են, բազմակեր: Հասուն առանձնյակները հանդիպում են հովիս-օգոստոս ամիսներին, գետնի վրա սողում են ցերեկը՝ բացի ամենաշող ժամերից:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հյուսիսային Հայաստանում տեղ-տեղ բազմաքանակ են, Կենտրոնական Հայաստանում հազվադեպ է, նվազող թվաքանակով:

**Վտանգման հիմնական գործոնները:** Խոպան հողերի հերկում, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արփի» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

### 37. Սղոցապոչ անդրկովկասյան

Poccilimon geoktshaicus Stshelkanovtsev, 1910

Կարգ՝ Ուղղաթեր - Orthoptera

Ընտանիք՝ Ծղկիդներ - Tettigoniidae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է, հայտնի է փոքրաքանակ հավաքներից: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի ծղիդ է (արոտի մարմնի երկարությունը 15,0-21,0 մմ է, եզինը՝ 20,0-26,0 մմ, ձվադրինը՝ 8,0-9,0 մմ): Արոտի վերնաթերը կարճացած են՝ մասամբ մտնում են փորիկի առաջին տերգիսի ծայրի տակ: Գունավորումը գորշագույն, կանաչավուն կամ դեղնավուն է, առաջնամեջը՝ կողային երկայնակի կարմրա-դարչնագույն գոլերով՝ արուներինը ամբողջական, էգերինը՝ կարճացած:

**Տարածվածությունը:** Դադաստան, Վրաստան, Աղբքեջան, Հյաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նկարագրված է Սևանա լճի մոտակայքից (ավելի սոտույգ տվյալներ չկան), այստեղ հետագայում չի գտնվել, հայտնի է նաև Տավոշի մարզից (Քաջրատաշեն գ. Չրջակայք):

**Ապրելավայրերը:** Տափաստանային գոտի, անտառային գոտու ստորին տափաստանացած հատվածներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հասուն առանձնյակները հանդիպում են հունիսին: Հետադաշտության զարգացումը տևում է 45-55 օր: Բուսակեր են, բազմակեր, Վրաստանում տեսակը նշված է որպես գյուղատնտեսական մշակաբույսերի (հացահատիկային, կարտոֆիլի, լոբու) երկրորդական վճարատու:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայաստանում հազվադեպ է հանդիպում, հայտնի են եզակի նմուշներ, թվաքանակի փոփոխության միտումները պարզաբանված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անասունների գերարածեցում, խոպան հողերի հերկում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Ընդունված չեն, հավանաբար հանդիպում է «Սևան» ազգային պարկի տարածքում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

### 38. Սղոցապոչ հայկական

*Poecilimonella armeniaca* Uvarov, 1921

Կարգ՝ Ուղղաթևեր - Orthoptera

Ընտանիք՝ Ծղկիդներ - Tettigoniidae



©A. Sofikyan

**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի ծղրիդ է (արոտի մարմնի երկարությունը 12,0-14,5 մմ է, էգինը՝ 17,0-19,0 մմ, ձվադրինը՝ 5,5-7,0 մմ): Արոտների վերնաթերթ կարճացած են, մասամբ մտնում են փորիկի առաջին տերզիտի ծայրի տակ, էգերինը շատ փոքր են և թարնված առաջնամեջքի ծայրի տակ: Գունավորումը տարատեսակ է՝ կարմրա-դեղին, կարմրա-գորշագույն, կարմրա-կանաչ:

**Տարածվածությունը:** Հայաստան, Հյուսիս-Արևելյան Թուրքիա (Նարս վիլայեթ):

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Վայոց Զորի մարզից (Բարձրունի և Կեչուտ գգ. Շրջակայր):

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստան՝ 1500-2000 մ ծ.մ.ր., երբեմն բափանցում են ցանքերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հասուն առանձնյակները հանդիպում են հունիս-հուլիս ամիսներին: Բուսակեր են, բազմակեր:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը չափավոր բարձր է, թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Խոպան հողերի հերկում, բունաքիմիկատների ոչ խելամիտ օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Ձերմուկ» ազգային պարկի տարածքի մեջ:

### 39. Ֆիտոդրիմադուզա հայկական

*Phytodrymadusa armeniaca* Ramme, 1939

Կարգ՝ Ռդղաքեր - Orthoptera

Ընտանիք՝ Ծղիդներ - Tettigoniidae



©A. Sofikyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր չափի ծղրիդ է (արոտի մարմնի երկարությունը 25,0-30,0 մմ է): Գունավորումը միատար կանաչա-դեղնավուն է: Երկու սեռերի վերնաթերթն էլ թերզարգացած են՝ արոտինը հասնում է փորիկի 3-րդ, իսկ էգինը՝ 2-րդ տերզիտին:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նկարագրված է Շեմավան գ. շրջակայրից (Արմավիրի մարզ): Հայտնի է նաև Արարատի (Ասնի լրված գ.) և Սյունիքի (Մեղրի, Ազարակ քք., Քարահունջ գ.) մարզերից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի կիսաանապատներ՝ մինչև 1100 մ ծ.մ.բ., բարձր բուսականությամբ և բիուտներով տեղամասեր:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հասուն միջատները հանդիպում են հովիս-օգոստոս ամիսներին: Բուսակեր են, բազմակեր:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հանդիպում են եզակի առանձնյակներ, թվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Խոպան հողերի յուրացում, վտանգված չոր Էկոհամակարգերում՝ անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

#### **40. Սատունինիցի սկստողիմադրությունը.**

### **Scotodrymadusa satunini (Uvarov, 1916)**

## Կարգ՝ Ուղղաքեր - Orthoptera

#### **Ընտանիք՝ Ծորիդներ - Tettigoniidae**



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ, հնարավոր է անհետացած տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող՝ CR B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Մարմինը միջին մեծության է (արուի մարմնի երկարությունը 24,0 մմ է, էգինը՝ 23,0-26,0 մմ, ձվադրինը՝ 10,0-13,0 մմ): Գունավորումը գորշագույն, մոխրագույն-գորշագույն կամ շագանակագույն է: Երկու սեռերի վերնաքերն ել խիստ կարճացած են, հազիվ են երևում առաջնամեջքի եզրի տակից:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր Երևանից (այստեղ հավանաբար անհետազել է) և Արմավիրի մարզից (Փարաքար գ. և Այդր լճի շրջակալիք):

**Ապրելավայրեր:** Վիսաննավատային գոտու գաճրադիր տեխամասեր՝ 845-1100օ ծ.մ.թ.:

**Կենսաբանության առաճնահատկությունները:** Ծրբությունները հավանաբար դուրս են զայխ մայիսին: Բարձր հասակի թրթությունները և հասուն միջատները հավաքվել են հունիսին: **Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի է 1920թ-ին հավաքված եղակի նմուշներից:

**Վատանգման իիմնական գործուները:** Տարածքի զյուղատնտեսական յուրացում, քաղաքակենտրոնացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

Պահպանության առաջարկվող միջոցառումները: Մշակված չեն:

#### 41. Ոյոզելի երկգույն ծղրիդ

Bicolorana roeseli Hagenbach, 1822

Կարգ՝ Ուղղաքներ - Orthoptera

Ընտանիք՝ Ծղրիդներ - Tettigoniidae



©A. Sofikyan



**Կարգավիճակը:** Արեալի սահմանաեզրում գտնվող մեկուսացած պոպուլյացիա է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի ծղրիդ է (արոտի մարմնի երկարությունը 16,0 մմ է, էգինը՝ 17,0 մմ, ձվադրինը՝ 6,0-7,0 մմ): Գունավորումը ժանգագույն-դեղին է կամ դեղնա-կանաչավուն, վերնաքները սովորաբար կարճացած են՝ արոտներինը չեն հասնում փորիկի գագարին, էգերինը՝ փորիկի կենտրոնին, հազվադեպ հանդիպում են նաև լավ զարգացած վերնաքներով և թևերով առանձնյակներ:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Կովկաս, Վրաստան, Հայաստան՝ դեպի արևելք մինչև Արևմտյան Սիրիի, Հյուսիսային և Արևելյան Ղազախստան և Հյուսիսային Մոնղոլիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միակ ապրելավայրից՝ Հանքավան գ. շրջակայքից (Կոտայքի մարզ):

**Ապրելավայրերը:** Անտառի վերին եզր՝ 1800-1900 մ ծ.մ.բ.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բուսակեր են: Թրթուրները դուրս են գալիս հունիսի սկզբին, հասուն առանձնյակները՝ հուլիս-օգոստոս ամիսներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հանդիպում են եզակի առանձնյակներ, թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմմնական գործուները:** Անասունների գերարածեցում, խոտհուն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է “Հանքավան” արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի տարածքում տեսակի տարածման վայրերում արածեցման և խոտհունների սահմանափակում:

## 42. Սագա տափաստանային

Saga pedo Pallas, 1771  
Կարգ՝ Ուղղաքելք - Orthoptera  
Ընտանիք՝ Ծղկիդներ - Tettigoniidae



©Blaž Šegula



**Կարգավիճակը:** Արեալի սահմանաեզրին գտնվող չափազանց հազվագյուտ տեսակ է, հայտնի է եղակի հայտնաբերմամբ, հավանաբար անհետացել է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+B2a: Տեսակը ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում (ver 2.3.) «Խոցելի» (Vulnerable B1+2bd) կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում: Ընդգրկված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրություն:** Խոշոր չափի խիստ ճգված մարմնով ծղրիդ է (մարմնի երկարությունը 53,0-72,0 մմ է, ձվադրինը՝ 25,0-38,0 մմ): Գունավորումը դեղին կամ դեղնականաչափուն է: Վերնաքերը և թևերը գրեթե ամբողջությամբ հետզարգացած են և թարմված են առաջնամեջքի ծայրի տակ:

**Տարածվածություն:** Հարավային Եվրոպայի տափաստաններ, Հյուսիսային Կովկաս, Վրաստան, Հայաստան, դեպի արևելք՝ մինչև Արևմտյան Սիրիի և Ղազախստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է եղակի հավաքով Զկալովկա գյուղից՝ Սևանա լճի մոտ (Գեղարքունիքի մարզ):

**Ապրելավայրեր:** Լեռնատափաստան:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բազմանում են կուսածնությամբ: Արուները հայտնաբերված չեն: Դարանակալ գիշատիչ է, սնվում է այլ տեսակի խոշոր մորեխներով և ծղրիդներով, ակտիվ է ցերեկը, բայց ցվադրում է երեկոյան ժամերին կամ վաղ գիշերը: Զարգացումը զուգակցվում է 8 մաշկափոխություններով: Հայաստանից հայտնի առանձնյակը հավաքվել է սեպտեմբերին, արեալի այլ մասերում հանդիպում են սկսած հուլիսից:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայաստանից հայտնի է մեկ նմուշ:

**Վտանգման իմանական գործուները:** Տարածի յուրացում, անաստման գերարածուցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Հավանաբար պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Բացահայտել տեսակի հնարավոր այլելավայրերը:

### 43. Արարատյան որդան կարմիր

*Porphyrophora hammelii* Brandt

Կարգ՝ Հավասարաքեր - Homoptera

Ընտանիք՝ Հակա որդաններ - Margarodidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ, կրծատվող արեալով և նվազող թվաքանակով հազարյուտ էնդեմիկ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1b(i,ii,iii)+2ab(i,ii,iii): Գրանցված էր ԽՍՀՀ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Բնորոշ է խիստ արտահայտված սեռական երկձևություն: Հասուն էզն անիքն, ձվաձև, մուգ բայի գույն ունեցող, դանդաղաշարժ, փոքր միջատ է (մարմնի երկարությունը՝ 2-12 մմ է, քաշը՝ 2-100 մգ): Մարմինը հատվածավորված է, սակայն չունի հատակ բաժանում զլիսի, կրծքի և փորիկի: Ոտքերը կարճ են, քոյլ զարգացած: Աչքերը պարզ տիպի են, բեղիկները 11-12 -հատվածանի: Արուն չափերով շատ ավելի փոքր է էզից (մարմնի երկարությունը՝ 2-4.5 մմ, քաշը՝ 06-3,4 մգ), մարմինը հատակ բաժանված է զլիսի, կրծքի և փորիկի, կուրծքն օժտված է մուգ կարմիր, առաջնային երկու ունեցող մեկ գույզ թափանցիկ թևերով: Ունեն բարդ ֆասետային խոշոր աչքեր, բեղիկները կազմված են 13 հատվածներից, ոտքերն երկար են, հարմարված համեմատաբար արագ տեղաշարժվելուն: Մարմինը մուգ կարմիր գույնի է, վերջին հատվածի մեջքային կողմից դուրս են զալիս մարմնի երկարությունը 2-2,5 անգամ գերազանցող արձարագույն մոմային թելերից կազմված 2 փազեր:

**Տարածվածությունը:** Արարատյան հարթավայրի էնդեմիկ տեսակ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արարատի և Արմավիրի մարզեր՝ Արարատյան հարթավայրի աղուտներ: 20-րդ դարի կեսերին արեալը կազմում էր 10000 հա, 1990 թ. տվյալներով ընդամենը 2000 հա էր և բաղկացած էր իրարից տարանջատված փոքր (մինչև մի քանի հեկտար), և 2 համեմատաբար մեծ՝ մեկը՝ Արազապ (200 հա), մյուսը՝ Ջրարատ (17 հա) գյուղերի մոտակայքում (Արմավիրի մարզ) գտնվող հատվածներից:

**Ապրելավայրերը:** Ապրում են կերային բույսերի առկայությամբ աղուտներում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բուսակեր, օլիգոֆիազ տեսակ է, որը սնվում է միայն երկու տեսակի բույսերով՝ որդանախոտով (*Aeluropus*) և եղեգով (*Phragmites*): Ապրիլ-մայիս ամիսներին դուրս են զալիս թրթուրները՝ թափառողները, բարձրանում են հողի մակերես, գտնում կերարույսը և սնվում մինչև օգոստոս-սեպտեմբեր: Սննան ամբողջ ընթացքում թրթուրը մնում է կազած բույսին: Մայիսի վերջին կատարվում է մաշկափոխություն և առաջանում են ցիստեր: Օգոստոսի երկրորդ կեսից ցիստերի մի մասից սկսում են դուրս զալ արու թրթուրները, որոնք արտաքինից նման են հատուն էգերին, բայց չափերով շատ ավելի փոքր են: Որոշ ժամանակ անց դրանք կրկին անցնում են հողի մեջ, որտեղ ձևավորվում են հարսնյակ-նիմֆերը: Այդ ամբողջ ժամանակահատվածում էգերի թրթուրները շարունակում են սնվել և աճել կերարույսերին կազած ցիստերում: Ցիստերից դուրս զալուց հետո էգերը անմիջապես բարձրանում են հողի մակերևոյից և սպասում արուներին: Հասուն արուները ձևափոխությունից հետո մի քանի օր մնում են

հողում, որի ընթացքում աստիճանաբար ձևավորվում են նրանց թերթը: Շարժուն դառնալուց հետո արուները դուրս են գալիս հողի մակերևույթ: Հասուն էգերը և արուները մասսայաբար դուրս են գալիս հողի մակերևույթ սեպտեմբերից մինչև հոկտեմբերի կեսերը, վաղ առավոտյան՝ ժամը 6-ից մինչև 11-ը: Այդ ընթացքում կատարվում է նրանց զուգավորումը, որից հետո արուները սատկում են, իսկ բեղմնավորված էգերը անցնում են հողի մեջ և 1-5 սմ խորության վրա սկսում արտադրել նույր մոմային թելեր ու պատրաստել յուրօրինակ թավշու բռժո՞ծ՝ ձվապարկ, որտեղ էլ ձվադրում են, որից հետո նրանք էլ են սատկում: Զմեռում են ձվերը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Տարածման վայրերում թվաքանակը բարձր է, սակայն պոպուլյացիայի թվաքանակը ընդհանուր առնամբ խիստ նվազել է՝ պայմանավորված արեալի զգալի կրծատմամբ:

**Վտանգման իմնական գործուները:** Աղուտների ինտենսիվ յուրացում, մելիորատիվ աշխատանքների իրականացում, հողերի սեփականաշնորհում, անասունների չկարգավորված արածեցում: Հաշվի առնելով արեալի առանձնահատկությունները՝ դրա սահմանափակ, մասնատված և հողահանդակներով շրջապատված լինելը, կիմայի հնարավոր փոփոխությունները կարող են առավել մեծ վտանգ ներկայացնել այս տեսակի համար: Հիդրոլոգիական ռեժիմի հետագա փոփոխությունը՝ ինչպես տեսակի տարածման վայրերում, այնպես էլ շրջակա հողահանդակներում, կարող է հանգեցնել նրա ապրելավայրերի ոչնչացմանը և հետևաբար՝ նաև միջատի բնաշնչմանը:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** 1986 թ-ին հասուկ այս տեսակի պահպանության նպատակով ստեղծվել է «Որդան կարմիր» արգելավայրը: Մշակված է արհեստական պայմաններում միջատի բազմացման մեթոդ:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում:

#### 44. Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ

*Carabus (Procerus) scabrosus fallettianus* Cavazzutti, 1997

Կարգ՝ Կարծրաքրներ կամ Բզեզմեր - Coleoptera

Ընտանիք՝ Գնայուկ բզեզմեր - Carabidae



**Կարգավիճակը:** Փոքր արեալով ազվադեպ ենթատեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի» VU 1ab(iii)+B 2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր բզեզ է (մարմնի երկարությունը 47-60 մմ), ունի ձգված ուռուցիկ մարմին: Մարմնի վերին մասը սովորաբար մնտաղական փայլով է՝ կապույտ, կապտականաչ, կապտամանուշակգույն, հազվադեպ՝ գրեթե սև, կապույտ փայլով, մարմնի ստորին մասը սև է: Վերնաքները կոպիտ խիտ թմբիկներում են:

**Տարածվածությունը:** Հայաստան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, հավանաբար նաև Ադրբեյջանի հարակից տարածքներ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սյունիքի մարզ (Գորիս, Խնձորեսկ, Կապան, Տանձավեր, Շիշկերտ, Քաջարան, Լիճք):

**Ապրելավայրերը:** Անտառներ և հետանտառային էկոհամակարգեր՝ 1100-2200 մ ծ.մ.թ., ինչպես նաև այգիներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են տարվա ողջ ընթացքում տաք եղանակին՝ գարնանից մինչև աշուն: Օրվա ընթացքում ակտիվությունը կախված է տարվա ժամանակից՝ հով եղանակին ակտիվ են ցերեկը, շոգ եղանակին՝ մքնչաղին և գիշերը: Բզեզներն ու բրրուրները սնվում են խխունջներով (գլխավորապես *Helix lucorum* տեսակով) և կողինջներով:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը կայուն ոչ բարձր է, տարբեր տարիներին դիտվում են աննշան տատանումներ՝ հավանաբար պայմանավորված կլիմայական պայմաններով:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անտառային էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված մասնավորապես ապօրինի անտառահատումներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում, «Արևիկ» ազգային պարկում և «Զանգեզուր» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Սյունիքի մարզի անտառային էկոհամակարգերի բարվոր վիճակի ապահովում:

#### 45. Սևանյան գմայուկ

Dyschirius sevanensis Khnзорian, 1962.

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae



©K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Փոքր արեալով տեսակ է, միոցենյան մերձափնյա ֆաունայի ռելիկտ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B 2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մասր բզեզ է (մարմնի երկարությունը 4,8-5,5 մմ), ունի նեղ, խիստ ուռուցիկ, փայլուն մարմին: Մարմնի գունավորքումը սև է, շատ քեզ քիչ արտահայտված պղնձագույն շողշողունով:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սևանա լճի ափ (Շորժա գյուղի մոտակայք, ք. Մարտունի, ք. Սևան, Մասրիկ գետի գետաքերան):

**Ապրելավայրերը:** Ավազոտ լողափեր՝ անմիջապես ջրազդի մոտ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բզեզներն ու բրբությունն ապրում են խոնավ ավազում՝ փորելով նեղ անցքեր: Սնվում են հավանաբար մանր խեցքետնակերպերով և նրանց դիերով:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը տեղ-տեղ կայուն բարձր է:

**Վտանգման իմնական գործոնները:** Լողափերի վրա ռեկրեացիոն ազդեցություն, որը հանգեցնում է ավազի խտացմանը: Զրափնյա գծի կտրուկ փոփոխություններ, ինչը հավանական է՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացմանը ուղղված միջոցառումների իրականացման հետ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Սևանա լճի մակարդակի բարձրացման ընթացքում պոպուլյացիայի վիճակի հսկողություն:

**46. Դարչնագույն առվակային գնայուկ**

*Trechus infuscatus* Chaudoir, 1850.

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae



© K. Makarov, G. Karapetyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մանր բզեզ է (մարմնի երկարությունը 3,5 մմ), ունի չափավոր ձգված թույլ ուսուցիկ\_մարմին: Մարմինը կարմրադարչնագույն է, գլուխը և վերնաքերը սովորաբար ավելի մուգ են գունավորված, քան առաջնակուրծքը:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արագած լեռան հարավային լանջի Քարի լճի շրջակայք:

**Ապրելավայրերը:** Ալպյան մարգագետիններ՝ 2900-3000 մ ծ.մ.բ.:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հանդիպում են քարերի տակ՝ հովհանության վերջին-օգոստոսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը կայուն ոչ բարձր է:

**Վտանգման իմնական գործոնները:** Անասունների գերարածեցման հետևանքով ալպյան մարգագետինների դեգրադացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Հանդիպում է “Արագածի ալպյան” արգելավայրի տարածքում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նշված արգելավայրում իրական բնապահպան ռեժիմի ապահովում:

#### 47. Ստեփանավանյան առվակային գնայուկ

Duvalius stepanavanensis Khnзорian, 1963.

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae



© K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում զտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մանր բզեզ է (մարմնի երկարությունը 3-3,5 մմ), ունի նեղ տափակացած նարմին, աչքեր չտնի: Գունավորումը բաց դեղին է:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է Ստեփանավան քաղաքի մոտակայքում (Լոռու մարզ):

**Ապրելավայրերը:** Արջալեռան հյուսիսային լանջի անտառի աղբյուր:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բզեզներն ապրում են փափուկ կավավազահղողում, ոչ խորը բաղվելով (մինչև 2-3 սմ խորության վրա) հոսուն ջրով հագեցած հողի մեջ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Աղբյուրի՝ որի մոտ ապրում է տեսակը, հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում: **Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անհրաժեշտ է աղբյուրին և հարակից տարածքներին սահմանել բնության հուշարձանի կարգավիճակ և իրականացնել աղբյուրի հիդրոլոգիական ռեժիմի հսկողություն:

#### 48. Յացենկո-Խմելսկու առվակային գմայուկ

Duvalius yatsenkokhmelevskii (Khnzorian, 1960).

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae



© K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գմահատվում է որպես «Կրիտիկական վիճակում զտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մասն բգեգ է (մարմնի երկարությունը 6,5 մմ), ունի ձգված, չափավոր ուղղուցիկ մարմին, ծածկույթները փայլուն են, կարմրագորշավուն:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Իջևան քաղաքի շրջակայքից (Տավուշի մարզ):

**Ապելավայրերը:** Բնակվում է սաղարթավոր անտառում՝ աղբյուրի մոտ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հանդիպում են մայիս-հունիս ամիսներին՝ գերխոնավ հողերում և անտառային փոխաձրում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Աղբյուրի, որի մոտ բնակվում է տեսակը, հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Հանդիպում է «Իջևան» պետական արգելավայրի տարածքում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի իրական բնապահապան ռեժիմի ապահովում, աղբյուրի հիդրոլոգիական ռեժիմի հսկողություն:

#### 49. Խոճորյանի զմայուկ

*Deltomerus khnzoriani* Kurnakov, 1960.

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae



© K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով զմահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր բզեզ է (մարմնի երկարությունը 10-12 մմ), բարեկազմ, տափաքած, չափավոր փայլուն մարմնով: Գունավորումը կարմրադարձնագույն է:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Ջերմուկ քաղաքից 3300մ դեպի հյուսիս-արևելք «Սարեր Սարցալի» տեղանք:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է ալպյան մարգագետիններում՝ 3100-3300 մ ծ.մ.բ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հայտնաբերված են ճնե կույտերի մոտ՝ քարերի տակ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, փոփոխության միտումները հայտնաբերված չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Անասունների արածեցման հետևանքով էկոհամակարգի հավանական դեգրադացում: Տեսակի ապրելավայրերի կրծատում՝ պայմանավորված կլիմայի կանխատեսվող փոփոխության հետևանքով ալպյան գոտու սահմանների լանջն ի վեր տեղաշարժմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման շրջանի ընդգրկում նախատեսվող «Ջերմուկ» ազգային պարկի տարածքի մեջ:

## 50. Ալեքսանդրի գնայուկ

*Chylotomus alexandri* Kalashian, 1999

Կարգ՝ Կարծրաբներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae



©K.Makarov, G.Kartagyan



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվադեպ տեսակ է, ոչ մեծ՝ առավելապես միջինասիական ցեղի ամենաարևմտյան ներկայացուցիչն է:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մանր բզեզ է (մարմնի երկարությունը 13–16,5 մմ), նեղ, բավականին ուռուցիկ մարմնով: Մարմնի վերին մասի գունավորումը վառ կապույտ մետաղական է, փայլուն, մարմնի ստորին մասը սև է:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միակ մեկուսացած պոպուլյացիա, որը գտնվում է Օձասար լեռան հարավային լանջին՝ Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղի մոտ:

**Ապրելավայրերը:** Ֆերուլայի (*Ferula* sp.) մացառուտներով քարքարոտ լանջեր:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բգեղները հանդիպում են մայիսի վերջին-հունիսի առաջին կեսին, ցերեկը բարնվում են քարերի տակ, մթնշաղին, հնարավոր է նաև զիշերը, դուրս են զալիս գետնի մակերես և բարձրանում *Ferula* բույսի պտղաբեր թփերի վրա, որի սերմերով էլ սնվում են բգեղներն ու թրթուները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը կայուն ոչ բարձր է:

**Վտանգման իրմանական գործնները:** Հայտնի չեն: Ներկայում տարածը վարձակալության է տրված մասնավոր անձի, ինչն էլ բացառում է իրավիճակի հսկողությունը:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Աևան» պետական ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Պոպուլյացիայի ապրելավայրերում բնության հուշարձանի կարգավիճակով ԲՀՊՍ-ի ստեղծում:

## 51. Տնական գնայուկ

## Poecilus festivus (Chaudoir, 1868)

Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեղընդ - Coleoptera  
Ընտանիք՝ Գնայուկ բզեղընդ - Carabidae



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խողելի»՝ VU B 1b(iii)+B 2b(iii):

**Համառոտ նկարագրություն:** Զգված, չափավոր ուղղությունով ոչ խոշոր բգեկ է (մարմնի երկարությունը 11-13 մմ): Մարմնի վերին մասն ունի վառ գունավորում՝ մետաղական կանաչ, հաճախ ոսկեգույն շաղցողունով, որն ավելի ցայտուն է արտահայտված առաջնամեջքի վրա, հազվադեպ կապտականաչ է գունավորված: Մարմնի ստորին մասը սև է:

**Տարածվածությունը:** Հյուսիս-Արևելյան Թուրքիա, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հայտնաբերված է Երևանում (Զբվեծ և Նորարարական ավանների մոտ), “Էրեբունի” պետական արգելոցում, ինչպես նաև Տիգրանակերտ (Արարատի մարզ) և ՈՒմաղ (Վայոց Ձորի մարզ) գյուղերի մոտակայքում:

**Ապրելավայրեր:** Տարբեր տեսակի կիսաանապատներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բգեցները հանդիպում են ապրիլ-հունիս ամիսներին՝ քարերի տակ, գերազանցապես ռելիեֆի վրա ընկաց հատվածներում, որտեղ ավելի երկար է պահպանվում հողի խոնավությունը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է, հանդիպում են եզակի առանձնյալներ:

**Վտանգման իիմնական զործոնները:** Երևան քաղաքի անմիջական մոտակայքում (Զբվեմի կիրճ) լանջաֆուների փոխակերպումներ, էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների չկառավորված արածեզմամբ:


Պահպանության իրականացվող միջոցառումները: Պահպանվում է “Երեքունի” պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նորարածները պահպանության առաջարկվող միջոցառումները են համարելիս էլեկտրոնային գործառությունները, որոնք օգուտավագություն են պահպանության առաջարկվող միջոցառումների համար:

## 52. Արենիական գնայուկ

Pristonychus arenicus Kalashian, 1979

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ մեծ բզեզ է (մարմնի երկարությունը 14,5-15,5 մմ), ունի բարեկազմ, չափավոր ուսուցիկ, թույլ փայլով մարմին: Մարմնի գունավորումը կարմրագորշագույն է՝ բացից մինչև մուգ:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Արենի գյուղի մոտակայքում գտնվող «Մագելի» քարանձավից (Վայոց Ձորի մարզ):

**Ապրելավայրերը:** Ապրում է կարստային քարանձավում, մուտքից 10-30 մ հեռավորության վրա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Քարանձավասեր (տրոգոֆիլ) տեսակ է: Բզեզները հանդիպում են ամբողջ տարվա ընթացքում: Սնվում են, հավանաբար, *Niptus holosericeus* Faldermann տեսակի բզեզներով և նրանց բրթություներով, որոնք մեծ քանակությամբ հանդիպում են այստեղ ապրող մի քանի տեսակի շղթիկների կղանքի վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը կայուն է, չափավոր բարձր:

**Վտանգման իիմնական գործոնները:** Քարանձավի՝ որպես զանգվածային տուրիզմի օբյեկտ, հավանական օգտագործում:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Մագելի» քարանձավին բնության հուշարձանի կարգավիճակի սահմանում:

### 53. Քալաշյանի մրջնասեր բգեզ

Philomessor kalashiani Khnzorian, 1988

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բղեղներ - Coleoptera  
Ընտանիք՝ Խողեվիդներ - Cholevidae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+ B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Երկարավուն, ձվաձև մարմնով, բաց սպիտակադեղնավուն գունավորմամբ մասն բգեզ է (մարմնի երկարությունը շուրջ 3 մմ):

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Տեղեր (Արագածոտնի մարզ) գյուղի շրջակայքի Արագած լեռան հարավային լանջից:

**Ապելավայրերը:** Լեռնային տափաստան:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Մրջնակեր տեսակ է, հանդիպում է *Messor structor Latreille* տեսակի մրջնանոցում: Բգեղների հավաքը կատարվել է մայիսի վերջին-հունիսի սկզբին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, հայտնի են եզակի նմուշներ, փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմմնական գործումները:** Տափաստանային էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմամբ:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անասունների արածեցման կարգավորում:

#### 54. Հայկական բնդեռիկ

*Glaphyrus calvaster* Zaitzev, 1923

Կարգ՝ Կարծրաքններ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



**Կարգավիճակը:** Անհետացած տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով համապատասխանում է «Անհետացած»՝ EX կարգավիճակին:

**Համառոտ նկարագրությունը:** Ուսուցիկ, փոքր ինչ սրացած ձվածն մարմնով միջին չափի բղեկ է (նարմնի երկարությունը 14-16 մմ): Գունավորումը կապույտ մետաղական է, վերնարևերն երբեմն կարմրագորշագույն են: Արովի հետին ազդրերը խիստ հաստացած են:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր Էջմիածնի և Փարաքարի շրջակայրից, վերջին անգամ հայտնաբերվել է 1932թ.:

**Ապրելավայրերը:** Հանդիպել է թերևն կավաավազային հողերով յուրահատուկ անապատային էկոհամակարգում, որը ներկայում լրիվ հերկված է:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բզեզները հավաքվել են մայիսի երկրորդ կեսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բարձր չէ, ընդհանուր թվաքանակը նվազել է և շարունակում է նվազել՝ պայմանավորված ապրելավայրերի կրծատմամբ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Տեսակին բնորոշ էկոհամակարգերի խսպանվերացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անհնար է պահպանել:

## 55. Կովկասյան բնդեռիկ

*Glaphyrus caucasicus* Kraatz, 1887

Կարգ՝ Կարծրաքններ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



**Կարգավիճակը:** Ցածր թվաքանակով, տարածման փոքր և կրճատվող շրջաններով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտազված»՝ EN B 1ab(iii)+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Ուռուցիկ, փոքր ինչ սրացած, ձվածն մարմնով ոչ մեծ բզեզ է (մարմնի երկարությունը 10-13 մմ): Մարմինը մուգ գորշագույն է, շատ թե քիչ արտահայտված կանաչ մետաղական շողշողյունով, վերնաքնները դեղին մազապատ զոլերով են: Արովի հետին ազդերը խիստ հաստացած են:

**Տարածվածությունը:** Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նախկինում տարածված էր Երևանից մինչև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սահմանները, ներկայում հավաստիրեն հայտնի է “Երեբունի” արգելոցից և «Գոռավանի ավազուտներ» արգելավայրից՝ Վեդի քաղաքի մոտ, ինչպես նաև Ուրծի լեռնաշղթայի հարավային լանջերից՝ Սուրենավան գյուղի մոտ:

**Ապրելավայրեր:** Տարբեր տեսակի կիսանապատճեր, ավազոտ անապատներ:

**Կենաքանության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հունիսին-հուլիսի սկզբին, թոխքը ցերեկն է, այցելում են տարբեր տեսակի բարդածաղկավորների ընտանիքին պատկանող փշոտ խոտաբույսերի բույլերը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, ընդհանուր թվաքանակը նվազել է և շարունակում է նվազել՝ պայմանավորված ապրելավայրերի կրճատմամբ:

**Վտանգման իրմանական գործոնները:** Անապատների և կիսանապատների յուրացում, անասունների չկարգավորված արածեցում:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է “Երեբունի” պետական արգելոցում և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում, անասունների արածեցման կանխում:

## 56. Ռուբենյանի բնդեղիկ

*Adoretus rubenyani* Kalashian, 2002

Կարգ՝ Կարծրաքննիկ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+ B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Զվածկ, ուռուցիկ մարմնով, ոչ շատ մեծ բզեզ է (մարմնի երկարությունը 9,5-13,5 մմ): Մարմինը բաց գույնի է՝ գորշ դեղին, առաջնամեջը վերնարևերից փոքր ինչ մուգ է, գույխը գորշ կարմիր է:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արաքս գյուղի (Արմավիրի մարզ) և Արմաշ գյուղի շրջակայրից (Արարատի մարզ):

**Ապրելավայրերը:** Արարատյան հարթավայրի աղուտներ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները դեպի լույսի աղբյուր են թռչում հունիսի երկրորդ կեսին-օգոստոսի սկզբին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը, հավանաբար, բարձր չէ, դեպի լույսի աղբյուր թռչում են մեկական առանձնյակներ, փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Հողերի յուրացում (այդ թվում նաև աղուտների մելիորացիա) և օգտագործում լճակային տնտեսություններ ստեղծելու նպատակով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անհրաժեշտ է անցկացնել “Խոր-Վիրապ” արգելավայրի տարածքի հետազոտում՝ տեսակի հայտնաբերման նպատակով, բացակայության դեպքում՝ տեսակի ներկա տարածման որոշ հատված առանձնացնել որպես հատուկ պահպանվող տարածք:


## 57. Ույըերի հացարզեղ

*Anisoplia reitteriana* Semenov, 1903

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



©K.Makarov, G.Karagyan



**Կարգավիճակը:** Տարածման և ապրելու փոքր և կրճատվող շրջաններով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1ab(iii)+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Լայն ձվածե, փայլուն մարմնով, ոչ մեծ չափի բզեզ է (մարմնի երկարությունը 9-11 մմ): Մարմնը սև է, վերնաթերը կարմրագորշավուն:

**Տարածվածությունը:** Արաքս գետի հովիտ (Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն, Թուրքիա՝ Անի):

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր Երևանի և Էջմիածնի շրջակայրից, որտեղ, հավանաբար, անհետացել է՝ պայմանավորված լանջաֆտի փոխակերպմամբ: Ներկայում հայտնի է “Էրեբունի” արգելոցից, Վեդի քաղաքից ոչ հեռու գտնվող Գոռավանի ավազուտների տարածքից և Երասխի շրջակայրից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի կիսաանապատներ, ավազոտ անապատներ՝ խոտածածում փետրախոտի (Stipa) ներկայությամբ հատվածներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հունիսին, թոխը ցերեկն է, սովորաբար հանդիպում են փետրախոտի վրա, թրուրները զարգանում են արմատների վրա:

**Թվաքանակը և դրա փոփխության միտումները:** Չխախտված ապրելավայրերում բավականին բարձր է, ընդհանուր թվաքանակը նվազել է և շարունակում է նվազել՝ պայմանավորված ապրելավայրերի կրճատմամբ:

**Վտանգման իմնական գործուները:** Չոր և կիսաչոր տարածների գյուղատնտեսական նպատակներով յուրացում, անասունների արածեցում, Հայաստանի առավել խիտ բնակեցված տարածներում քաղաքակների թվի ավելացում և ենթակառուցվածքի զարգացում:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է “Էրեբունի” պետական արգելոցում և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում պահպանության ռեժիմի խստացում, արածեցման կանխում:

## 58. Կովկասյան փառավոն

*Pharaonus caucasicus* (Reitter, 1893)

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



**Կարգավիճակը:** Ցածր թվաքանակով և կրծատվող արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում զտնվող»՝ CR (B1ab(ii, iii, v), B2ab (ii, iii, v)):

**Համառոտ նկարագրությունը:** Լայն ձվաձև, փայլուն, սև մարմնով ոչ շատ մեծ բզեզ է (մարմնի երկարությունը 9,0 մմ), վերնարթերը սպիտակադեղնավուն են, փայլուն:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նախկինում հայտնի էր Երևանի, Էջմիածնի և Փարաքարի շրջակայքերից, որտեղ հավանաբար անհետացել է՝ պայմանավորված անապատների յուրացմամբ: Ներկայում հայտնի է միայն Գոռավանի ավազուտներից՝ Վեդի քաղաքի մոտ:

**Ապրելավայրերը:** Չուզգունի (*Calligonum polygonoides* L.) թփուտներով ավազոտ անապատներ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են մայիսի վերջին-հունիսի առաջին կեսին, բոհշը ցերեկն է, այցելում են բույսերի ծաղիկները՝ հիմնականում ջուզգունի: Թրթուրն ապրում է հողում, զարգացումը հավանաբար տևում է մեկ տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** 1980-ական թվականների սկզբերին շատ մեծաքանակ էր, դիտվում էր բզեզների պարսում ջուզգունի ծաղկող թփերի վրա: Ներկայում թվաքանակը խիստ կրճատվել է, հանդիպում են եղակի առանձնյակներ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անասունների արածեցում, վառելանյութի համար ջուզգունի թփերի հատում, Շանապարհաշինություն, մինչև վերջերս՝ նաև շինարարական նպատակներով ավազահանում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում, արածեցում կանխում:

## 59. Արարսյան բնդեռ

Tanyproctus araxidis Reitter, 1901

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



©K.Makarov, G.Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խիստ ուսուցիկ, ձվածն, թույլ փայլով մարմին ունեցող բզեզ է (մարմնի երկարությունը 9-13 մմ): Գումավորումը բաց կարմրագորշավուն կամ շիկակարմիր է, առաջնամեջքը վերնաքըներից երեմն փոքր ինչ մուգ է:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նախկինում հայտնի էր Փարաքար գյուղի շրջակայրից, որտեղ հավանաբար անհետացել է՝ պայմանափորված լանդշաֆտների փոխակերպմամբ: Ներկայում հանդիպում է Վեղի քաղաքի շրջակայրում՝ Գոռավանի ավազուտներում, ինչպես նաև Մեղրի քաղաքի մոտակայրում:

**Ապելավայրերը:** Ավազոտ անապատներ, տարբեր տեսակի կիսաանապատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թոփչքը մայիսին-հունիսի առաջին կեսին, թռչում են դեպի լույսի աղբյուր: Թրթուրը զարգանում է հողում, զարգացման շրջանը հավանաբար տևում է մեկ տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, դեպի լույս թռչում են եզակի առանձնյակներ: Սկսած 1980 թ. սկզբից դիտվում է թվաքանակի աննշան նվազում:

**Վտանգման իմնական գործուները:** Անասունների արածեցում, մինչև վերջերը գոռավանում նաև շինարարական նպատակներով ավազահանում, ճանապարհաշինություն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում, արածեցման կանխում:

## 60. Վելիական բնդեն

Tanyproctus vedicus Kalashian, 1999

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Զվածե, խիստ ուռուցիկ, թույլ փայլով մարմին ունեցող ոչ մեծ բզեզ է (մարմնի երկարությունը 6-9 մմ): Գունավորումը բաց կարմրա-գորշագույնից մինչև մուգ գորշագույն է, գերակշռում են մուգ գունավորված առանձնյակները:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Վերի քաղաքի շրջակայքի արևմտյան մասեր, Ուրծի լեռնաշղթայի հարավային լանջ՝ Սուրենավան գյուղի մոտ:

**Ապրելավայրերը:** Օշինդրի (*Artemisia fragrans*) գերակայությամբ քարքարոտ կիսաանապատ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են մայիսի երկրորդ-հունիսի առաջին կեսերին, թոխքը ցերեկն է, երեկոյան հաճախ նստած են լինում օշինդրի և այլ խոտաբույսերի թփերի գագարներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականաչափ բարձր է, փոփոխության միտումները հաստատված չեն՝ պայմանավորված կարճաժամկետ դիտումներով:

**Վտանգման իմնական գործուները:** Անասունների չկարգավորված արածեցման հետևանքով էկոհամակարգերի դեգրադացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տարածման սահմաններում՝ բողբուրուն բլրից դեպի հարավ գտնվող կիրճում, արգելավայրի կամ բնության հուշարձանի կարգավիճակով ԲՀՊՏ-ի ստեղծում:

## 61. Մեղմեղիկ բնդեռիկ

*Pseudopachydemus medvedevi* Khnзорian, 1971

Կարգ՝ Կարծրաքններ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Թերթիկարեղավորներ - Scarabaeidae



**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով շատ հազվագյուտ տեսակ է, Արևելյան Կովկասի էնդեմիկ սեռին պատկանող երկու տեսակներից մեկն է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+ B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Էզր մասն բգեղ է (մարմնի երկարությունը 9 մմ), ունի խիստ ուռուցիկ, դեպի հետ ձված լայնացող, բույլ փայլով մարմին: Գունավորումը շիկակարմրավուն-կարմիր է, գլուխը և առաջնամեջքը վերնաթերից նկատելիորեն մուգ են: Արուն հայտնի չէ:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Գառնի գյուղի շրջակայք:

**Ապրելավայրերը:** Չոր լեռնատափաստան:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բգեղները հավաքվել են փոխիր կավահողում օգսատուին՝ հողը փորելիս:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի են եզակի նմուշներ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Հողերի գյուղատնտեսական յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման շրջանում չերկված հողերի պահպանում:

## 62. Զարդավոր չրիկան

*Aeoloides figuratus* (Germar, 1844)  
 Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեղներ - Coleoptera  
 Ընտանիք՝ Չրիկաններ - Elateridae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր բգեզ է (մարմնի երկարությունը 4,5-5,5 մմ): Մարմնը մուգ գորշագույն է, վերջույթները՝ բաց գորշագույն, առաջնամեջքը՝ կարմրագորշագույն՝ ոչ ցայտուն արտահայտված սև բծով, վերնաքերը մուգ գորշագույն են՝ երկու դեղին գագարնային և երկու վատ արտահայտված եզրերով հիմնային քծերով:

**Տարածվածությունը:** Անդրկողվաս, Առաջավոր և Սիցին Ասիա, Իրան, Աֆղանստան, Իրաք, Արարական թերակղզի:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Տավուշի (քք. Իջևան, Բերդ, գգ. Աճարկուտ և Բագրատաշեն), Արմավիրի (Փշատավան գ. շրջակայք) և Սյունիքի (Սեղմի գետի ափ՝ Սեղմի ք. մոտ) մարզերից:

**Ապելավայրերը:** Հոսուն ջրի լողափ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բգեզները հանդիպում են խոնավ ավագում և մանր հղկված գետաքարերում՝ ջրի մոտ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հավաքներ, բվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործուները:** Սելիորատիվ և հիդրոշիմարարական գործունեության հետևանքով ջրային ռեժիմի խախտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապելավայրերի լնդգրկում արգելոցային գոտու մեջ:

### 63. Սևազլոխ չրիսկան

Drasterius atricapillus (Germar, 1824)

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Չրիսկաններ - Elateridae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մանր բգեզ է (մարմնի երկարությունը 5-6 մմ): Մարմինը մուգ գորշագույն է, վերջույթները բաց գունավորված, առաջնամեջքի վրա կամ կողմնային երկայնակի դասավորված բժեր, վերնաթևերի վրա կամ երկու կամ չորս բույլ արտահայտված եղբերով բժեր: Մազածածկը բաց գույնի է: Առաջնամեջքի հետին անկյուններն ունեն մեկ կատար:

**Տարածվածությունը:** Ղրիմ, Կովկաս, Թուրքիա, Միջին Ասիա, Հյուսիսարևմտյան Չինաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Սյունիքի մարզից (Մեղրի գետի ափ՝ Մեղրի ք. մոտ):

**Ապելավայրերը:** Հոսղ ջրերի մոտ գտնվող լողավի:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բգեզները հանդիպում են խոնավ ավագում և մանր հղված գետաքարերում՝ ջրի մոտ :

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հավաքներ, բվաքանակի փոփոխության միտումները պարզված չեն:

**Վտանգման իմնական գործնները:** Մելիորատիվ և հիդրոշինարարական գործունեության հետևանքով ջրային ռեժիմի խախտում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

#### 64. Սանրաբեղ չիլկան

*Ctenicera pectinicornis* (Linnacus, 1758)

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Չրիսկաններ - Elateridae



© K. Makarov



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1b:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին մեծության բզեզ է (մարմնի երկարությունը 14-19 մմ): Մարմինը մուգ կանաչ կամ մուգ կապույտ է, մետաղական փայլով, բեղիկները սև են, առանց փայլի, ոտքերը՝ գորշագույն կամ կարմրագորշագույն, վերնաքնները՝ երբեմն բաց գունավորված զոլով:

**Տարածվածությունը:** Գրեթե ամբողջ Եվրոպա, Կովկաս, Սիբիր:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Վանաձոր ք. (Լռու մարզ), Դիլիջան ք. (Տավուշի մարզ), Հանրավան գյուղի (Կոտայքի մարզ) շրջակայրերից:

**Ապրելավայրերը:** Անտառային, անտառատափաստանային գոտիներ՝ խիտ խոտածածկով անտառածածկ հատվածներ և բացատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թրթուրն ամենակեր է (պրլիֆագ), զարգանում է հողում, հանդիպում է անտառածածկ տեղերում: Հայաստանի պայմաններում զարգացումը հավանաբար տևում է երկու տարի: Հասուն բզեզների թոյիշը՝ մայիս-հունիս ամիսներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հանդիպում է տեղ-տեղ:

**Վտանգման իմնական գործուները:** Անտառահատումներ, չկարգավորված ռեկրեացիոն ծանրաբեռնվածություն, որը հանգեցնում է հողի պնդեցման:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան գոտում ռեկրեացիոն ակտիվության հսկողություն:

## 65. Արաքսյան ջրիկան

Cardiophorus araxicola Khnzorian, 1970

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Ջրիկաններ - Elateridae



©K.Makaryan, G.Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1ab(ii, iii, v), B2ab (ii, iii, v):

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 4,5-6 մմ): Մարմինը սև է, վերնարեները ծղոտագոյն՝ կարի մոտ մգացած զոլով, հազվադեպ՝ յուրաքանչյուր վերնարենի սկավառակի վրա ունենում են մեկական մուգ բիծ, բեղիկների հատվածների հիմքերը, ոտքերի սրունքները և թաթերը ավելի բաց են գունավորված:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Գոռավանի ավազուտներից՝ Վեդի ք. մոտ (Արարատի մարզ):

**Ապելավայրերը:** Չուզգունի (*Calligonum polygonoides* L.) մացառուտներով ավազուտնապատ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հանդիպում են հունիսին-հուլիսի սկզբին՝ խոտարույսերի վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է, փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Անասունների արածեցում, ճանապարհաշինություն, մինչև վերջին ժամանակները՝ շինարարական նպաստկներով ավազահանում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում, տեսակի ապրելավայրերում անասունների արածեցման կանխում:

## 66. Կեղծ խոտային ջրիսկան


*Cardiophorus pseudogramineus* Mardjanian, 1977

Կարգ՝ Կարծրաքններ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Ջրիսկաներ - Elateridae



© K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 6-8,3 մմ): Մարմինը սև է, առաջնամեջքը՝ կարմիր, վերջույթները՝ մուգ գորշագույն: Մարմնի վերին մասի մազիկներն երկգույն են, խառը, ներքինի մասին միագույն են, բաց գունավորված:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր ք. Երևանից, այստեղ հավանաբար անհետացել է: Ներկայում հանդիպում է Գողբ գ. շրջակայրում՝ Գեղարդի վանքի մոտ (Կոտայքի մարզ), Եղեգնաձորի ք. և Արենի գ. մոտակայրում (Վայոց Ձորի մարզ), ինչպես նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Ապրելավայրերը:** Չոր լեռնատափաստան:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հանդիպում են թերև հողերով տարածքներում, որտեղ հունիս-հուլիս ամիսներին խոտածածկի վրա հավանաբար կատարվում է բրուրների զարգացումը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են ոչ բազմաքանակ նմուշներ, բվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Խոպան հողերի յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ:

## 67. Սոմխետական չրիսկան

*Cardiophorus somcheticus* Schwarz, 1896

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Չրիսկաններ - Elateridae



© K. Makarov, G. Kangyan



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1+ B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի բգեղ է (մարմնի երկարությունը 5,3-5,9 մմ): Մարմինը և բերիկները սև են, առաջնամեջքը՝ կարմիր, ոտքի առջևի եզրին չհասնող ձվածն կամ խաչածն սև բծով, ազդրերը կարմրագորշագույն են:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նկարագրված է «Սոմխեթից» (Schwarz, 1896), ներկայում հավաստի հայտնի է Իջևան ք. շրջակայրից (Տավուշի մարզ):

**Ապրելավայրերը:** Սաղարթավոր անտառների բացատներ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բգեղները հանդիպում են հունիսի վերջին-հուլիսին՝ հովանոցազգի բույսերի ծաղկների վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է, հայտնի են եզակի նմուշներ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Անտառային էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված ապօրինի անտառահատումներով, չկարգավորված ռեկրեացիայի հետևանքով հողերի պնդացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումներ:** Չես իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում «Իջևան» պետական արգելոցի տարածքի մեջ:

## 68. Փոքր շրիւկան

*Craspedostethus permodicus* (Faldermann, 1835)

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Զրիւկաներ - Elateridae



©K.Makarov, G.Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1b(iii)+B 2b(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 4,5-6,4 մմ): Մարմինը և վերջույթները բաց գորշագույն են, վերնաթերթը երբեմն բաց դեղին են: Մազածածքն ունի բաց գունավորում, մազիկներն երկար են:

**Տարածվածությունը:** Կովկաս, Հյուսիսային Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր ք. Երևանից, ներկայում հանդիպում է Հացավան գյուղի մոտակայքում (Կոտայքի մարզ), Գոռավանի ավազուտներում՝ Վեդի ք. մոտ (Արարատի մարզ) և Սեղրի ք. շրջակայրում (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի անապատներ և կիսաանապատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները բոչում են դեպի լույսի աղբյուր հունիսին-հուլիսի առաջին կեսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հանդիպում է հատուկենու:

**Վտանգման իիմնական գործունները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի բնապահպան ռեժիմի խստացում, արածեցման կանխում:

## 69. Սորբիավոր ոսկերզեղ

*Acmaeoderella pellitula* (Reitter, 1890)

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Ոսկերզեզներ - Buprestidae

© K. Makarow, G. Karapetyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մանր բզեզ է (մարմնի երկարությունը 4,5-6,5 մմ), խիստ ուռուցիկ, ձգված մարմնով: Մարմինը քիչ փայլուն է, սև գույնի՝ լավ արտահայտված, բրոնզագույն շողշողյունով: Վերնաքերը մետաղական կապույտ են, հազվադեպ՝ կապտամանուշակագույն:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Հացավան գյուղի շրջակայքից (Կոտայքի մարզ), Գոռավանի ավազուտներից՝ Վեդի քաղաքի մոտ (Արարատի մարզ) և Սեղրի քաղաքի շրջակայքից (Սյունիքի մարզ), ինչպես նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Ավազոտ անապատներ, տարբեր տեսակի կիսաանապատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները բռչում են մայիսին-հունիսին սկզբին, որպես լրացուցիչ սնունդ օգտագործում են հազարտերևուկների (*Achillea*) ծաղկաբույլերը, թթվուրների կերպով բռյալում հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հանդիպում են եզակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Չոր և կիսաչոր խոցելի տարածքներում անասունների չկարգավորված արածեցում, դրանց գյուղատնտեսական նպատակներով յուրացում:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, «Արևիկ» ազգային պարկում և «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի բնապահպան ռեժիմի խստացում, արածեցման կանխում:

**Պահպանության առաջարկող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի բնապահպան ռեժիմի խստացում, արածեցման կանխում:

## 70. Կարճամարմին ուկերպեց

## **Anthaxia breviformis** Kalashian, 1988

Կարգ՝ Կարծրաբներ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Ոսկերզեզներ - Buprestidae



**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով շատ հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+ B2a:

**Համառոտ նկարագրություն:** Տափակ, բավականին նեղ մարմնով մանր քեզ է (մարմնի երկարությունը 4,5 մմ): Գունավորումը մուգ կանաչ է, մարմնի ստորին մասը գրեթե սև է, վերնարմները կեղսոտ կարմիր գույնի են՝ հատակ սահմանները չունեցող մուգ կանաչ թուզ:

**Տարածվածություն:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը:** Հայտնաբերվել է Արևմտյան Ասիայում:

**Ապրելավայրեր:** Գիհու նոսրանտառներ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Հայտնի չեն, հայտնաբերվել են ապրիլի վերջին՝ ծաղիկների վրա:

**Թվաքանակը** և **դրա փոփոխության** միտումները: Հայտնի չեն, հայտնաբերված է մեկ նմուշ՝ տիպ:

**Վատանգման իիմնական գործունելքը:** Բնակավայրերի մոտ վառելիք ձեռք բերելու նպատակով բնակիայտարփային բուսականության հատում: Անասունների՝ հատկապես այծերի, չկարգավորված արածեզում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավարելի ընդունելում արգելոցային գոտու մեջ:

## 71. Հպարտ ոսկեբղեն

*Anthaxia superba* Abeille de Perrin, 1900

Կարգ՝ Կարծրաքննիկ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Ոսկեբղեններ - Buprestidae



©K.Makarova, G.Karagyan



**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a:

**Համառոտ նկարագրություն:** Տափակ, նեղ մարմնով բգեղ է (մարմնի երկարությունը 6,5-7,5 մմ): Գունավորումը բրոնզագույն է՝ պղնձակարմրավուն շողշողյունով, վերնարևերը մեծ են, հստակ սահմաններ չունեցող և բծով:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հավաստիորեն հայտնի է միայն Սեղրի քաղաքի շրջակայքից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Վարդազգիների մասնակցությամբ չոր նորանտառներ:

**Կենսաբնության առանձնահատկություններ:** Բզեզները հանդիպում են նայիսի երկրորդ - հունիսի առաջին կեսերին՝ նուշի (*Amygdalus fenzliana*) մատղաշ ծառերի վրա, որի ճյուղերում էլ զարգանում է թրուրը: Զարգացումը միամյա է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է, հանդիպում են եղակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Բնակավայրերում վառելանյութի համար նուշի ծառերի հատում, անասունների՝ հատկապես այծերի, չկարգավորված արածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

## 72. Աղաբարյանի ոսկերզեղ

*Sphaerobothris aghababiani* Volkovitsh & Kalashian, 1998

Կարգ՝ Կարծրաքննիկ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Ոսկերզեզներ - Buprestidae



©K.Makarov, G.Karagyan



**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում զտնվող»՝ CR Ba +B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Տափակ, ոչ լայն մարմնով ոչ խոշոր բզեզ է (մարմնի երկարությունը 10,5-13,5 մմ): Գունավորումը բրոնզագույն է՝ պղնձակարմրավուն կամ պղնձականաշավուն փայլով:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Մեղրի քաղաքի շրջակայքից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Չոր նոսրանտառներ՝ նուշի գերակայությամբ վարդազգիների կամ գիհու մասնակցությամբ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հունիսի վերջին-հուլիսի առաջին կեսին, թոխքը ցերեկն է, նստում են տափաստանամորու (Ephedra major) փշերի վրա, որի բների արմատամերձ հատվածում էլ զարգանում են բրդուրները: Զարգացումը, հավանաբար միամյա է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը չափավոր բարձր է, փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմմնական գործոնները:** Անասունների՝ հատկապես այծերի, չկարգավորված արածեցում: Տեղանքի՝ որպես պոչհանքի հավանական օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

### 73. Գեղարդյան ոսկերզել

*Sphenoptera gehardica* Kalashian & Zykov, 1994

Կարգ՝ Կարծրաքննիկ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Ոսկերզներ - Buprestidae



©K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Բավականին ուռուցիկ, նեղ, փայլուն մարմնով, ոչ մեծ բզեզ է (մարմնի երկարությունը 6-8,5 մմ): Գունավորումը մետաղական բրոնզագույն է՝ քոյլ պղնձակարմրավուն շողովոյնով:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերվել է Գողք գյուղի շրջակայքում՝ Գեղարդ վանքի մոտ (Կոտայքի մարզ) և «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Ասպեկտային նշանները:** Քարքարոտ կիսաանապատ, ֆրիգանա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հովիսի երկրորդ կեսին-օգոստոսի սկզբին՝ *Tanacetum argyrophyllum* բույսի վրա, որի արմատներում էլ զարգանում է բրբուրը: Զարգացումը հավանաբար միամյա է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականին բարձր է, փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմանական գործուները:** Եկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված չկարգավորված արածեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:


**Առաջարկվող պահպանության միջոցառումները:** Գողք գյուղի շրջակայքում բիոտոպի վրա ռեկրեացիոն ճնշման վերահսկում և անասունների արածեցման կարգավորում:

#### 74. Խնձորյանի ոսկերզեղ

Sphenoptera khnзорianai Kalashian, 1996

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Ոսկերզեզներ - Buprestidae



**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ուռուցիկ, լայն ձվաձև, դեպի հետ կտրուկ նեղացող մարմնով միջին մեծության բզեզ է (մարմնի երկարությունը 17 մմ): Ծացկույթները փայլուն, բրոնզագույն, բույլ պղնձակարմրավուն շողջողոյնով:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Վեդի քաղաքի շրջակայքից (Գոռավանի ավազուտներ):

**Ապրելավայրերը:** Հավաքվել է ավազոտ անապատի և աղուտաբույսերի (*Salsola* spp.) ու օշինդրի (*Artemisia fragrans*) գերակայությամբ հարակից քարքարոտ կիսաանապատի սահմանաեզրին:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Տիպային նմուշը հայտնաբերվել է հովհանքի վերջին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Պարզված չեն: Հայտնի է մեկ նմուշ՝ տիպը:

**Վտանգման իիմնական գործոնները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված մարդու տնտեսական գործունեությամբ, առաջին հերթին՝ անասունների արածեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի բնապահպան ռեժիմի խստացում, արածեցման արգելում:

## 75. Թամբակուրծք թարախահան

Mylabris sedilithorax Sumakov, 1924

Կարգ՝ Կարծրաքլեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Թարախահաններ - Meloidae



© K. Makarov, G. Karapetyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգավաճ»՝ EN B 1a:

**Համառոտ նկարագրությունը:** Նեղ, զուգահեռակող, ուռուցիկ, սև մարմնով, ոչ մեծ չափի բզեզ է (մարմնի երկարությունը 5-10 մմ): Վերնաթերթը բաց գույնի են՝ սպիտակավուն կամ դեղնավուն, մի քանի մասն սև բծերով:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Ծաղկունյաց լեռնաշղբա՝ Ծաղկաձորից մինչև Հանքավան, Ապարան, Արագած լեռնան հարավային լանջեր՝ Անտառուտ գյուղի մոտ, Սևան քաղաքի շրջակայք:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստան և ենթալպյան մարգագետիններ՝ անտառի վերին եզրի մոտ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բգեզները հանդիպում են հովհանու-օգոստոս ամիսներին բույսերի՝ առավել հաճախ *Scabiosa* սերի ներկայացուցիչների ծաղիկների վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը չափավոր բարձր է, փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անատունների չկարգավորված արածեցմամբ: Տեսակի ապրելավայրերի կրծատում՝ պայմանավորված կլիմայի կանխատեսվող փոփոխության հետևանքով ալպյան գոտու սահմանների լանջն ի վեր տեղաշարժմամբ:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Հանքավան» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի պահպանության ռեժիմի ապահովում, տարածման այլ հատվածներում՝ արածեցման կարգավորում:

## 76. Նմանաձև ծաղկեփոշեկեր

*Cteniopus persimilis* Reitter, 1890

Կարգ՝ Կարծրաքննիկ կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Ծաղկեփոշեկերներ - Alleculidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Զվածել մարմնով մանր բզեզ է (մարմնի երկարությունը 6-8 մմ): Արովի մարմինը նեղ է, եզինը՝ համեմատաբար լայն: Մարմնի գունավորումը բաց գորշագույնից մինչև սև գորշագույն է, ոտքերը դեղնավուն են:

**Տարածվածությունը:** Հայաստան, հնարավոր է նաև Արարս գետի թուրքական ափ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարս գետի ափից՝ Մարգարա և Արար գյուղերի մոտակայք (Արմավիրի մարզ):

**Ապրելավայրերը:** Արարս գետի երկայնքով տուգայան բուսականություն:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բզեզները հանդիպում են հունիս-հուլիս ամիսներին՝ առափնյա խիտ բուսականության վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, հանդիպում են եզակի առանձնյակներ: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Արարս գետի հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություն՝ պայմանավորված ջրային շինարարությամբ, տեղ-տեղ՝ ավագի արտահանում շինարարական նպատակներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում, հավանաբար հանդիպում է «Խոր վիրապ» արգելավայրում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արարս գետի միջին հոսքի տուգայան բուսականությամբ ծածկված հատվածներին ԲՀՊՏ-ի կարգավիճակի սահմանում:

## 77. Հայկական ծաղկեփոշեկեր

*Isomira armena* Khnзорian, 1976

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Ծաղկեփոշեկերներ - Alleculidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգավծ»՝ EN B 1a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ լայն ձվաձև մարմնով մանր չափի բգեզ է (մարմնի երկարությունը 5-6,5 մմ): Գունավորումը բացից մինչև մուգ գորշագույն, ոտքերը բաց գորշագույն են:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Իջևան քաղաքի շրջակայր և Թեղուտ գյուղ՝ Հաղարծին վանքի մոտ (Տավոչի մարզ):

**Ապրելավայրերը:** Լայնասաղարթ անտառների բացատներ և անտառեզրեր:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բզեզները հանդիպում են հումիս-հուլս ամիսներին՝ հովանոցազի բույսերի ծաղկների և ծաղկող թփերի վրա: Զարգանում են հավանաբար հողում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը չափավոր բարձր է: Փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Ապօրինի հատումների հետևանքով անտառային էկոհամակարգերի դեգրադացում: Հողի վերին շերտի կարծրացում՝ պայմանավորված չկարգավորված ռեկրեացիոն ծանրաբեռնվածության հետ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է “Դիլիջան” ազգային պարկում և “Իջևան” արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ապօրինի անտառահատումների կանխում: Տեսակի տարածման վայրերում ռեկրեացիոն ծանրաբեռնվածության կարգավորում:

## 78. Օրդուրաղյան սևամարմին

Adelphinus ordubadensis Reitter 1890

Կարգ՝ Կարծրաքրեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Սևամարմիններ - Tenebrionidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Հատանգված»՝ EN B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Մասը չափի բգեղ է (մարմնի երկարությունը 6-8,5 մմ), չափավոր ուռուցիկ, բույլ փայլուն մարմնով, նեղ առաջնամեջքով և գրեթե զուգահեռակող, չափավոր լայն վերնաքըներով, գունավորումն ամբողջովին սև է, վերնաքըները կարող են լինել գորշագույն կամ շիկակարմիր, երբեմն՝ սև երկայնակի գոլով:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր ք. Երևանից (առանց ավելի հստակ նշումների), հանդիպում է Երևանի մոտակայքում՝ Ջրվեժ ավանի մոտ գտնվող կիրճում, ինչպես նաև Հացավան գյուղի շրջակայքում (Կոտայքի մարզ):

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի կիսանապատճեր, չոր լեռնատափաստան:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բգեցները հանդիպում են մայիսին-հուլիսին՝ ցերեկը քարերի տակ, մթնաշաղին բարձրանում են բուսականության վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է, հանդիպում են հատուկենտ, թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Էկոհամակարգերի քայլայում՝ պայմանավորված քաղաքային ենթակառուցվածքի զարգացմանը, հողերի գյուղատնտեսական յուրացմանը, անասունների չկարգավորված արածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Շեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերում անասունների արածեցման կարգավորում, չհերկված հողահատվածների պահպանում:

## 79. Հայկական սևամարմին


*Armenohelops armeniacus* Nabozhenko, 2002

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Սևամարմիններ - Tenebrionidae



© K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով տեսակ է, Հայաստանի էնդեմիկ սերի ներկայացուցիչ։ Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի բզեզ է (մարմնի երկարությունը 9-14 մմ), չափավոր ուղղուցիկ, ձգված, դեալի հետ խիստ լայնացած մարմնով։ Գունավորումը կարմրից մինչև սևագորշագույն է, ծածկույթները չափավոր փայլուն են։

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է։

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Կոտայքի մարզից (Ձրվեժ, Գառնի, Գողք գյուղերի շրջակայք), Արագած լեռան հարավային լանջերից (Տեղեր, Անտառուտ գյուղեր), Արայի լեռից՝ Եղվարդ գյուղի մոտ, «Խոսրովի անտառ» պետական արգելոցից, ինչպես նաև Լուսաշող գյուղի մոտակայքից (Արարատի մարզ) և Գնիշիկ գյուղից (Վայոց ձորի մարզ)։

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի լեռնատափաստաններ։

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հանդիպում են քարերի տակ՝ մայիսին-հուլիսի սկզբին։

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, հանդիպում են տեղ-տեղ, թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն։

**Վտանգման հիմնական գործուները:** Էկոհամակարգերի քայլայում՝ պայմանավորված անասունների գերարածեցմանը, խոպան հողերի հերկում։

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում։

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արայի լեռան առավել քիչ դեղորադացված հատվածներում ԲՀՊՏ-ի ստեղծում, տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ։

## 80. Երևանյան սևամարմին


*Cylindronotus erivanus* (Reitter, 1901)

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Սևամարմիններ - Tenebrionidae



© K.Makarov, G.Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի բզեզ է (մարմնի երկարությունը 8,5-11,5 մմ), բավականին լայն, չափավոր ուղուցիկ, ձվաձև, դեպի հետ թերևակի լայնացող մարմնով, գունավորումը՝ սևագորշագույնից մինչև սև, ծածկույթները՝ չափավոր փայլուն:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է ք. Շաղկաձորից, Արգական և Հանքավան գյուղերից (Կոտայքի մարզ), Բյուրականի շրջակայթից և Արայի լեռան հարավային լանջերից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի լեռնատափաստաններ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հանդիպում են մայիսին-հունիսի սկզբին՝ քարերի տակ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է, հանդիպում են տեղ-տեղ, թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հողերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների արածեցմամբ, խոպան հողերի հերկում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արայի լեռան առավել քիչ դեգրադացված հատվածներում ԲՀՊՏ-ի ստեղծում:

## 81. Բողաչևի սևամարմին

Ectromopsis bogatchevi (Khnzoryan, 1957)

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Սևամարմիններ - Tenebrionidae



© K. Makarov, G. Karatyan



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a b(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 4,5-5,5 մմ), նեղ ձվածն, ուռուցիկ մարմնով: Գունավորումը կարմրագորշագույնից մինչև սևագորշագույն է, ծածկույթները չափավոր փայլուն են:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նորարաշեն, «Էրեբունի» պետական արգելոց:

**Ապրելավայրերը:** Կարմիր կավահողերով անապատ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայտնի չեն, բզեզները հանդիպում են գարնանը՝ մարտի վերջից մինչև հունիսի սկիզբը, քարերի տակ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Չափավոր բարձր է, թվաքանակի փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Անասունների արածեցում, էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված քաղաքային ենթակառուցվածքի զարգացմամբ, հողերի գյուղատնտեսական յուրացմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նորարաշեն ավանի շրջակայրում ՔՀՊՀ-ի ստեղծում, ինչը նախատեսված է Երևանի զարգացման գլխավոր հատակագծով:

## 82. Արտրված սևամարմին

Entomogonus amandanus Reitter, 1901

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Սևամարմիններ - Tenebrionidae



©K.Makarov, G.Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a:

**Համառոտ նկարագրությունը:** Թույլ փայլով, երկարավուն մարմին ունեցող միջին չափի բզեզ է (մարմնի երկարությունը 18-22 մմ), վերնաքերը ձվաձև են, գունավորումը՝ գրեթե միատար սև :

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Մեղրիի Էկոուեզիոնի մի շարք տեղերից՝ Մեղրի ք. մոտակայքից (Կալադաշ լեռան հարավային լանջ) և Շվանիձոր գյուղից դեպի հյուսիս (Սյունիքի մարզ):

**Ապելավայրերը:** Հանդիպում է նոսր անտառներում: Մեղրիի մոտ հայտնաբերվել է գիհու, Շվանիձորում՝ կաղնու նոսրանտառում:

**Կենաքանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բզեզների հավաքը կատարվել է մայիս-հունիս ամիսներին՝ մեծ քարերի տակ, հողի մակերեսին, երեմն՝ բարձրանում են խոտերի և թիւերի վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է, հայտնի են սակավաթիվ նմուշներ:

**Վտանգման իմնական գործոնները:** Բնակելի տարածքներում վառելիքի համար խոտարփային բուսականության հատում, անասունների, հատկապես՝ այծերի չկարգավորված արածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

### 83. Նեղ սևամարմին

Laena constricta Khnzorian, 1957

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Սևամարմիններ - Tenebrionidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է ռոպես «Վտանգված»՝ EN B 1ab(iii)+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Նեղ, թերևակի ուռուցիկ, բույլ փայլով, մանր չափի բղեղ է (մարմնի երկարությունը 3,5-4 մմ): Գունավորումը կարմրագորշագույնից մինչև մուգ գորշագույն է:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարատյան հարթավայրի մի շարք կետերից՝ Երևանի շրջակայթից (գգ. Նորբարաշեն, Զրվեժ, «Էրեբունի» պետական արգելոց), Կոտայքի (գ. Հացավան) և Արարատի (գ. Երասխ) մարզերից:

**Ապելավայրերը:** Տարբեր տեսակի կիսաանապատներ՝ ինչպես աղուտային, այնպես էլ տափաստանաբուսային:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բզեզները հանդիպում են ապրիլ-հունիս ամիսներին՝ քարերի տակ, գիշերը բռչում են դեպի լույսի աղբյուր:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը կայուն ոչ բարձր է:

**Վտանգման իմանական գործոնները:** Հողերի գյուղատնտեսական յուրացում, խոցելի չոր էկոհամակարգերում անատունների գերարածեցում:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Էրեբունի» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նորբարաշեն ավանի շրջակայթում արգելավայրի ստեղծում՝ ինչպես և նախատեսված է Երևանի զարգացման զիսավոր հատակագծով:

#### 84. Սեմյոնովի սևամարմին

*Cyphostethus semenovi* Reitter, 1895

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Սևամարմիններ - Tenebrionidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1ab(iii)+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Տափակ, նեղ ձվաձև մարմնով, ոչ խոշոր չափի բգեգ (մարմնի երկարությունը 10,5-13,5 մմ է): Գունավորումը սև է, վերջույթները սովորաբար մուգ շագանակագույն են, ծածկույթները՝ սև, չափավոր փայլուն:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարատի մարզի՝ Սուրենավան գ. շրջակայք և Գոռավանի ավագուտներից՝ Վեդի ք. մոտ:

**Ապրելավայրերը:** Օշինդրային կիսաանապատներ և ավազային անապատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են մայիսի կեսից մինչև օգոստոս, զարնանը ակտիվ են ցերեկը, ամռանը շոգ եղանակին՝ մթնշաղին:

Բարձրանում են խոտաբույսերի ցողունների վրա, սնկում են մեռած բուսական մնացորդներով: Զարգացման առանձնահատկությունները հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, հանդիպում են բզեզների եզակի առանձնյակներ:

**Վտանգման իմնական գործոնները:** Անասունների գերարածեցում, հողերի գյուղատնտեսական յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Գոռավանի ավագուտներ» պետական արգելավայրում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի բնապահպան ռեժիմի խստացում, արածեցման արգելում:

## 85. Կապանյան երկարաբեղիկ

*Cortodera kaphanica* Danilevsky in Danilevsky & Miroshnikov, 1985

Կարգ՝ Կարծրաքներ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակ:** Սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգավծ»՝ EN B 1a:

**Համառոտ նկարագրություն:** Զգված, չափավոր ուսուցիկ մարմնով, ոչ խոշոր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 8,5-11 մմ): Մարմինը սև է, սովորաբար պատված է խիտ, ավելի հազվադեպ՝ նոսր, մոխրագույն մազածածկով, վերնաթևերն երբեմն դարչնագույն են:

**Տարածվածություն:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Խուստովի և Կապուտջուխ լեռնազանգվածներ (Ծիշկերտ, Մեղրիի լեռնանցք, Քաջարան):

**Ապրելավայրեր:** Անտառից վեր ենթալպյան մարգագետիններ, երբեմն անտառի վերին եզրի մոտ գտնվող բացատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հունիսին՝ տերեփուկի ծաղիկների վրա, որի արմատներում էլ հավանաբար զարգանում են թրբունները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականին բարձր է: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործնները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված չկարգավորված արածեցմամբ: Տեսակի ապրելավայրերի կրծատում՝ պայմանավորված կլիմայի կանխատեսվող փոփոխության հետևանքով ալպյան գոտու սահմանների լանջնի վեր տեղաշարժմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Ծիկահող» պետական արգելոցում, «Արևիկ» ազգային պարկում և «Զանգեզուր» պետական արգելավայրում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

## 86. Կաղնու մեծ երկարաբեղիկ

Cerambyx cerdo acuminatus Motschulsky, 1852

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



©Szczepan Ziarko



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշչներով զնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B 2a: Ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում (ver 2.3) «Խոցելի» կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում: *C. c. cerdo* Linnaeus, 1758 ենթատեսակը գրանցված էր ԽՍՀՀ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր չափի բզեզներ են (մարմնի երկարությունը 25-55 մմ). Գունավորումը ձյուրի (կուպրի) նման սև է, վերնարկների ծայրերը՝ դարչնագույն սև, գորշ կամ շագանակագույն: Արուների բեղիկները մարմնից զգալիորեն երկար են՝ եզերինը հասնում կամ փոքր-ինչ անցնում են վերնարկների գագարը:

**Տարածվածությունը:** Միջերկրածովյան շրջան, Հարավյախն և Միջին Եվրոպա, Առաջավոր Ասիա, Կովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տեղ-տեղ հանդիպում է ծերացած կաղնու անտառներում՝ մինչև 1800 մ բարձրության վրա, Հայաստանի հարավում՝ մինչև 2300 մ ծ.մ.ր.:

**Ապրելավայրերը:** Լեռնային անտառներ՝ կաղնու մասնակցությամբ և ծերացած, փշացած բներով ծառերի առկայությամբ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Ապրում են կաղնու, ավելի հազվադեպ նաև շագանակենու, հաճարենու և այլ լայնասաղարթ ծառատեսակների վրա: Բզեզները թռչում են հունիսից մինչև օգոստոս, հանդիպում են ծորացող հյութով ծառերի բների, հաստ բներով կերային ծառերի և փշակների վրա, որտեղ էլ կատարվում է զուգավիրումը և ձվադրումը: Զվարդում են կեղևի ճեղքերում, երբեմն կեղևակերների թռչքային անցքերում: Թրթուրները սկզբնական շրջանում զարգանում են արտաքնափայտում՝ լորում, այնուհետև անցնում են բնամիջուկ, բայց խուսափում են փտած և վարակված բնափայտից: Զարգացման ամբողջ շրջանը տևում է 4 տարի:

**Թվաքանակը և դրա վորոխության միտումները:** Հյուսիսային և կենտրոնական շրջաններում հազվադեպ է հանդիպում, ավելի տարածված է Մյունիքի մարզում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Թրթուրների զարգացման համար անհրաժեշտ տեղերի կրծսատում, որը տարածման ողջ տարածքում ստվորական անտառատնտեսական գործունեությամբ պայմանավորված ծերացած և թուլացած ծառերի հատումների հետևանք է:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Շիկահող» և «Խոսրովի անտառ» պետական արգելոցներում և մի շարք արգելավայրերում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անտառներում որոշ քանակությամբ ծերացած, փշացած բներով ծառերի պահպանում՝ հատկապես արգելավայրերում:

## 87. Ալյան ողալիա

Rosalia alpina (Linnaeus, 1758)

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաքեղիկներ - Cerambycidae



© M. Hoskovec



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է:

Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 2.3) «Խոցելի» կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում: Գրանցված է ԻՄՍԱՀ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր և միջին չափի բզեզներ են (մարմնի երկարությունը 15-40 մմ), մոխրագորշագույն, երբեմն երկնագույն շողշողյունով, վերնաթևերը սև բծերով են: Բեղիկները մարմնից երկար են՝ արուներինը 1,5 անգամ, էգերինը՝ աննշան:

**Տարածվածությունը:** Եվրոպա (հյուսիսում մինչև Հարավային Շվեյչա), Սերծավոր Արևելք, Կովկաս, Անդրկովկաս, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուսիա, Ռուսաստան, հավանաբար նաև Ղասխաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Տավուշի (Կիրանց գ., Հաղարծին վանք՝ Տեղուտ գ. մոտ) և Սիստանի (Շիկահող գ. մոտ) մարգերից:

**Ապրելավայրերը:** Հաճարենու և թեղու առկայությամբ հին, գերազանցապես լեռնային անտառներ, որտեղ կան խիստ քոլացած, չորացող, ցրտահարված և փշացող բներով ծառեր:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հունիսից մինչև օգոստոս ամիսները, հիմնականում արևոտ եղանակին, ծառերի բների վրա, որտեղ էլ զուգավորվում են և ձվադրում կեղևի ճեղքերում: Զարգացումը կատարվում է 2-3 տարվա ընթացքում՝ կախված բնափայտի վիճակից, եղանակից և այլն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրաստիճան հազվադեպ է, վերջին անգամ Հյուսիսային Հայաստանում հավաքվել է 1970-ական թվականներին, Շիկահողում միակ առանձնյալը հանդիպել է 2005թ:

**Վտանգման իմնական գործոնները:** Թրթուրների զարգացման համար անհրաժեշտ տեղերի կրճատում, որը ծերացած և քոլացած ծառերի հատումների հետևանք է՝ պայմանավորված տարածման ողջ տարածքում սովորական անտառատնտեսական գործունեությամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անտառներում, հատկապես՝ արգելավայրերում, որոշ քանակությամբ ծերացած, փշացած բներով ծառերի պահպանում:

## 88. Աղաբաբյանի երկարաբեղիկ

Asias aghababiani Danilevsky, 1999

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a +B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Զուգահեռակող, նեղ մարմնով, ոչ խոշոր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 10,5-11,5 մմ): Ծածկույթները չափավոր փայլուն են, մարմինը՝ սև, վերնարքները մուգ՝ կարմիր, սև նախշով:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Սեղրի քաղաքի շրջակայքից՝ Արծվաբար կիրճից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Ինչպես նույնի գերակայությամբ վարդազգիների, այնպես էլ զիհու ընդգրկմամբ չոր նոսրանտառներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հունիսի երկրորդ կեսին-հուլիսի սկզբին, թոխքը ցերեկն է, նստում են տափաստանամորու (Ephedra major) փշերի վրա, որի բներում էլ զարգանում է թրուրը: Զարգացումը հավանաբար ընթանում է մեկ տարի:


**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը չափավոր բարձր է: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմմնական գործուները:** Անասունների, հատկապես՝ այծերի չկարգավորված արածեցում: Տեսակի տարածման վայրերի՝ որպես ամբարապոչերի օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

**89. Կազիկոպորանյան երկարաբեղիկ**  
*Dorcadion kasikoranum* Pic, 1902  
 Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera  
 Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Բավականին ծգված մարմնով, ոչ խոշոր չափի բգեզ է (մարմնի երկարությունը 10,5-14 մմ): Վերնաթևերն առաջնամեջքից փոքր ինչ լայն են, նեղ ծվածներում ավելի լայն, քան արոտինը: Մարմնինը սև է, փայլուն, վերնաթևերը կարի երկայնքով ունեն սպիտակ մազային նեղ զոլ, ոտքերը կարմիր են:

**Տարածվածությունը:** Հյուսիս-Արևելյան Թուրքիա (հայտնի է միայն հայտնաբերման տիպային՝ Կազիկոպորանի, տեղավայրից), Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արայի լեռան հարավային լանջեր (Արագածոտնի և Կոտայքի մարզեր):

**Այլեւավայրերը:** Լեռնատափաստանային և ենթալպյան գոտու հարավային լանջեր՝ 1900-2500 մ ծ.մ.բ.:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բգեզները գետնին սողում են ցերեկը՝ ասլրիի վերջից մինչև հովիսի սկիզբը: Զարգացումը հավանաբար ընթանում է հողում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը կայուն ոչ բարձր է: Հանդիպում են եզակի առանձնյակներ:

**Վտանգնան հիմնական գործուները:** Անասունների չկարգավորված արածեցում: Տեսակի տարածման շրջանների կրծատում՝ պայմանավորված կլիմայի կանխատեսվող փոփոխությունների հետևանքով դրա սահմանների լանջն ի վեր տեղաշարժմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արայի լեռան առավել քիչ դեգրադացված հատվածներում ԲՀՊՏ-ի ստեղծում:

## 90. Երկգիծ երկարաբեղիկ

Dorcadion bistriatum Pic, 1898

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



© M.Smirnov



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Բավականին ձգված մարմնով ոչ խոշոր բզեզ է (մարմնի երկարությունը 10-15 մմ): Վերնաթերթն առաջնամեջքից փոքր ինչ լայն են, նեղ ձվածն՝ էզինը ավելի լայն, քան արողինը: Մարմինը սև է, վերնաթերթն ունեն գրեթե հավասարաչափ խիտ բավշյա ծածկույթ՝ հիմնականում բաց մոխրագույն կամ արծարագույն, սպիտակ մերձկարային գոլով, որն առանձնացած է հիմնական ծածկույթից սև զոլով, վերնաթերթի կողդերը ևս սև զոլով են:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Դարավագյազի լեռնաշղթա (Բարձրունի գ. մոտ) և Չանգեզուրի լեռնաշղթայի ծայրիցուստային հատված (Ուղեձորի և Սիսիանի լեռնանցքեր), Ղարաբաղի բարձրավանդակ (Սև լիճ մոտ):

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստան, ալպյան և ենթալպյան գոտիների հարավային լանջեր՝ 2200-2700 մ ծ.մ.ր.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բզեզները գետնին սողում են ցերեկը՝ ապրիլի վերջից մինչև հուլիսի կեսերը: Զարգացումը ընթանում է հավանաբար հողում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականին բարձր է: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անասունների չկարգավորված արածեցում: Տեսակի տարածման շրջանների կրծատում՝ պայմանավորված կլիմայի կանխատեսվող փոփոխությունների հետևանքով դրա սահմանների լանջն ի վեր տեղաշարժմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում: Տեսակի տարածման վայրերում գտնվող «Սև լիճ» արգելավայրը գործնականապես չի ընդգրկում տեսակի բիոտոպները:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նշված արգելավայրի տարածքի մեջ տեսակի ալպյան բիոտոպների ընդգրկում:

## 91. Գորբունովի երկարաբեղիկ

*Dorcadion gorbunovi* Danilevsky in Danilevsky & Miroshnikov, 1985

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a:

**Համառոտ նկարագրությունը:** Բավականին ձգված մարմնով, ոչ խոշոր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 11-14,5 մմ): Վերնաքննելն առաջնամեջքից փոքր ինչ լայն են, նեղ ձվածն՝ եզինը ավելի լայն, քան արուինը: Մարմինը սև է, վերնաքնները գրեթե հավասարաչափ խիտ բաց մոխրագույն կամ արծաթագույն բավշյա ծածկույթով են, կողային եզրերի երկայնքով ձգվող սև գոլով:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Դարավագյազի լեռնաշղթա և Զանգեզուրի լեռնաշղթայի ծայրայուսիսային հատված: Հայտնաբերվել է Գեղշիկ գյուղի (Վայոց Ձորի մարզ), Տաք և Անգեղակոր (Սյունիքի մարզ) գյուղերի մոտակայքում:

**Ապրելավայրերը:** Լեռնատափատանային, ալպյան և ենթալպյան գոտիներ՝ 1800-2200 մ ծ.մ.ր.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները գետնին սողում են ցերեկը՝ ապրիլի վերջից մինչև հուլիսի կեսերը: Զարգացումը ընթանում է հոդում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականին բարձր է: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Անասունների չկարգավորված արածեցում: Տեսակի տարածման շրջանների կրծատում՝ պայմանավորված կյիմայի կանխատեսվող փոփոխությունների հետևանքով դրա սահմանների լանջն ի վեր տեղաշարժմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Շեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընգրկում նախատեսվող «Գեղշիկ» ազգային պարկի տարածքի մեջ:

## 92. Կիսափայլ երկարաբեղիկ

Dorcadion semilucens Kraatz, 1873

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



© M. Danilevsky



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Բավականին ձգված մարմնով, ոչ խոշոր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 10,5-16,5 մմ): Վերնաթերթն առաջնամեջից փոքր ինչ լայն են, նեղ ձվածն՝ էգինը ավելի լայն, քան արուինը: Մարմինը սև է, վերնաթերթն ունեն գրեթե հավասարաչափ խիտ թավշյա ծածկույթ, ծածկույթի հիմնական գունավորումը գորշագույնից կամ բաց դարչնագույնից մինչև կեղտոտ սպիտակ է, կարի երկայնքով և կողմերով ձգվում են բավականին լայն սպիտակ զոլեր:

**Տարածվածությունը:** Հյուսիս-Արևելյան Աղբքեջան, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սևանի լեռնաշղթայի արևմտյան և կենտրոնական հատվածներ, հայտնաբերված է Շամբարակի և Զիլի մոտ:

**Ապրելավայրերը:** Ալպյան և ենթալպյան գոտիներ՝ 2100-2800 մ ծ.մ.թ.:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բզեզները սողում են ցերեկը՝ մայիսի սկզբից մինչև օգոստոսի կեսերը: Զարգացումը ընթանում է հողում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման հիմնական գործուները:** Անասունների չկարգավորված արածեցում: Տեսակի տարածման շրջանների կրծատում՝ պայմանավորված կլիմայի կանխատեսվող փոփոխությունների հետևանքով դրա սահմանների լանջն ի վեր տեղաշարժմանք:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում: Հանդիպում են «Սևան» ազգային պարկի բուժերային գոտում, որը չունի սահմանափակ բնօգտագործման իրական ռեժիմ:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման շրջանի մի մասին ԲՀՊՏ-ի կարգավիշակի սահմանում:

### 93. Մոխրագույն երկարաբեղիկ

Dorcadion cineriferum Suvorov, 1909

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera  
Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Բավականին ձգված մարմնով, ոչ խոշոր բզեզ է (մարմնի երկարությունը՝ 12-15 մմ): Վերնաթևերն առաջնամեջքի փոքր ինչ լայն են, նեղ ձվածն՝ էզինը ավելի լայն, քան արուինը: Մարմինը սև է, վերնաթևերն ունեն բաց մոխրագույն կամ արծաթագույն գորեթե հավասարաչափ խիտ բավշյա ծածկույթ, նրանց ծալված եզրերը մգացած են:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սևանի լեռնաշղթայի արևելյան մաս: Ապրելավայրերը: Ալպյան և ենթալպյան մարգագետիններ՝ 2200-2800 մ ծ.մ.ք.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները գետնին սողում են ցերեկը՝ մայիսի սկզբից մինչև հուլիսի կեսերը, առանձին առանձնյակներ՝ մինչև օգոստոսի սկիզբ: Չարգացումը ընթանում է հոդում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործունները:** Անասունների չկարգավորված արածեցում: Պոպուլյացիայի մի մասին սպառնում է նրա տարածման վայրերի որոշ հատվածներում լեռնարդյունաբերության զարգացումը:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում: Հանդիպում է «Սևան» ազգային պարկի բուժերային գոտում, որը չունի սահմանափակ բնօգտագործման իրական ռեժիմ:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման գոտու մի մասին ԲՀՊՏ-ի կարգավիճակի սահմանում:

#### 94. Սևճյան երկարաբեղիկ

Dorcadion sevliczi Danilevsky in Danilevsky&Miroshnikov, 1985

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



© M.Danilevsky



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Քավականին ձգված մարմնով ոչ խոշոր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 10,2-15 մմ): Վերնարելն առաջնամեջից փոքր ինչ լայն են, նեղ ձվածն՝ էգինը ավելի լայն, քան արուինը: Մարմինը սև է, վերնարելն ունեն գրեթե հավասարաշափ խիտ, բաց մոխրագույն կամ արծաթագույն թավշյա, առանց գոլերի ծածկույթ:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սև լճի շրջակայք՝ Գորիս քաղաքից դեպի հյուսիս (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Ալպյան մարգագետիններ՝ 2650-3000 մ ծ.մ.ք.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները գետնին սողում են ցերեկը՝ մայիսի վերջից մինչև հուլիսի կեսերը, առանձին անհատներ՝ մինչև օգոստոսի սկիզբը: Զարգացումը ընթանում է հոդում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Անասունների չկարգավորված արածեցման պատճառով տեղի ունեցող Էկոհամակարգերի դեգրադացում: Ապրելավայրերի կրծատում՝ պայմանավորված կիմայի կանխատեսվող փոփոխությունների հետևանքով տեղի ունեցող ալպյան գոտու սահմանների լանջն ի վեր տեղաշարժմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում: Տեսակի տարածման վայրերում գտնվող «Սև լիճ» արգելավայրը գործնականապես չի ընդգրկում տեսակի բիոտոպերը:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նշված արգելավայրի սահմաններում տեսակի ալպյան բիոտոպերի ներառում:

## 95. Չալաշյանի երկարաբեղիկ

Conizonia kalashianii Danilevsky, 1992

Կարգ՝ Կարծրաքևեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է ռոպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a:

**Համառոտ նկարագրությունը:** Նեղ, դեպի հետ փոքր ինչ նեղացող մարմնով, ոչ խոշոր չափի քեզ է (մարմնի երկարությունը 10,5 մմ): Մարմինը պատված է մազիկների խիտ ծածկույթով, առաջնամեջքի վրա՝ դարչնագույն, երեք բաց գունավորված զոլերով, վերնարելի վրա՝ անհավասարաչափ կեղտոտ սպիտակ:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արայի լեռան հարավային լանջեր՝ Եղվարդ ավանից դեպի հյուսիս-արևելք (Կոտայքի մարզ):

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստան՝ հարավային լանջեր, 2200 մ ծ.մ.բ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայտնի չեն: Բզեզները գտնվել են մայիսի վերջին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անասունների չկարգավորված արածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արայի լեռան առավել քիչ դեղորադացված հատվածներում ԲՀՊ-ի ստեղծում:

## 96. Պիկի երկարաբեղիկ

Phytocecia pici Reitter, 1892

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի բգեղ է (մարմնի երկարությունը 10-16 մմ): Ունի ձգված, ուռուցիկ, զուգահեռ կողքերով, սև գույնի մարմին, ոտքերը կարմիր են, միջիմ և հետին ազդրերը՝ սևացած ծայրերով:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հացավան գյուղի շրջակայր (Կոտայքի մարզ), «Խոսրովի անտառ» պետական արգելոց, Վայր քաղաքի շրջակայր (Վայոց Ձորի մարզ):

**Ապրելավայրերը:** Կիսաանապատ և Ֆրիզանա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բզեզները թռչում են ցերեկը՝ մայիսի վերջից մինչև հունիսի կեսերը: Հանդիպում են *Johrenia rausicijuga* տեսակի բույսի վրա, որում էլ հավանաբար զարգանում են թրթունները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, պատահական է հանդիպում:

**Վտանգման իմմանական գործոնները:** ԲՀՊՏ-ներից դուրս՝ անասունների չկարգավորված արածեցման հետևանքով էկոհամակարգերի դեգրադացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման բիոտոպերի ընդգրկում «Գերգեր» արգելավայրի տարածքի մեջ:

## 97. Կոռոստելյովի երկարաբեղիկ

*Agapanthia korostelevi* Danilevsky in Danilevsky & Miroshnikov, 1985

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով տեսակ է: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Նեղ, զուգահեռակող մարմնով, ոչ խոշոր բզեզ է (մարմնի երկարությունը 9-14,5 մմ): Մարմինը սև է, առաջնամեջքն երեք դեմնավուն մազապատ զոլերով, վերնաքերը պատված են խիստ մազիկներով, ունեն մոխրավուն տեսք:

**Տարածվածությունը:** Հայաստան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապելավայրերը:** Լեռնատափաստան, Ֆրիգանա՝ 1600-2200 մ ծ.մ.բ.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են հունիսին - հուլիսի սկզբին *Scorzonerá pulchra* բույսի ցողունների վրա, որտեղ ել, ըստ երևոյթի, զարգանում է թրթուրը: Զարգացումը ընթանում է հավանաբար մեկ տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը չափավոր բարձր է: Փոփոխության միտումները հայտնի չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

## 98. Արաքսյան տերևակեր

Cryptoccephalus araxicola Khnzorian, 1968

Կարգ՝ Կարծրաքննիկ կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Տերևակերներ - Chrysomelidae



©K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգավծ»՝ EN B 1ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Ուռուցիկ, փայլուն մարմնով, մանր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 2,2-2,6 մմ է): Գունավորումը դեղնավուն է, առաջնամեջքի վրա մեծ լողոված սահմաններով սևա-գորշագույն բծով, վերնաթևերի կարը ու հիմքը մզացած են, գագաթնային 1/3 հատվածում բույլ արտահայտված տրամակապով:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Զրվեժ ավանի շրջակայրից (Կոտայքի մարզ) և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի կիսաանապատներ և *Atrapaxis spinosa* L. կերպույսի մասնակցությամբ ֆրիզանա:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են ամառվա կեսին՝ հունիսի վերջին-հուլիսին, *Atrapaxis spinosa* L. տեսակի բիերի վրա, որտեղ էլ հավանաբար զարգանում է թրուրը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ են, հանդիպում են եզակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հողերի գյուղատնտեսական յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Զրվեժ ավանի շրջակայրում տեսակի տարածման վայրերին ԲՀՊՀ-ի կարգավիճակի սահմանում:

## 99. Ականտերի փողիկ

## Cyclobaris richteri Ter-Minasian, 1955

## Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Փղիկներ կամ Երկարակնճիրներ - Curculionidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեայով հազվագյուտ տեսակ է:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B 1ab(iii)+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի բգեղ է (մարմնի երկարությունը՝ 5-7 մ է): Մարմինը կարմրագորշագույն է, քոյլ փայլով, բարակ բաց գույնի մազիկներով: Կնճիթիկը կարծ է և լայն: Վերնաբները լայն ձվածև են:

## Տարածվածությունը: Հայաստանի հնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Նորարաշեն ավանի շրջակայքից (Երևան քաղաքի հարավ-արևելյան ծայրամաս):

**Ապրելավայրերը:** Կարմիր ավազներով անապատ:

**ԿԵՆՍԱՐԱԾՈՒԹՅԱՆ Առանձնահատկությունները:** Բգեցները հանդիպում են վաղ գարնաճ՝ մարտին-ապրիլի սկզբին, քարերի տակ։ Կենսարածության առանձնահատկությունները պարզված չեն։

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ծայրահեղ հազվադեպ է, հայտնի են եզակի առանձնյակներ:

**Վատանգման իիմնական գործողութերը:** Քաղաքակենտրոնացում և հողերի գյուղատնտեսական յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Զեն իրականացվում:  
**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նույտարաշեն ավանի շրջակայրում

ԲՀՊՏ-ի ստեղծում, ինչը նախատեսված է Երևան քաղաքի զարգացման համար:

**100. Զարմանահրաշ փղիկ**

Baris mirifica Khnzorian, 1958

Կարգ՝ Կարծրաքեր կամ Բզեզներ - Coleoptera

Ընտանիք՝ Փղիկներ կամ Երկարակնճիթներ - Curculionidae



© K. Makarov, G. Karagyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B 1ab(iii)+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Փոքր չափի բզեզ է (մարմնի երկարությունը շուրջ 3 մմ է): Մարմինը բավականին նեղ է, զուգահեռակող, ծածկված է խիտ թեփուկներով, որոնք լրիվ թաքցնում են ծածկույթները և ստեղծում լավ արտահայտված նախշ՝ կազմված սևագորշագույն, կարմրագորշագույն և սպիտակ բժերից:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Նորարաշեն ավանի շրջակայքից (Երևան քաղաքի հարավ-արևելյան ծայրամաս):

**Ապրելավայրերը:** Կարմիր ավագներով անապատ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բզեզները հանդիպում են մայիսին-հունիսի սկզբին՝ *Salsola* sp. բույսի վրա, որի արմատներում էլ հավանաբար կատարվում է թրթուրի զարգացումը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Մեծաքանակ չէ, հանդիպում են եզակի առանձնյակներ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Քաղաքակենտրոնացում և հողերի գյուղատնտեսական յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Նորարաշեն ավանի շրջակայքում ԲՀՊՏ-ի ստեղծում, ինչը նախատեսված է Երևան քաղաքի զարգացման զիսավոր հատակածով:

## 101. ՄԱՆՈՂԻՆԱ ԿԱՄ ԱՆ ԱՎՈԼՈՒ

Parnassius mnemosyne rjabovi Sheljuzhko, 1935

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Սուզաստորիթեռներ - Papilionidae



© A.Danchenko



**Կարգավիճակը:** Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B 1a: Տեսակը ընդգրկված է Բեռնի կոնսենսցիայի Հավելված II-ում:

**Համառու նկարագրությունը:** Խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 30-35 մմ), արուների թևերի ընդհանուր գուներանգն ալբասպիտակ է, էգերինը՝ կիսարափանցիկ, երբեմն մուգ փոշեժածկով: Առջևի թևերը սկավառակային (դիսկալ) հատվածում ունեն 2 սև պտեր, ապերսի վրա՝ կիսարափանցիկ, մոխրագույն պտեր: Հետին թևերն 2-3 ավելի քայ գունավորված պտերով են՝ հետին հատվածում սև թեփուկներով փոշեժածկոված:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Կովկաս, Փոքր և Միջին Ասիա, Իրան, Աֆղանստան, Արևմտյան Սիրիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանրապետությունում լայն տարածված է: Հայտնի է Շիրակի (Աշոցք գյուղի շրջակայր.,) Գեղարքունիքի (Սևանի լեռնանցք), Տավուշի (Դիլիջան քաղաքի շրջակայր.), Կոտայքի (Արգական, Գեղաղիք, Գողք, Հանքավան գգ. շրջակայր.), Վայոց Ձորի (Ջերմուկ քաղաքի, Գնիշիկ գյուղի շրջակայր.), Սյունիքի (Լիչք, Շվանիձոր գյուղերի շրջակայր., Կալեր և Վանք լրված գյուղեր) մարզերից, Արագած և Արայի լեռներից, «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Լեռնատափանատանային գոտու մարգագետիններ, անտառային բացատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ, թոփչքը՝ մայիսի կեսից մինչև հուլիսի կես: Թրբությունը զարգանում են *Corydalis* ցեղի լոկալ տեսակների վրա (*Corydalis persica*, *Corydalis angustifolia*): Զմեռում են ձվի կամ առաջին հասակի թրբությունը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Անտառային պոպուլյացիաների թվաքանակը կայուն է և բավականաչափ բարձր, անտառահատ բիոտոպերում՝ ցածր է և ենթարկվում է զգալի տատանումների:

**Վտանգման իմնական գործոնները:** Ինքնարիններով անտառային տարածքների մշակում թունաքիմիկատներով, անտառային բիոտոպերից դուրս՝ անասունների զերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Դիլիջան» ու «Արևիկ» ազգային պարկերում, ինչպես նաև մի շարք անտառային արգելավայրերում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընդգրկում նախատեսվող «Ջերմուկ» և «Գնիշիկ» ԲՀՊ-ների տարածքում, Արայի լեռան վրա ԲՀՊ-ի ստեղծում: Անտառի տերևակեր վնասառուների դեմ ինքնարիններով անտառների մշակման ժամանակ ընտրողական աղեցությամբ թունաքիմիկատների օգտագործում:

## 102. Ապոլոն

Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko, 1908

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Սուզաստորիթեռներ - Papilionidae



**Կարգավիճակը:** Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A1cde: Տեսակը ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում:

**Համառու նկարագրություն:** Խոշոր չափի թիթեռ է (արովի առջի թիթեռ 40-50 մմ, էգինը՝ 45-55 մմ), արուների թևերի ընդհանուր գուներանը ալբաստրակ է, էգերինը՝ դեղնակրեմավուն: Թևերի հետին եզրը բափանցիկ է և զուրկ թեփուկներից: Առջի թևերի վրա կամ տարբեր մեծության 5 սև պտեր, հետին թևերի վրա՝ 2 խոշոր կարմիր պտեր՝ սև օղակով և սպիտակ միջուկներով, թևերի անկյունային մասում տեղադրված են ավելի փոքր և միմյանց կպած 2-ական մոխրագույն պտեր:

**Տարածվածություն:** Եվրոպա, դեպի արևելք և հարավ-արևելք՝ մինչև Հարավային Սիրի, Սինդոլիա և Տյան-Չան, Փոքր Ասիա, Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածություն Հայաստանում:** Հայտնի է Գեղարքունիքի (ք. Աևան, գ. Աեմյոնովկա), Տավուշի (ք. Դիլիջան), Կոտայքի (Հանքավան, Արգական, Ծաղկաձոր), Վայոց Ձորի (Զերմուկ ք., Գնիշիկ գ. Շրջակայր), Սյունիքի (Լիճք, Շիշկերտ գգ. Շրջակայր, ք. Ջաջարան, Փիրուտ լրված գ.) մարզերից, Արայի լեռից:

**Ապրելավայրեր:** Նորանտառներ, վերին անտառեզրեր, սուրալպյան գոտում՝ քարքարոտ սարալանջեր:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տարեկան տալիս են մեկ սերունդ, թոփշքը՝ հունիսի կեսից մինչև օգոստոսի կեսը: Էգերը ձվադրում են *Sedum caucasicum*՝ թրթուների կերարույսի շուրջը՝ սուրստրատի վրա: Զննում են ձվի կամ առաջին հասակի թրթուների փուլում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականաչափ բարձր է: Մարդու գործունեությամբ չվնասված վայրերում՝ բավականին բարփոր:

**Վտանգման իմանական գործունները:** Ինքնարիների միջոցով անտառային տարածքների մշակում բունաքիմիկատներով, էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմանը:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում և «Դիլիջան», «Աևան» ու «Արևիկ» ազգային պարկերում, ինչպես նաև մի շարք անտառային արգելավայրերում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընդգրկում կազմակերպող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ: Անտառի տերևների վնասատուների դեմ ընտրողական ազդեցությամբ բունաքիմիկատների օգտագործում՝ ինքնարիներով անտառների մշակման ժամանակ:

### 103. Ալեքսանոր առագաստաթիթեռ

Papilio alexanor orientalis Romanoff, 1884

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Առագաստաթիթեռներ - Papilionidae



© A.Danchenko



**Կարգավիճակը:** Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1ab(iii)+B 2ab(iii). Տեսակը ընդգրկված է Բնոնի կոնվենցիայի Հավելված II-ում:

**Համառու նկարագրությունը:** Խոշոր չափի թիթեռ է (առօսի թևի երկարությունը 35-58 մմ), բնորոշ է սեռական երկանություն: Եզերի թևերի ղնդիանուր գուներանգը բաց դեղին է, արուներինը՝ օրրադեղնավուն: Առջևի թևերի վլա կամ ծայրային և 2 լայնակի սև գոլեր, ինչպես նաև սկավառակային (դիսկալ) և կենտրոնական (մեդիալ) գծեր: Հետին թևերի եզրը բնահատուկ կտրատված է՝ նեղ, երկար ելուստներով, ունեն լայն՝ վերևից դեղին և երկնագույն թեփուկներով ծածկված, արտաքին լայնակի, և նեղ՝ հիմնային, գոլեր:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպա, Փոքր և Միջին Ասիա, Իրան, Աֆղանստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արագած, Հատիս և Արայի լեռների հարավային լանջերից, «Խոսրովի անտառ» պետական արգելոցից, Կոտայքի (Արգական, Գառնի, Գեղադիր, Ջրվեժ), Վայոց Ձորի (Վայք, Գնիշիկ) և Սյունիքի (Մեղրի) մարզերի մի շարք վայրերից:

**Ապրելավայրերը:** Կիսաանապատներ, կսերոֆիտներ՝ 1000-2000 մ ծ.մ.բ., անտառի վերին եզրի քարքարոտ հատվածներ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տարվա ընթացքում տալիս են մեկ սերունդ, թոխքը՝ մայիսի կեսից մինչև հուլիսի կեսը: Զվարդում են *Ferula orientalis*, *Ferula rigida* բույսերի կրկնների և ծաղկների վլա: Բարձր հասակի թրթուները սնվում են հիմնականում գիշերը, ցերեկը թաքնվում են բույսի տերևանության կամ ստորին մասերում: Զմեռում են հարսնակները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտունները:** Թվաքանակը բավականին բարձր է, մարդու գործունեությամբ չվնասված վայրերում վիճակը բավականաչափ բարվոր է: Նկատվում են թվաքանակի խիստ տատանումներ՝ պայմանավորված կերաբույսի վեգետացիոն շրջանի տևողությամբ:

**Վտանգման հիմնական գործունները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները՝** Տեսակի ապրելավայրերի ընդգրկում կազմակերպվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ, Արայի լեռան վրա ԲՀՊՏ-ի ստեղծում:

#### 104. Բողոքենի ճերմակաթիթեն

*Artogeia bowdeni* (Eitschberger, [1984])

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեններ - Lepidoptera  
Ընտանիք՝ ճերմակաթիթեններ - Pieridae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի թիթեն է (առջևի թևի երկարությունը 17-20 մմ), արուների թևերի ընդհանուր գուներանզը սպիտակ է, գագաթնամասի թևենակի մզացումով և M3-Cu1 խորշիկում մուգ կետով, էգերինը՝ մինչև ջրերի դիսկալ մասը մուգ հիմային փոշեծածկով: Հետին թևերի ստորին մասը՝ դեղնակիտրոնագույն, մոխրագույն-կանաչ հիմային փոշեծածկով է, առջևի թևերինը՝ մաքոր սպիտակ, ապեքսի գագաթը՝ կիտրոնագույն:

**Տարածվածությունը:** Հյուսիս-արևելյան Թուրքիա, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Արագած լեռան ժայռային հատվածից:

**Ապրելավայրերը:** Ժայռային գոտու մեկուսացած ալպյան բացատներ՝ 2900-3200 մ ծ.մ.թ.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ՝ հովիսի կեսից մինչև օգսոտոսի կեսը: Զվարդում են կերարույս հանդիսացող *Arabis caucasica* լոկալ տեսակի բույսի տերևների վրա: Ջնեռում են հարսնյակները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բավականաչափ բարձր է՝ զգալի տատանումներով տարբեր տարիներին:

**Վտանգման իմնական գործուները:** Անստուների գերարածեցում: Ալյան գոտու մակերեսի կրծատում՝ պայմանավորված կիմայի կանխատեսվող փոփոխությունների հետևանքով դրա՝ լանջով ի վեր տեղաշարժման:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արագածի ալպյան» արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի բնապահպան ռեժիմի խստացում, չկարգավորված արածեցման կանխում:

## 105. Ավրորինա դեղնաքիթեն

*Colias aurorina* Herrich-Schaffer, [1850]

Կարգ՝ Թեփուկաքեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Շերմակաքիթեռներ - Pieridae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի» VU B 1b(iii)+B 2b(iii).

**Համառոտ նկարագրությունը:** Սիզին չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 25-35 մմ է, էգերինը՝ 35-40 մմ): Արուների թևերի ընդհանուր գուներանգը օքրագույն է, հաճախ ուժեղ մանուշակագույն փայլով, էգերը սպիտակ կամ նարնջագույն են, առջևի թևերի գագարը և հետին թևերի արտաքին եզրը և դիսկալ պուտը սև են, իսկ հետին թևերինը՝ նարնջագույն: Արուների թևերի ստորին մասը կիմնականում դեղին գույնի է, էգերինը՝ դեղնականաչավուն:

**Տարածվածությունը:** Փոքր Ասիա, Կովկաս, Իրան, Հարավ-Արևմտյան Թուրքմենստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Ունի լայն տարածում: Հայտնի է Գեղարքունիքի (ք. Սևան, գ. Շորժա), Կոտայքի (Չրվեժ, Գեղաղիք, Մեղրաձոր, Արգական, Գառնի), Վայոց Ձորի (Գնիշիկ), Սյունիքի (Լիճք, Շվանիձոր, Գուղեմնիս, Վանք և Կալեր լքված գ.) մարզեր, Արագած և Արայի լեռներից, «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապելավայրերը:** Քսեռոփիտներ և անտառի ու տրագանտների վերին սահմանում գտնվող տափաստանացած հատվածներ՝ տրագանտների ինտրուզիաներով:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ՝ մայիսի վերջից մինչև հուլիսի վերջը: Թրթուրները զարգանում են տրագանտային աստրագալի (*Astragalus microcephalus*) վրա: Զննում են երրորդ-չորրորդ հասակի բրդուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բավականաչափ բարձր է՝ զգալի տատանումներով տարբեր տարիներին:

**Վտանգման կիմնական գործունները:** Արուների համար տրագանտային ֆորմացիաների խարակում, տափաստանների հերկում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդունում նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊՏ-ի տարածքի մեջ, Արայի լեռան վրա ԲՀՊՏ-ի ստեղծում:

**106. Կանաչավուն դեղնաթիրեն**  
 Colias chlorocoma Christoph, 1888  
 Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
 Ընտանիք՝ Շերմակաթիթեռներ - Pieridae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահանջնության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի» VU B 1ab(iii)+B 2ab(iii):

**Համառու նկարագրությունը:** Սիզին չափի թիթեն է (արուների առջևի թևի երկարությունը 25-30 մմ է, էգերինը՝ 30-37 մմ), արուների թևերի ընդհանուր գուներանը դեղին է, տարբեր պոպուլյացիաներում՝ կիտրոնագույնից մինչև նարնջագույն, էգերը սալիտակ են, երբեմն դեղնավուն երանգով, առջևի թևերի գագարը և հետին թևերի արտաքին եզրը սև է, առջևի թևերի դիսկալ պուտը սև է, հետին թևերինը՝ դեղնա-նարնջագույն: Ստորին մակերեսի հիմնական գույնը դեղնականաչ է:

**Տարածվածությունը:** Թուրքիա, Իրան, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է Կենտրոնական Հայաստանում, հայտնի է «Խոսրովի անտառ» պետական արգելոցից, Արարատի (Լուսաշող և Ուրցալան գգ. շրջակայք) և Վայոց Ձորի (Գնիշիկ, Խաչիկ, Մարտիրոս, Խնձորուտ գգ.) մարզերից:

**Ապրելավայրերը:** Տրագանտներ և տափաստաններ՝ 1600- 2400 մ ծ.մ.թ.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ՝ մայիսի վերջից մինչև հուլիսի սկիզբը: Զարգանում են *Onobrychis cornuta* բույսի վրա: Չմնում են, ենթադրաբար, 4-րդ հասակի թրթուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բավականաչափ բարձր է՝ զգայի տաատնուններով տարբեր տարիներին:

**Վտանգման իմնական գործոնները:** Արոտավայրերի տրագականտային ֆորմացիաների խարարում, տափաստանների հերկում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊ-ի տարածքի մեջ:

## 107. Աֆրիկական փրոքերերիա

Proterebia afra hyrcana (Staudinger, 1901).

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Սատիրներ - Satyridae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահանջնության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»' VU B 1a+B2a.

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 16-20 մմ), թևերի ընդհանուր գուներանգը մուգ շագանակագույն է, գագարնամասն ավելի բաց է գունավորված՝ մինչև բաց բեժադարձնագույն: Առջևի և հետին թևերն առանձնահատուկ կարմիր պտերի տրամակապով են, պտերի միջուկը սև է, կենտրոնը՝ սպիտակ, հետին թևերի ստորին մակերեսին ջղերը սպիտակ փոշենածկով են:

**Տարածվածություն:** Եվրոպա, Բալկաններ, Փոքր Ասիա, Ղազախստան, Հարավ-Արևմտյան Թուրքմենստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Կոտայքի (Ծաղկաձոր, Բջնի), Սյունիքի (Ծվանիձորից դեպի հյուսիս) մարզերից, Արայի լեռից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Քարքարոտ տափաստաններ, ալպյան գոտու տափաստանացած մարգագետիններ՝ 1800-2200 մ ծ.մ.ր.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ, թռիչքը՝ ապրիլի վերջից մինչև մայիսի վերջը: Զվարդուս են, ենթադրաբար *Stipa arabica* կերաբույսի վրա: Չմեռում են բարձր հասակի բրուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Տափաստանային էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: Տեսակի ապրելավայրերի ընդգրկում կազմակերպվող «Գ-նիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ, Արայի լեռան վրա ԲՀՊՏ-ի ստեղծում:

## 108. Բրենթիս Ին

Brenthis ino schmitzi Wagener, 1983

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Նիմֆալիդներ - Nymphalidae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 16-18 մմ), թևերի ընդհանուր գուներանգը մուգ կարմրադեղուագույն է, առջևի և հետին թևերը՝ սեղին բնորոշ և պյուրի տրամակապերով:

**Տարածվածությունը:** Փոքր Ասիա, Հարավային Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Տավուշի (Իջևան ք. շրջակայք), Գողարքունիքի (Ծորժա), Կոտայքի (Հանքավան, Արգական, Շաղկաձոր) և Սյունիքի (Քաջարան ք. շրջակայք, լրված գ. Փխորուտ) մարզերից:

**Ապրելավայրերը:** Ենթալպյան մարգագետիններ, անտառի վերին եզրի բացատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ, թոփշը՝ հուլիսի սկզբից մինչև օգոստոսի սկիզբը: Կենսաբնության առանձնահատկությունները Հայաստանի պայմաններում հայտնի չեն: Թրթունների հավանական կերպույսը *Filipendula ulmaria* տեսակն է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բարձր չէ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անաստաների գերարածեցմանը:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընդգրկում «Արգական-Մեղրաձոր» պետական արգելավայրի և «Զանգեզուր» ԲՀՊՏ-ի տարածքի մեջ:

## 109. Վեղիական մելիքեա

Melitaea vedica Nekrutenko, 1975

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Նիմֆալիդներ - Nymphalidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B 1a+B2a.

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 16-18 մմ), թևերի լուղիանուր գուներանգը դեղնաօքրագույն է, առջևի և հետին թևերը՝ սեղին բնորոշ սև պատերի տրամակապերով:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Գեղանա լեռնաշղթայի արևմտյան ճյուղավորման էնդեմիկ է, հայտնի է «Խոսրովի անտառ» պետական արգելոցից (Գառնիի և Վեդիի հատվածներ) և Երանոս լեռանը անմիջապես հարող տարածքներից:

**Ապրելավայրերը:** Միջնալեռների աղբատ քսեռոֆիլային բուսականությանը խճաքարային-կավային փլվածքներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ, թոփշը՝ մայիսի կեսից մինչև հունիսի սկիզբը: Թրթուրները զարգանում են *Serratula serratuloides* բույսի տերևների վրա: Զմեռում են երրորդ-չորրորդ հասակի թրթուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Համեմատաբար բարձր է՝ զգայի տատանումներով տարբեր տարիներին:

**Վտանգման հիմնական գործոնները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Երանոս լեռան վրա գտնվող տեսակի ասլելավայրերի ընդգրկում «Խոսրովի անտառ» արգելոցի մեջ:

## 110. Տարազոյգ կապտաքիթեռ

Thersamonolycaena dispar rutila (Werneburg, 1864)

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Կապտաքիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+B2a: Հնդգրկված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում (ver 2.3) «Համեմատարար բարվոր վիճակում գտնվող, սակայն կարող է հայտնվել գտանձված տեսակների թվում» LR/nt կարգավիճակով, ինչպես նաև Բեռնի կրնվենցիայի Հավելված II-ում:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր թիթեռ է (արոտի առջևի թևերի երկարությունը 16-19 մմ է, եզինը՝ 18-22 մմ), արոտի թևերի ընդհանուր գուներանուն ալ կարմիր է՝ նեղ սև երիզով և դիսկալ մասնագծերով, եզի առջևի թևերն ալ կարմիր են՝ սև եզրային երիզով, պոստիլիսկալ, դիսկալ և միջին բծերով, հետին թևերը գորշագույն են՝ միմյանց միացած մարգինալ պտերից կազմված կարմիր գոլով, հետին թևերի հակառակ՝ ստորին կողմը, մոխրա-երկնագույն է՝ պոստիլիսկալ և մարգինալ բծերով, առջևի թևերը բաց կարմիր են՝ լավ զարգացած դիսկալ և պոստիլիսկալ պտերի շարքերով, արտաքին եզրը բաց մոխրագույն է:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Կովկաս, Աղբքեջան (Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջ), Թուրքիա (Սևոնվյան ափ), Միջին Ասիա, Միջիր, Հեռավոր Արևելք:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Ռոմանովի ամփոփագրում նշված միակ վայրից՝ “Lischk” (Զանգեզուրի լեռնաշղթա):

**Այլեւակայիթը:** Բացատներ անտառում, մեզոֆիլ մարգագետիններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայաստանի պայմաններում կենսաբանության առանձնահատկությունները հայտնի չեն: Եվրոպայում զարգացման ընթացքում տալիս են երեք սերունդ: Առաջին սերնդի հասուն առանձնյակները հայտնվում են մայիսի վերջին: Զվարդում են Rumex hydrolapathum, Rumex crispus բույսերի տերևների և ցողունների վրա: Չմեռում են 3-4-րդ հասակի բրդությունները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Տվյալներ չկան:

**Վտանգման իմնական գործուները:** Տվյալներ չկան:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի հավանական ապրելավայրերի (Սևանի լեռնաշղթայի հարավային լանջեր, Մեղրիի լեռնաշղթա) հետազոտում, տեսակի հայտնաբերման դեպքում՝ այդ տարածքներին ԲՀՊ-ի կարգավիճակի սահմանում:

### 111. Ողմանովի թումարես

*Tomares romanovi* (Christoph, 1882)

Կարգ՝ Թեփուկարևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Կապտարիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի» VU B 1ab(iii)+B 2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-17 մմ է, էգերինը՝ 16-19 մմ), արուների թևերի ընդհանուր գումարանգը սևագորշագույշ է՝ առջևի թևերի դիսկալ և հետին թևերի անալ մասում վառ կարմիր պուտով, հետին թևերի ստորին մակերեսը բաց կանաչ է՝ մետաղական փայլով:

**Տարածվածությունը:** Փոքր Ասիա, Անդրկովկաս, Իրան, Հարավ-Արևմտյան Տուրքմենստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Կենտրոնական և Հարավային Հայաստան: Հայտնի է Կոտայքի (Գառնի, Գեղադիր, Հացավան, Ջրվեժ գյուղեր, Հատիս լեռ), Վայոց Ձորի (Արտավան), Արարատի (Ուրցալանջ), Սյունիքի (Շվանիձոր գ. շրջակայք) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ասլելավայրեր:** Կիսաանապատներ, չոր մարգագետիններ, տափաստաններ, անտառի վերին եզրերի տափաստանացած հատվածներ՝ 1300-2200 մ ծ.մ.ք.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ՝ մայիսի կեսից մինչև հունիսի վերջը: Զննում են հարսնյակները: Թրթուրները զարգանում են *Astragalus fimbriatus* բույսի ծաղկարույթերում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Չխախտված ցենոզներում թվաքանակը համեմատաբար բարձր է՝ խիստ կախված է կերարույսի պոպուլյացիայի խտությունից:

**Վտանգման իմնական գործուները:** Անասունների գերարածեցում, հողերի գուրատնտեսական յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: Ինքնարդիոններով անտառների մշակման ժամանակ անտառի տերևակեր վնասատուների դեմ ընտրողական ազդեցությամբ թունաքիմիկատների օգտագործում:

## 112. Ակոն կապտաթիթեռ

Maculinea alcon monticola (Staudinger, 1901)

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Կապտաթիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահանջնության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-19 մմ է, էգերինը՝ 13-18 մմ): Արուն վերևից փայլատ մանուշակագույն է՝ արտաքին եզրի մգացումով, լավ արտահայտված դիսկալ և հետդիսկալ պտերի շարքով: Էզր վերևից միատար մուգ շագանակագույն է՝ բույլ արտահայտված դիսկալ պուտով: Թևերի ստորին մակերեսը միատար մուգ մոխրագույն է՝ դիսկալ և հետդիսկալ սև պտերից կազմված լավ արտահայտված նախշով:

**Տարածվածությունը:** Եվրոպա, դեպի արևելք՝ մինչև Կենտրոնական Սիրիի, Փոքր Ասիա, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Շիրակի (Զաջուռի լեռնանցք) Տավուշի (Գյորիշան և Իջևան քք. շրջակայք, Աճարկուտ գ.), Կոտայքի (Արգական), Վայոց Ձորի (Գյորիշիկ գ. շրջակայք), Սյունիքի (Քաջարան ք. շրջակայք, գ. Ծվանիձոր) մարզերից, Արագած լեռան հարավային լանջերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Չոր մարգագետիններ, բացատներ, քարքարոտ տափաստաններ՝ 1400-2300 մ ծ.մ.ք.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ՝ հուլիսի կեսից մինչև օգոստոսի կեսը: Էզր ձվադրում է *Gentiana cruciata* բույսի ծաղկաբույերի մեջ: Երկրորդ-երրորդ հասակի թրթուրները մրջունների միջոցով տեղափոխվում են մրջնանց, որտեղ էլ ձմեռում են: Ձմեռումից հետո ավարտում են սնվելը՝ ուտելով մրջունների թրթուրներին և հարսնյակներին: Հարսնյակավորվում են մրջնանցում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմանական գործունները:** Հողերի հերկում, կերարույսի ծաղկման շրջանում խոտհունն, ինքնարիններով անտառապային տարածքների մշակում բունաքիմիկատներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և ազգային պարկերում և «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գյորիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ: Ինքնարիններով անտառների մշակման ժամանակ անտառի տերևակեր վնասատուների դեմ ընտրողական ազդեցությամբ բունաքիմիկատների օգտագործում:

### 113. Արիոն կապտաթիթեռ

Maculinea arion zara Jachontov, 1935

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Կապտաթիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Տեսակը գտնվում է արեալի սահմանաեզրին: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի» VU B 1a+B2a, ընդգրկված է ԲՊՍՄ (ver 2.3) «Համեմատաբար բարվոք վիճակում գտնվող, սակայն կարող է հայտնվել վտանգված տեսակների թվում» LR/nt կարգավիճակով և Բեռնի կոմիտենցիայի Հավելված II-ում:

**Համառուս նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 16-18 մմ է, էգերինը՝ 15-20 մմ): Արուն վերևից մուգ կապույտ գույնի է՝ արտաքին եզրը խիստ մգացած է, լավ արտահայտված է դիսկալ և հետդիսկալ պտերի շարքը: Էզի նախշը նույն է, սակայն ավելի լավ է արտահայտված: Թների ստորին մակերեսը մոխրագույն է՝ դիսկալ և հետդիսկալ սև պտերի լավ արտահայտված նախշով: Լավ է արտահայտված նաև բազալյային փոշեծածկը:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Կովկաս, Փոքր Ասիա, Միջին Ասիա, Ղազախստան՝ մինչև Արևմտյան Սիրի:

**Տարածվածությունը Հայաստանում:** Լայն տարածում ունի: Հայտնի է Շիրակի (Աշոցքի շրջակայք) Գեղարքունիքի (Սևան քաղաքի շրջակայք, Շորժա), Տավուշի (Սարիգյուղ, Ջուշևան գյուղերի շրջակայք), Կոտայքի (Արգական, Մեղրաձոր, Գողթ, Գառնի գյուղերի շրջակայք), Վայոց Ձորի (Գնիշիկ գյուղի շրջակայք, Արտավան), Սյունիքի (Քաջարան քաղաքի շրջակայք, Կորիս, Ծվանձնառ գյուղեր, Պիսրուտ լրված գյուղ) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Չոր մարգագետիններ, անտառների բացատներ, անտառի վերին եզրերի տափաստանացած հատվածներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ՝ հունիսի կեսից մինչև հուլիսի վերջը: Էզը ձվադրում է *Oryganum vulgare* բույսի ծաղիկների մեջ: Երկրորդ երրորդ հասակի թրբուրները մրջյունների միջոցով տեղափոխվում են մրջնանց, որտեղ էլ ձմեռում են: Ձմեռումից հետո ավարտում են սննդելը՝ ուտելով մրջյունների թրբուրներին և հարսնյակներին: Հարսնյակավորվում են մրջնանցում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բավականաչափ բարձր է՝ թվաքանակի միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմմնական գործուները:** Հողերի հերկում, կերարույսի ծաղկման շրջանում իրականացվող խոտհուններ, անտառների գերարածեցում, ինքնաթիռներով անտառային տարածքների մշակում թունաքիմիկատներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: Տեսակի ապրելավայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի

տարածքի մեջ: Ինքնաթիռներով անտառների մշակման ժամանակ անտառի տերևակեր վնասատուների դեմ ընտրողական ազդեցությամբ թունաքիմիկատների օգտագործում:

#### 114. Մթնշաղային կապտաթիթեռ

Maculinea nausithous (Bergstrasser, [1779])

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Կապտաթիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Ըստհատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է բրաբես «Խոցելի»՝ VU B 1a+B2a): Տեսակը ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver 2.3) «Համեմատաբար բարվոր վիճակում գտնվող, սահյան կարող է հայտնվել վտանգված տեսակների թվում» LR/nt կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 13-16 մմ է, էգերինը՝ 12-15 մմ): Արուի թևերը վերևից մուգ կապույտ են՝ խիստ մգացած արտաքին լայն եզրով, լավ արտահայտված են դիսկալ և հետդիսկալ պտերի շարքերը: Էզր վերևից միատար մուգ շագանակագույն է՝ թույլ արտահայտված դիսկալ պուտով: Թևերի ստորին մակերեսը միատար մուգ շագանակագույն է՝ դիսկալ և հետդիսկալ աև պտերի լավ արտահայտված նախշով:

**Տարածվածությունը:** Եվրոպա, դեպի արևելք՝ մինչև Կենտրոնական Սիրիի, Փոքր Ասիա, Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է ոչ շատ տեղերից՝ Ստեփանավան քաղաքի շրջակայքից (Լոռու մարզ), Սեմյոնովկա և Շորժա գյուղերից (Գեղարքունիքի մարզ) և Ծաղկաձորից (Կոտայքի մարզ):

**Ապրելավայրերը:** Մարգագետիններ, անտառի վերին եզրերի տափաստանացած հատվածներ՝ 2000-2300 մ ծ.մ.բ.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ՝ հուլիսի կեսից մինչև օգոստոսի կեսը: Էզր ձվադրում է *Sanguisorba officinalis* բույսի ծաղիկների մեջ: Երկրորդ-երրորդ հասակի թրթունները մրջյունների միջոցով տեղափոխվում են մրջնանց, որտեղ էլ ճմեռում են: Ճմեռումից հետո ավարտում են սնվելը՝ ուտելով մրջյունների թրթուններին և հարսնյակներին: Հարսնյակավորվում են մրջնանցում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Հողերի հերկում, կերարույսի ծաղկման շրջանում իրականացվող խոտիուններ, անտառների գերարածեցում, ինքնաթիռներով անտառային տարածքների մշակում թունաքիմիկատներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի ապրելավայրերի ընդգրկում «Արգական-Մեղրաձոր» արգելավայրի տարածքի մեջ: Ինքնաթիռներով անտառների մշակման ժամանակ անտառի տերևակեր վնասատուների դեմ ընտրողական ազդեցությամբ թունաքիմիկատների օգտագործում:

### 115. Անդրկովկասյան կապտաթիթեռ

*Plebejus transcaucasicus* (Rebel, 1901)

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Կապտաթիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B1a+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առաջնաթևի երկարությունը 12-15 մմ), թևերի ընդհանուր երանգը մասնաւությամբ է, մետաղական փայլվ, ստորին թևերի վրա՝ եզրային սև գույնի պտերի շարքով, անալ մասի երիզը կարմիր գույնի է: Եզր մուգ գույնի է՝ միայն բազալյային մասում է կապույտ, թևերի ստորին մակերեսի երանգը մոխրագույն է՝ թերևակի կանաչավուն բազալյային փոշեծածկով, դիսկալյային պուտը և դիսկալյային ու սուրմարգինալ պտերը միջուկը մետաղական փայլվուկներով է:

**Տարածվածությունը:** Հարավային Անդրկովկաս, Հյուսիս-Արևմտյան Թուրքիա, Հյուսիս-Արևմտյան Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Կոտայքի (Հացավան, Զրվեժ), Արարատի (Գոռավանի ավագուտներ՝ Վեդի քաղաքի մոտ) և Սյունիքի (Ագարակ քաղաքի շրջակայր, Շվանիձոր գյուղ) մարզերից:

**Ապրելավայրերը:** Կավային և ավագոտ անապատներ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տարվա ընթացքում տախս են մի քանի սերունդ: Եզր ձվադրում է կերաբույսի՝ *Alhagi persarum*-ի տերևների (ամառային սերունդ) և ցորունի մերձարմատային մասի վրա (զարնանային սերունդ):

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Չխախտված բիոտոպերում բավականաչափ բարձր է, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Վտանգված չոր էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների չկարգավորված արածեցմամբ: Հողերի գյուղատնտեսական յուրացում: Լեռնագործություն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում և «Գոռավանի ավագուտներ» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները՝ «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: «Գոռավանի ավագուտներ» արգելավայի պահպանության ռեժիմի խստացում:**

### 116. Դիանա կապտարիելո

*Neolysandra diana* (Miller, 1923)

Կարգ՝ Թեփուկաքեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Կապտարիեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթելո է (արուների առաջնաքեր երկարությունը 12-15 մմ): Արող թերի ընդիանուր երանգն երկնագույն է՝ մետաղական փայլով, եզրի մգացումը շատ ուժեղ է արտահայտված, երբեմն՝ հասնում է դիսկալ մասին: Եզր մուգ է գունավորված, թերի բազալյան մասը ծածկված է կապույտ փոշեհատիկներով, ունեն լավ արտահայտված դիսկալ մանրագծիկ: Հետին թերի ստորին մակերեսի հիմնական երանգը կապտա-կանաչավուն է՝ մետաղական փայլով, առաջնաքերինը՝ մոխրագույն, պսստդիսկալ շարքերը խիստ բերզարգացած են:

**Տարածվածությունը:** Հայտնի են միայն երկու պոպուլյացիաներ՝ Հյուսիս-Արևմտյան Թուրքիայից (Ղարս) և դիտարկվող՝ հայկականը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Կոտայքի մարզ՝ Գեղադիք, Զորադրյուր գյուղերի շրջակայր, Հատիս լեռ:

**Ապրելավայրերը:** Ենթալպյան մարգագետիններ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ, ձմեռում են հարսնյակները: Եզր ճվադրում է *Vicia* sp. բույսի կոկոնների մեջ, որտեղ էլ զարգանում է թրրուրը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը ցածր է՝ խիստ տատանումներով տարբեր տարիներին:

**Վատանգման հիմնական գործուները:** Խոպան հողերի հերկում, խոտհուն, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերում ԲՀՊՏ-ների ստեղծում (արգելավայրերի կամ բնության հուշարձանների կարգավիճակով), արածեցման կարգավորում:

**117. Դամոնիդես կապտարիթեն**  
*Agrodiactus damonides* (Staudinger, 1899)  
 Կարգ՝ Թեփուկաքեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
 Ընտանիք՝ Կապտարիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով ծայրահեղ հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում զտնվող»՝ CR B1ab(i,ii,iii)+B 2b (i,ii,iii):  
**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-20 մմ), թևերի ընդհանուր երանգն երկնագույն՝ մետարսային փայլով, թևերի ստորին մակերեսը՝ սեղին բնորոշ՝ հետին թևերի վրա լավ արտահայտված սպիտակ մանրագծով, հետին թևերի դիսկալ թիծով և հետդիսկալ թիծով շարքը խիստ թերզարգացած է:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի են մի քանի նմուշներ՝ Սեղրի գետի աշափնյա մասից:

**Ապրելավայրերը:** Տրագանտներ, ֆրիգանա՝ լեռնային գոտու ցածր և միջին գոտիներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ, բոիչը՝ մայիսի կեսից մինչև հունիսի կեսը, կենսաբնության մանրամասները հայտնի չեն, բրբուների հավանական կերպույսը *Astragalus ordubadensis* տեսակն է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի են եզակի հայտնաբերումներ, վերջին նմուշները հավաքվել են 1973 թվականին, հավանաբար, անհետացել են:

**Վտանգման իիմնական գործուները:** Տեսակի ապրելավայրերում հանքարդյունահանում, վերջին նմուշները նշվել են մինչև Ազարակի հանքի շահագործումը:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի հետազոտում, հայտնաբերման դեպքում՝ ապրելավայրերում ԲՀՊՏ-ի ստեղծում:

118. Երևանյան կապտարդիթեռ

*Agrodiaetus eriwanensis* Forster, 1960

Կարգ՝ Թեփուկաթերեր կամ Թիթեռնիդը - Lepidoptera  
Ընտանիք՝ Կապտարիթեռնիներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի քեզի երկարությունը 12-15 մմ), թևերը դարչնագույն են՝ դեղնավուն երանգով, արովի առջևի թևերը՝ առանձնահատուկ անդրոկոնիալ դաշտերով, թևերի ստորին մակերեսը՝ սեղին բնորոշ՝ հետին թևերի վրա լավ արտահայտված սպիտակ մանրազգիկով։ Հավասար որոշումը հնարավոր է տեսակին հատուկ՝ CN=32-34, կարիոտիպի հիման վրա։

**Տարածվածություն:** Հյուսիս-Արևմտյան Թուրքիա, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Կենտրոնական Հայաստան, հայտնի է Արագած լեռան հարավյային լանջերից, «Խորովի անտառ» արգելոցի Գառնիի հատվածից, Գնիշիկ գյուղի շրջակայրից:

**Ապրելավայրեր:** Տրազանտներ, անտառի վերին սահմանի չոր մարգագետիններ:

**ԿԵՆՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ՝ հունիսի կեսից մինչև հուլիսի կեսը: Կերպույտերը և կենսարանության առանձնահատկությունները հայտնի չեն:

**Թվաքանակը** և դրա փոփոխության միտումները: Չխախտված բիոտոպերում բավականաչափ բարձր է: Թվաքանակի փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ չկան:

**Վատանգման իիմնական գործոնները:** Խոպան հողերի հերկում, անասունների գեռառածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» անտառային առօսությունը:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի բնույթին համապետական «Զինշախ» ազգային պարկի տարածքի մեջ:

### 119. Հովերտի կապտաքիթեն

*Agrodiaetus huberti* Carbonell, 1993

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Կապտաքիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-20 մմ), թևերի ընդհանուր երանգն երկնագույն է՝ մետաղական փայլով, թևերի ստորին մակերեսը՝ սեղման բնորոշ՝ հետին թևերի վրա լավ արտահայտված սպիտակ մանրագծով: Տեսակի հավասար որոշումը հնարավոր է տեսակին հատուկ՝ CN=35-37, կարիոտիպի հիման վրա:

**Տարածվածությունը:** Հյուսիս-Արևմտյան Թուրքիա, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Կենտրոնական և Հարավային Հայաստան, հայտնաբերվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում (Գառնիի և Վեդիի հատվածներ), Վայոց Զորի (Մարտիրոս, Խնձորուտ, Գնիշիկ) և Սյունիքի (Քաջարան, Փիրուտ լրված գյուղ) մարզերում:

**Ապրելավայրերը:** Տրագանտներ, անտառի վերին եզրի չոր մարգագետիններ և տափաստաններ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ՝ հունիսի կեսից մինչև օգոստոսի կեսը: Թրթուրը զարգանում է *Astragalus brachycarpus*, *Astragalus priliopkoanus* բույսերի տերևների վրա: Զմեռում են երրորդ կամ չորրորդ հասակի թրթուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականին ցածր է, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Խոսան հողերի հերկում, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» և «Զանգեզուր» ԲՀՊՏ-ների տարածքի մեջ:

## 120. Իֆիգենիա կապտաքիթեն

*Agrodiaetus iphigenia araratensis* De Lesse, 1957

Կարգ՝ Թեփուկարթներ կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Կապտաքիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-20 մմ), թևերի ընդհանուր երանգն երկնագույն է՝ մետաքսային փայլով, թևերի ստորին մակերեսը՝ սեղման բնորոշ՝ հետին թևերի վրա լավ արտահայտված, դիստալ ուղղությամբ լայնացող սպիտակ մանրագծով: Տեսակի հավաստի որոշումը հնարավոր է տեսակին հատուկ՝ CN=14 կարիոտիպի հիման վրա:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպա, Թուրքիա, Հարավային Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Վայոց Զորի (Աղջաձոր և Գնիշիկ գյուղերի շրջակայր) և Սյունիքի (Բիշենեկի լեռնանցքից դեպի հյուսիս գտնվող լանջեր):

**Ապրելավայրերը:** Չոր ենթալպյան մարգագետիններ, անտառի վերին եզրի բացատներ՝ 1400-2200 մ ծ.մ.թ.:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ, բոխըք՝ հուլիսի վերջից մինչև հուլիսի վերջը: Թրթուրը զարգանում է նախնական որոշմամբ *Onobrychis cadmea* բույսի տերևների վրա: Զմեռում են երկրորդ-երրորդ հասակի թրթուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Խոպան հողերի հերկում, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊՏ-ի տարածքի մեջ:

## 121. Անտեսված կապտարիբեռ

Agrodiaetus neglectus Dantchenko, 2000.  
 Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
 Ընտանիք՝ Կապտարիբեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 18-22 մմ), թևերի ընդհանուր երանգը կապույտ է՝ մետաղական փայլով, եզրի մգացումը շատ ուժեղ է արտահայտված, երբեմն հասնում է մինչև թևի միջին մասը, եզրը դարչնագույն է, թևերի ստորին մակերեսը՝ սեղին բնորոշ՝ հետին թևերի վրա լավ արտահայտված սպիտակ նաևրագծով: Հավաստի որոշումը հնարավոր է տեսակին հատուկ՝ CN=25, կարիոտիպի հիման վրա:

**Տարածվածությունը:** Հայաստանի Էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Մյունիքի մարզ՝ Մեղրիի լեռնաշղթայի հարավային լանջեր՝ Լիճը գյուղի մոտ և Շվանիձոր գյուղից դեպի հյուսիս:

**Ապրելավայրերը:** Անտառի վերին եզրի չոր մարգագետիններ՝ 1400-1900 մ ծ.մ.ք.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տախս են մեկ սերունդ, բոիչքը՝ հուլիսի կեսից մինչև օգոստոսի կեսը: Թրթուրը զարգանում է *Astragalus robustus* բույսի լոկալ ձևի տերևների վրա: Չնեռում են երկրորդ հասակի թրթուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Բավականին ցածր է, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Անասունների գերարածեցում, ենթակառուցավծքի զարգացում (ճանապարհաշինություն):

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

## 122. Նինայի կապտաթիթեռ

Agrodiaetus ninae Forster, 1956

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Կապտաթիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ, կտրատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-20 մմ է, թևերի ընդհանուր երանգն երկնագույն է՝ մետաբուզային փայլով, ջղերի դիստալ ծայրերը ևս փոշեծածկով են, թևերի ստորին մակերեսը՝ սեղին բնորոշ հետին թևերի վրա լավ արտահայտված սպիտակ մանրագծով, հետին թևերի դիսկալ պուտը և հետոդիսկալ պտերի շարքը լավ են զարգացած):

**Տարածվածությունը:** Հայաստան, Վրաստան, Հյուսիս-Արևելյան թուրքիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է ոչ շատ տեղերից՝ Շիրակի (Զաջուռի լեռնանցք), Կոտայքի (Գեղարդի վանք՝ Գողթ գյուղի մոտ), Գեղարքունիքի (Ծորժա) և Վայոց Ձորի (Վայք ք. Հրազդակայր, Մարտիրոս, Գնիշիկ գյուղեր) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի Գառնիի հատվածից:

**Ապրելավայրերը՝** Գիհու նոսրանտառներ, տրագանտներ՝ 1300-2300 մ ծ.մ.ր.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ, բոխքը՝ հուլիսի սկզբից մինչև օգոստոսի կես: Թրթուրը զարգանում է *Astragalus brachycarpus*, *Astragalus subrobustus* վեզետացիան ավարտած բույսերի տերևների և ծաղկաբույլերի վրա: Զմեռում են առաջին հասակի բրդուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Չափավոր բարձր է՝ խստ տատանումներով տարբեր տարիներին, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Խոսան հողերի հերկում, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊՏ-ի տարածքի մեջ:

### 123. Սուտակովի կապտաթիրեն

Agrodiaetus surakovi Dantchenko et Lukhtanov, 1994

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera

Ընտանիք՝ Կապտաթիրեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված» EN B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 17-19 մմ), թևերի ընդհանուր գունավորումն երկնագույն՝ մետաքսային երանգով, թևերի ստորին մակերեսը՝ սեղին բնորոշ՝ հետին թևերի վրա լավ արտահայտված, սպիտակ մանրագծով: Հավաստի որոշումը հնարավոր է տեսակին հատուկ՝ CN=50, կարիոտիպի հիման վրա:

**Տարածվածությունը:** Հյուսիս-Արևմտյան թուրքիա, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Կենտրոնական Հայաստան, հայտնի է Կոտայքի (Գեղաղիր, Գառնի գգ. շրջակայք), Վայոց Զորի (Մարտիրոս, Խնձորուտ, Գնիշիկ) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Տրագանտներ, անտառի վերին եզրի չոր մարգագետիններ և տափաստաններ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տալս են մեկ սերունդ՝ հունիսի կեսից մինչև օգոստոսի կեսը: Թրթուրը զարգանում է *Astragalus brachycarpus* բույսի տերևների վրա: Զմեռում են երկրորդ հասակի թրթուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բարձր չէ, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Խոպան հողերի հերկում, խոտհունձ, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ԲՀՊ-ի տարածքի մեջ:

**124. Թուրքական կապտաթիթեն**

**Agrodiaetus turcicus Koçak, 1977**

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Կապտաթիթեռներ - Lycaenidae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-20 մմ), թևերի ընդհանուր երանգը կապույտ է՝ մասնաւակագույն նրբերանգով, թևերի ստորին մակերեսը՝ սեղման բնորոշ՝ հետին թևերի վրա լավ արտահայտված դիստալ ուղղությամբ լայնացող սպիտակ զոլով: Առջևի թևերի ստորին մակերեսի պտերի դիստալ շարքը խիստ կորացած է: Հավաստի որոշումը հնարավոր է տեսակին հատուկ՝ CN=24, կարիստիկ հիման վրա:

**Տարածվածությունը:** Հյուսիս-Արևելյան Թուրքիա, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է ոչ շատ տեղերից՝ Զաջուռի լեռնանցքից (Շիրակի մարզ), Մարտունի քարաքի շրջակայրից (Գեղարքունիքի մարզ), Գեղիշիկ, Խնձորուտ, Մարտիրոս գյուղերի շրջակայրից (Վայոց Ձորի մարզ):

**Ապրելավայրեր:** Համեմատաբար մեզոֆիլ ենթալպյան մարգագետիններ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տալիս են մեկ սերունդ, թոփշքը՝ հունիսի վերջից մինչև հուլիսի վերջը: Թրթուրը զարգանում է նախնական որոշմամբ *Onobrychis cadmea* բույսի տերևների վրա: Զմեռում են երկրորդ-երրորդ հասակի թրթուրները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականին ցածր է, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման հիմնական գործուները:** Խոպան հողերի հերկում, խոտհունձ, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Են իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գեղիշիկ» ԲՀՊՏ-ի տարածքի մեջ:


## 125. Կաշուկի իլիկարիքեն

Hyles hippophaes caucasica (Denso, 1913)

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Իլիկարիքեռներ - Sphingidae



© A.Danchenko



**Կարգավիճակը:** Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B2a: Տեսակը ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում (ver 2.3) DD «Տվյալներն անբավարար են» կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 60-75 մմ), թևերի ընդհանուր գուներանգը ձիթամոխրագույն է, միջնամասում՝ սեղին բնորոշ՝ լայնակի գոլի տեսք ունեցող բաց գույնի հատվածով: Հետին թևերը վառ վարդագույն են, հիմքին մոտ՝ սև, արտաքին երիզը կեղտոտ մոխրագույն է, ծոպերիզը՝ սպիտակ:

**Տարածվածությունը:** Եվրոպայի հարավային մաս, դեպի արևմուտք՝ Արևմտյան Եվրոպայի և Ուստաստանի հարավով մինչև Տյան-Չան և Պամիր: Փոքր Ասիա, Իրան, Միջին Ասիա, Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Լայն տարածված է Կենտրոնական և Հարավային Հայաստանում: Հայտնաբերված է Արագածոտնի (գ. Բյուրական), Կոտայքի (Գառնի, Հացավան), Արարատի (Ուրցաձոր գյուղի շրջակայր), Վայոց Ձորի (Ջերմուկ քաղաք, Գնիշիկ, Արփի գյուղերի մոտ) և Սյունիքի (Սեղրի) մարզերից, «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրեր:** Անապատներ, կիսաանապատներ, գիհու նոսրանտառներ, ճանապարհների երկայնքով անտառաշերտեր, քաղաքների և ավանների պուրակային գոտիներ, *Eleagnus angustigolia* տեսակի մացառուտներով, ակտիվ մարդկային գործունեությունից գորկ ոռոգեալ լանջաֆուների հատվածներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զարգացման ընթացքում տալիս են 2-3 սերունդ, թիթեռները թռչում են մայիսից մինչև սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներ: Անառաջին-աշնանային սերնդների թվաքանակն ավելի բարձր է: Զվարդում են *Eleagnus angustigolia* բույսի տերևների վրա, որտեղ էլ զարգանում են թրթուները: Ակտիվ չվող տեսակ է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականաչափ բարձր է՝ մեծ տատանումներով տարբեր տարիներին:

**Վտանգման հիմնական գործուները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և :

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: Տեսակի ապրելավայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ:

**126. Պրոզերպինա իլիկարփեռ**  
*Proserpinus proserpina* (Pallas, 1772)  
 Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
 Ընտանիք՝ Իլիկարփեռներ - Sphingidae



© A.Danchenko



**Կարգավիճակը:** Բնության պահպանության միջազգային միության ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B 1a+B2a: Տեսակը ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում (ver 2.3) «Տվյալներն անբավարար են»՝ DD կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի հավելված II-ում:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի թիթեռ է (առջևի թևի լեռը 20-25 մմ), առջևի թևերի ընդհանուր գուներանզը կանաչ կամ մոխրագույն կանաչ է, հետին թևերինը՝ դեղին, սև գույնի արտաքին եզրով:

**Տարածվածությունը:** Եվրոպա, դեպի արևելք և հարավ-արևելք՝ մինչև Կենտրոնական Սիրիի և Տյան-Չան, Փոքր Ասիա, Կովկաս, Անդրկովակս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Լայն տարածված է Կենտրոնական և Հարավային Հայաստանում, հայտնաբերվել է Արագած լեռան հարավային լանջերում, Կոտայքի (Արգական և Հացավան գյուղերի մոտակայք), Արարատի (Վեդի ք. շրջակայք), Վայոց Ձորի (Գնիշիկ գ. մոտ) և Սյունիքի (Քաջարան, Գորիս, Սիսիան, Սեղմի, Կուրիս, Լեղվազ) մարզերում, «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է գրեթե բոլոր բարձրունքային գոտիներում, բացի ալպյանից՝ գործնականապես բոլոր բիոտոպերում, որտեղ կան համապատասխան մեզոֆիլ հատվածներ՝ առվակների, գետերի, ճահճացած ցածրավայրերի, ոռոգման և ջրաքաշ ջրանցքերի երկայնքով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում տեսակը սննդային կապի մեջ է գտնվում *Eriolobium hirsutum* բույսի հետ: Էգը երիտասարդ բույսի միջին հատվածներում տերևների ստորին մասի վրա դնում է 1-3 ձու: Տարփա ընթացքում տալիս են մեկ սերունդ: Թիթեռների թոհջքը պայմանավորված է տեղանքի բարձրությամբ և տևում է ապրիլի վերջից մինչև հուլիսի վերջը:

Թիթեռներն ակտիվ են՝ սկսած մթնշաղից և գրեթե ողջ գիշերը: Լուսաթակարտներով դժվար են բռնվում: Թթրբուրները հանդիպում են հունիսից մինչև օգոստոսի վերջը՝ սեպտեմբերի կեսը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը բավականին բարձր է՝ մեծ տատանումներով տարբեր տարիներին :

**Վտանգման իմննական գործուները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: Տեսակի ապրելավայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ:

**127. Ավետյանի երկրաշափ թիթեռ**

Cidaria avetianae Wardikian, 1974

Կարգ՝ Թթվակարթներ կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Երկրաշափ թիթեռներ - Geometridae



© K. Aghajanyan AUA



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է բրազ «Վտանգված» EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Թևերի բացվածքը 17-21 մմ է: Բեղիկները պարզ տիպի են, խոզանաձև: Շոշափուկները սև են: Գլուխը, կուրծքը և փորիկը պատված են սև, սպիտակափառ թեփուկներով: Թևերը սպիտակավուն-մոխրագույն են, առջևիմները՝ հազիվ նշանակող միջին թծով: Հետին թևերն առջևիմներից ավելի բաց են գունավորված:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Տավուշի (Գետիկ գետի կիրճի վերին հատված) և Սյունիքի (Գորիս ք., Գեղանուշ և Նոնաձոր գգ. մոտ) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի Գառնիի հատվածից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի չոր նորանտառներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թիթեռները թռչում են մայիս-հունիս ամիսներին և օգոստոսի վերջին, թռչում են դեպի լույսի աղբյուր: Հավանաբար տալիս են 2 սերունդ: Կերարույսերը հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Բացահայտված չեն:


**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ: Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Վորոտան» ԲՀՊ-ի տարածքի մեջ:

**128. Ալեքսանդրի երկրաչափ թիթեռ**

*Eupithecia alexandriana* Wardikian, 1972

Կարգ՝ Թեփուկաքեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Երկրաչափ թիթեռներ - Geometridae



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Թևերի բացվածքը 19 մմ է: Առջևի թևերի հետին եզրից սկիզբ առնող տրամակապը չի հասնում թևի առջևի եզրին, գագաթը բաց գունավորված աղեղնաձև զոլով է: Վելի բաց գունավորված միջին քջի գագաթին տեղադրված է երկար նեղ թիժ: Հետին թևերն ավելի միատար են գունավորված, պատված են մուգ մոխրագույն թեփուկներով, ունեն փոքր միջին թիժ: Ծովերը միագույն են: Թևի նախշը թույլ է արտահայտված:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է ք. Երևանից (հավաքված է Կենտարաբանական և Բուսաբանական այգիներում) և Կոտայքի մարզից (Ծաղկաձոր ք. շրջակայր):

**Ապելավայրերը:** Հայտնի չեն, թիթեռները թռչում են դեպի լույսի աղբյուր:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Տալիս է երկու սերունդ, թիթեռները թռչում են մայիսին և սեպտեմբերին, կենսաբանության այլ առանձնահատկություններ հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնարերումներ:

**Վտանգման հիմնական գործուները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վերաբերյալ սուույզ տեղեկությունների և կենսաբանության առանձնահատկությունների պարզաբանում, որից հետո՝ տեսակի տարածման վայրերի պահպանում:

**129. Համետի երկրաշափ թիթեռ**

Eupithecia hamleti Wardikian, 1985

Կարգ՝ Թեփուկաքներ կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Երկրաշափ թիթեռներ - Geometridae



© K.Aghababyan/AUA



**Կարգավիճակը:** Չափազանց սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Թևերի բացվածքը 16-17 մմ է: Բեղիկները թելաձև են: Առջի և հետևի թևերը միագույն են, պատված են բաց մոխրագույն թեփուկներով: Երկու թևերի միջնամասում տեղադրված է մեկական պուտ: Առաջնաթերի միջնապուտը ձգված է լայնակի ուղղությամբ, հետին թևերինը՝ կլորավուն է:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն ք. Երևանից (Կենդանաբանական այգի):

**Ապելավայրերը:** Հայտնի չեն, թիթեռները բռչում են դեպի լույսի աղբյուր:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Թիթեռները բռչում են դեպի լույսի աղբյուր սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Կենսաբանության այլ մանրամասները հայտնի չեն:


**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ:

**Վտանգման իմնական գործուները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վերաբերյալ սոույզ տեղեկությունների և կենսաբանության առանձնահատկությունների պարզաբանում, որից հետո՝ տեսակի տարածման վայրերի պահպանում:

**130. Սերգեյի երկրաշափ թիթեռ**  
*Eupithecia sergiana* Wardikian, 1972  
**Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera**  
**Ընտանիք՝ Երկրաշափ թիթեռներ - Geometridae**



**Կարգավիճակը:** Չափազանց սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գումարող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Թևերի բացվածքը 17 մմ է: Գլուխը, մեջքը և փորիկը պատված են մուգ բեկուկներով: Առջևի թևերի վրայով ձգվում է բաց գունավորված ալիքաձև նեղ տրամակապ: Թևի տրամակապի միջին նասում կա հետզհետեւ վերացող սև գիծ: Միջին բջջի գագարին տեղադրված է նեղ, երկարավուն թիճ: Թևի հիմքն առանց նախշի է: Ծովերը զոլավոր են:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն ք. Երևանից (Կենդանաբանական այգի):

**Ապրելավայրերը:** Հայտնի չեն, թիթեռները թռչում են դեպի լույսի աղբյուր:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Թիթեռները թռչում են դեպի լույսի աղբյուր սեպտեմբերին: Կենսաբանության այլ մանրամասներ հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ:

**Վտանգման հիմնական գործուները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վերաբերյալ սոույզ տեղեկությունների և կենսաբանության առանձնահատկությունների պարզաբանում, որից հետո՝ տեսակի տարածման վայրերի պահպանմանը ուղղված միջոցառումների մշակում:

**131. Կուզնեցովի երկրաչափի քիրեռ**

Ortholitha kuznetzovi Wardikian, 1957

Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Երկրաչափ քիրեռներ - Geometridae



© K.Aghababyan/AUA



**Կարգավիճակ:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Թևերի բացվածքը 30 մմ է: Առջևի թևերի նախշը կազմված է սպիտակ, ալիքաձև եզրային զոլից և լայն, մուգ գունավորված, սպիտակ երիզով, ընդհատվող, լայնակի տրամակապից: Ոտքերը բարակ են, հետին սրունքները՝ 1 զույգ խթանով: Գլուխը, կուրծքը և փորիկը ծածկված են մուգ գույնի մարմնին կպած թեփուկներով: Բեղիկները սանրածեն:

**Տարածվածությունը:** Հայաստանի էնդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է ք.Երևանից (Կենդանաբանական այգի) և Սյունիքի մարզից (Միսիան ք. մոտակայք):

**Ապրելավայրերը:** Հայտնի չեն, թիթեռները բռչում են դեպի լույսի աղբյուր:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Ուշ աշնանային տեսակ է, թիթեռները բռչում են դեպի լույսի աղբյուր հոկտեմբերին, կենսարանության այլ առանձնահատկություններ հայտնի չեն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Բացահայտված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վերաբերյալ ստույգ տեղեկությունների և կենսարանության առանձնահատկությունների պարզաբանում, որից հետո՝ տեսակի տարածման վայրերի պահպանությանն ուղղված միջոցառումների մշակում:

### 132. Կարելինի մոայլ արջաքիթեռ

Axiopoena karelini Ménétriés, 1842

Կարգ՝ Թեփուկաքեր կամ Թիթեռներ - Lepidoptera  
Ընտանիք՝ Արջաքիթեռներ - Arctiidae



©K.Aghababyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1ab(iii)+B 2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 45-48 մմ): Առջևի թևերը սև ածխագույն են՝ մետաքսային շողովոյնով, հետին թևերն աղյուսագույն կարմիր են, իսկ արտաքին եզրը՝ կարմրամոխրագույն: Օձիկը կարմիր է, փորիկը՝ կարմրագորշագույն՝ սև ծայրով:

**Տարածվածությունը:** Ուստատանի Կրասնոդարի երկրամաս (ք. Սոչի), Վրաստան, Հայաստան, Թուրքիա, Իրաք:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Երևան քաղաքից (Հրազդան գետի կիրճ, Կենդանաբանական այգի և այլն), Տավուշի (ք. Նոյեմբերյան), Կոտայքի (ք. Աբովյանի շրջակայր), Արարատի (Վեդի ք. մոտակայր) և Սյունիքի (ք. Մեղրի) մարզերից:

**Ապրելավայրերը:** Չորասեր (քսերոֆիլ) բուսականությամբ լեռնային հատվածներ՝ 600-1000 մ ծ.մ.ք:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տարվա ընթացքում տախս են մեկ սերունդ, թիթեռները թռչում են մթնշաղին և զիշերը՝ հունիս-հուլիս ամիսներին, որից հետո անցնում են դիապազոնայի: Դիապազոնայի ընթացքում ցերեկը քարնվում են փոքր քարանձավներում և ժայռերի ճեղքերում, ավարտից հետո՝ օգսստոսին-սեպտեմբերին, վերսկսում են թռչքը, այդ ժամանակ էլ ձվադրում են:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Ամենուրեք ցածր է: Քիչ թե շատ մեծ թվով առանձնյակներ հայտնաբերվում են միայն քարանձավներում:

**Վտանգման իիմնական գործոնները:** Անասունների գերարածեցում և թրթունների կերակրման համար պիտանի տարածքների յուրացում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերում արածեցման սահմանափակում: Հրազդան գետի կիրճում ԲՀՊՏ-ի ստեղծում, ինչը նախատեսված է Երևան քաղաքի զարգացման գլխավոր հատակագծով:

### 133. Մղաքև մեղու

Lithurge fuscipenne Lepeletier, 1841  
Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera  
Հնտանիք՝ Մեղախիլիդներ - Megachilidae



©A.Karagyozyan



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B 2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր մեղու է, եզի մարմնի երկարությունը 16-19 մմ է, արուինը՝ 14-15 մմ: Վերին ծնոտները ներ են՝ գագաթին երկատամնավոր: Եզի գլուխը պատված է սպիտակ կարծ մազիկներով, երեսի վրա կա եղջյուրանման մեծ ելուստ, մեջքի վրա՝ կնճիռներ և կետեր, փորիկի 1-5-րդ տերզիտների ծայրերին՝ սպիտակ կարծ մազիկներ, հետանցքի ծոպերիզը սևա-շագանակագույն է: Արուի 3-6-րդ տերզիտների հիմքի վրա կան մուգ մազիկներ, 7-րդ տերզիտը փշաձև է, սրածայր:

**Տարածվածությունը:** Արևմտյան Պալեարկտիկայի միջին լայնություններ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Երևանից, Շիրակի (Գյումրի ք. մոտակայք), Կոտայքի (գ. Արտավազ) և Վայոց Ձորի (գ. Արենի) մարզերից:

**Ապրելավայրերը:** Կիսաանապատային և տափաստանային լանդշաֆտներ, գետամերձ մարգագետիններ և այգիներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Միայնակ մեղուներ են, բոհջքը՝ հուլիսօգոստոս ամիսներին, այցելում են գերազանցապես Asteraceae ընտանիքին պատկանող բույսերի ծաղիկները, բնակալում են չոր բնափայտում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ են, հանդիպում են ոչ մեծ քանակով առանձնյակներ, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործոնները:** Հողերի յուրացում, գերարածեցում, տնտեսություններում լայն ազդեցությամբ միջատասպանների կիրառում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի տարածման վայրերի ընդգրկում նախատեսվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքում: Տնտեսություններում ընտրողական ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

### 134. Սեղմ Դեսեպտորիա

Megachile deceptoria Peres, 1884

Կարգ՝ Թաղանքաբևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Սեղակիլիդներ - Megachilidae



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B 2a:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի մեղու է, մարմնի երկարությունը՝ 12-13 մմ: Եզի երեսկալը ծածկված է սպիտակ մազիկներով, եզրը ուղիղ է: Գլխի զագարըն աչքերի հետևի հատվածում պատված է ցրված կետերով, փորիկի 1-2 տերզիտներն երկար բաց գույնի մազիկներով են, 2-5 րդ տերզիտների եզրերը՝ կարճ մազիկներից կազմված գոլով, 6-րդը՝ կլորավուն սպիտակ բաղիքե պուտով: Արուի 2-րդ տերզիտը սպիտակ մազիկներով ծածկված կողային քծերով է, 6-րդ տերզիտը կոպիտ քարթավոր է՝ եռանկյունաձև կամ փոքր-ինչ կլորավուն կտրվածքով:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպա, Անդրկովկաս, Միջին Ասիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Երևանից, Մուսալեռ գ. Հրազդակայքից (Արմավիրի մարզ), «Խոսրովի անտառ» արգելոցից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի անապատներ և կիսաանապատներ, բլուրների կտեռովիտ լանջեր, մարգագետիններ, անտառեզրեր, գետամերձ հովիտներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Միայնակ մեղուներ են, բռիչքը՝ մայիսից մինչև օգոստոս, բնակալում են պատրաստի խոռոչներում, որտեղ տերևների կտորներից պատրաստում են սերունդը կերակրելու համար խորշեր: Կերարույսերն են՝ *Thymus serpyllum* L., *Zygophyllum fabago* L. և այլ տեսակներ:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Թվաքանակը մեծ չէ, հանդիպում են եղակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն: **Վտանգման իմնական գործոնները:** Հողերի հերկում, միջատասպանների ոչ խելամիտ օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տնտեսություններում ընտրողական ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

### 135. Մոմաբույսի մեղու


Osmia cerinthides F. Morawitz, 1876

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Հնտանիք՝ Սեղախիլիդներ - Megachilidae



©A. Sofikyan



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B 2a:

**Համարուտ նկարագրությունը:** Էզի գլուխը և կուրծքը պատված են գորշագույն, փորիկի 1-3 րդ տերզիտները՝ շիկակարմիր, 6-րդը՝ սև մազիկներով: Այսերը կոշտացած հաստացումով են, երեսկալի կողքերին կան երկար եղջերանման եղուստներ, առջևի եզրի միջնամասում՝ եռանկյունաձև ատամիկ: Արովի երեաը սև է, կուրծքը պատված է դեղնա-մոխրագույն մազիկներով, 6-րդ տերզիտի գագաթնային եզրը ուղիղ է, 7-րդինը՝ կլորավուն:

**Տարածվածությունը:** Արևելյան Սիծերկրայք, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր Երևանից, այսուեղ հավանաբար անհետացել է: Հայտնաբերված է Արագածոտնի (Բյուրական գ. շրջակայք), Կոտայքի (Արգեն գ. մոտակայք) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի Գառնիի հատվածից:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստաններ, գետամերձ հովիտներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Միայնակ մեղուներ են, բոհշքը՝ մայիս-հունիս ամիսներին, բնակալում են պատրաստի խոռոչներում: Այցելում են գլխավորապես *Hypericum*, *Jasminum*, *Leontodon* սեռերին պատկանող բույսերի ծաղիկները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հանդիպում են եզակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Հողերի յուրացում, գերարածեցում, ոչ ընտրողական ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արագած լեռան հարավային լանջին ԲՀՊՏ-ի ստեղծում: Տնտեսություններում ընտրողական ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

136. Մազուն մեղու

## Archianthidium pubescens Morawitz, 1872

## Կարգ՝ Թաղանթաքրեւեր - Hymenoptera

#### **Ընտանիք՝ Սեղախսիկողներ - Megachilidae**



©A. Sofikyan

**Կարգավիճակը:** Հանրապետությունում ծայրահետ սահմանափակ, մեկուսացած արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչիներով հայկական պոպուլյացիան գնահատվում է որպես «Անհետազոր»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր մեղու է, մարմնի երկարությունը 15-17 մմ է: Էզի երեսկալը գրեթե երկու անգամ լայն է իր երկարությունինց: Երեսկալը, երեսի կողքերը, ճակատկալի եռանկյունաձև բիծը և աչքերի հետևի բծերը դեղին են: Սիջնակրծքի կողքերն անկյունաձև դեղին բծերով են, տերզիտները՝ կողային դեղին բծերով: Արովի ճակատկալը և միջնակրծքի կողքերն առանց դեղին բծերի են, փորիկի 6-րդ տերզիտը՝ ձգված կողմնային անկյուններով, 7-րդ տերզիտն ունի եռոտնուկի տեսք:

**Տարածվածությունը:** Արևելյան Միջերկրայք, Անդրկովկաս, Թուրքմենիստանի հարավային շրջաններ, հավանաբար նաև Հյուսիսային Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի էր միայն Արագած լեռան հարավային լանջից (Անտառուտ և Բյուրական գգ. և Ամբերդ ամրոցի փլատակների մոտ) **Ապրելավայրերը:** Լեռնատափաստաններ, կտնողիտ նոսրանտառներ և թփուտներ՝ 1800-2200 մ ծ.մ.ր.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Սիայնակ մեղուներ են, քոիչը՝ հովիսին: Հանդիպում է Lamiaceae ընլայների ծաղկիների վրա:

**Թվաբանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ:

**Վասնգման իիմնական գործունելիք:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների չկարգավորված արածեցմամբ, կերաբույսերի ծաղկման շրջանում իրականացվող խոտիոննան:

Պահանության իրականացվող միջոցառումները: Չես իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արագած լեռան հարավային լանջին ԲՀՊՏ-ի ստեղծում: Տեսակի տարածման վայրերում անասունների արածեցման կարգավորում:

**137. Մոխրագույն մեղու**  
*Anthophora cinerea* Frieze, 1919  
 Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera  
 Հնտանիք՝ Անքոփորիդներ - Anthophoridae



©A.Sofikyan



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Միջին չափի մեղու է, մարմնի երկարությունը 11-13 մմ է: Գլուխս առջևից սև գույնի է, երեսկալը հարթ փայլուն գոլով: Բոլոր ոտքերի թաթերը մուգ գույնի են, հետին թաթերի 1-ին հատվածն արտաքինից ծածկված է արծաթափայլ մազիկներով, մեջքի և փորիկի 1-3-րդ տերզիտների մազիկներն երկար են, անհավասար, տերզիտները բաց գույնի տրամակապերով: Արոտի գլուխս առջևից սև գույնի է, երեսը, զիսի ներքին մասը, փորիկի 1-2-րդ հատվածները ծածկված են մոխրագույն մազերով, 2-4-րդ տերզիտները սպիտակ մազերից կազմված գագաթնային տրամակապով են:

**Տարածվածությունը:** Եվրոպայի հարավ-արևելք, Անդրկովկաս, Թուրքմենստան, Ղազախստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Գեղարքունիքի (Սևան ք. մոտ), Կոտայքի (Գողթ գ. Չրջակայք՝ Գեղարդ վանքի մոտ) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի լեռնատափաստաններ՝ 1500-2000 մ ծ.մ.ր.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Միայնակ մեղուներ են: Բազմակեր են: Հայատանի պայմաններում բոխչքը դիտվում է հունիսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Հողերի յուրացում, անասունների գերարածեցում, լայն ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ընտրողական ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

### 138. Ամրակազմ մեղու

*Anthophora robusta* Klug, 1845

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Անքոփորիդներ - Anthophoridae



©A.Sofikyan



**Կարգավիճակը:** Ոչ մեծ, կտրատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր մեղու է, մարմնի երկարությունը 15-17 մմ է: Երեսկալը ծածկված է կարճ մոխրագույն, կուրծքը՝ դեղին մազիկներով, փորիկի 1-3-րդ տերզիտների ծայրերին կան լայն, սպիտակ մազիկներից կազմված շերտեր:

**Տարածվածությունը:** Հյուսիսային Աֆրիկա, Առաջնային Ասիա, Արևելյան Եվրոպա, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Գեղարքունիքի (Սևան ք. մոտ), Արագածոտնի (Արագած լեռան հարավային լանջեր՝ Ամբերդ ամրոցի վլատակների մոտ ), Կոտայքի (Արզական գ.մոտ) և Սյունիքի (Մեղրի ք.մոտ) մարզերից:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստան և ենթալպյան մարգագետիններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Միայնակ մեղուներ են: Բազմակեր են: Թոփչքը դիտվում է հունիսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Շատ հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ:

**Վտանգան իիմնական գործոնները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված գերարածեցմամբ և խոտհունձով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և «Արևիկ» ազգային պարկերում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արագած լեռան հարավային լանջին ԲՀՊՏ-ի ստեղծում, «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

### 139. Երկարալեզու մեղու

*Tetralonia macroglossa* Illiger, 1806

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Անքոփորիդներ - Anthophoridae



**Կարգավիճակը:** Շատ փոքր, կտրատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Սիջին չափի մեղու է, մարմնի երկարությունը 10-13 մմ է: Մարմինը խիտ մազածածկով է, փորիկի 2-3-րդ տերզիտներին կան խիտ մազերից կազմված բաց գույնի տրամակապեր, եզի 6-րդ տերզիտը սովորաբար ծածկված է շիկակարմիր մազիկներով: Արուների մարմինը վերևուր ծածկված է դեղնազորշավուն մազիկներով, որոնք մեջքի վրա ավելի երկար են, երեսկալի գագաթնային եզրը բաց գույնի է, 6-7-րդ տերզիտների կողքերն ատամնավոր են:

**Տարածվածությունը:** Կենտրոնական և Հարավային Եվրոպա, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Երևանի շրջակայքից (հին հավաքներ) և Գեղարքունիքի մարզից (Արեգունի գ. շրջակայք)

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի կիսաանապատներ, չոր լեռնատափաստաններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Միայնակ մեղուներ են, բռիչքը՝ հունիս-օգոստոս ամիսներին, հանդիպում են Malvaceae, Asteraceae ընտանիքներին պատկանող բույսերի ծաղիկների վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Շատ հազվադեպ է, հայտնի են եղակի առանձնակներ, թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմմնական գործոնները:** Հայտնի չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

#### 140. Սանուշակագոյն մեղու-ատաղձագործ

*Xylocopa violacea* Linnacus, 1758.

Կարգ՝ Թաղանթաքրեթ - Hymenoptera

Ընտանիք՝ Անքոփորիդներ - Anthophoridae



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a+B2a: Գրանցված էր ԽՍՀՀ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Չափ խոշոր մեղու է, մարմնի երկարությունը 20-23 մմ է: Մարմինը սև գույնի է, մետաղական մանուշակագոյն փայլով: Վերին շրթունքը ծածկված է շիկակարմիր մազիկներով: Բեղիկների վերևի մասը սև գույնի է, ներքևինը՝ շիկակարմիր, ոտքերը սև են: Թևերը մուգ գույնի են: Էզի հետին սրունքի արտաքին մասը պատված է երկու շարք մասն սուր ատամիկներով: Արոտի բեղիկների վերին հատվածը ծոված է, հետին ոտքերի կոնքն ատամիկով է:

**Տարածվածությունը:** Հյուսիսային Աֆրիկա, Միջերկրայքի երկրներ, Կենտրոնական Ասիա, Ղրիմ, Կովկաս, Անդրկովկաս, Կովկասով:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարատի (գ. Երասխ), Կոտայքի (գ. Արտավազ), Սյունիքի (ք. Կապան) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Կիսաանապատայինից մինչև տափաստանային գոտի, հանդիպում է այգիներում, ճամփեզրերին, նոսրանտառներում և բնակելի վայրերում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Միայնակ մեղուներ են: Թոփքը դիտվում է ապրիլ-սեպտեմբեր ամիսներին, բազմակեր են, սնվում են տարրեր ընտանիքներին պատկանող բույսերի ծաղիկներով: Բները պատրաստում են, փորելով անցքեր չոր բնափայտում (այդ բվում նաև շինությունների): Անցքերում սարքում են առանձին խորշիկներ, որտեղ էզը դնում է ծաղկափոշու և նեկտարի պաշար և մեկական ձու: Աշնանը կատարվում է թրբունների հարսնյակավորում: Այստեղ է՝ խորշիկներում, ձմեռում են դրս եկած հասուն միջատները:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, հանդիպում են եզակի առանձնյակներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Բնակալման համար պիտանի տեղերի կրճատում՝ պայմանավորված չորացած ծառերի հատմամբ և շինությունների փայտե կոնստրուկցիաների մետաղականով փոխարինմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Էկոհամակարգերում չորացած ծառերի մասնակի հատում:

### 141. Իշամեղու հայկական

Bombus armeniacus Radoszkovski, 1877

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Խոկական մեղուներ - Apidae



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով և կրճատվող թվաքանակով հազվագյուտ տեսակ է: Ընդգրկված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով հայկական պոպուլյացիան գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառու նեկարագրությունը:** Ինչպես և բոլոր իշամեղուների՝ այս տեսակի ընտանիքը կազմված է էգերից, աշխատավոր առանձնյակներից՝ ավելի փոքր չափերի չքեղմնավորված էգերից, և արուներից: Էգերի և աշխատավոր առանձնյակների փորիկը կազմված է 6 տերզիտներից, բեղիկները 12-հատվածանի են, ունեն խայր: Արուների փորիկը կազմված է 7 տերզիտներից, բեղիկները 13- հատվածանի են, խայր չունեն: Բոլոր իշամեղուների մարմինը պատված է ծածկույթները թաքցնող խիտ փոշոտ մազիկներով: Տվյալ տեսակի մեջքի առջևի մասը, վահանիկը և փորիկը ծածկված են դեղին մազիկներով: Մեջքի վրա՝ թևերի միջև, կա լայն, սև գույնի տրամակապ:

**Տարածվածությունը:** Եվրոպայի հարավ-արևելք՝ Մոլդովայից դեպի արևելք մինչև Ղազախստան և Ենիսեյի վերին հոսանք, Փոքր Ասիա, Կովկաս, Սիրիա Ասիայի լեռներ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Կենտրոնական Հայաստանի մի շարք վայրերից՝ Գեղարքունիքի (Գավառ ք.), Արագածոտնի (գ. Զուշակ) և Կոտայքի (գ. Գառնի, Գեղարդի վանք՝ Գողթ գ. մոտ) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Տարբեր տեսակի լեռնատափաստաններ, անտառատափաստան, գետամերձ մարգագետիններ՝ 1500-2000 մ ծ.մ.թ.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական մեղուներ են, ընտանիքը մեծաքանակ չե՝ կազմված է 50-100 առանձնյակներից: Զննուած բեղմնավորված էգերը գարնանը բույն են կառուցում՝ գլխավորապես քարերի տակ, երբեմն՝ կրծողների լրված թներում, և կերակրում են աշխատավոր առանձնյակների առաջին խմբաքանակը՝ չքեղմնավորված էգերին: Հետագայում սերնդի խնամք են տանում աշխատավոր առանձնյակները, իսկ էզր ձվադրում է: Գարնանը և ամռանը դուրս են զալիս միայն աշխատավոր առանձնյակները: Ամռան վերջին բնում հայտնվում են նաև էգեր ու արուներ: Նրանք դրուս են թռչում թնից և բեղմնավորվում, որից հետո արուները սատկում են, իսկ էգերը ձմեռում՝ մեկ-մեկ: Ընտանիքը ևս մահանում է: Հայաստանում թռիչքը նկատվում է մայիս-օգոստոս ամիսներին: Բազմակեր են: **Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է, թվականակը կրճատվում է ամբողջ արեալով:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հողերի յուրացում, Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների չկարգավորված արածեցմանք, անասնակեր մշակաբույսերը վնասատուներից պաշտպանելու նպատակով թունաքիմիկատների օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Սևան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Մշակված չեն:

## 142. Իշամեղու մարգագետնային

Bombus pratorum Linnacus, 1761

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Խոկական մեղուներ - Apidae



**Կարգավիճակը:** Ոչ մեծ, լնդիատվող արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով հայկական պոպուլյացիան գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Էգերի և աշխատավոր առանձնյակների մեջքն առջևից դեղին է, մյուս մասերում՝ սև, փորիկի 4-5-րդ տերգիտները նարնջագույն մազիկներով են: Արովի մեջքի առջևի մասը դեղին մազիկներով է, վահանիկը սև է, հաճախ դեղին մազիկների խարնուրդով, 1-ին և 3-4-րդ տերգիտները՝ սև, փորիկի ծայրը՝ դեղին մազիկներով են:

**Տարածվածությունը:** Եվրոպա, դեպի արևելք՝ մինչև Արևմտյան Սիբիրի հարավ և Ալքայ, Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Գեղարքունիքի (Շորժա գ. մոտակայք), Կոտայքի (Արգական գ.) մարզերից:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստաններ, անտառեզրեր, բացատներ, մարգագետիններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, զարգացման ցիկլը նման է *B. armeniacus*-ի զարգացման ցիկլին: Թոփչքը նկատվում է ապրիլ-օգոստոս ամիսներին: Լայն պոլիֆազ է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հանդիպում են տեղ-տեղ՝ ոչ մեծաթիվ առանձնյակներ, թվականակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Անատունների գերարածեցում, անտառային տարածքների նշակում լայն ազդեցությամբ բունարիմիկատներով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում և «Արգական-Մեղրաձոր» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի բնապահպանական ռեժիմի խստացում, անտառային հատվածում միջատասպանների օգտագործման սահմանափակում:

### 143. Իշամեղու գետնային

Bombus terrestris Linnaeus, 1758

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Խսկական մեղուներ - Apidae



©A. Sofikyan



**Կարգավիճակը:** Ոչ մեծ, ընդհատվող արեալով հազվադեպ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով հայկական պոպուլյացիան գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Էգերի և աշխատավոր առանձնյակների մեջքի առջևի մասը ծածկված է դեղին կամ բաց օքրագույն մազիկներով, կամ ամբողջ մեջքը սև է, սպիտակ մազիկների խարնուրդով, փորիկի 2-րդ տերգիտը դեղին մազիկներով է, 4-5-րդը՝ սպիտակ, վերջին ստերնիտները՝ սպիտակավուն մազիկներով: Արուի գլխի գագարի հետին ծայրը և կրծքի կողքերի միջնամասերը ծածկված են սև մազիկներով, մեջքի առջևի մասը և 2-րդ տերգիտը՝ դեղին, վահանիկը, 1-ին և 3-րդ տերգիտները՝ սև, վերջին տերգիտները՝ սպիտակ մազիկներով:

**Տարածվածությունը:** Միջերկրայք, Միջին և Հարավ-Արևմտյան Եվրոպա, դեպի արևելք՝ մինչև Արևմտյան Ղազախստան, Կովկաս, Անդրկովկաս, Կովետդագի, Տյան-Շանի լեռներ: Ներմուծված է Նոր Զելանդիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է Լոռու (Վանաձոր ք. մոտակայք) և Կոտայքի (Արգական գ. շրջակայք, Թեժ լեռան հարավային լանջեր) մարզերում:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստաններ, ալպյան մարգագետիններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, զարգացման ցիկլը նման է *B. armeniacus* -ի զարգացման ցիկլին: Բները կառուցում է հողում: Թոփչքը նկատվում է մայիս-օգոստոս ամիսներին: Լայն պոլիֆազ է:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Սեծաքանակ չեն, հանդիպում են տեղ-տեղ, բվականակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմննական գործոնները:** Հողերի յուրացում, անասնակեր մշակաբույսերի տարածքների մշակում մշատասպաններով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արգական-Սևլուաձոր» պետական արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում: Տեսակի տարածման վայրերի ընդգրկում մոտակայքում գտնվող Կովկասի ողողունդրոնի կամ «Հանքավան» արգելավայրի տարածքի մեջ: Տնտեսություններում ընտրողական ազդեցությամբ մշատասպանների օգտագործում:

#### 144. Իշամնդու ձնափայլ

Bombus niveatus Kriechbaumer, 1870

Կարգ՝ Թաղանթաքերեր - Hymenoptera

Ընտանիք՝ Խոկական մեղուներ - Apidae



**Կարգավիճակը:** Ոչ մեծ, ընդհատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խողելի» VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Եզի և աշխատավոր առանձնյակների մեջքի առջևի մասը, վահանիկը և փորիկի 1-2-րդ տերգիտները ծածկված են սպիտակ, մեջքի միջնամասը և 3-րդ տերգիտը՝ սև, 4-5-րդ տերգիտները՝ նարնջագույն մազիկներով: Արովի գլուխը սև մազիկներով է՝ երեսկալի վրա սպիտակ մազիկների փեցով: Մեջքի առջևի մասը, վահանիկը, փորիկի 1-2 տերգիտները ծածկված են սպիտակ մազիկներով, մեջքի միջնամասը և 3-րդ տերգիտը՝ սև, փորիկի ծայրը՝ կարմրավուն կամ նարնջագույն մազիկներով:

**Տարածվածությունը:** Կովկասի տարածաշրջանի էնդեմիկ տեսակ է, հայտնի է Հյուսիսային Շուրբիայից, Հյուսիս-Արևմտյան Իրանից և Հայաստանից:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Գեղարքունիքի (ք. Սևանի մոտակայք), Կոտայքի (գ. Արտավազ), Սյունիքի (Մեղրի ք. մոտակայք) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

**Ապրելավայրերը:** Տափաստանային գոտի՝ 1000-2000 մ ծ.մ.թ.:

**Կենսաբանության առանձնահատկություններ:** Հասարակական կյանք վարող միջատներ են, կենսական ցիկլով նման են *B. armeniacus* տեսակին: Պոլիֆագ են: Թոփշը դիտվում է մայիս-օգոստոս ամիսներին: Բները պատրաստում են հողում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է ամբողջ արեալում: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Անասունների գերարածեցում, տեսակի կերարույսերով զբաղեցրած տարածքների մշակում լայն ազդեցությամբ միջատասպաններով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Սևան» ազգային պարկում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անասունների արածեցման կարգավորում, ընտրողական ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

### 145. Պորշինսկու իշամելու

Bombus portshinskii Radoszkowsky, 1884

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Խոկակամ մեղուներ - Apidae



©A.Sofikyan



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Առաջնամեջքը և վահանիկը ծածկված են դեղին մազիկներով, միջնամեջքը սև տրամակապով է, փորիկի 2-րդ տերգիտը սև մազիկներով է, 4-5-րդը՝ սպիտակ կամ դեղնա-մոխրագույն: Կրծքի կողքերը ծածկված են բաց դեղին մազիկներով:

**Տարածվածությունը:** Կովկասի տարածաշրջանի էնդեմիկ տեսակ է, հայտնի է Կովկասից, Հյուսիսային Թուրքիայից, Հյուսիս-Արևմտյան Իրանից և Հայաստանից:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է Կենտրոնական Հայաստանում՝ Գեղարքունիքի (ք. Սևանի մոտակայք), Կոտայքի (գ. Արտավազ, Կոտայք, Աղվերանի կիրճ՝ Արգարան գ. մոտ) և Արագածոտնի (ք. Ապարան) մարզերից:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստանային լանջաֆուններ, լեռնային անտառներ, ենթալպյան և ալպյան գոտիներ՝ մարգագետիններ և բացատներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, կենսական ցիկլով նման են *B. armeniacus* տեսակին: Բազմակեր են: Թոփչքը դիտվում է հունիս-սեպտեմբեր ամիսներին: Բները պատրաստում են հողում:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ է: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմանական գործուները:** Անտառային տարածների մշակում լայն ազդեցությամբ միջատասպաններով:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Անան» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակին բնորոշ բիոտոպերի ընդգրկում «Արգարան-Մեղրաձոր» պետական արգելավայրի տարածքի մեջ: Հնտրողական ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

**146. Իշամեղու ալազյովյան**  
 Bombus alagesianus Skorikov, 1937  
 Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera  
 Ընտանիք՝ Խոկական մեղուներ - Apidae



©A. Sofikyan



**Կարգավիճակը:** Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորչիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a:

**Համառու նկարագրությունը:** Եգի և աշխատավոր առանձնյակների այտերը կարճ են՝ ծամիչների հիմքի հատվածում դրանց երկարությունը փոքր է լայնությունից:

Ճակատը դեղին մազիկներից կազմված փնջիկով է: Առաջնամեջքը և վահանիկը ծածկված են դեղին, միջնամեջքը՝ սև, փորիկի տերզիտները՝ մասամբ սև, 4-5-րդը՝ կարմրա-նարնջագույն մազիկներով: Արովի առաջնամեջքը, վահանիկը և փորիկի 2-րդ տերզիտը դեղին մազիկներով են, միջնամեջքը և 3-րդ տերզիտը՝ սև:

**Տարածվածությունը:** Կովկասի տարածաշրջանի էնդեմիկ է, հայտնի է Հյուսիսային Թուրքիայից, Հյուսիս-Արևմտյան Իրանից և Հայաստանից:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Արագած լեռան հարավային լանջերից:

**Ապրելավայրերը:** Ենթալպյան և ալպյան մարգագետիններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, կենսական ցիկլով նման են *B. armeniacus* տեսակին: Կերարույսերը հայտնի չեն: Թոփիքը դիտվում է հունիս-օգոստոս ամիսներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Շատ հազվադեպ է, հայտնի են եզակի հայտնաբերումներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իիմնական գործուները:** Մարգագետնային էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արագածի ալպյան» արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի տարածքում բնապահպան ռեժիմի ապահովում: Տեսակի տարածման այլ վայրերում՝ անասունների արածեցման կարգավորում:

#### 147. Իշամեղու դաղեստանյան


Bombus daghestanicus Radoszkowsky, 1888

Կարգ՝ Թաղանքաբևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Խոկական մեղուներ - Apidae



©A.Sofikyan



**Կարգավիճակը:** Ոչ մեծ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1a+B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Սուածնամեջքը, վահանիկը, փորիկի 1-2-րդ տերգիտները ծածկված են սպիտակ մազիկներով: Միջնամեջքը սև տրամակապով է: Էզի և աշխատավոր առանձնյակների երեսկալը և ճակատը սպիտակ մազիկների փնջով են, 4-5-րդ տերգիտները՝ դեղնա-նարնջագույն մազիկներով: Արուի 3-րդ տերգիտը սև մազիկներով է, 5-6-րդը՝ նարնջագույն:

**Տարածվածությունը:** Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածությունը՝ Հայաստանում:** Հանդիպում է Հյուսիսային և Կենտրոնական Հայաստանում, հայտնի է Շիրակի (Գյումրի ք. շրջակայր), Գեղարքունիքի (Սևան ք., Չոլարար գ. մոտակայր) և Կոտայքի (Ծաղկաձոր ք. և Լեռնամիստ գ. մոտ) մարզերից:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստաններ, տափաստաններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, կենսական ցիկլով նման են *B. agrorum* տեսակին: Բազմակեր են: Թոփքը դիտվում է հունիս-սեպտեմբեր ամիսներին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Մեծաքանակ չէ, հանդիպում է տեղ-տեղ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Հողերի գյուղատնտեսական յուրացում, անասունների գերարածեցում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Տեսակի սորտաժան վայրերում անասունների արածեցման կարգավորում:

## 148. Ուսկազինիի մրջյուն

*Myrmica ruginodis* Finzi, 1923

Կարգ՝ Թաղանքաբեկ - Hymenoptera

Հնտանիք՝ Մրջյուններ - Formicidae



**Կարգավիճակը:** Հանրապետությունում սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Լուսնզված»՝ EN B 1a+B 2a:

**Համառոտ նկարագրությունը:** Բավականին խոշոր մրջյուններ են, աշխատավոր առանձնյակների մարմնի երկարությունը 5,9-6,5 մմ է, էգերինը՝ 7,8-8,1 մմ, արուներինը՝ 6,5-7,0 մմ: Աշխատավոր մրջյունների գլուխը և առաջնամեջքը կարմրավուն են, փորիկը՝ մգացած է, սեռական առանձնյակները գրեթե միատար մուգ գորշագույն կամ սև են:

**Տարածվածությունը:** Ալբանիա, Հարավսլավիա, Թուրքիա, Վրաստան, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերվել է միայն Կենտրոնական Հայաստանում Արգական և Աղավնաձոր գյուղերի մոտակայքում (Կոտայքի մարզ):

**Ապրելավայրերը:** Անտառեզր, կաղնու անտարի բացատ՝ 1700-1800 մ ծ.մ.բ.:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, գաղութները բաղկացած են մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար առանձնյակներից: Բները պատրաստում են քարերի տակ: Թնավոր սեռական առանձնյակները հայտնաբերվել են օգոստոսին: Սնվում են անողնաշար կենդանիներով և նրանց դիերով, օգտագործում են նաև լվիճների մեղրացողը:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ են: Հայտնի են մի քանի գաղութներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Անտառահատումներ:

Անտառունտեսություններում լայն ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արգական-Սեղրաձոր» արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում, անտառային սեկտորում միջատասպանների օգտագործման սահմանափակում:

### 149. Կարմրավում մրջյուն

## **Manica rubida** (Latreille, 1802)

## Կարգ՝ Թաղամիքարկեր - Hymenoptera

#### Ընտանիք՝ Մրջյուներ - Formicidae



© A.Chanchanyan

**Կարգավիճակը:** Հանրապետությունում սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B 2a:

**Համառն Ակադեմիայունը:** Բավականին խոշոր մրջյուններ են, աշխատավոր առանձնյակների մարմնի երկարությունը 5,5-7,5 մմ է, եգերինը՝ 9-11 մմ, արուներինը՝ 8-8,5 մմ:Գունավորումը՝ բաց կարմրա-զորշագույն:

**Տարածվածությունը:** Եվրոպայի լեռներ (Ալպեր, Հարց, Ապենիններ, Սուլետներ Կարպատներ, Բայկալներ), Թուրքիա, Կովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերվել է միայն Կենտրոնական Հայաստանում՝ Կոտայքի (Արտավազ գյուղի մոտակայք) և Արագածոտնի (Ապարան քաղաքի մոտակայք) մարզերում:

**Ապրելավայրեր:** Ենթալայյան մարզագետիններ՝ 2000-2500 մ ծ.մ.բ.:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, գաղութները կարող են պարունակել մի քանի հարյուր առանձնյակ: Բները պատրաստում են քարերի տակ և հողում: Թևավոր սեռական առանձնյակները հայտնաբերվել են մրցնանցներում հունիսին: Սնվում են անողնաշար կենդանիներով և նրանց դիերով:

**ԹՎԱՐՁՆԱԿՐ և դրա փոփոխության միտումները:**Հազվադեպ են, հայտնի են մի քանի գաղութներ: ԹՎԱՐՁՆԱԿՐի փոփոխության միտումները բազահայտված չեն:

**Վատանգման իիմնական գործոնները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերառածեցմանը;

**Պահանջության իրականացվող միջոցառումները:** Զես իրականացվում:

Դահլիճութեան առաջարկութեան միջնորդութեան: Տաս դրազգաւայրկան:

Համագույքի անհաջողությունը պրշտցանձնած է. Ծագվու ակադեմակա զայլորու ընդգրկում «Հանքավան» արգելավայրի տարածքում, արգելավայրի սահմաններից դուրս՝ տեսակի ապրելավայրերում անասունների արածեցման կարգավորում:

## 150. Կիսաատամ մրջյուն

Crematogaster subdentata (Mayr, 1877)

Կարգ՝ Թաղանքաքեր - Hymenoptera

Ընտանիք՝ Մրջյուններ - Formicidae



© A.Chanchanyan



**Կարգավիճակը:** Հանրապետությունում սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 2a:

**Համառոտ նկարագրությունը:** Մանր մրջյուններ են, աշխատավոր առանձնյակների մարմնի երկարությունը 2,8-3,1 մմ է: Գլուխը և առաջնամեջքը բաց կարմրա-գորշագույն են, փորիկը՝ մուգ կարմրա-գորշագույն:

**Տարածվածությունը:** Խորքիա, Անդրկովկաս, Իրան, Աֆղանստան, Սիցիլիա, Ասիա, Հարավային Ղազախստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Երևան քաղաքից և Մեղրի քաղաքի շրջակայրից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Երևանում հանդիպում է այգիներում, Մեղրիում հայտնաբերվել է Մեղրի գետի գետամերձ ցենոզում՝ 700 մ ծ.մ.ր.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, գաղութները կարող են պարունակել մի քանի հարյուր առանձնյակ: Բները պատրաստում են ծառերի մահացած բներում, ճյուղերում և սաղարթավոր ծառերի կեղևի տակ: Հայաստանի պայմաններում թևավոր սեռական առանձնյակների հայտնվելու ժամանակը հայտնի չէ: Սնվում են անողնաշար կենդանիներով և նրանց դիերով:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնաբերված են մի քանի գաղութներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Չորացած ծառերի, մահացած բների և ճյուղերի հատում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գտնիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

**151. Զովիայի մրջյուն**  
*Diplorhoptrum juliac Arakelian, 1991*  
**Կարգ՝ Թաղանթաքեր - Hymenoptera**  
**Ընտանիք՝ Մրջյուններ - Formicidae**



© A.Chanchanyan



**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորչիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ծառ մաճը մրջյուններ են, աշխատավոր առանձնյակների մարմնի երկարությունը 1,5-1,9 մմ է, էգերինը՝ 5,2-5,5 մմ, արուներինը՝ 4,2-4,6 մմ: Աշխատավոր մրջյունների գունավորումը բաց դեղնավուն է, սեռական առանձնյակները փոքր-ինչ մուգ են գունավորված՝ բաց զորշագույն են:

**Տարածվածությունը:** Հայաստանի ենդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն գտնվելու տիպային տեղավայրից՝ Աղվերանի կիրճից՝ Արգարան գյուղի մոտ (Կոտայքի մարզ):

**Ապրելավայրերը:** Կաղնու անտառներ՝ բացատներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են: Բները պատրաստում են քարերի տակ: Սեռական առանձնյակները հայտնաբերվել են օգոստոսին:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ են, հայտնաբերված են եզակի գաղութներ:

**Վտանգման իմնական գործոնները:** Անտառահաստումներ:

Անտառունտեսություններում լայն ազդեցությամբ միջատասպանների օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արգական-Սևորաձոր» արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի պահպանության ռեժիմի խստացում, անտառային սեկտորում միջատասպանների օգտագործման սահմանափակում:

## 152. Հարք մրջյուն

Tetramorium levigatum Karawajew, 1926

Կարգ՝ Թաղանթաքևեր - Hymenoptera

Ընտանիք՝ Մրջյուններ - Formicidae



© A.Chanchanyan



**Կարգավիճակը:** Հանրապետությունում խիստ սահմանափակ արեալով հազվագյուտ ենսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Ծառ մանր մրջյուններ են, աշխատավոր առանձնյակների մարմնի երկարությունը 1,8-2,2 մմ է, գունավորումը բաց դեղնագորշագույն, գլուխը և կուրծքը շատ բաց գույնի են, փորիկը փոքր-ինչ մուգ է:

**Տարածվածությունը:** Անդրկովկաս, Թուրքմենստանի հարավ (Կոպետդաղի լեռներ):

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է միայն Սյունիքի մարզից (Սեղրի քաղաքի և Լեղվազ գյուղի շրջակայք):

**Ապրելավայրերը:** Գիհու նոսրանտառներ՝ 800-1000 մ ծ.մ.թ.:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են, գաղութները կարող են պարունակել մի քանի հարյուր առանձնյակ: Բները պատրաստում են քարերի տակ: Սեռական առանձնյակները հայտնաբերվել են մրջնանցում հունիսին: Սնվում են անողնաշար կենդանիներով և նրանց դիերով:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի են եզակի գաղութներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործուները:** Պարզված չեն:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:


**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

### 153. Սախմալ մրջյուն

Cataglyphis machmal Radtschenko et Arakelian, 1991

Կարգ՝ Թաղանքաքեր - Hymenoptera

Ընտանիք՝ Մրջյուններ - Formicidae



© A.Chanchanyan

**Կարգավիճակը:** Խիստ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

**Համառոտ նկարագրությունը:** Հայտնի են միայն աշխատավոր առանձնյակները: Սիզինց մինչև շատ խոշոր մեծության մրջյուններ են (մարմնի երկարությունը՝ 5,8-11 մմ): Գլուխը և կուրծքը կարմրա-գորշագույն են, փորիկը՝ սևա-գորշագույն: Շածկույթների ցցված մազիկները սպիտակ են կամ ուշեգույն, ծոծրակը՝ ավելի քան 6 զույգ ցցված մազիկներով:

**Տարածվածությունը:** Հայաստանի ենդեմիկ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերվել է Հատիս լեռան հարավային լանջին՝ Ակունք գյուղից դեպի հյուսիս-արևելք:

**Ապրելավայրերը:** Ֆրիգաններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հասարակական միջատներ են: Բները պատրաստում են հողում: Սեռական առանձնյակների հայտնվելու ժամկետները հայտնի չեն: Սնվում են անողնաշար կենդանիներով և նրանց դիերով:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հայտնի են եզակի գաղութներ: Թվաքանակի փոփոխության միտումները բացահայտված չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմամբ:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անասունների արածեցման կարգավորում, տեսակի տարածման վայրերում բնության հուշարձանի կարգավիճակով ԲՀՊՏ-ի ստեղծում:

**154. Հակա գիշաճանճ**  
*Satanas gigas* Eversmann, 1885  
 Կարգ՝ Երկթևեր - Diptera  
 Ընտանիք՝ Գիշաճանճեր - Asilidae



©A. Sofikyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B 1ab(iii)+B 2ab(iii): Գրանցված էր ԽՍՀ Կարմիր գրքում:

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր գիշաճանճ է (մարմնի երկարությունը 38-50 մմ է): Երեսը, ճակատը, մարմինը և զիսի հետին մակերեսը պատված են արծաթագույն-սպիտակ խիտ փոշեժածկով: Ոտքերը սևա-գորշագույն են՝ ծածկված մարմնին կպնդ խիտ սպիտակ մազիկներով: Թևերը բափանցիկ են, ջղերը չեն հասնում թևի ծայրին: Փորիկը սև է՝ տերգիտների կարմրա-գորշագույն հետին եզրերով:

**Տարածվածությունը:** Նախկին ԽՍՀ-ի Եվրոպական մասի հարավ, Անդրկովկաս, Ղազախստան, Միջին Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Իրան, Մնաղոլիա, Հյուսիսային Չինաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Արարատյան դաշտում, Արմավիրի (Հոկտեմբեր գյուղի մոտակայք), Արարատի (Մասիս և Վեդի քարաքների, Արմաշ, Գոռավան, Սուրենավան գյուղերի մոտակայք) մարզերից:

**Ապրելավայրերը:** Տարեր տեսակի կիսաանապատներ, ավազոտ անապատ: **Կենսաբանության առանձնահատկությունները:** Թռիչքը դիտվում է հունիս-հուլիս ամիսներին, ակտիվ գիշատիչ է, որտում է ճպուռներ, բգեզներ և այլ խոշոր միջատներ: Էզր ձվադրում է հողի մեջ, այստեղ էլ զարգանում են բրթուրները: Զարգացումը միամյա է:

**Թվաքանակը և դրա փոփխության միտումները:** Հազվադեպ տեսակ է, հանդիպում են եզակի առանձնյակներ: Նկատվում է բվաքանակի կրծատման միտում:

**Վտանգման իմնական գործոնները:** Հողերի գյուղատնտեսական յուրացում, թունաքիմիկատների ոչ խելամիտ օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Գոռավանի ավագուտներ» արգելավայրում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արգելավայրի բնապահապահ ռեժիմի խստացում: Արարատյան հարթավայրում՝ տեսակի ապրելավայրերին ԲՀՊՏ-ի կարգավիճակի սահմանում:

## 155. Երևանյան գիշաճանճ

Machimus crevancensis V. Richter, 1963

Կարգ՝ Երկթևեր - Diptera

Ընտանիք՝ Գիշաճանճեր - Asilidae



©A. Sofikyan



**Կարգավիճակը:** Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1ab(iii)+B2ab(iii):

**Համառոտ նկարագրությունը:** Խոշոր գիշաճանճ է (մարմնի երկարությունը 18,5-22 մմ է): Երեսը, ճակատը և գլխի գագարի մասը պատված են արծաթագույն-սպիտակ խիտ փոշեծածկով: ճակատի վրա՝ բեղիկներից վեր, կա եռանկյունաձև, սև, փայլուն բիծ: Սիջնամեջքը պատված է դեղնա-մոխրագույն փոշեծածկով, տրերը խիտ սպիտակ մազիկներով են, թերը՝ բափանցիկ:

**Տարածվածությունը:** Անդրկովկաս:

**Տարածվածությունը՝ Հայաստանում:** Նկարագրված է Երևանից (Արեշ)՝ այստեղ հավանաբար անհետացել է: Հայտնի է նաև Արարատ (Արարատի մարզ) և Սեղրի քաղաքներից (Սյունիքի մարզ):

**Ապրելավայրերը:** Արարս գետի հովիտի էֆեմերա-օչինդրային կիսաանապատներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Թոփչքը դիտվում է հունիսի վերջից մինչև սեպտեմբեր, ակտիվ գիշատիչ է, որտում է ճանճեր (*Musca* sp.), ոչ խոշոր բգեցներ, մեղուներ և այլն:

**Թվաքանակը և դրա փոփոխության միտումները:** Հազվադեպ են, հանդիպում են եզակի առանձնյակներ: Վերջին տարիներին նկատվում է թվաքանակի կրճատման միտում:

**Վտանգման իմնական գործոնները:** Հողերի գյուղատնտեսական յուրացում, թունարիմիկատների ոչ խելամիտ օգտագործում:

**Պահպանության իրականացվող միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Արարատյան հարթավայրի անապատային հատվածներում՝ տեսակի ապրելավայրերին ԲՀՊՏ-ի կարգավիճակի սահմանում: «Արևիկ» ազգային պարկի գոտիավորման ընթացքում տեսակի ապրելավայրերի ընդգրկում արգելոցային գոտու մեջ:

**ԲԱԺԻՆ II**  
**ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆԴԱԿԻՆԵՐ**

## ՀՀ Կարմիր գրքի ողնաշարավոր կենդանիների ցանկ

Դաս՝ Ուլորային ձկներ, Osteichties

Կարգ՝ Սաղմոնակերպեր, Salmoniformes

Ընտանիք՝ Սաղմոնայիններ - Salmonidae Cuvier, 1816

1. Իշխան - *Salmo ischchan* Kessler, 1877

ա) Ենթատեսակ՝ Զմեռային իշխան - *Salmo ischchan ischchan* Kessler, 1877 - աշխարհում  
անհետացած (EX)

բ) Ենթատեսակ՝ Բողակ - *Salmo ischchan danilewskii*, Jakovlew 1927 - աշխարհում անհետացած  
(EX)

գ) Ենթատեսակ՝ Ամառային բախտակ - *Salmo ischchan aestivalis*, Fortunatov 1927 - CR A2cd

դ) Ենթատեսակ՝ Գեղարքունի - *Salmo ischchan gegarkuni*, Kessler, 1877 - CR A2cd

Կարգ՝ Ծածանակերպեր, Cypriniformes

Ընտանիք՝ Ծածանազգիներ - Cyprinidae

2. Սևանի կողակ - *Varicorhinus capoeta sevangi*, Filippi, 1865 - VU A1cd

3. Սևանի թեղլու - *Barbus goetschaicus*, Kessler, 1877 - VU A2cd

4. Հաշան - *Aspius aspius*, Eichwald, 1831 - VU B1ab(iii)

5. Հայկական կարմրակն - *Rutilus rutilus schelkovnikovi*, Derjavin, 1926 - EN  
B1ab(iii)+2ab(iii)

6. Քուղի քառքակ - *Gobio persus*, Günter, 1899 - DD

7. Սուածավորասիական ծական - *Sabanejewia aurata*, Filippi, 1863 - DD:

Դաս՝ Երկկենցաղներ, Amphibia

Կարգ՝ Պոչավորներ, Caudata

Ընտանիք՝ Սալամանդրներ - Salamandridae

8. Փորրասիական տրիխոն - *Ommatotriton ophryticus*, Berthold, 1846 - CR B2ab (iii,v):

Կարգ՝ Անպոչ երկկենցաղներ, Anura

Ընտանիք՝ Սխառորդագործներ - Pelobatidae

9. Միջիական սխառորդագործ - *Pelobates syriacus*, Boettger, 1889 - VU B2ab (ii, iii):

Դաս՝ Սողոմներ, Reptilia

Կարգ՝ Կրիաներ, Testudines

Ընտանիք՝ Ցամաքային կրիաներ - Testudinidae

10. Միջերկրածովային կրիա - *Testudo graeca*, Linnacus, 1758 - VU A2cd, B1a+2ab (iii)

Վերմակարգ Թեփուկավորներ, Squamata

Կարգ՝ Սողեսներ, Sauria

Ընտանիք՝ Ազամաներ - Agamidae

11. Անդրկովկասյան տակիրային կլորագոլիս - *Phrynocephalus orvathi*, Mehely, 1894 - CR  
A2c; B2 ab (i, ii, iii)

Ընտանիք՝ Սցինկեր - Scincidae

12. Չեռնովի մերկաչ - *Abdolepharus chernovi*, Darevsky, 1953 - CR A2ac; B2ab(ii,iii)

13. Առաջավորասիական մարույա - *Trachylepis septemtaeniata*, Reuss, 1834 - VU  
B1ab(iii)+2ab(iii):

14. Երկարասու սցինկ - *Eumeces schneideri*, Daudin, 1802 - VU B1ab(iii)+2ab(iii)

Ընտանիք՝ Իսկական մողեսներ - Lacertidae

15. Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ - *Eremias arguta transcaucasica*, Darevsky, 1953-  
CR A2c; B2ab (ii, iii)

16. Անդրկովկասյան մողեսիկ - *Eremias pleskei*, Bedriaga, 1907 - CR B2ab (ii, iii)

17. Փորրասիական մողես - *Parvilacerta parva*, Boulenger, 1887 - CR A2ac

18. Մարգագետնային մողես - *Darevskia praticola*, Eversmann, 1834 - VU B1ab(iii)+2a

19. Դալի մողես - *Darevskia dahli*, Darevsky, 1957 - EN B1a+2a

20. Ռոստոմբեկովի մողես - *Darevskia rostombekovi*, Darevsky 1957 - EN B2ab (ii, iii)

21. Սպիտակավոր մողես - *Darevskia unisexualis*, Darevsky, 1966 - VU B1a

Կարգ՝ Օձեր, Serpentes

Ընտանիք՝ Լորսուներ - Colubridae

22. Անդրկովկասյան սահնօձ - *Zamenis hohenackeri*, Strauch, 1873 - VU B1ab (iii)

23. Պարսկական պակաղիկլոֆիս - *Pseudocyclophis persicus*, Anderson, 1872 - CR  
B2ab (i, ii, iii)
24. Սատունինի սևազուխ ռինչուլամուս - *Rhynchocalamus melanocephalus satunini*,  
Nikolsky, 1899 - VU B2ab (i, iii)
25. Կովկասյան կատվաօձ - *Telescopus fallax*, Fleschmann, 1831 - VU B1ab (iii)
- Ընտանիք Խժանման օճեր կամ իժեր - *Viperidae***
26. Դարևսկովի իժ - *Vipera (Pelias) darevskii* Vedmederja, Orlov et Tuniyev, 1986 -  
CR B2ab(ii,iii)
27. Հայկական լեռնատափաստանային իժ - *Vipera (Pelias) eriwanensis*, Reuss, 1933 -  
VU B1ab(iii, v)
28. Հայկական իժ կամ Ռաբբեի իժ - *Vipera (Montivipera) raddei*, Boettger, 1890 -  
VU B1a+ 2b (ii, iii):

**Դաս՝ Թռչուններ, Aves**

Կարգ՝ Սուզականմաններ, *Podicipediformes*

Ընտանիք՝ Սուզակներ, *Podicipedidae*

29. Մոխրապայտ սուզակ - *Podiceps grisegena*, Boddaert, 1783 - VU D1

Կարգ՝ Թիառապայիններ, *Pelecaniformes*

Ընտանիք՝ Հավալուսներ, *Pelecanidae*

30. Վարդագոյն հավալուս - *Pelecanus onocrotalus*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)

31. Գանգրափետոր հավալուս - *Pelecanus crispus*, Bruch, 1832 - EN D

Ընտանիք՝ Զկնկուններ, *Phalacrocoracidae*

32. Անձ ձկնկուլ - *Phalacrocorax carbo*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)

33. Փորդ ձկնկուլ - *Phalacrocorax pygmeus*, Pallas, 1773 - VU B1ab(iii)+2a

Կարգ՝ Արագիլանմաններ, *Ciconiiformes*

Ընտանիք Արագիլներ, *Ciconiidae*

34. Սև արագիլ - *Ciconia nigra*, Linnaeus, 1758 - VU D1

Ընտանիք՝ Եղիպտահավեր *Threskiornitidae*

35. Քաջահավ - *Plegadis falcinellus*, Linnacus, 1766 - VU

Ընտանիք Տարգալակտուցներ, *Plataleidae*

36. Տարգալակտոց - *Platalea leucorodia*, Linnaeus, 1758 - EN D

Կարգ՝ Ֆլամինգոյանմաններ, *Phoenicopteriformes*

Ընտանիք Ֆլամինգոններ, *Phoenicopteridae*

37. Սովորական ֆլամինգո - *Phoenicopterus roseus*, Pallas, 1811 - DD

Կարգ՝ Սագանմաններ, *Anseriformes*

Ընտանիք Բաղեր, *Anatidae*

38. Թշնան կարապ - *Cygnus olor*, J.F. Gmelin, 1789 - VU B1ab(iii)+2a

39. Շշան կարապ - *Cygnus cygnus*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2a

40. Փորդ կարապ - *Cygnus bewickii*, Yarrell, 1830 - VU B1ab(iii)+2ab(iii)

41. Սպիտակազուխ բաղ կամ սավկա - *Oxyura leucocephala*, Scopoli, 1769 - EN

A2bcde+4bcde

42. Մոխրագոյն սագ - *Anser anser*, Linnaeus, 1758 - VU D1

43. Կարմրախածի սագ - *Branta ruficollis*, Pallas, 1769 - EN A2bcd+3bcd+4bcd

44. Կարմիր բաղ - *Tadorna ferruginea*, Pallas, 1764 - VU B1ab(iii)+2ab(iii)

45. Խայտաբաղ - *Tadorna tadorna*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii)

46. Լայնակտոց բաղ - *Anas clypeata*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii)

47. Մարմարյա մրտիմն - *Marmaronetta angustirostris*, Ménétries, 1832 - EN D

48. Սպիտակաչք սուզաք - *Aythya nyroca*, Güldenstädt, 1770 - VU D1

49. Ծվան սագ - *Anser erythropus*, Linnaeus, 1758 - VU A2bcd+3bcd+4bcd

50. Սպիտակաճակաս սագ - *Anser albifrons*, Scopoli, 1769 - VU B1ab(iii)+2ab(iii)

51. Տուրպան - *Melanitta fusca*, Linnaeus, 1758 - DD

Կարգ՝ Բագեանմաններ, *Falconiformes*

Ընտանիք՝ Ճուռակներ, *Accipitridae*

52. Կարմիր ցին - *Milvus milvus*, Linnaeus, 1758 - EN B1a; D

53. Սպիտակապոչ արծիվ - *Haliastur albicilla*, Linnaeus, 1758 - EN B1a; D

54. Գառնանգի /մորուքավոր անգղ/ - *Gypaetus barbatus*, Linnaeus, 1758 - VU D1

55. Գիշանգղ - *Neophron percnopterus*, Linnaeus, 1758 - EN A2bcde+3bcde+4bcde:  
 56. Սպիտակագլուխ անգղ - *Gyps fulvus*, Hablizl, 1783 - VU D1  
 57. Սև անգղ - *Aegipius monachus*, Linnaeus, 1766 - EN D  
 58. Օձակեր արծիվ - *Circaetus gallicus*, J.F. Gmelin, 1788 - VU D1  
 59. Տափաստանային մկնաճուռակ - *Circus macrourus*, S.G. Gmelin, 1771 - EN  
 B1ab(iii)+2ab(iii); D1  
 60. Մարզագետնային մկնաճուռակ - *Circus pygargus*, Linnaeus, 1758 - VU D1  
 61. Եվրոպական ճնճղաճուռակ - *Accipiter brevipes*, Severtzov, 1850 - VU  
 B1ab(iii)+2ab(iii)  
 62. Ցախաքլորավորս - *Accipiter gentilis*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii); D1  
 63. Փոքր ենթարծիվ - *Aquila pomarina*, C.L. Brehm, 1831 - VU D1  
 64. Մեծ ենթարծիվ - *Aquila clanga*, Pallas, 1811 - VU C2a(ii)  
 65. Տափաստանային արծիվ - *Aquila nipalensis*, Hodgson, 1833 - VU C2a(i); D1  
 66. Բլրային արծիվ - *Aquila helica*, Savigny, 1809 - VU C2a(ii)  
 67. Քարարծիվ - *Aquila chrysaetos*, Linnaeus, 1758 - VU D1  
 68. Գաճաճ արծիվ - *Hieraaetus pennatus*, J.F. Gmelin, 1788 - VU D1

**Ընտանիք՝ Ջրարծիվներ, Pandionidae**

69. Ջրարծիվ - *Pandion haliaetus*, Linnaeus 1758 - VU D1

**Ընտանիք՝ Քագեներ, Falconidae**

70. Տափաստանային հողմավար բազե - *Falco naumannii*, Fleischer, 1818 - VU  
 A2bce+3bce+4bce  
 71. Կարմրաստ բազե - *Falco vespertinus*, Linnaeus, 1766 - VU B1ab(iii)+2ab(iii); D1  
 72. Աղավնարազե - *Falco columbarius*, Linnaeus, 1758 - DD  
 73. Միջերկրածովային բազե - *Falco biarmicus*, Temminck, 1825 - DD  
 74. Քալրոբան - *Falco cherrug*, J.E. Gray, 1834 - EN A2bcd+3cd+4bcd  
 75. Սապսան - *Falco peregrinus*, Tunstall, 1771 - VU D1  
**Կարգ՝ Հավանմաններ, Galliformes**  
**Ընտանիք Մարեհավեր, Tetraonidae**  
 76. Կովկասյան մարեհավ - *Tetrao mlokosiewiczi*, Taczanowski, 1875 - VU D1  
**Ընտանիք՝ Փասիաններ, Phasianidae**  
 77. Անապատային կարավ - *Ammoperdix griseogularis*, Brandt, 1843 - VU D1  
 78. Վայրի հնդկահավ (Ուլար) - *Tetraogallus caspius*, S.G. Gmelin, 1784 - VU B1a+2a; C2a(i); D  
 79. Թուրաջ - *Francolinus francolinus*, Linnaeus, 1766 - DD  
 80. Անդրկովկասյան փասիան - *Phasianus colchicus*, Linnaeus, 1758 – DD

**Կարգ՝ Կոտմանմաններ, Gruiiformes**

**Ընտանիք՝ Խվական կռունկներ, Gruidae**

81. Գեղանի կռունկ - *Anthropoides virgo*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii)  
 82. Մոխրագոյն կռունկ - *Grus grus*, Linnaeus, 1758 - EN D

**Ընտանիք՝ Ջրահովվիկներ Rallidae**

83. Մարգահավ - *Crex crex*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii)  
 84. Սուլթանական հավ - *Porphyrio porphyrio*, Linnaeus, 1758 - DD  
**Ընտանիք՝ Արոսներ, Otididae**  
 85. Փոքր արոս - *Tetrao tetrix*, Linnaeus, 1758 - VU B2ab(iii); Ca(i); D1  
 86. Մեծ արոս - *Otis tarda*, Linnaeus, 1758 - VU A2c+3c+4c

**Կարգ՝ Քարադրանմաններ, Charadriiformes**

**Ընտանիք՝ Կոցար-կաշաղակներ, Haematopodidae**

87. Կոցար-կաշաղակ *Haematopus ostralegus*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)  
**Ընտանիք՝ Ջրադրներ, Charadriidae**  
 88. Ծովային քարադր - *Charadrius alexandrinus*, Linnaeus, 1758 - VU D1  
 89. Հաստակոտոց քարադր - *Charadrius leschenaultii*, Lesson, 1826 - EN B1a+B2a; Ca(i); D  
 90. Շախրուկ - *Chettusia gregaria*, Pallas, 1771 - EN B1a+B2a; Ca(i); D  
 91. Սպիտակապոչ եղտյուրիկ - *Chettusia leucura*, M.N.K. Lichtenstein, 1823 - VU D1  
**Ընտանիք՝ Մորակոցարներ, Scolopacidae**  
 92. Մեծ իլիկակոցար - *Limosa limosa*, Linnaeus, 1758 - VU A2b  
 93. Մեծ արորիկ - *Numenius arquata*, Linnaeus, 1758 - VU A2b  
 94. Կրկնակոցար - *Gallinago media*, Latham, 1787 - VU B1ab(iii)+2ab(iii)

**Ընտանիք՝ Բզակտուցներ, Recurvirostridae**

95. Ունացուպիկ - *Himantopus himantopus*, Linnaeus, 1758 - VU D1

96. Բզակտուց - *Recurvirostra avosetta*, Linnaeus, 1758 - VU D1

**Ընտանիք՝ Ծիծառակտցարմեր, Glareolidae**

97. Մարգագետնային ծիծառակտցար - *Glareola pratincola*, Linnaeus, 1766 - VU D1

98. Տափաստնային ծիծառակտցար - *Glareola nordmanni*, J. G. Fischer, 1842 -

VU B1ab(iii)+2ab(iii); D1

**Ընտանիք՝ Որորներ, Laridae**

99. Հայկական որոր - *Larus armenicus*, Buturlin, 1934 - VU B1ab(iii)+2ab(iii)

**Ընտանիք՝ Չրածիծառներ, Sternidae**

100. Որորակտուց ջրածիծառ - *Sterna nilotica*, J.F. Gmelin, 1789 - VU D1

101. Փոքր ջրածիծառ - *Sterna albifrons*, Pallas, 1764 - VU D1

102. Սպիտակապյատ ջրածիծառ - *Chlidonias hybrida*, Pallas, 1811 - VU D1

**Կարգ՝ Դոդոնանմաններ, Pterocliformes**

**Ընտանիք՝ Դոդոններ, Pteroclidae**

103. Աևափոր դոդոն - *Pterocles orientalis*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii); C2a(i); D1

**Կարգ՝ Քվանմաններ, Strigiformes**

**Ընտանիք՝ Քվեր, Strigidae**

104. Քվեր - *Bubo bubo*, Linnaeus, 1758 - VU B1a; C2a(i); D1

105. Թավշառու բու - *Aegolius funereus*, Linnaeus, 1758 - VU D1

**Կարգ՝ Ներկարարանմաններ, Coraciiformes**

**Ընտանիք՝ Մեղվակերներ, Meropidae**

106. Կանաչ մեղվակեր - *Merops persicus*, Pallas, 1773 - VU B1ab(iii)+2ab(iii)

**Ընտանիք՝ Ներկարարներ, Coraciidae**

107. Ներկարար - *Coracias garrulus*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)

**Կարգ՝ Փայտփորանմաններ, Piciformes**

**Ընտանիք՝ Փայտփորներ, Picidae**

108. Սև փայտփոր - *Dryocopus martius*, Linnaeus, 1758 - VU D1

**Կարգ՝ Շնձրուկանմաններ, Passeriformes**

**Ընտանիք՝ Խաղոտնիկներ, Motacillidae**

109. Դեղնազլուխ խաղոտնիկ - *Motacilla citreola*, Pallas, 1776 - VU D1

**Ընտանիք՝ Չամփրուկներ, Laniidae**

110. Կարմրակատար շամփրուկ, *Lanius senator*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii)

**Ընտանիք՝ Կեռնեխներ, Turdidae**

111. Սպիտակափող տիխակ, *Irania gutturalis*, Gunrin, 1843 - DD

112. Շիկապոշ քարաթռչնակ - *Oenanthe xanthoprymna*, De Filippi, 1863 - EN B1a+2a; D

**Ընտանիք՝ Չափրիկներ, Sylviidae**

113. Սոխականման ճողկահավ - *Locustella luscinioides*, Savi, 1824 - EN B1a+2a

114. Հնդկական եղեգնաթռչնակ - *Acrocephalus agricola*, Jerdon, 1845 - EN B1a+2a

**Ընտանիք՝ Ճանճրսներ, Muscicapidae**

115. Կիսասպիտակավիզ ճանճրոս - *Ficedula semitorquata*, Homeyer, 1885 - DD

**Ընտանիք՝ Երաշտահավեր, Paridae**

116. Սիջերկածովային երաշտահավ - *Parus lugubris*, Temminck, 1820 - VU

B1ab(iii)+2ab(iii); C1a(i)

**Ընտանիք՝ Սիտեղներ, Sittidae**

117. Սեծ ժայռային սիտեղ - *Sitta tephronota*, Sharpe, 1872 - VU B1ab(iii)+2ab(iii)

118. Կարմրաքր մազգող - *Tichodroma muraria*, Linnaeus, 1766 - DD

**Ընտանիք՝ Դրախտապաններ, Emberizidae**

119. Ժայռային դրախտապան - *Emberiza buchanani*, Blyth, 1844 - VU B1ab(iii)+2ab(iii)

**Ընտանիք՝ Սերինոսներ, Fringillidae**

120. Անապատային խածկտիկ - *Rhodopechys githaginea*, Lichtenstein, 1823 - DD

121. Անապատային խածկտիկ - *Rhodopechys mongolica*, Swinhoe, 1870 - DD

122. Խաչկտուց - *Loxia curvirostra*, Linnaeus, 1758 - DD

**Ընտանիք՝ ճնճղուկներ, Ploceidae**

123. Իսպանական ճնճղուկ - *Passer hispaniolensis*, Temminck, 1820 - VU  
B1ab(iii)+2ab(iii)

**Ընտանիք՝ ճայեր, Corvidae**

124. Ալպիական ճայ - *Pyrrhocorax graculus*, Linnaeus, 1766 - EN D

**Դաս՝ Կարճասուններ, Mammals**

**Կարգ՝ Միջատակերներ, Insectivora**

**Ընտանիք՝ Ոզնիակերպեր, Erinaceidae**

125. Լայնականջ ոզնի - *Erinaceus (Hemiechinus) auritus*, Gmelin, 1770 - EN  
B1ab(iii)+2ab(iii)

**Ընտանիք՝ Գետնափորներ, Soricidae**

126. Շելկովնիկովի Կուտորա - *Neomys schelkovnikovi* Sat., 1913 - EN B1a+2a

127. Պատիկ սպիտակատամ - *Suncus etruscus* Savi, 1822 - VU B2a (ii)

**Կարգ՝ Ջերարթևակորներ, Chiroptera**

**Ընտանիք՝ Պայտաքրայիններ, Rhinolophidae**

128. Հարավային պայտաքրի - *Rhinolophus euryale*, Blasius, 1853 - VU B1ab+2a  
129. Սեհելիի պայտաքրի շղիկ - *Rhinolophus mehelyi*, Matschie, 1901 - VU B1a+2ab(iii)  
130. Բլազիի պայտաքրի - *Rhinolophus blasii* Peters, 1866 - EN B1a+2a

**Ընտանիք՝ Հարքաքրայիններ, Vespertilionidae**

131. Սովորական երկարաքի շղիկ - *Miniopterus schreibersi*, Kuhl, 1819 - VU  
B1ab(iii)+2ab(iii)  
132. Արաբյան գիշերաշղիկ - *Myotis schaubi araxenus*, Dahl 1947 - EN B1a+2a  
133. Հայկական գիշերաշղիկ - *Myotis hajastanicus*, Argyropulo. 1939 - CR B1a+D  
134. Բելչուտեյնի գիշերաշղիկ - *Myotis bechsteinii*, Kuhl, 1818 - VU B1a  
135. Ասիական լայնականջ շղիկ - *Barbastella leucomelas*, Gretzschmar, 1830 - VU B1ab(iii)  
136. Գորշ ականջեղ - *Plecotus auritus* L., 1758 - VU B1a

**Ընտանիք՝ Բուլղոզայիններ, Molossidae**

137. Ծալքաշորթ լայնականջ շղիկ - *Tadarida teniotis* Rafinesque, 1819 - DD

**Կարգ՝ Կրծողներ, Rodenta**

**Ընտանիք՝ Վայրենակերպեր, Hystricidae**

138. Հնդկական վայրենակերպ կամ մացառախող - *Histrix indica* Kerr, 1792

**Ենթատեսակ՝ *Histrix indica hirsutirostris* Brandt, 1835 - VU B2a**

**Ընտանիք՝ Ավազամկնանմաններ, Gerbillidae**

139. Դալի ավազամուկ - *Meriones dahli* Shidlovski, 1962 - RE

**Ընտանիք՝ Սկնիկանմաններ, Sicista**

140. Հայկական մկնիկ - *Sicista armenica* Sokolov et Baskevich, 1988 - EN B1a

**Ընտանիք՝ Սկյուռանմաններ, Sciuridae**

141. Փորբաժական գետնասկյուռ - *Spermophilus xanthoprymnus*, Bennet 1835 - EN B2ab (ii, iii, iv)

**Ընտանիք՝ Համստերանմաններ, Cricetidae**

142. Շիլլվակը դաշտամուկ - *Microtus (Sumeriomys) schidlovskii*, Argyropulo, 1933 - EN  
B1ab (ii, iii, v)

**Ընտանիք՝ Ճագարամկնանմաններ, Allactagidae**

143. Փորք ճագարամուկ - *Allactaga elater*, Lichtenstein, 1825

**Ենթատեսակ՝ Արալիսի փորք ճագարամուկ, *Allactaga elater aralychensis* Satunin, 1901 - EN B1ab  
(ii, iii, iv)**

**Կարգ՝ Գիշատիչներ, Carnivora**

**Ընտանիք՝ Արջեր, Ursidae**

144. Գորշ արջ - *Ursus arctos* Linnaeus, 1758 - VU B1 b(iii)

**Ընտանիք՝ Կզարիսներ, Mustelidae**

145. Խայտաքիս - *Vormela peregusna* (Guldenstaedt, 1770) - VU A2c+B1 b(iii)

146. Ջրասամույր - *Lutra lutra* (Linnaeus, 1758) - EN D

**Ընտանիք՝ Կատվազգիներ, Felidae**

147. Անտառակասու - *Felis silvestris* Schreber, 1777

**Ենթատեսակ՝ Եվրոպական անտառակասու, *Felis silvestris silvestris* Schreber, 1775 - VU B1ab(iii)**

148. Ընձայողուծ - *Panthera pardus*, Linnaeus, 1758  
 Ենթատեսակ՝ կովկասյան ընձառյուծ *Panthera pardus ciscaucasica* (Satunin, 1914) =  
 պարսկական ընձառյուծ *Panthera pardus saxicolor* Pocock, 1927 - CR C2a(i) + D
149. Մամոլ - *Otocolobus manul* (Pallas, 1776) - RE
- Ընտանիք՝ Բորբոքիներ, *Hyenidae*
150. Բորբոք - *Hyaena hyaena* (Linnaeus, 1758) - RE

Կարգ՝ Չույզամբակավորներ, *Artiodactyla*

Ընտանիք՝ Սնամեջ եղջյուրավորներ, *Bovidae*

151. Բեզոարյան այծ - *Capra aegagrus* Erxleben, 1777 – VU C2a(i)
152. Հայկական մոլֆոն - *Ovis orientalis gmelini* (Blyth, 1841) – EN D:
- Ընտանիք՝ Եղջերուներ *Cervidae*

153. Կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ, *Cervus elaphus maral* Gray, 1840 - CR D:




1. Իշխան, *Salmo ischchan* Kessler, 1877

Կարգ՝ ՍԱՎԱՌՆԱԿԵՐՊԵՐ, *SALMONIFORMES*

Ընտանիք՝ Սաղմոնայիններ, *Salmonidae* Cuvier, 1816

Պոլիմորֆ տեսակ է՝ ներկայացված չորս էկոլոգիական ռասաներով /Ենթատեսակներով/:

ա) Ենթատեսակ՝ Չմեռային իշխան, *Salmo ischchan ischchan* Kessler, 1877



**Կարգավիճակը:** Աշխարհում անհետացած, Սևանի իշխանի էնդեմիկ գեներատիվ-լճային ենթատեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի-ի Կարմիր գրքում: Բնույթյան պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Անհետացած»՝ EX:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է եղել միայն Սևանա լճում: Հայաստանից դուրս չի հանդիպել:

**Սպառելավայրերը:** Բնակվել և սնվել է առավելապես Փոքր և Մեծ Սևանի առավելագույն ջրանում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Սեռահասուն էր դառնում 3-5 տարեկան հասակում: Զվարդում էր 6-8 մ խորություններում, խոշոր, խճաքարային գրունտերում, նոյեմբերից մինչև մարտ: Սնվում էր հիմնականում համարդիներով, փափկամարմիններով, ջրային միջատների թրթորներով, հասուն առանձնյակները՝ նաև մանր ձկներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Մինչև XX դարի 70-ական թթ-թթ բազմաքանակ, արդյունաբերական նշանակություն ունեցող ենթատեսակ էր, որի տարեկան որսը կազմում էր 200-250 տոննա: Վերջին հավաստի որար կատարվել է 1982 թ-ին Մեծ Սևանի հյուսիսարևելյան ափերի մոտ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անհետացման հիմնական գործոնն էր ձվադրավայրերի չորացումը լճի մակարդակի արհեստական իջեցման հետևանքով և որսագողությունը: 1970-1980 թթ-ին կատարվել են արհեստական վերարտադրման անհաջող փորձեր, սակայն աշխատանքները ընդհատվել են լճում վայրի արտադրողների բացակայության պատճառով:


**Պահպանության միջոցառումները:** 1978 թ-ից որսն արգելված է: Պահպանվում էր «Սևան» ազգային պարկում:

Իշխան, *Salmo ischchan* Kessler, 1877

Կարգ՝ ՍԱՂՄՈՆԱԿԵՐՊԵՐ, *SALMONIFORMES*

Ընտանիք՝ Սաղմոնայիններ, *Salmonidae* Cuvier, 1816

բ) Ենթատեսակ՝ Բողակ, *Salmo ischchan danilewskii*, Jakovlew 1927



**Կարգավիճակը:** Աշխարհում անհետացած, Սևանի իշխանի էնդեմիկ ենթատեսակ է:  
Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային  
միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Անհետացած»՝ EX:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է եղել միայն Սևանա լճում: Հայաստանից  
դուրս չի հանդիպել:

**Ապրելավայրերը:** Բնակվել և սնվել է Սևանա լճում՝ լճի պելագիալի հատուկ տեղամասերում՝  
ավախներում: Գերադասում էր մեծ խորությունները (15-40 մ), հիմնականում մերձհատակային  
ձուկ է:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Սեռահասուն էր դառնում 3-5 տարեկանում:  
Բեղունությունը՝ 400-600 ձկնուկիր: Զվարդում էր 3-4 մ-ից մինչև 35-40 մ խորություններում՝ խոշոր  
հարք խճաքարերում, խոշոր ավազում, ստորջրյա առյուղների դուրս գալու տեղերում՝ ապարների  
(տրավերտին) վրա, նոյեմբերից մինչև մարտ: Սնվում էր հիմնականում համարիդներով և  
դաֆնիաներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Սկզբանական թթ-րի կեսերը  
բազմաքանակ, խոշոր ենթատեսակ էր, որի տարեկան որսը կազմում էր 100 տոննա: Վերջին  
հավաստի որսը կատարվել է 1986 թ-ին:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անհետացման հիմնական գործոնն էր ձվադրավայրերի  
չորացումը լճի մակարդակի արհեստական իջեցման հետևանքով և որսագողությունը:  
Արհեստական վերարտադրման փորձեր չեն կատարվել:

**Պահպանության միջոցառումները:** 1978 թ-ից որսն արգելված է: Պահպանվում էր «Սևան»  
ազգային պարկում:

Իշխան, *Salmo ischchan* Kessler, 1877

Կարգ՝ ՍԱՎՍՈՆԱԿԵՐՊԵՐ, *SALMONIFORMES*

Ընտանիք՝ Սաղմոնայիններ, *Salmonidae* Cuvier, 1816

զ) Ենթատեսակ՝ Ամառային բախտակ, *Salmo ischchan aestivalis*, Fortunatov 1927



**Կարգավիճակը:** Սևանի իշխանի անհետացող, տեղային տարածվածություն ունեցող էնդեմիկ ենթատեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի-ի Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2cd:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է միայն Սևանա լճում: Հայաստանից դուրս չի հանդիպում: Հանրապետությունում ապրանքային իշխանաբուծության օրյեկտ է:

**Սպառելավայրերը:** Բնակվում և սնվում է Սևանա լճում, ձվադրում՝ գետերում, մասամբ՝ լճում: Գեներատիվ լճա-գետային ենթատեսակ է:

**Կենաքանության առանձնահատկությունները:** Սեռահասուն է դառնում 3-7 տարեկանում: Զվարդում է հիմնականում աղբյուրային սննդցում վտակներում, ապրիլից մինչև հունիս: Պոպուլյացիայի ոչ մեծ մասը ձվադրում է լճում, ձվադրման գետերի ենթագետաբերանային տեղամասերում կամ ստորջրյա աղբյուրներում: Սնվում է հիմնականում համարիդներով, ցամաքային միջատների թրուրներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Մինչև XX դարի 70-ական թթ-ի կեսերը բազմաքանակ, արդյունաբերական նշանակություն ունեցող ենթատեսակ էր, որի տարեկան որսը կազմում էր 100 տոննա: 2004-2006 թթ-ին բազմացման, միգրացիաների ժամանակ բռնվել է մոտ 20 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործուները:** Անհետացման հիմնական գործուներն են ձվադրման գետերի ծանծաղացումը, ջրի օգտագործումը և աղտոտումը, ինչպես նաև լճային ձվադրավայրերի չորացումը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Մշակված են արհեստական բազմացման մեթոդները: Ներկայում վերարտադրվում է առավելապես արհեստականորեն՝ ապրանքային իշխանաբուծական տնտեսությունների արտադրողների օգնությամբ վայրի պոպուլյացիայի թվաքանակի վերականգնման նպատակով: Ապրանքային ձկնաբուծության օրյեկտ է, տարեկան աճեցվում է մինչև 10 տոննա ամառային բախտակ: 1978 թ-ից որսն արգելված է: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:


Անհրաժեշտ է հատուկ վերահսկողություն սահմանել բնակավայրերում և ձվադրավայրերում, ինչպես նաև կազմակերպել ձկնաբուծական տնտեսություններից մեծ քանակությամբ ձեռք բերված մանրաձկների բացքորում Սևանա լիճ:

Իշխան, *Salmo ischchan* Kessler, 1877

Կարգ՝ ՍԱՎԱԾՈՆԱԿԵՐՊԵՐ, *SALMONIFORMES*

Ընտանիք՝ Սաղմոնայիններ, *Salmonidae* Cuvier, 1816

η) Ենթատեսակ՝ Գեղարբունի, *Salmo ischchan gegarkuni*, Kessler, 1877



**Կարգավիճակը:** Սևանի իշխանի անհետացող, տեղային տարածվածություն ունեցող էնդեմիկ ենթատեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի-ի Կարմիր գրքում: Բնուրյան պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2cd:

**Տարածվածությունը:** Կլիմայավարժեցված է Իսիկ-Կուլ լճում (Ղրղզստան):

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Սևանա լճում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է ավագաքարային գրունտերով լճի 25-30 մ խորություն ունեցող տեղամասերում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Գեներատիվ-լճային ենթատեսակ է: Զվարդման հիմնական գետերն են Գավառագետը, Ծակրարը, Մարենիսը, Մարիկը: Սեռահասուն դառնում է 3-5 տարեկանում: Զվարդում է հոկտեմբեր-հունվարին: Ունեցել է երկու բիոտիպեր՝ α և β, որոնք իրարից տարբերվում են ծամկետներով և տեղերով: Բնունությունը՝ 1000-2000 մետր: Սննում է ջրային անողնաշարավորներով, խոչը առանձնյակները՝ մասր ձկներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Մինչև XX դարի 60-ական թթ-թը մեկ այլ տեսակի՝ մնացած բահտակի հետ մեկտեղ ներկայացրել է արդյունաբերական ձկնարուծության հիմնական օբյեկտ: Վերջին տարիներին թվաքանակը խիստ կրծատվել է և պահպանվում է հիմնականում արհեստական վերարտադրության հաշվին:

**Կտանօքան հիմնական գործոնները:** Անհետացման հիմնական պատճառներն են եղել ձվադրային գետերի ջրային ռեժիմի փոփոխությունը, աղտոսումը, բնական վերարտադրման պայմանների խախտումը, որսագործությունը լճում և ձվադրային գետերում:


**Պահպանության միջոցառումները:** Մշակված է արհեստական բազմացման մեթոդները: Ներկայումս վերարտադրվում է առավելապես արհեստականորեն՝ ապրանքային իշխանաբուծական տնտեսությունների արտադրողների օգնությամբ՝ արդյունաբերական մասշտաբներով ապրանքային աճեցման նպատակով: Ներկայումս հանրապետության ձկնարուծարաններում տարեկան աճեցվում է մինչև 10-15 տոննա ապրանքային ծովկ: 1978 թ-ից որսը Սևանա լճում արգելված է: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է հատուկ վերահսկողություն սահմանել քնակավայրերում և ձվադրավայրերում, ինչպիս նաև կազմակերպել ծկնաբուժական տնտեսություններից մեծ քանակությամբ ձեռք բերված մանրաձկների բացքողում Սևանա լիճ:

2. Սևանի կողակ, *Varicorhinus capoeta sevangi* (Filippi, 1865)

Կարգ՝ ԾԱԾԱՆԱԿԵՐՊԵՐ, *CYPRINIFORMES*

Հնտանիք՝ Ծածանազգիներ, *Cyprinidae*



**Կարգավիճակը:** Քուտի կողակի էնդեմիկ ենթատեսակ է կրծատվող թվաքանակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU A1cd:

**Տարածվածություն:** Հայաստանից դուրս փորձեր են արվել կլիմայավարժեցնելու վրաստանի և Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգի մարզի ջրավազաններում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է Սևանա լճում: Ունի լճային, լճա-գետային և գետային ձևեր: Գետային ձևը պահպանվել է միայն Արգիծի գետի միջին հոսանքում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է Սևանա լճի ծանծաղուտային հատվածներում՝ մինչև 10 մ խորություն: Ջնուանը մտնում է 30-40 մ խորություններում եղած փոսերի մեջ:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Արուները սեռահասուն են դառնում 2-3, իսկ էգերը՝ 5-7 տարեկանում: Զվարդում են լճում և ձվադրային գետերում հունիս-հուլիսին: Բեղունությունը՝ 15-20 հազ. ձկների: Սնվում են դետրիտով և ջրային բույսերով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախկինում լճի արդյունաբերական նշանակություն ունեցող հիմնական տեսակներից էր, որի որսը տարեկան կազմում էր 300-500 տոննա: Ներկայումս պաշարները հյուծված են, թվաքանակը շարունակում է կտրուկ կրծատվել:

**Վտանգման հիմնական գործոնները:** Վտանգման հիմնական գործոններն են որսագործությունը, ջրի աղտոտումը և բնական վերարտադրության պայմանների վատթարացումը՝ ոռոգման նպատակով ձվադրային գետերի ջրերի օգտագործման հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** 1995 թ-ից որսը Սևանա լճում արգելված է: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Մշակված են վայրի արտադրողներից ստացված մեկ տարեկան մանրաձկների աճեցման մեթոդները:

Անհրաժեշտ է ձեռք առնել գործուն միջոցառումներ ձվադրային միզրացիաների և թրթուրների վերադարձի ընթացքում տեսակի պահպանման և հիմնական ձվադրային գետերի ջրային ռեժիմի կարգավորման համար:

### 3. Սևանի բեղլու, *Barbus goetschaicus* Kessler

Կարգ՝ ԾԱԾԱՆԱԿԵՐՊԵՐ, *CYPRINIFORMES*

Ընտանիք՝ Ծածանազգիներ, *Cyprinidae*



**Կարգավիճակը:** Խոցելի, տեղային տարածվածությամբ և կրծատվող թվաքանակով էնդեմիկ տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային մնության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU A2cd:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է Սևանա լճում և որոշ վտակներում: Սևանա լճի ավազանից դրւու չի հանդիպում: Ունի լճային, լճա-գետային և գետային ձևեր:

**Ասրելավայրերը:** Զքաղեցնում են մինչև 10 մ խորություններում լին ծանծաղրուտային տեղամասերը: Զնուանը մտնում է 30 մ խորություններում եղած փոսերի մեջ: Լին որոշ վտակներում առաջանում է գետային բիոտիպեր:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Սեռահասուն են դառնում 3-6 տարեկանում, էգերը հասունանում են արուներից 1-2 տարի ուշ: Էներգությունը՝ 3-20 հազ. ձկների: Զվարդում են հունիս-օգոստոսին: Ավելի մանր գետային ձևը, որն ունի սակավ բիունություն, պահպանվել է գործնականում միայն Արգիծի գետի միջին հոսանքում: Սնվում է մերձհատակային օրգանիզմներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախկինում բազմաքանակ տեսակ էր, որն ուներ արդյունաբերական նշանակություն: Տարեկան որսը չէր գերազանցում 20-25 տոննայից: Ներկայում սպառվագիայի, և հատկապես լճային բիոտիպի, թվաքանակը խիստ կրծատվել է:

**Վտանգման հիմնական գործոնները:** Վտանգման հիմնական գործոններն են լճային բիոտիպի հիմնական ապրելավայրերի և ձվադրավայրերի չորացումը, լին մակարդակի իջեցումը, հիմնական ձվադրային գետերի ջրի աղտոտումը, ձվադրման ժամանակ ոռոգման նպատակով ջրերի օգտագործումը, ինչպես նաև լճում, ձվադրային գետերում և գետային ձևի բնակեցման վայրերում որսագործությունը:

**Պահպանության միջոցառումները:** Արհեստական բազմացում չի կատարվել, արհեստական վերարտադրության մեթոդները մշակված չեն: 1981 թ.-ից որսը Սևանա լճում արգելված է: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է սահմանել բնական վերարտադրության վերահսկողություն և մշակել տեսակի արհեստական վերարտադրության մեթոդները, ինչպես նաև պահպանության խիստ ոեժիմ սահմանել տեսակի ապրելավայրերում:

4. Հաշամ *Aspius aspius*, Eichwald, 1831

Կարգ՝ ԾԱԾԱՆԱԿԵՐՊԵՐ, *CYPRINIFORMES*

Ընտանիք՝ Ծածանազգիներ, *Cyprinidae*



**Կարգավիճակը:** Հայաստանի տարածքում հազվադեպ, կրծատվող թվաքանակով և արեալով տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

**Տարածվածությունը:** Քուռ և Արարս գետերի համակարգում, ինչպես նաև Կասպից ծովում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանի սահմաններում հիմնականում բնակվող ձեր հանդիսական է Արարս, Վխուրյան, Որոտան, Մեծամոր գետերում: Նախկինում լճային ձև առաջացրել Արփի լճում: Ներկայումս Արփի լճի տեղում ջրավազանի կառուցման հետևանքով այդ պոպուլյացիան անհետացել է:

**Ապրելավայրերը:** Հոսքի միջին և մեծ արագությամբ գետերի պեղագիտ շերտում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնակվող ձուկ է: Ակտիվ գիշատիչ է, սնվում է հիմնականում մասն ձկներով: Սեռահատուն դառնում են 5-6 տարեկանում՝ 45 սմ մարմնի երկարության և 2,5 կգ զանգվածի դեպքում: Բազմանում են մարտ-ապրիլին, ջրի 12-14°C ջերմաստիճանի պայմաններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախկինում եղել է բավականին տարածված տեսակ: Հիմնական ջրառատ գետերի վրա հիդրոտեխնիկական կառույցների կառուցման հետևանքով թվաքանակը և արեալը խիստ կրճատվել են: Ներկայումս հազվադեպ հանդիսական է գարմանը, Արարս գետի վտակների գետաբերանների ստորին մասերում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Գետերի ջրային ռեժիմի փոփոխումը գետերի ջրի չկարգավորվող օգտագործման հետևանքով, աղտոսումը, բնական վերարտադրության պայմանների վատքարացումը, որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Չի պահպանվում: Միրողական ձկնորսության օրյեկտ է: Արեստական բազմացում չի կատարվել:

**Հիդրոտեխնիկական կառույցներում անհրաժեշտ է նախատեսել ձկնանցումների տեղեր և մարդան սարքավորումներ, ինչպես նաև սահմանել պահպանության ռեժիմ բոլոր ապրելավայրերում:**

5. Հայկական կարմրակն, *Rutilus rutilus schelkovnikovi*, Derjavin, 1926

Կարգ՝ ԾԱԾԱՆԱԿԵՐՊԵՐ, *CYPRINIFORMES*

Ընտանիք՝ Ծածանազգիներ, *Cyprinidae*



**Կարգավիճակը:** Տեղային տարածվածություն ունեցող, կրծատվող թվաքանակով էնդեմիկ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab(iii)+2ab(III):

**Տարածվածությունը:** Հայաստանից դուրս չի հանդիպում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Մեծամոր գետը և դրա հետ կապված ջրանցքների և լճերի համակարգը:

**Ապրելավայրերը:** Գետերի և լճերի դանդաղ հոսքով տեղամասերը, ջրային բուսականության մացառուտները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Ապրող տեսակ է: Սեռահատուն դառնում է 2 տարեկանում: Զվարդումը մասնաբաժնային է՝ մարտ-ապրիլին: Էվրիֆիազ է:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախկինում բազմաքանակ, ծվաղրման շրջանում առաջացնում էր մեծ կուտակումներ: Ներկայումս անհետացել է ավազահանքերի տեղերում առաջացած մասն դրենաժային ջրանցքներից և լճերից: Մեծամոր գետի հունի երկայնքով, հատկապես ստորին հոսանքում, դարձել է հազվադեպ:

**Վտանգաման հիմնական գործոնները:** Գետերի ջրային ռեժիմի փոփոխումը ջրերի չկարգավորվող օգտագործման հետևանքով, ջրի և ապրելավայրերի աղտոտումը, բնական վերարտադրության պայմանների խանգարումը, ինվազիոն ձկնատեսակների մրցակցային ազդեցությունը, որսագողությունը:


**Պահպանության միջոցառումները:** Չի պահպանվում: Սիրողական ձկնորսության օրենքությունը է: Արհեստական վերարտադրություն չի կատարվել:

Անհրաժեշտ է վերականգնել ապրելավայրերը և սահմանել պոպուլյացիայի պահպանության հատուկ ռեժիմ:

6. Քուրի քառքակ, *Gobio persus*, Günther, 1899

Կարգ՝ ԾԱԾԱՆԱԿԵՐՊԵՐ, *CYPRINIFORMES*

Ընտանիք՝ Ծածանազգիներ, *Cyprinidae*



**Կարգավիճակը:** Ամենատաքող տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Քուր և Արաքս գետերի ավազաններում, Ուրմիա լճի վտակում՝ Հաղերչայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է եղել Հայաստանի բոլոր գետերում, բացի Սևանա լճի ավազանից:

**Ապրելավայրերը:** Գետերի ավազային կամ ավազատիղմային տեղամասերը ջրի դանդաղ հոսքով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանի տարածքում գործնականորեն ուսումնասիրված չէ: Բենթոսային օրգանիզմներով սնվող մերձհատակային տեսակ է:

**Թշաքամակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տասնամյակներում թշաքամակը կտրուկ նվազել է: Ներկայումս ձկնաբանական հավաքներում չի հանդիպում:

**Վտանգման իիմնական գործուները:** Ինվազիոն ձկնատեսակների նրանցակցային ազդեցությունը, որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Չի պահպանվում: Արհեստական վերարտադրություն չի կատարվել:

7. Առաջավորասիական ծական, *Sabanejewia aurata*, Filippi, 1863

Կարգ՝ ԾԱԾՄՆԱԿԵՐՊԵՐ, *CYPRINIFORME*

Հնտանիք՝ Ծածանազգիներ, *Cyprinidae*



**Կարգավիճակը:** Անհետացող, ոչ բավարար չափով ուսումնասիրված տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Ան, Կասպից և Արալ ծովերի ջրամբարներում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է Ըստ և Արաքս գետերի հետ կապված բոլոր ջրամբարներում:

**Ապրելավայրերը:** Գետերի և ջրավազանների դանդաղ հոսքով և տիղմային հատակով տեղամասերը:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Սնվում է մանր հատակային ջրային օրգանիզմներով: Ակտիվ է մթնշաղային և գիշերային ժամերին: Հայաստանի տարածքում կենսաբանությունն ուսումնասիրված չէ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Եզակի առանձնյակներ բռնվել են 40-ականների վերջին Տարոնիկ գյուղի մոտ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հայտնի չեն:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում: Արհեստական վերարտադրություն չի կատարվել:

ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ, *AMPHIBIA*

8. Փոքրասիական տրիտոն, *Ommatotriton ophryticus* (Berthold, 1846),  
Կարգ ՊՈՅԱՎՈՐՆԵՐ, *CAUDATA*

Հնատանիք Սալամանդրներ, *Salamandridae*



**Կարգավիճակը:** Տեղային ռեկլիպտային պոպուլյացիաներ Հայաստանի հյուսիսում: Տեսակը գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի, Ռուսաստանի և Վրաստանի Կարմիր գրքերում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2ab (iii,v):

**Տարածվածությունը:** Խորայի, Լիրանան, Սիրիա, Փոքր Ասիա, Արևմտյան Կովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է 400-600 մ<sup>2</sup> մակերես ունեցող երեք փոքր լճակներում, որոնք գտնվում են խառն անտառի ստորին եզրին մոտ, 900-1200 մ ծ.մ.բ. բարձրության վրա, Ախրալա, Օձուն և Դսեղ գյուղերի շրջակայրում:

**Ապրելավայրերը:** Հանդիպում են, հիմնականում, ասեղնատերև, ինչպես նաև խառը և լայնատերև անտառներում, լեռների լանջերին, որտեղ ձևավորում են ծայրամասային պոպուլյացիաներ աշխարհագրական իզոլյատների տեսքով: Բնակեցնում են առավելապես տարեր տեսակի կանգուն և բույլասանրային ջրավազանները (լճեր, արհեստական լճակներ, ջրանցքեր, ճահիճներ և այլն), որտեղ առկա է թաքսոն և ծվաղրավայր ծառայող ջրային բուսականություն: Այդ ջրավազանների մակերեսը տատանվում է 1-500 մ<sup>2</sup>, խորությունը՝ 0,1-3 մ:

**Կենաքամության առանձնահատկությունները:** Ամառը և ձմեռն անց են կացնում ցամաքում՝ գտնելով թաքսոնցներ փտած կոճղերի կեղևի, քարերի տակ և ժայռերի ձեղքերում: Գարնաճը և ամռան սկզբին մնում են մաքուր, հոսող և կանգուն անտառային ջրավազաններում՝ հարուստ ջրային բուսականությամբ: Սնվում են մանր խեցգետնակերպերով, փափկամարմիններով, միջատներով և որդերով: Բազմանում են ապրիլ-մայիսին: Զվարդում են 50 սմ խորության վրա՝ առանձին բաժիններով, օրեկան 1-53 ձու, 2-11 օր ինտերվալներով: Սեռահատուն են դառնում 3-5 տարեկանում: Կյանքի տևողությունը ենթատեսակի արեալի տարբեր հատվածներում 8-21 տարի է:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը բնության մեջ կազմում է 1500-1800 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Փոքրասիական տրիտոնի թվաքանակի վրա բացասականորեն են ազդում անտառների քայլայումը, մանր ջրավազանների ոչնչացումը, անասունների գերարածեցումը, արդյունաբերական աղտոտումը, թունաքիմիկատների օգտագործումը: Պոպուլյացիայի համար լուրջ վտանգ է ներկայացնում տրիտոնների զանգվածային ապօրինի որսը՝ տրիտոններին տերարիումների սիրահարներին վաճառելու նպատակով:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բնունի Կոնվենցիայի II հավելվածում: Մշակված են լաբորատոր պայմաններում տեսակի բազմացման և աճեցման մեթոդները: 2001 թ-ին Դիլիջանի շրջանի Պարզ լճում բաց են բողնվել լաբորատոր պայմաններում ստացված 70 առանձնյակներ:

Անհրաժեշտ է ապրելավայրերին տալ բնության հատուկ պահպանվող տարածքի՝ արգելավայրի կարգավիճակ:

9. Սիրիական սխտորազորս, *Pelobates syriacus* Boettger, 1889,  
Դաս՝ ԵՐԿՎԵՆՑԱՂՆԵՐ, *AMPHIBIA*

Կարգ՝ ԱՆՊՈՉ ԵՐԿՎԵՆՑԱՂՆԵՐ, *ANURA*

Ընտանիք՝ Սխտորազորտեր, *Pelobatidae*



**Կարգավիճակը:** Հազվադեպ, նեղ արեալային, քանակապես կրծատվող տեսակ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի և Աղբեջանի Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՆ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B2ab (ii, iii):

**Տարածվածությունը:** Սիրիա, Պաղեստին, Իսրայել, Փոքր Ասիա, Բալկանյան թերակղզի, Կովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է հարավ-արևելյան շրջաններում: Շատ հազվադեպ հանդիպում է հանրապետության կենտրոնական և հարավային շրջաններում՝ Զրվեժ, Առինջ, Ողջաբերդ (Կոտայքի մարզ), Ոփաղ (Վայոց Ձորի մարզ) գյուղերում, Սիսիանի (Սյունիքի մարզ) տարածաշրջանում:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է անտառածածկ, տափաստանային և կիսաանապատային նախալեռներում և լեռնային հարթավայրերում, համեմատարար բաց լանջաֆունդներում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Վարում է բացառապես փորող, գիշերային կենսակերպ: Բազմացումը տեղի է ունենում մարտի վերջից մինչև մայիսի կեսերը չցամաքող, բուսականությամբ հարուստ լեռում, արիեստական լճակներում և եղեգնությաին ճահիճներում: Հասուն առանձնյակները կարծ ժամանակ մնում են ջրում ձվադրելու համար, որից հետո դուրս են գալիս ցանաք: Էզր ձվադրում է ջրասուզված բույսերի տերևների վրա, իսկ դրա բացակայության դեպքում՝ ջրավազանի հատակին: Ձվակույտն իրենից ներկայացնում է երկու հաստ պարան՝ 5500-6500 ձվերով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** 1956 թ-ի հաշվառումների համաձայն, Վայոց Ձորի մարզում, ջրավազանի ափին 1 կմ երրուղու վրա հաշվառվել է 5-6 առանձնյակ: Ներկայումս քանակությունը խիստ կրճատվել է, իսկ որոշ տեղերում սխտորագործը լիովին վերացել է:

**Վտանգման հիմնական գործուները:** Ջրավազանների չորացումը և աղտոտումը, տարածքների յուրացումը գյուղատնտեսական գործունեության նպատակով և բնական ապրելավայրերի քայրայումը:


**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի II հավելվածում: Տեսակի տարածման վայրերը չեն պահպանվում: 1985-1986 թթ-ին Ազատի ջրամբարում (Արարատի մարզ) բաց է բողնվել լաբորատոր պայմաններում աճեցված 1500 առանձնյակ, որտեղ պոպուլյացիան գտնվում է բարվոր վիճակում:

Անհրաժեշտ է ապրելավայրերին տալ բնության հատուկ պահպանվող տարածք՝ արգելավայրի կարգավիճակ:

ՍՈՂՈՒՆՆԵՐ, *REPTILIA*

10. Սիրելկրածովային կրիա, *Testudo graeca* (Linnaeus, 1758),  
Կարգ ԿՐԻԱՆԵՐ, TESTUDINES

Ընտանիք Ցամաքային կրիաներ, Testudinidae



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 2.3) «Խոցելի»՝ VU A1cd՝ կարգավիճակով: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2cd; B1a+2ab (iii):

**Տարածվածությունը:** Հյուսիսային Աֆրիկա (Մարոκկոյից մինչև Լիբանան), Հարավային Եվրոպա (Բնալիա, Հարավային Իսպանիա, Բալկաններ), Հարավ-Արևմտյան Ասիա (Թուրքիա, Իրան, Սիրիա, Լիբանան, Հորդանան, Խորայել), կղզիներ Մայորկա, Կիպրոս, Սարդինիա, Սիցիլիա, Կանարներ: Հյուսիսային Եվրասիայում հանդիպում է Աև ծովի ափամերձ գոտում՝ ք. Անապայից մինչև ք. Սուխում, ինչպես նաև ավելի լայն տարածքում՝ Արևելյան Վրաստանում, Աղրեջանում, Ղազախանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանրապետության հյուսիս-արևելյան մասում տարածված է T.g.iberica ենթատեսակը, իսկ հարավային մասում (Արաք գետի հովտում)՝ T.g.armeniaca ենթատեսակը: T.g.armeniaca ենթատեսակի արեալը տարանջատված է մի քանի պոպուլյացիաների, որոնք գտնվում են Արարատյան հարթավայրում և Հայաստանի ծայր հարավում՝ Մեղրու շրջանում:

**Ապրելավայրերը:** Բնակեցնում է տարբեր ապրելավայրեր՝ չոր տափաստաններ, սարալանջեր՝ ծածկված աղքատ խոտածածկով, թփուտներով, նոսրանտառով կամ լեռնային անտառով, ինչպես նաև ցածրադիր անտառներ և այգիներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Ակտիվ են ապրիլից մինչև նոյեմբերի կեսերը: Զննուում են, սովորաբար, աղվեսների և գորշուկների թներում: Սնվում են հյութալի խոտարույսերով և քիչ քանակությամբ անոտմաշարավորներով: Չուզավորումը տեղի է ունենում ապրիլ-մայիսին: Հունիսից սկսած, մեկ սեզոնի ընթացքում ծվաղրում են երեք անգամ՝ ճվերը թաքցնելով հողում փորած փոսի մեջ (2-8 ձու): Ինկուբացիան՝ 2-3 ամիս: Սեռահասուն են դառնում կյանքի 12-14 տարում:

**Ժվարանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանում մոտավոր քանակություննը կազմում է 900-1000 առանձնյակ: 10 հա մակերեսին հանդիպում է 1-5 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հիմնական թնորոշ ապրելավայրերի յուրացումը (հատկապես Հայաստանի հարավային մասում) և ապօրինի, անվերահսկելի որսը որսագողերի կողմից:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, ինչպես նաև որոշ պետական արգելավայրերում (Բողաքար, Գոռավանի ավագուտներ, Խջևան և այլն): Պահվում է աշխարհիկ բազմաթիվ կենդանաբանական այգիներում և

տերարիումիստների մոտ: Հաջողությամբ բազմացվել է ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտում:

Գրանցված է «Անհետացման եզրին կանգնած վայրի ֆաունայի և ֆլորայի տեսակների վաճառքի վերաբերյալ» Միջազգային կոնվենցիայի (CITES) ցուցակում, ինչպես նաև Բեռնի Կոնվենցիայի II հավելվածում:

Պահպանվող տարածքներից դուրս գտնվող հիմնական ապրելավայրերը վերցնել պահպանության տակ: Ուժեղացնել հսկողությունը կրիաների ապօրինի որսի նկատմամբ: Անհրաժեշտ է կազմակերպել կրիաների վերաբերյալ քայլայված պոպուլյացիաները վերականգնելու նպատակով:

11. Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ, *Phrynocephalus horvathi* (Mehely, 1894),  
Վերնակարգ ԹԵՓՈՒԿԱՎՈՐՆԵՐ, *SQUAMATA*

Կարգ ՄՈՂԵՄՆԵՐ, *SAURIA*

Ընտանիք Ազամաներ, *Agamidae*



**Կարգավիճակը:** Նախկինում դիտարկվել է որպես *P. helioscopus*-ի ենթատեսակ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Խիստ սակավաբիզ, անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Critically Endangered A2c» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2c; B2ab (i, ii, iii):

**Տարածվածությունը:** Աղբքեջան, Հյուսիս-Արևելյան Թուրքիա մինչև Արևելյան Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի են առանձին պոպուլյացիաներ Արաքս գետի հովտում: Պահպանվել է Արմավիրի մարզի Բաղրամյանի, Արմավիրի, Էջմիածնի տարածաշրջաններում և Արտաշատի ու Արարատի մարզերի առանձին տեղամասերում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է նոսր բներովիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղոտային կիսաանապատներում՝ արիեյան, աղոտային, տեղ-տեղ օչինդրային բուսականության առկայությամբ, 800-1050 մ ծ.մ. բարձրության վրա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Չմեռումից դրւու են գալիս մարտի սկզբին, և ակտիվությունը շարունակվում է մինչև նոյեմբեր: Սնվում են մանր հողվածոտանիներով (մրջյուններ, մանր բզեզներ, նեպուկներ, ճաճնճերի թրուրներ, սարդեր և այլն): Մեկ տարում ձվադրում է 2-3 անգամ: Ձվակույտում՝ 2-7 ծու: Բնության մեջ կյանքի տևողությունը՝ մինչև 3 տարի:

**Տվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Համաձայն գրականության տվյալների, տարածված է եղել Արարատյան հարթավայրի մեծ մասում՝ տակիրային կիսաանապատներում և կիսաանապատային ավազուտների ռելիկտային կղզյակներում: Բոլոր այդ լանջաֆտները ներկայում ենք արդի մարդածին ճնշմանը, որը տարեց-տարի ավելի է ուժեղանում: Արդյունքում կլորագլխի բնական ապրելավայրերի տարածքն ամենուրեք կրծատվում է: Այսօր հայտնի են Արաքս գետի հովտում պահպանված միայն 6 պոպուլյացիաներ, որոնցում թվաքանակը խիստ փոքր է: «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում խսությունը կազմում է 1-2, ք. Արմավիրի շրջակայրում՝ 1-2, գ. Բաղրամյանի շրջակայրում՝ 2-3 առանձնյակ 1 հա վրա: Արարատի շրջանի ավազուտներում այն կազմում է 1,5-2, իսկ Արմավիրի շրջանում՝ 2-3 առանձնյակ 1 հա վրա:

**Վտանգման իմնական գործոնները:** Արարատյան հարթավայրի կիսաանապատների լայնածավալ մշակումը գյուղատնտեսության կուտուրաներ ցանելու նախակալով, հողերի ոռոգումը, գյուղերի ընդլայնումը, ճանապարհների և արհեստական ջրավագանների ստեղծումը

հանգեցրեցին այս տեսակի հայտնի պոպուլյացիաների մեծ մասի քայլայմանը և անհետացմանը: Վտանգ են ներկայացնում նաև անասունների գերարածեցումը և ապօրինի, անվերահսկելի որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Գոռավաճի ավազուտներ» և «Որդան կարմիր» արգելավայրերում: Որոշակի պայմաններ ստեղծելու դեպքում հնարավոր է բազմացումը տերարիումներում:

Անհրաժեշտ է ցանկապատել արգելավայրերի տարածքներն անասունների արածեցումը կանխելու համար և անցկացնել միջոցառումներ՝ քայլայված պոպուլյացիաների վերականգնման ուղղությամբ:

12. Չեռնովի մերկավ, *Ablepharus chernovi* Darevsky, 1953  
Կարգ ՍՈՂԵՄԸՆԵՐ, SAURIA

Հնտաճիք Սցինկեր, Scincidae



**Կարգավիճակը:** Խիստ սալավարթիվ, նեղ արեալային անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2ac; B2ab(ii,iii):

**Տարածվածությունը:** Հյուսիսային Եվրասիայի տարածքում հանդիպում է միայն Կենտրոնական Հայաստանում, Թուրքիայում (Անատոլիայի հարավային և կենտրոնական մասերը) և Հյուսիսային Սիրիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնակվում է միայն Հրազդան գետի միջին հոսանքի հովտում: Հայտնի են տարանջատված պոպուլյացիաներ Քարաշամբ, Բջնի և Թեղենիք գյուղերի շրջակայրում: Պոպուլյացիաների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 3-4 կմ<sup>2</sup>:

**Ապրելավայրերը:** Բնակվում է թեր սարալանջերի քարքարոտ տարախոտա-հացազգիներով ծածկված լեռնա-քսերոֆիտ տափաստաններում: Հանդիպում է նաև բուսածածկից համարյա գորկ լեռնային ապարների ջրադարձներում: Հիմնականում հանդիպում է մանր քարերի արանքում, որոնց տակ անց է կացնում ժամանակի մեջ մասը:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Զմեռումից դուրս են գալիս մարտի վերջին: Ծոգ, չոր ամիսներին բարձրվում են խորը բարսոցներում և հողի մակերես դուրս գալիս սեպտեմբերին: Սնվում են մանր բաղանքարևակորներով, մրջյուններով, երկրևակորներով, բգեցներով և սարդերով:

**Ժվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ընդհանուր թվաքանակը 250-300 առանձնյակ է: Գարնանը 1 հա մակերեսին՝ քարերը շրջելով, կարելի է գտնել 1-2 մողես (1985 թ-ի տվյալներ): Տեսակի տարածման շրջանը վերջին տարիներին ենթարկվել է ինտենսիվ մարդածին փոփոխմանը, և վերջին տարիների բազմաթիվ որոնումներն այս շրջանում ապարդյուն էին: Ներկայումս տեսակի տարածման մի շարք տեղամասեր լիովին քանդված են և յուրացված:

**Վտանգման հիմնական գործուները:** Ապրելավայրերի յուրացումը և շինարարական աշխատանքները գգ. Քարաշամբի, Արգականի, Թեղենիքի և Բջնիի ընդլայնման նպատակով: Զգալի դեր են խաղում նաև այդ գյուղերի շրջակայրում լեռնային տափաստանների օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով, որը հանգեցրել է ցենոզի ընդհանուր փոփոխմանը:

**Պահպանության միջոցառումները:** Տեսակի բնակեցման տարածքը չի պահպանվում:

Անհրաժեշտ է պահպանության տակ վերցնել ապրելավայրերը և դրանց տակ հատուկ պահպանվող տարածքների՝ արգելավայրերի կարգավիճակ:

13. Առաջավորասիական մարույա, *Trachylepis septemtaeniata* Reuss, 1834  
Կարգ ՍՈՂԵՄՆԵՐ, *SAURIA*

Հնտամիք Սցինկեր, *Scincidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Data Defficient» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Խոցելի» VU B1ab(iii)+2ab(ii):

**Տարածվածությունը:** Տարածված է Ասուլյան Արարթայի հյուսիս-արևելքում, Հարավային Իրանում, Իրաքում, Քաջարելյանում, Հյուսիսային Օմանում, Էրիբրեհայում, Թուրքմենստանում, Անդրկովկասում: Արեալի հյուսիսային սահմանն անցնում է Հայաստանի, Աղբքաջանի և Թուրքմենիայի հարավով:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է քք. Երևանի, Եղեգնաձորի, Արարատի և Սեղ-րու, զգ. Արենիի, Ազարակի, Լեհվազի, Վեդու, Աստազուրի, Ասնիի, Զրվեժի շրջակայից, ինչպես նաև Ուրցի լեռնաշղթայից:

**Սպառելավայրերը:** Լեռների և նախալեռների նոսր, չորասեր բուսականությամբ ծածկված քիչ թե շատ թեք լանջեր: Բիոտոպերին բնորոշ են կիրճերի քարքարոտ լանջերի վրա գտնվող մայրական ապարների ելքերը, մեծ քարերի կույտերը և քանդվող ճեղքերը: Տեղ-տեղ հանդիպում են այգիներում, լրված և կիսաքաղցրաված շինություններում: Չոր կամ միջին խոնավությամբ, քարքարոտ, թաքստոցներով հարուստ բիոտոպեր՝ 500-1400 մ ծ.մ. քարձության վրա: Որպես քարտոցներ, սովորաբար, օգտագործում են ժայռերի ճեղքերը, դատարկությունները քարերի տակ, հազվադեպ՝ կրծողների թերթը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զմեռումից դուրս են գալիս մարտի վերջին: Սնվում են տարբեր անողնաշար կենդանիներով: Զուգավորումը դիտվում է մայիսի սկզբին-կեսերին: Հուլիսի սկզբին էզը ծնում է 3-8 ձագ:


**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Պոպուլյացիաների թվաքանակը և խտությունը անհավասարաշափ է և տարեց-տարի ենթարկվում է զգայի տատանումների: Առավել բազմաքանակ են հարավի պոպուլյացիաները (ք. Սեղորու և զգ. Ազարակի ու Ըսնաձորի Նյուվաղի/շրջակայր): Այստեղ թվաքանակը կայուն է և թիշ է ենթարկվում տատանումների ավելի մեղմ ձմեռվա շնորհիվ: Չոր բիոտոպերում՝ ոչ ավելի, քան 8 տարատարիք առանձնյակ 1 հա վրա: Հայաստանի տարածքի մեծ մասում մարույայի թվաքանակը խիստ կրծատված է, որոշ տեղերում մողեսը դարձել է շատ հազվադեպ, իսկ Արարատի լայնարձակ հարթավայրում տեսակը գործնականում անհետացել է:

**Վտանգման իիմնական գործնները:** Ապրելավայրերի յուրացումը գյուղատնտեսության նպատակներով, լանջաֆտների ձևափոխումը: Նախալեռնային գոտում՝ անասունների գերարածեցումը, աղբյուրների հոսքային ուժիմի փոփոխումը, որը թերում է բնական բիոտոպերի ձևափոխման: Անօրինական որսը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում,  
«Գոռավանի ավազուտներ» արգելավայրում և «Արևիկ» ազգային պարկում:  
Անհրաժեշտ է ուժեղացնել անօրինական որսի վերահսկողությունը:

14. Երկարաստ սղինկ, *Eumeces schneideri* (Daudin, 1802)  
Կարգ ՍՈՂԵՄՆԵՐ, *SAURIA*

Ընտանիք Սղինկեր, *Scincidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի» VU B1ab(ii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Տեսակը լայնորեն տարածված է Հյուսիսային Աֆրիկայից և Առաջավոր Ասիայից մինչև Հյուսիս-Արևմտյան Հնդկաստան: Արեալի հյուսիսային սահմանն անցնում է Հարավային Դադստանով, Վրաստանով, Հայաստանով, Հարավային Ռուբեկստանով, Տաջիկստանով և Թուրքմենիայով: Դեպի հարավ տարածվում է մինչև Պաղեստին և Սիրիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնի է Արարատյան հարթավայրից, Արփա գետի կիրճից, Արար գետի հովտից և հանրապետության հարավային նախալեռնային շրջաններից:

**Ապրելավայրերը:** Խիստ քարքարոտ, չորասեր բուսականությամբ կիսաանապատային տեղանքում՝ 400-1500 մ ծ.մ. քարքարության վրա: Գոռավան գյուղի շրջակայքում մտնում է նաև ամրացված ավազուտների տեղամասեր, տեղ-տեղ հանդիպում է գետամերձ մացառուտներում: Չոր տափաստանների գտումը բնակեցնում է տարբեր ժայռային գոյացումները, ավելի հազվադեպ հանդիպում է հարթ տեղամասերում, ավազամկների և այլ կրծողների գաղութների մոտ: Հաճախ բնակվում է այգիներում և հարակից տարածքներում՝ քարե ցանկապատերի վրա, դատարկված և կիսաքանդված շինուարյուններում, գոմերում: Որպես քարտուղար օգտագործում է ժայռափոսերը, խորշերը քարերի տակ, հողի խորը ճեղքերը, կրծողների բները: Փափուկ հողում երեմն կարող է փորել 150 սմ երկարությամբ և 60 սմ խորությամբ սեփական բներ, որոնց մուտքը տեղադրվում է թփերի կամ խոշոր քարերի հիմքում:

**Կենաքանության առանձնահատկությունները:** Գարնանն ակտիվ են առավելապես ցերեկը, ամռանը՝ առավոտյան կամ երեկոյան: Ամռան վերջում հողի մակերես ընդհանրապես դուրս չեն գալիս, ենթադրվում է, որ ամռանը քուն են մտնում: Անվուն է տարբեր անողնաշար կենդանիներով, առավելապես՝ միջատներով, ինչպես նաև բուսական կերպ՝ հատապտուղներով, պտուղներով, սերմերով: Զվարդում է հուլիսի վերջին-օգոստոսի սկզբին: Զվակույտում՝ 6-9 ձու:

**Ժկաքանակը և դրա փոփոխման միտունները:** Զնայած լայն տարածմանը Հայաստանի սահմաններում արեալի մեծ մասում թվաքանակը բավականին փոքր է: Հրազդան գետի կիրճում մայիսի վերջում՝ 175 x 150 մ չափերով տեղամասում հաշվառվել է 3 մողես: Նման խտությամբ բնորոշվում են պոպուլյացիաները գգ. Մեծամորի, Կոշի, Ջրվեժի, Վերին Դվինի, Նարեկի, Ուրցաձորի շրջակայքում: Հանրապետության հարավում նախալեռնային գոտում պոպուլյացիաները համեմատաբար լավ վիճակում են: Մեղրու տարածաշրջանում 1 հա տարածության վրա հունիսի առաջին տասնօրյակում հաշվառվել են 12 տարատարիք առանձնյակներ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ապրելավայրերի յուրացումը գյուղատնտեսության նպատակներով, լանջաֆտների ձևափոխումը, անօրինական որսը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում,  
«Գոռավանի ավազուտներ» արգելավայրում և «Արևիկ» ազգային պարկում:  
Անհրաժեշտ է ուժեղացնել անօրինական որսի վերահսկողությունը:

15. Անդրկովկասյան բազմազույն մողեսիկ, *Eremias arguta transcaucasica* Darevsky, 1953,  
Ընտանիք Խոկական մողեսներ, *Lacertidae*



**Կարգավիճակը:** Խիստ սակավաթիվ, հիմնական արեալից կտրված, միայն Հայաստանում հանդիպող անհետացող ենթատեսակ է: Ենթատեսակը ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Critically Endangered A2c» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2c; B2ab (ii, iii):

**Տարածվածությունը:** Տեսակը լայնորեն տարածված է Հյուսիս-Արևելյան Ռումինիայից՝ արև-մուտքում, մինչև Հարավ-Արևմտյան Սոնդոլիա և Հյուսիս-Արևմտյան Չինաստան՝ արևելքում, ինչպես նաև մինչև Թուրքիա և Իրան՝ հարավում: Հյուսիսային Եվրասիայի սահմաններում հանդիպում է Մոլդովայում, Ուկրաինայում, Ռուսաստանի եվրոպական մասում, Ղազախստանում, Միջին Ասիայի երկրներում, Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Միակ հայտնի պոպուլյացիան գտնվում է Սևանա լճի հարավային ափին, գ. Նորադուղի շրջակայրում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է Նորադուղի ավազուտներում: Հանդիպում է ինչպես փուխր, այնպես էլ կարծր հողերով տեղամասերում՝ բնակեցնելով Սևանա լճի ջրավազանի լեռնաբասերովիտ տափաստանները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Էզր դիում է 1-12 ձու:


**Ժվարանակը և դրա փոփոխման միտումները:** 1961 թ-ին գ. Մարտունու շրջակայրում պահպանված վերջին 27 հասուն մողեսիկները որպես են ներ հողաշերտում՝ դաշտերի և Սևանա լճի ափի միջև և քաղ են բողնվել գ. Նորադուղի մոտակայրում: Այդ առանձնայակներն առաջացրել են նոր պոպուլյացիա, որն աստիճանաբար լայնացնում է իր սահմանները: Ներկայումս դրանց թվաքանակը կազմում է 80-150 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Անասունների գերարածեցումը, այս տեսակի ապրելավայրերի մշակումը զյուղատնտեսական նպատակներով:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է ցանկապատել չմշակված տեղամասը գ. Նորադուղի շրջակայրում և ուժեղացնել հսկողությունը ենթատեսակի պահպանության համար:

16. Անդրկովկասյան մողեսիկ, *Eremias pleskei* Bedriaga, 1907  
Հնտանիք Խևկական մողեսներ, *Lacertidae*



**Կարգավիճակը:** Նեղ արեալային, քանակապես կրծատվող տեսակ: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Critically Endangered A2c» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» CR B2ab (ii, iii):

**Տարածվածությունը:** Արևելյան Թուրքիա, Հյուսիս-Արևմտյան Իրան և Արևելյան Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Արարս գետի ձախափնյա հովտում՝ ք. Էջմիածնից արևմուտք, մինչև Սեղրու լեռնաշղթայի հարավային նախալեռները:

**Ապրելավայրերը:** Բնակվում է ամրացված ավազուտներում՝ ջուղգունի, աստրազալի, օշինդրի, իշկաբնուկի և հազվադեպ, հացազգիների առկայությամբ: Երբեմն հանդիպում է քարքարոտ օշինդրային և աղուտային կիսաանապատներում: Որպես թաքսոնցներ ծառայում են թփերի հիմքերում գտնվող կարճ (10-15 սմ) թերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զննում է սեպտեմբեր-հոկտեմբերից մինչև ապրիլի առաջին կեսը: Սնվում է մրջյուններով, մանր քեզներով, թաղանքարևավորներով, երկրևավորներով, թրորիններով և սարդերով: Չուգավորումը տեղի է ունենում ապրիլից մինչև հունիսի առաջին կեսը: Ջաղրումը (3-4 ճու) տեղի է ունենում հունիսից մինչև օգոստոսի սկիզբը: Առաջին տարվա ճագերը հանդիպում են հուլիսի կետերից մինչև սեպտեմբերի վերջը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին 10-15 տարիներին թվաքանակը կտրուկ կրծատվել է, ոչնչացվել են Արաքս գետի հովտի մի շարք պոպուլյացիաներ: Արարատյան հարթավայրի մեծ մասում ամրողավորվել է:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ապրելավայրերի յուրացումը զյուղատնտեսության նպատակներով, անասունների գերարածեցումը և լանջաֆունների ձևափոխումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում, «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում և «Արևիկ» ազգային պարկում:

Անհրաժեշտ է ցանկապատել «Գոռավանի ավազուտներ» արգելավայրը:

17. Φηρρωσιακών μόνιμων, *Parvilacerta parva* Boulenger, 1887, Λευκωσίας ήπειρος Κύπρου λακάδων μόνητερ, *Lacertidae*



**Կարգավիճակը:** Խիստ սակավաբիկ, անհետացող տեսակ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնամատվում է որպես «Կրիտկական վիճակում գտնվող»՝ CR A2ac:

**Տարածվածություն:** Հայնորեն տարածված է Փոքր Ասիայում:

**Տարածվածություն:** Հանդիպում է Կենտրոնական և Հյուսիսային Հայաստանում, միայն Սպիտակի շրջանի դժվարանատշելի և չմշակված տեղամասերում, Շիրակի մարզի գ. Լաճիկի շրջակայրում: Հայտնաբերված է նաև Տափուշ գրամքարի հյուսիսային ափերին:

**Ապրելավայրեր:** Բնակվում է քարքարոտ լեռնա-բաւերքի խիստային տափաստանում, երբեմն բարձրանալով լեռների չորսամբ նոր բուսածածկով կմախրային լանջերին:

**ԿԵՆՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԽԾԱԿԱՆԱԿԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:** Տարեկան ծվաղորում է երկու անգամ՝ հունիսի վերջին-հուլիսի սկզբին և հուլիսի վերջին-օգոստոս սկզբին: Զվարույտում՝ 2-5 ճու: Զատերը ողորու են ազիսի հովանու վեռոշին և պետականացնելու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** 1982 թ-ին կատարված հաշվառումները ցույց են տվել, որ 1 հա տարածքում հանդիպում է 2-5 առանձնյակ: Ներկայումս թվաքանակը խիստ լուծարվելի է:

**Վանգման հիմնական գործոնները:** Բիոտոպերի քայլայման հիմնական պատճառներն են բնական ապրելավայրերի տնտեսական յուրացումը և պոպուլյացիաների ոչնչացումը անսպառների պահպանամբ և հսկողությամբ:

**Պահապատճենի լիոնարքութեան:** Պահապատճենի է Բենի լուսեցիսութ:

Պահպանային պրոցեսական գործությունները կազմակերպվում են բարեկարգ գործադրությունով։

Պուլպույացիայի տարածքը չի պահպանվում։ Անհրաժեշտ է պահպանության տակ վերցնել Սպիտակի շրջանի և Ծիրակի մարզի լեռնաբերքովիտային տափաստանների տեղամասերը և այդ տերություններում աստեղծել ինքը պազճամասնություն։

18. Մարգագետնային մողես, *Darevskia praticola* (Eversmann, 1834),  
Ընտանիք Խևկական մողեսներ, *Lacertidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1ab(iii)+2a:

**Տարածվածությունը:** Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմուտք, Կովկաս, Իրանի հյուսիս-արևմուտք:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանի հյուսիսում բնակվում են մեկուսացված արագույացիաներ:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է նախալեռնային, հովտային և լեռնային՝ առավելապես սաղարթավոր անտառներում, որտեղ մնում է անտառեզրում և բացատներում, ճանապարհաեզրերում և թփուտներում:

**Կենաքանության առանձնահատկությունները:** Սնվում է միջատներով՝ մասն բգեզներով, մրջյուններով, ուղղաքավորներով, բրթուններով, սարդերով, որդերով, նպուկներով: Զմեռումից դուրս է գալիս ապրիլի վերջին: Զուգավորումը՝ մայիսի վերջին, ձվադրումը (2-6 ձու)՝ հունիսի կեսերին-հուլիսի կեսերին: Զագերը դուրս են գալիս օգոստոս-սեպտեմբերին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի փոփոխությունները հայտնի չեն:

**Վտանգման հիմնական գործոնները:** Բնորոշ Էկոհամակարգերի և բիոտոպերի քայլայումը ապօրինի ծառահատումների հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է կատարել տեսակի թվաքանակի հաշվառման և պոպուլյացիայի գնահատման ուսումնասիրություններ:

19. Դալի մողես, *Darevskia dahli* (Darevsky, 1957)

Ընտանիք Իսկական մողեսներ, *Lacertidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիշներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

**Տարածվածությունը:** Տարածված է Հյուսիսային Հայաստանի և Հարավային Վրաստանի սահմաններում, մինչև Քուր գետի նախալեռնային հովտի հյուսիսում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Ժամանակակից արեալը մասնատված է մի քանի մեկուսացված պոպուլյացիաների, որոնք գոտնվում են Հայաստանի հյուսիսում:

**Սարեկալավայրերը:** Հանդիպում է կիրճերի չափավոր չոր լանջերին, ժայռերին՝ 900-1700 մ ծ.մ.ր. բարձրության վրա, անտառի գոտում, տեղ-տեղ մտնում է նաև լեռնային տափաստանի քարքարոտ տեղամասեր՝ մնալով անտառաեզրերին, ճանապարհաեզրերին և թիուտներում: Հաճախ բնակվում է անտառածածկ ավերակներում, քարերից սարքված պատճեշներում և շենքերի պատճերի վրա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զմեռումից դուրս է գալիս ապրիլի սկզբին-կեսին: Սնվում է միջատներով, դրանց բրբուրներով, սարդերով, նեպուկներով և անձրևառդերով: Բազմանում է կուսածնությամբ: Զվարդում՝ հունիսի սկզբին-հուլիսի կեսերին: Զվակույտում՝ 2-5 ձու: Զագերը դուրս են գալիս օգսսոսի կեսին-սեպտեմբերի վերջին:


**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Արեալը մասնատված է մի շարք փոքր, իրարից անջատված հատվածների, որտեղ թվաքանակի փոփոխությունները հայտնի չեն:

**Վտանգման հիմնական գործնները:** Շանապարհների վերակառուցումը, միկրոկլիմայի փոփոխումը գետերի ջրահոսքի փոքրացման հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է կատարել տեսակի թվաքանակի հաշվառման և պոպուլյացիայի գնահատման ուսումնասիրություններ:

20. Ռոստոմբեկովի մողես, *Darevskia rostombekovi* Darevsky 1957  
Ընտանիք Խևկական մողեսներ, *Lacertidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered B1ab(i,iii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2ab (ii, iii):

**Տարածվածությունը:** Համեմատաբար սահմանափակ արեալ Հյուսիսային Հայաստանում և Աղբեջանի հարակից շրջաններում: Հիմնական արեալը զբաղեցնում է Քուր գետի հովտի միջին աջափնյա հատվածը և աջ վտակների կիրճը՝ Վրաստանի, Հյուսիսային Հայաստանի և Հյուսիսամուսանի Աղբեջանի սահմաններում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանրապետության տարածքում տեսակի արեալը սահմանափառ է Արարատի բարձրավանդակի անտառային շրջաններով՝ Հյուսիսային Հայաստանի սահմաններում: Արեալի հարավային սահմանն անցնում է Փամբակ և Աղստև գետերի կիրճներով, Քազումի լեռնաշղթայի երկայնքով՝ ք. Սպիտակից արևմուտք: Արեալի հյուսիսային սահմանն անցնում է Պապաքարի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան մասով, որտեղ առավել հյուսիսային հայտնաբերման վայրերը հայտնի են Նոյեմբերյանի և Սևքարի շրջակայրից: Բայց այդ, հայտնի է մեկուսացված պոպուլյացիա Սևանա լճի հարավ-արևելյան ափին, գ. Ծովակի շրջակայրում:

**Ապրելավայրերը:** Տարածված են առավելապես անտառային գոտում, որոշ տեղերում անցնում են լեռնատափաստանային գոտի, 800-1600 մ ծ.մ. բարձրության վրա: Միայն Սևանա լճի ափին հայտնաբերված պոպուլյացիան է բնակվում 2000 մ ծ.մ. բարձրության վրա:


**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զմեռումից դուրս է գալիս մարտի վերջին-մայիսի սկզբին: Սննում է միջատներով և այլ մանր անողնաշար այլ կենդանիներով: Բազմանում է կուսածնությամբ: Զվարդումը՝ հունիսի վերջին-հուլիսի սկզբին: Զվակույտում՝ 2-4 ձու: Զագերը դուրս են գալիս օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտունները:** Բնորոշ բիոտոպերում 1 կմ երկարությամբ երթողության վրա հանդիպում է 50-60 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործուները:** Տնտեսական գործուներությունը լեռնատափաստանային գոտում և բնորոշ ապրելավայրերի բայրայումը: Ներկայումս Սևանա լճի ափին գտնվող պոպուլյացիան անհետացող է, քանի որ այստեղ դրա սիմպատրիանուն է *D. unisexualis*-ը, որը դուրս է մղում *D. rostombekovi*-ն՝ լինելով ավելի հարմարված բարձրալեռնային պայմաններին:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերում:

21. Սալտակափոր մողես, *Darevskia unisexualis* (Darevsky, 1966)  
Ընտանիք Իսկական մողեսներ, *Lacertidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄԿարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1a:

**Տարածվածությունը:** Տեսակի արևալը մասնատված է մի քանի մեկուսացված պոպուլյացիաների Հայաստանի սահմաններում և Արևելյան Թուրքիայի ու Հարավային Վրաստանի հարակից շրջաններում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանի հյուսիսային և կենտրոնական լեռնային շրջանները:

**Ապրելավայրերը:** Բնակեցնում է լեռնատափաստանային գոտու Ժայռերը, քարերի կույտերը և քարքարոտ լանջերը, 1700-2000 մ ծ.մ.ք. բարձրության վրա:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Չմեռումից դուրս է գալիս ապրիլի կեսերին-մայիսի սկզբին: Սնվում է, հիմնականում բգեղներով և թաղանթաքննավորներով: Բազմանում է կուսածնությամբ: Զվարդում է հունիսի վերջին-հուլիսի սկզբին: Զվակույտում՝ 2-7 ձու: Զագերը դուրս են գալիս օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին:


**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Տեսակի թվաքանակը կայուն է:

**Վտանգման հիմնական գործունեության հետևանքով:** Հարմար ապրելավայրերի կրծատումը գյուղատնտեսական գործունեության հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

22. Անդրկովկասյան սահման, *Zamenis hohenackeri* (Strauch, 1873),  
Կարգ ՕԶԵՐ, SERPENTES

Ընտանիք Լորտուներ, *Colubridae*



**Կարգավիճակը:** Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի, Վրաստանի և Աղբքեջանի Կարմիր գրքերում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab (iii):

**Տարածվածությունը:** Փոքր Ասիա, Հյուսիս-Արևմտյան Իրան, Հարավային Լիբանան, Հյուսիսային Խորայի, Հյուսիսային Օսերիա, Չեչնիա, Ինգուշեիա, Դաղստան, Վրաստան, Աղբքեջան, Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանրապետության հյուսիսային և հարավային մասերում, սակայն հանդիպում է հիմնականում Արարս գետի հովտի նախալեռնային շրջաններում:

**Ապրելավայրերը:** Լեռնա-տափաստանային գոտում հանդիպում է բարոնիալ բիուտներով և խոտարույսերով ծածկված քարքարոտ լանջերին, ժայռերի վրա և քարերի ջարդվածքներում: «Խոսրովի անտառ» արգելոցում բնակվում է ժայռերի արանքներում, զիհու նոսր անտառներում: Համբերդ գետի կիրճում հանդիպում է կաղնու նոսր անտառներում, թփուտներում, գետերի ժայռոտ ափերին և կիրճերի լանջերին: ք. Երևանի շրջակայրում բնակեցնում է լանջերի բաց, քարքարոտ տեղամասերը պտղատու և խաղողի այգիներում, փլատակների և ցանկապատերի միջև: Բարձրանում է մինչև 2200 մ ծ.մ. բարձրության վրա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Զննումից դուրս է գալիս ապրիլի սկզբում կամ կեսերին: Սնվում է մկնանման կրծողներով, մողեսներով, երիտասարդ առանձնյակները սնվում են միջատներով: Զվարդումը՝ հունիսի կեսերին: Զվակույտում՝ 3-7 ձու: Զագերը դուրս են գալիս սեպտեմբերի սկզբին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Գարնանը «Խոսրովի անտառ» արգելոցում 5-ժամյա երթի ընթացքում (6-7 կմ) հանդիպում է 1-2 առանձնյակ: Անօրինական որսի և բնորոշ ապրելավայրերի քանդման հետևանքով, հատկապես ք. Երևանի շրջակայրում, թվաքանակը խիստ կրճատվել է:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ապօրինի որսը, բնորոշ ապրելավայրերի քայրայումը: **Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ», «Շիկահող» արգելոցներում և «Արևիկ» ազգային պարկում:

Անհրաժեշտ է սահմանել խիստ վերահսկողություն այս տեսակի որսի նկատմամբ:

23. Պարսկական պսեղոցիկլոֆիս, *Pseudocyclophis persicus* (Anderson, 1872)

## Կարգ ՕԶԵՐ, *SERPENTES*

## ლისანისებრთა ლინუნისტოპ, *Colubridae*



**Կարգավիճակը:** Նեղ արեալային, սակավաթիվ ենթատեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2ab (i, ii, iii):

**Տարածվածությունը:** Հարավ-Արևելյան Թուրքիա, Հյուսիսային և Արևմտյան Իրաք, Իրան, Աֆղանստան, Պատեատին և Հյուսիս-Արևմտյան Հնդկաստան՝ դեպի արևելք մինչև Սինդ և Պենջաբ: Արեալի հյուսիս-արևելյան սահմանն անցնում է Թուրքմենիայի հարավային մասով՝ Արևմտյան Կոպետ-Դազից կենտրոնական մասով դեպի արևելք, մինչև Սերասխ, որտեղ հայտնաբերվել են համեմատաբար թիշ քանակով նմուշներ:

**Տարածվածություն:** *Pseudocyclophis p. persicus* ենթատեսակի միակ նմուշը հայտնաբերվել է Ստերլի ջրանի գ. Ազգակից 5 կմ դեպի արևմուտք:

**Ապրելավայրեր:** Ազգարկի ատամնանյակը հայտնաբերվել է կիրճի արևմտյան, քարքարոտ լանջին, երկրորդային անտառային ֆորմացիաներով կիսաանապատային գոտում, թվի կողքին, 28-30°C ջեղնաբաժնանի աամայններում:

**ԿԵՆՍԱՐԱԲՈՒԹՅԱՆ ԱՐԱԲԾԱԿԱՆԻԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:** Վարում է թարնված կենսակերպ:

**Թվաբանական և դրա փոխնաման միտումները:** Մինչ այժմ հայտնարերվել է միայն մեկ արանձինական (առող): Բնութանը մեջ հանդիպում է ինսի համարներ:

**Վարաճական հիմնական գործունեություն:** Բնորոշ արելյալ պահպան:

**Պահանջնեալաց միջոցարքները:** Պահանջնեալու Է «Արևիկ» ազգային աստղը:

Անողամայր պաշտպանականը. Ղափամին է «Հերթիք» ազգային պարկը։ Անհամեն է ճշգրտել և քարտեզագրել ապրելավայրերը և ընդգրկել «Արևիկ» ազգային աստվածաշին օռունու։

**24. Սասունինի սևազլուս ռինխուկալամուս, *Rhynchocalamus melanocephalus satunini*  
(Nikolsky, 1899)**

Կարգ ՕԶԵՐ, SERPENTES

Ընտանիք Լորտուներ, *Colubridae*



**Կարգավիճակը:** Անդրկովկասի առավել հազվադեպ և քիչ ուսումնասիրված տեսակներից մեկն է: Հայտնի են շատ քիչ քանակով առանձնյակներ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B2ab (i, iii):

**Տարածվածությունը:** Առաջավոր Ասիա՝ մինչև Իրանի արևմտյան հատվածը արևելքում, Հայաստանում և Նախիջևանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սիայն Արարս գետի հովտում, որտեղ բարձրանում է նախալեռներ, մինչև 1200 մ ծ.մ.:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է միայն օշինդրային կիսաանապատներում, չոր և խիստ քարքարոտ լանջերին, որտեղ կան մերկացած ապարներ և քսերոֆիտ բուսածածկով բազմաթիվ բարարեկորներ, ինչպես նաև ֆրիզանային գոտում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Վարում է բարնված մթնշաղային կենսակերպ և ցերեկային ժամերին հողի մակերես համարյա դուրս չի գալիս: Կենսաբնությունը գրեթե ուսումնասիրված չէ:


**Թվաքանակը և դրա փոփոխման միասնական գործոնները:** Բնության մեջ այս տեսակի թվաքանակը, հավանաբար, կայուն է: Նախկին ԽՍՀՄ-ի-ի տարածքում որպել են 7 առանձնյակներ՝ հիմնականում քաղաքների շրջակայրում, կամ յուրացված հողերի վրա: Մինչ այժմ Անդրկովկասում հայտնաբերվել են 19 առանձնյակներ, որից 17-ը՝ Հայաստանում և Նախիջևանում:

**Վտանգաման հիմնական գործոնները:** Բնորոշ ապրելավայրերի յուրացումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում: Անհրաժեշտ է պահպանության տակ վերցնել «Խոսրովի անտառ» արգելոցին սահմանակից ոինխուկալամուսի բնորոշ բիոտոպները՝ միացնելով այդ տարածքները արգելոցին:

**25. Կովկասյան կատվաօձ, *Telescopus fallax* (Fleischmann, 1831),  
Կարգ ՕԶԵՐ, SERPENTES**

Ընտանիք Լորտուներ, *Colubridae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնուրյան պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի», VU B1ab (iii):

**Տարածվածությունը:** Հյուսիսային Իրան, Իրաք, Փոքր Ասիայի արևելյան մասը, Հյուսիսային Սիրիա, Աղբքաջան, Դատուսան, Վրաստան, Հայաստան: Տեսակի արեալը ներառում է նաև Բալկանյան թերակղզին, Էգեյան և Սիհերկրական ծովերի մի շարք կղզիները, Լիբանանը և Իսրայելը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հարավում հայտնի է Արաքսի, հյուսիսում՝ Քուսի հովտից և նախալեռներից:

**Ապրելավայրերը:** Առավել հաճախ հանդիպում է թփուտներով և խոտարուսածածկով լեռների քարքարոտ լանջերին, լեռնա-քսերոֆիտային տափաստանների քարքարոտ տեղամասերում, գիշու նոսրանտառներում, մշակված լանջափտներում՝ պտղատու և խաղողի այգիներում: Հանդիպում է նաև բաց, օշինդրային և արիլեյան կիսաանապատներում: Չի խուսափում մարդու մոտիկությունից, հաճախ հանդիպում է տների տանիքներում, քարե պատերի ու ցանկապատերի ճեղքերում: Որպես թարսոց օգտագործում են ժայռերի ճեղքերը, խորշերը քարերի տակ և տարբեր փորող կենդանիների բները: Հայտնի է մինչև 2000 մ ծ.մ. բարձրությունների վրա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Գարնանը դուրս է գալիս մարտի սկզբին-կեսերին, ձմեռման է անցնում սեպտեմբերի վերջին-հոկտեմբերին: Հեշտությամբ մազլցում է ծառերի և շենքերի պատերի վրա: Ժամանակի մեծ մասն անց է կացնում քարերի տակ: Սնվում է հիմնականում մողեսներով, երբեմն՝ կրծողներով: Հայաստանում քազմացման տվյալները բացակայում են: Արեալի այլ հատվածներում էգը դնում է 6-9 ձու, հունիսի վերջին-հուլիսի սկզբում: Զագերը դուրս են գալիս սեպտեմբերին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտունները:** Թվաքանակն ամենուրեք ցածր է: Գարնանը «Խոսրովի անտառ» արգելոցում ցերեկային երթի ժամանակ կարելի է հանդիպել 1-2 առանձնյակ, այլ վայրերում՝ ոչ միշտ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ապօրինի որսը, բնորոշ ապրելավայրերի յուրացումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

Անհրաժեշտ է պահպանության տակ վերցնել Հայաստանի հյուսիսում գտնվող մեկուսացված պոպուլյացիաները (արգելավայրերի ստեղծում), սահմանել խիստ վերահսկողություն այս տեսակի ապօրինի որսի նկատմամբ:

26. Դարևսկու իժ, *Vipera (Pelias) darevskii* Vedmederja, Orlov et Tuniyev, 1986  
Կարգ ՕԶԵՐ, SERPENTES

Ընտանիք Իժանման օճեր կամ իժեր, *Viperidae*



**Կարգավիճակը:** Նեղ արեալային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Critically Endangered B1ab(ii,iii)+2ab(ii,iii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2ab (ii, iii):

**Տարածվածությունը:** Տեսակի արեալը ներառում է Զավախիքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան մասը Հայաստանի սահմաններում՝ մինչև Վրաստանի հետ սահմանը (լ. Աչքասար), 2350-3000 մ ծ.մ.բ. բարձրության վրա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Շիրակի մարզ, Աշոցքի տարածաշրջան: 2008 թ-ի տվյալներով տարածման արեալը գրավում է ընդամենը 200 հա:

**Ապրելավայրերը:** Տեսակի բնորոշ բիոտոպներն են հանդիսանում ենթալպյան գոտում գտնվող քարքարոտ լեռնալանջերը և ժայռային ցցվածքները ծածկված տափակ քարերի կույտերով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Ակտիվ են մայիսի սկզբից մինչև սեպտեմբերի վերջը: Սննում են անողնաշար կենդանիներով և մողեսներով: Զուգավորումը սկսվում է մայիսի կեսերից: Զվարկենդանածին տեսակ է: Զագերը (5-8) ծննդում են սեպտեմբերի կեսերին: Ծննդելուց անմիջապես հետո սկսվում է մաշկափոխությունը: Բարձրադիր գոտիներում դիտվող ծննդելու ուշ ժամկետները հիմք են տախս ենթադրելու, որ բնության մեջ նորածիններն անմիջապես անցնում են ձմեռման, իսկ սնվել սկսում են հաջորդ տարվա գարնանը:

**Թշաքամակը և դրա փոփոխման միտումները:** Պոպուլյացիաների խտությունը բնորոշ բիոտոպներում բավականին բարձր է՝ 1 հա մակերեսին տարբեր տարիներին հաշվառվել է 10-12 առանձնյակ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Բնորոշ ապրելավայրերի քայլայումը: Բարձրադիր մարգագետինների ինտենսիվ յուրացումը, անասունների անվերահսկելի արածեցումը և ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկում: «Կովկասում Դարևսկու իժի պահպանման միջոցառումներ» ծրագրի շրջանակներում 2004 թ-ից սկսած մշակվել և իրականացվում են կոնսերվացիոն միջոցառումներ անհրաժեշտ բիոտոպերի տարանջատման և պահպանության նպատակով:

Անհրաժեշտ է սահմանազատել և ցանկապատել տեսակի բնորոշ բիոտոպները և ընդգրկել «Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտում: Սահմանել խիստ վերահսկողություն այս տեսակի ապօրինի որսի նկատմամբ:

27. Հայկական լեռնատափաստանային իծ, *Vipera (Pelias) eriwanensis* (Reuss, 1933),  
Կարգ ՕԶԵՐ, *SERPENTES*

Ընտանիք Իժանման օճեր կամ իժեր, *Viperidae*



**Կարգավիճակը:** Հայկական բարձրավանդակի էնդեմիկ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable B1ab(iii,v)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii, v):

**Տարածվածությունը:** Արևալը ներառում է Արևելյան Անդրկովկասի լեռնային շրջանները, ինչպես նաև Թուրքիայի և Իրանի հարակից հյուսիսային հատվածները:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է հանրապետության հյուսիսի արևմտյան, կենտրոնական և հարավային շրջաններում, հիմնականում լեռնատափաստանային լանջաֆտներում և բարձրադիր մարգագետիններում՝ 1200-3000 մ ծ.մ.թ. բարձրության վրա:

**Ապրելավայրերը:** Հայաստանում բնակեցնում է խիստ բարբարոտ, լեռնաբարձրություններին տափաստանները և ալպիական մարգագետինները: Համդիպում է նաև լեռնային նոսրանտառներում, լեռնալանջերի քարերի ցրվածքների, սրածայր աստրագալների և այլ չորային բույսերի արանքներում: Հազվադեպ հանդիպում են նաև մշակվող լանջաֆտներում՝ քարերի կույտերի տակ: Որպես թարսոցներ օգտագործում է կրծողների բները, քարերի տակի դատարկությունները, տարբեր քիմիկական մասերը, ժայռերի և հողի ծեղքերը և այլն:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Ակտիվ են ապրիլի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերը: Սնում են անողնաշար կենդանիներով և մողեսներով: Չուզավորումը տեղի է ունենում ապրիլ-մայիսին՝ կախված ապրելավայրի բարձրությունից և ձմեռումից դուրս գալու ժամկետներից: Զվակենդանածին է: Զագերի ծնվելը սկսվում է հուլիսի վերջից և տևում մինչև սեպտեմբերի կեսերը: Հղիությունը տևում է 90-130 օր: Զագերը ծնվում են օգոստոսի կեսերից մինչև սեպտեմբերի վերջը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը մեծ չէ, սակայն նախալեռնային բիոտոպերում՝ կուտակման տեղերում, քարերի ցրվածքներում հանդիպում է մոտ 6-8 առանձնյակ 1 հա վրա: Ընդհանուր առմանք, բվաքանակը կայուն է, ինչը պայմանավորված է լեռնատափաստանային իմի բարձրադիր գոտիներում տարածվածությամբ:

**Վտանգաման հիմնական գործուները:** Մանր եղերավոր անասունների արածեցումը լեռնատափաստանային և մարգագետնային գոտիներում:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցի լեռնամարգագետնային գոտու փոքր հատվածներում: Անհրաժեշտ է պահպանության տակ վերցնել Հայաստանի հյուսիսում գտնվող մեկուսացված պոպուլյացիաները (արգելավայրերի ստեղծում) և ընդլայնել «Խոսրովի անտառ» արգելոցի սահմանները:

28. Հայկական իծ կամ Ռադդեի իծ, *Vipera (Montivipera) raddei* Boettger, 1890,  
Կարգ ՕԶԵՐ, SERPENTES

Հնտամիք Իժանման օճեր կամ իժեր, *Viperidae*



**Կարգավիճակը:** Հայկական բարձրավանդակի էնդեմիկ տեսակ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես՝ VU B1a+2b (ii, iii):

**Տարածվածությունը:** Արևելյան Անդրկովկաս և Թուրքիայի ու Իրանի հարակից շրջաններ: Անդրկովկասի սահմաններում արեալն անցնում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների հարավային թևերով:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարանջատված պոպուլյացիաները, որոնց միջև կան տարեր արգելվներ, կենտրոնացած են Կոտայքի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է լեռնաքսերոֆիտային անտառներում, գիհու նոսրանտառներում, լեռնային տափաստաններում, ծառաթփային նոսր բուսականությամբ քարքարոտ լանջերին, 1300-1800 մ ծ.մ.ր. բարձրության վրա, երեմն բարձրանում է մինչև 2500-2700 մ: Երբեմն մտնում է մշակովի դաշտեր, որտեղ մնում է քարերի կույտերում:

**Կենարանության առանձնահատկությունները:** Ակտիվ է ապրիլի սկզբից մինչև հոկտեմբերի վերջը: Սեռական ակտիվությունը սկսվում է մայիսի կեսերից և շարունակվում մինչև հունիսի վերջը: Հղիությունը տևում է 150-160 օր: Զվարկենդանածին է: Զագերը դրուս են զախս օգոստոսի վերջին մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը: Հայկական իժի էգերի բազմացման ցիկլը բնության պայմաններում կազմում է հիմնականում երկու տարի:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին դիտվում է թվաքանակի կտրուկ նվազում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Բնորոշ ապրելավայրերի քայլայումը՝ լեռնալանջերը փարելու և շինարարական աշխատանքներ կատարելու, լեռնային անտառները դնչացնելու, լեռնատափաստանային և մարզագետնային գոտիներում անասուններ արածեցնելու հետևանքով: Մեծ վնաս է հասցնում նաև ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Տեսակի արեալի աննշան մասը պահպանվում է «Խոսրովի անտառ», «Շիկահող» արգելոցներում և «Արևիկ» ազգային պարկում:

**Մշակված և փորձարկված են լաբորատոր պայմաններում իժերի պահման և բազմացման մեթոդներ:**

**Անհրաժեշտ է կազմակերպել մի շարք արգելավայրեր Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում և սահմանել խիստ վերահսկողություն այս տեսակի ապօրինի որսի նկատմամբ:**

ԹՌՉՈՒՆՆԵՐ, *AVES*

29. Սովորայտ սուզակ, *Podiceps grisegena* Boddaert, 1783  
Կարգ՝ ՍՈՒՉԱՍԿԱՆՍԱՆԵՐ, *PODICIPEDIFORMES (PODICEPIFORMES)*

Ընտանիք՝ Սուզակներ, *Podicipedidae*



**Կարգավիճակը:** Նստակյաց, քիչ տարածված տեսակ է, որի քանակությունը կրճատվում է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Ականդինավյան երկրներում, Ռուսաստանի հյուսիսային շրջաններում, Ուկրաինայում, Միջին Ասիայում, Կովկասում և Անդրկովկասում: Բնադրման շրջանից դուրս հանդիպում է Բրիտանական կղզիներում, Միջերկրածովյան երկրներում, Փոքր Ասիայում, Իրանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Աշնանային և գարնանային չոփ շրջաններում հանդիպում է Սևանա և Արփի լճերում, Արարատյան հարբավայրի արհեստական և բնական լճակներում, բնադրման շրջանում՝ Լռովա սարահարթի լճակներում:

**Ապրելավայրերը:** Բնադրման շրջանում նախընտրում է առափնյա հարուստ ջրային բուսականությամբ և բաց ջրային մակերեսով լճերը, լճակները և ջրամբարները:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բներք տեղադրում են կոտրված եղեցնի և առափնյա ու ջրային բույսերի մնացորդներին, ափից ոչ հեռու: Բնում՝ 4-5 ձու, սպիտակավուն, 47-51 մմ: Թխոտման՝ 27-29 օր: Զվից դուրս եկած ձագերը հիանալի լրդում են և սուզվում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Մինչև Սևանա լճի մակարդակի իջեցումը բնադրում էին լճի ջրավազանում: Մինչև 2005 թ-ը 6-10 բնադրող գույզեր հանդիպում էին Արդանիս գյուղի մոտակա լճակում: Այդ լճակում մշկամկների քանակության ավելացման և լճակի ջրերի զգալի տատանումների արդյունքում, դադարեցին բնադրել: Ներկայում 5-15 բնադրող գույզեր հանդիպում են Լռովա սարահարթի լճակներում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Բնադրման շրջանում ձկնորսների կողմից անհանգստացումը, ջրի մակերեսի տատանումները և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Արփի լիճ» և «Սևան» ազգային պարկերում: Կազմակերպվում են հանդիպումներ, լճակներին հարող համայնքներում բնապահանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է ամբողջ տարվա ընթացքում կազմակերպել բվարանակի հաշվառումներ: Բացահայտել հնարավոր բնադրավայրերը և ապահովել դրանց պահպանությունը: Լռովա սարահարթի լճակները հայտարարել որպես կարևորագույն բոչնաբանական տարածք և ուժեղացնել պայքարը որսագողության դեմ չոփ շրջանում և ձմռանը:

30. Վարդագոյն հավալուսն, *Pelecanus onocrotalus* Linnaeus, 1758  
Կարգ՝ ԹԻԱՎՈՒՏԱՅԻՆՆԵՐ, PELECANIFORMES

## Ընտանիք՝ Հավալուսներ, *Pelecanidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, կրծատվող թվաքանակով տեսակ է, որը գտնվում է անհետացման վտանգի տակ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊԱՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B1ab(iii):

**Տարածվածություն:** Որպես բնադրող տեսակ համիլպում է Հարավ-արևելյան Եվրոպայում, Ասուզավոր, Միջին և Կենտրոնական Ասիայում, Ռուսաստանում, Արդեքանում, Չինաստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հազվադեպ հանդիպում է Սևանա լճի ավագանում, Արփի լճում, Արմաջի և հարակից ձկնարուծական տնտեսությունների լճակներում որպես պատահական չվահյուր: Չորս շրջանում նախկին Գիլիկի լճին հարող Սևանա լճի առափնյա տարածքներում և Արմաջի ձկնարուծական տնտեսությունների լճակներում:

**Ապրելավայրերը:** Զկնարութական լճակներ, լճեր, գետեր: Մարդու տնտեսական գործունեության արդյունքում ապրելավայրերը խիստ փոփոխվել են: Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով ոչնչացել են ծանծաղութերը, իսկ Սևանա լճի սառեցումը ձմռանը դարձել է սովորական երևոյթ: Երբեմնի ձկան հարուստ պաշարներ ունեցող Արփի լիճը վեր է ածվել ջրամբարի, որի մակարդակի տատանումները հանգեցնում են ձկնային պաշարների աղքատացմանը: Սակայն Արարատյան հարթավայրում, որտեղ լավ զարգացել է ձկնարութարանային տնտեսությունը, կերպին բազան բավականին հարատացել է :

**Կենսաքաղաքացիան պահպանությունները:** Բնադրում են, սովորաբար, մեծ զաղութեառվ խոլ լճերում, ընտրելով ափի բաց, հարք հատվածները եղեգուտների առկայությամբ: Դնում են 90-106 մմ չափեր ունեցող 2-3 ծու: Թխսումը տևում է 32-35 օր: Զվից դուրս եկած ձագերը լինում են, սովորաբար, մերկ և անօգնական, սակայն արագ աճում են և 2,5 ամսեկան հասակում ձագերը հասնում են հասուն թռչունների չափերին և կարողանում են թռչել: Հայատանում են բնադրում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախկինում, չուի շրջանում թվաքանակը տատանվում էր 1-2,5 հազ. առանձնյակների սահմաններում: Սևանա լճի մակարդակի հետեւման հետ մեկտեղ առավելաց ծանծաղութները վերացան, ձմռան ամիսներին լճի ջրերը սկսեցին սաղցապատվել: Արարատյան հարթավայրի ձկնաբուծական լճակների գգալի մասը չորացվեցին: Արդյունքում՝ Սևանա լճում ներկայում գրեթե չեն հանդիպում, իսկ Արմաշում աճռանը կերակրման ընթացքում հանդիպում են 20-30 անհատից ոչ ավել: Երևանի կենդանաբանական այգում պահպանվում են 4 վարդագոյն հավալուներ: Անազատ պայմաններում բազմացել են

Բեռլինի, Բագելի, Թել-Ավիվի կենդանաբանական այգիներում: 1963-1974 թթ.-ին ձվերից դուրս են եկել 11 ձագեր:


**Վտաճրման հիմնական գործոնները:** Արարատյան հարթավայրում, ամռան ամիսներին ձկնարուծական տնտեսությունների աշխատակիցների կողմից հետապնդվելը, ձմռանը՝ չկարգավորվող որսը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում: Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում: Արմաշի ձկնարուծական տնտեսությունում, ինչպես նաև դրան հարող հարևան համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է կազմակերպել թվաքանակի հաշվառումներ և ուժեղացնել տեսակի պահպանության անհրաժեշտության պրոպագանդան ձկնարուծական տնտեսությունների աշխատակիցների միջև:

31. Գանգրափետոր հավալուս, *Pelecanus crispus* Bruch, 1832  
Կարպ՝ ԹԻԱՎՈՏԱՅԻՆՆԵՐ, **PELECANIFORMES**

## Ընտանիք՝ Հավալուսներ, *Pelecanidae*



**Կարգավիճակը:** Հազարամյակում, կրծատվող թվաքանակով տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊԱՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2ce+3ce+4ce» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

**Տարածվածություն:** Որպես բնադրող տեսակ հանդիպում է Ալբանիայում, Բուլղարիայում, Վրաստանում, Հունաստանում Ռումինիայում, Ռուսաստանում, ճախսկին Հարավալավիայում, Թուրքիայում, Ռւկանիայում, Միջին Ասիական հանրապետություններից՝ Ռիգեստանում և Ղազախստանում, Արաբական երկրներից՝ Սիրիայում և Իրաքում, Իրանում, Սննդոյիայում և Չինաստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Սևանա լճի ավազանում որպես չվահյուր, գգ. Նորաշենին և Լիճքին հարող ջրային տարածքներում: Ամռան ամիսներին 30-50 առանձնյակների կարելի է հանդիպել Արարատի մարզի Արմաշի և հարակից ձկնաբուծական տնտեսությունների լճակներում: Բնադրման շրջանում հանդիպում է նաև Արփա լճում:

**Ապրելավայրերը:** Սևանա և Արփի լճերի բաց, խորը, ջրային, բուսականությունից զուրկ տարածքներում, նոր բուսականությամբ ծանծաղութներում: Ամռանը, կերակրման նպատակով, պարբերաբար այցելում են Արարատյան հարթավայրի ձկնաբուծական լճակներ, որոնց գգալի մասի շրացման պատճառով կերային պաշարները զգալիորեն նվազել են, ուստի հանդիպում են միայն ձկնաբուծական լճակներում:

**ԿԵՆԱՐՁԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԽԱՆԱՀԱՏԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:** Բնադրում են գաղործներով: Բնադրումը հայտնի է միայն Արփի լճում, որտեղ կղզյակներում պարբերաբար բնադրում են 2-3 զույգեր: Բույնը աղորային, ճուղերից, խոտաբույսերից, ցամքարը՝ փափուկ խոտաբույսեր, որորի փետուրները Զվերը. 90-95 մմ, 2-3, սալիտակ: Թխառումը՝ 32-35 օր: Զվից դուրս եկած ձագերը լինում են մերկ և անօգնական, սակայն արագորեն աճում են և 2,5 ամսեկանում կարողանում են թռչել:

**Թվաքանակը և որպա փոփոխման միտուները:** Ամռան ամիսներին 30-40 անհատներ հանդիպում են Արփի լճում, Ալանա լճում, չոր ժամանակ՝ 50-80, Արարատյան հարթավայրում՝ ձկնարուծական տնտեսությունների գզակի մասի վերացումը էապես կրծատեց կերակրման բազան, որի հետևանքով կրծատվեց նաև կերակրման համար այցելուների թվաքանակը:

**Վատագման իմանական գործունեությունը:** Արարատյան հարքավայրում, ամռան ամիսներին, ձկնարուծական տնտեսությունների աշխատակիցների կողմից հետապնդվելը, ձմռանը՝ չկարգավորվող որսը և որսազողությունը: Աևանա լճում, ջրի մակարդակի բարձրացման հետ մեկտեղ ձնավորվում են պայմաններ այս բռչունների հետազա բնադրման համար: Սակայն լճի գորեք ողջ տարածքում իրականացվող օրինական և ապօրինի ձկնորսությունը լուրջ անհանգստացնող գործուն է:


**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆաունայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտիք կոնվենցիա»-յի Հավելված 2-ում, CITES-ի Հավելված 1-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում: Արմաշի ձկնարուծական տնտեսությունում, ինչպես նաև դրան հարող հարևան համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է ձկնարուծական տնտեսություններին հատկացնել դրամական փոխհատուցման միջոցներ քոչունների կողմից ոչնչացված ձկների համար, ինչպես նաև արգելել լճակներում եղած, բնադրման համար նպաստավոր կղզյակներում եղեգնութիւ հրդեհումը: Արփի լճում, բնադրման շրջանում արգելել ձկնորսների և գրոսաշրջիկների մուտքը կողմներ: Լայնորեն պրոպագանդել տեսակի պահպանման անհրաժեշտությունը ձկնարուծական տնտեսություններում և համայնքներում: Բնադրման և չոփ շրջաններում կազմակերպել թվաքանակի հաշվառում:

**32. Սեծ ձկնկող, *Phalacrocorax carbo* Linnaeus, 1758**  
**Կարգ՝ ԹԻԱՎՈՏԱՅԻՆՆԵՐ, PELECANIFORMES**

**Ընտանիք՝ Ձկնկողներ, *Phalacrocoracidae***



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B1ab(iii):

**Տարածվածությունը:** Տարածված է Եվրոպայում, Ռուսաստանում, Հարավային և Սիծին Ասիայում, Անդրկովկասում, Աֆրիկայում, Հնդկաստանում, Չինաստանում, Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում, Ավստրալիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նախկինում լայնորեն տարածված է եղել Հայաստանի ջրամբարներում: Սևանա լճի ավազանում վարում էր նստակյաց կենսակերպ: Մինչև 50-ական թթ-րը ոչնչացվել է որպես ձկնային տնտեսությունների վճասառու: Ներկայումս հազվադեպ հանդիպում է Սևանա և Արփի լճերում՝ չոփ ժամանակ և ամռանը: Զնորանը, ոչ ամեն տարի, հանդիպում է Սևանա լճում, Ախուրյանի ջրամբարում և Արարատյան հարթավայրի չափանիկալող ջրամբարներում:

**Ապրելավայրերը:** Լճերի ճահճուտների, գետերի, ձկնարուծական լճակների, փարթամ բուսատներ: Հաճաստի ժամանակ կենտրոնանում են լճափերին: Սևանա լճի մակարդակի իջեցման և Գիլի լճի չորացման հետևանքով ոչնչացել է բնադրման միակ վայրը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում են զաղութներով, հաճախ՝ նաև այլ ջրաճահճային բռնունների հետ: Բույնը տեղադրված է աղոտային, կոնաձև, եղեգից, ջրաճահճային բուսատներում: Ջերը 51-63,5 մմ, 4-5, բաց-երկնագույն կամ կանաչ: Բազմանում են հունիս-հուլիսին: Թխումը՝ 28-30 օր: Զագերը զարգանում են դանդաղ, սկսում են բռչել 2,5 ամիս հետո:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Չոփ շրջանում կարելի է հանդիպել 5-10 կամ 20-30 առանձնյակներից կազմված խմբերի, իսկ ձմռանը, Սևանա լճի ավազանում՝ առնձին անհատների, Ախուրյանի և Արարատյան հարթավայրի չափանիկալող ջրամբարներում՝ 20-40 առանձնյակներից կազմված խմբերի:

**Վտանգման հիմնական գործուները:** Բնադրավայրերի ոչնչացումը Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով և ուղղակի ոչնչացումը մարդու կողմից՝ ապօրինի որսը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Արմաշի ձկնարուծական տնտեսությունում, ինչպես նաև դրան հարող հարևան համայնքներում:

կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատավիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է ձկնաբուծական տնտեսություններին հատկացնել դրամական փոխառության միջոցներ քոչումների կողմից ոչնչացված ձկների համար, ինչպես նաև արգելել լճակներում եղած, բնադրման համար նպաստավոր կղզյակներում եղեգնութիւ հրդեհումը։ Բնադրման և չոփ շրջաններում կազմակերպել թվաքանակի հաշվառում։ Վերականգնել Գիլի լիճը։

33. Փոքր ձկնկուլ, *Phalacrocorax pygmaeus* Pallas, 1773  
Կարգ՝ ԹԻԱՎՈՒՏԱՅԻՆՆԵՐ, PELECANIFORMES

Հնտաճիր՝ Ձկնկուլներ, *Phalacrocoracidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2a:

**Տարածվածությունը:** Տարածված է Հարավային Եվրոպայում, Առաջավոր և Սիրիա Ասիայում, Փոքր Ասիայում, Իրաքում, Անդրկովկասում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Համբիկում է Սևամա լճի ավազանում՝ չոփ շրջանում և ամռանը՝ հազվադեպ: Հիմնականում տարածված է Արարատյան հարթավայրի ձկնաբուծական տնտեսությունների լճակներում և Սևջուր գետի եղեգնի բուսութներում: Բնադրող գույզերի քանակը տատանվում է 200-400 սահմաններում: Նեկայումն հիմնականում ապրում և ձվադրում են Արմաջի ձկնաբուծական տնտեսության լճակներում, մեծ ձկնկուլի հետ համատեղ:

**Ապրելավայրերը:** Լճեր, ճահճուտներ, գետեր, ձկնաբուծական լճակներ, ճահճային բուսութներ: Սևջուր գետի (գ. Արաքսի հովիտ) համակարգի ջրածահճային մացառները և եղեգնութները: Տնտեսական գործունեության և եղեգնութների այրման հետևանքով ապրելավայրերը խփան դեգրադացվել են:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում են փոքր գաղութներով (10-20 գույզ), հաճախ՝ նաև ջրածահճային այլ բռչունների հետ, Սևջուր գետի (գ. Արաքսի հովիտ) համակարգում: Նստակյաց են: Բույնը աղուտային, կոնաձև, եղեգից, ջրածահճային բուսութներում, եղեգնի ջարդված ցողունների վրա: Զվերը՝ 42,5-53,5 մմ, 4-6, բաց-երկնագույն: Թխառումը՝ մոտ մեկ ամիս: Զվիյ դրուս եկած ծագերը լինում են մերկ և անօգնական, սակայն արագորեն աճում են և 2,5 ամսեկանում կարողանում են բռչել:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Չուի և ձմեռման ժամանակ Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում հաշվառվում է 1500-3000 առանձնյակ: Տարեց-տարի նկատվում է բնադրող և ձմեռող անհատների թվաքանակի աճ:


**Վտանգման հիմնական գործուները:** Տնտեսական գործունեության և եղեգնութների հրդեհման հետևանքով բնադրավայրերի ոչնչացումը: Ապօրինի որսը և որսագողությունը ձմռան ամիսներին:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:  
Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Բնադրման և ձմեռման վայրերին հարող  
համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝  
բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է ստեղծել արգելավայր Մեծուր գետի (գ. Արաքսի հովիտ) համակարգում և  
ուժեղացնել էլուրզիական դաստիարակության ոլորտում բացատրական աշխատանքները:  
Արմաշի ծկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարևորագույն  
թռչնարանական տարածք: Տարվա բոլոր շրջաններում կազմակերպել թվաքանակի հաշվառում:  
Վերականգնել Գիլի լիճը:

34. Սև արագիլ, *Ciconia nigra* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԱՐԱԳԻԼԱՆՍԱՆԵՐ, *CICONIFORMES*

Ընտանիք՝ Արագիլներ, *Ciconiidae*



**Կարգավիճակը:** Քիչ քանակությամբ նեղ տարածված տեսակ է: Հնդգրկված է եղել նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Հանդիպում է Արևմտյան Եվրոպայում, Ռուսաստանում, Փոքր և Միջին Ասիայում, Հարավային Աֆրիկայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում բնադրում է հյուսիսային շրջաններում:

**Ասպեկտավորները:** Բնադրում են գետերի, անտառային ճահիճների, լճերի մոտակայքում գտնվող անտառային զանգվածներում և ժայռոտ ձորերում: Բույնը կառուցում են ծառերի վրա կամ ժայռերի խորշերում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տարվա մեջ բնադրում են մեկ անգամ, դնում են 3-6 ձու: Բազմացումը անազատ պայմաններում գրանցվել է 2007 թ.-ին Խարկովի կենդանաբանական այգում, որտեղ 1 զույգից ստացվել է 3 ձագ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ըստ նախնական գնահատման, Հայաստանում կազմում է 2-5 զույգ: Առնվազն 5 անհատ բնադրում է Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային աստղիացիայի կենդանաբանական այգիներում:


**Վտանգման հիմնական գործոնները:** Բնադրավայրերի կրծատումը, ինչը կապված է խառն անտառների տարածքների կրծատման և անտառների նոսրացման հետ, հնարավոր է, նաև անհանգստացման գործոնը բնադրման շրջանում:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ մտցնել անտառային տարածքների օգտագործման կառավարման գործում, բնադրման շրջանում (ապրիլ-հուլիս) արգելել մարդկանց մուտքը անտառ:

35. Քաջահալ, *Plegadis falcinellus* Linnaeus, 1766  
Կարգ՝ ՏԱՐԵՎԱՆՍԱՆՆԵՐ, *CICONIIFORMES*

Ընտանիք՝ Եզրիպտահավեր, *Threskiornitidae*



**Կարգավիճակը:** Անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է ռոպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Աֆրիկայի հյուսիսային շրջաններում, Եվրոպայում և Կովկասում, Փոքր և Միջին Ասիայում, Հարավ Արևմտյան Ասիայի երկրներում, Ավստրալիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Մինչև 50-ականները լայնորեն տարածված է եղել Արարսի հովտում և Սևանա լճի ավազանում: Ներկայումս հանդիպում է Սևանա լճում, Սևքորի հովտում, Արմաշի ձկնարուծական տնտեսությունում և Արփի լճում:

**Ապրելավայրերը:** Լճեր, ճահճուտներ, գետափեր, բաց մարգագետիններ, ձկնարուծական լճակներ: Սևանա լճի ջրավազանում բնադրավայրերը ոչնչացել են՝ կապված լճի մակարդակի իջեցման հետ: գ. Սևքորի համակարգում կան բնադրման բոլոր պայմանները, սակայն ներկայումս բնադրում են միայն առանձին տեղերում՝ կապված եղեցնուտների մշտապես այրման հետ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Գաղութային տեսակ է, բնադրում է հարք եղեցնուտներում, ուղենու մացառներում: Զվերը՝ 52 սմ, 4-5, մուգ կանաչաերկնագույն: Թխառմք՝ 21 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** 23 առանձնյակներից կազմված երամ գրանցվել է գարնան չորս ժամանակ Գիլի լճի շրջանում: գ. Սևքորի համակարգում բնադրման շրջանում կարելի է հանդիպել 10-20 զույգերի, իսկ Արմաշի ձկնարուծական տնտեսությունում՝ 30-40 զույգ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Գիլի լճի և Սևանա լիճը շրջապատող ջրածահճային տեղամասերի չորացումը, բնադրավայրերում եղեցնութների այրումը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

Անհրաժեշտ է ճշգրտել թվաքանակը չորս ժամանակ, ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:

36. Տարգալակողոց, *Platalea leucordia* Linnaeus, 1758  
Կարգ՝ ՏԱՐԵՂԱՆՄԱՆՆԵՐ, CICONIFORMES

Ընտանիք՝ Տարգալակողոցներ, *Plataleidae*



**Կարգավիճակը:** Անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպա, Հյուսիս-Արևելյան Աֆրիկա, Առաջավոր և Փոքր Ասիա, Հնդկաստան, Մոնղոլիա, Չինաստան, Ռուսաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** 30-40-ականներին հաճախ հանդիպում էր Արաքսի և Սևանա լճի ավազանում: 50-ականներին դեռևս բնադրում էր այստեղ: Ներկայումս չոփ ժամանակ հանդիպում են Արփի լճում, Ստեփանավանի գերխոնավ տարածքներում, Ախուրյանի ջրամբարում, իսկ բնադրման շրջանում՝ նաև Սևանա լճի ավազանում և Արմաշի ձկնարուծական տնտեսությունում:

**Ապրելավայրերը:** Սևանա լճի ավազանում բնադրման տարածքները ոչնչացվել են՝ կապված լճի մակարդակի փցեցման հետ: Գ. Ակօդուրի գետառում, չնայած բնադրման համար բարենպաստ պայմանների, չի բնադրում: 1972-1973 թթ.-ին գարնան չոփ ժամանակ գրանցվել են 5-10, Արարատյան հարթավայրում՝ 10-25 առանձնյակներից կազմված փոքր երամներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները կառուցում են ծառերի, թփերի վրա, կամ եղեգնութերում: Դնում են 2-3 ձու: Զագերը դուրս են գալիս 24-25 օր թիսելուց հետո: Ներկայումս հանրապետության տարածքում չի բնադրում:


**Վտանգման կիմնական գործոնները:** Գլխի լծի և Արարատյան հարթավայրի ջրաճահճային հատվածների չորացումը, որը հանգեցրել է բնադրավայրերի ոչնչացմանը և կերային բազայի աղբատացմանը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

Անհրաժեշտ է հաշվառումներ կատարել տարվա բոլոր եղանակներին՝ կենտրոնացման և բնադրման վայրերը բացահայտելու և պահպանությունը կազմակերպելու նպատակով:

37. Սովորական ֆլամինգօն, *Phoenicopterus roseus* Pallas, 1811  
Կարգ՝ ՖԼԱՄԻՆԳՈՎԱՆԱՆԵՐ, *PHOENICOPTERIFORMES*

Ընտանիք՝ Ֆլամինգոներ, *Phoenicopteridae*



**Կարգավիճակը:** Անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Բնադրավայրերը հայտնաբերվում են Կասպից ծովի ափազանից, դեպի արևելք՝ մինչև Իրան, Աֆղանստան, Յակուտիա, Հեռավոր Արևելք և Հարավ-Արևմտյան Հնդկաստան, դեպի հարավ՝ մինչև Դաղստան, Աղբեջան, Թուրքիա, Թունիս, Եգիպտոս,  
Հարավային Աֆրիկա, դեպի արևմուտք՝ մինչև Իսպանիա և Ֆրանսիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում՝ չվահյուր գ. Արաքսի հովտում և Սևանա լճի ափազանում:

**Ապրելավայրերը:** Սևանա լճի ծանծաղուտներ գ. Նորադուզի շրջակայրում:

**Կենարանության առանձնահատկությունները:** Սովորաբար, բնադրում են զաղութներով,  
ձվադրում՝ հունիսի կեսերին: Ձվերը՝ 1-2: Զագերը դրւում են գալիս 30-32 օրից: 4 օր հետո լքում են  
բույնը: Հայաստանում չի բնադրում: Անազատ պայմաններում հաջողությամբ բազմացվել է  
Անգլիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի կենդանաբանական այգիներում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Արարատյան հարթավայրում աշնանը  
հաշվառվում են 5-10 առանձնյակներ:


**Վտանգման իհմնական գործուները:** Անօրինական որսը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է ուժեղացնել պահպանությունը ձմեռման վայրերում:

38. Թշան կարապ, *Cygnus olor* (J. F. Gmelin, 1789)  
Կարգ՝ ՍԱԳԱՆՍԱՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բաղեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Պատահական չվահյուր, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2a:

**Տարածվածությունը:** Տարածման արեալն ընդգրկում է գրեթե ողջ Եվրոպան և Ականդինավյան երկրները, Ռուսաստանը, Փոքր Ասիան, Անդրկովկասը, Իրանը և Աֆղանաստանը, Հնդկաստանի հյուսիսային և Չինաստանի արևելյան շրջանները:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է չորս շրջաններում, իսկ առանձին տարիներին՝ նաև ձմռանը, Սևանա լճի ավազանում և Արարատյան հարթավայրի ձկնարուծական լճակներում:

**Ապրելավայրերը:** Սովորաբար, գերադասում է առափնյա, խիտ եղեգնուտներով պատված, սակայն բաց ջրային մակերեսով ջրամբարները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են դժվար մատչելի եղեգնի բուսուտներում, ջարդված եղեգնի մնացորդներից և առափնյա ջրաճահճային բույսերից: Զվերը՝ սովորաբար, 7-9, բաց կանաչավուն, 105-122 մմ: Թխսում՝ 35 օր: Զվից դրւս եկած ձագերը ջրի վրա հսկվում են ծնողների կողմից, իսկ գիշերն անց են կացնում բներում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հանդիպում է աշնանային և գարնանային չորս շրջաններում 5-10, իսկ ձմռանը՝ 50-60 առանձնյակներից բաղկացած խմբերով: Հայաստանում միշտ եղել է հազվագյուտ:

**Վտանգման իմնական գործուները:** Ուսումնասիրված չէ, հավանաբար, որսագորությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Սևան լճի ավազանում և Արմաշի ձկնարուծական տնտեսությանը հարող համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է ձմռանը կազմակերպել լրացուցիչ վերահսկում կարապների հանդիպման վայրերում: Արմաշի ձկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարել որպես կարևորագույն թշնաբանական տարածք: Ուժեղացնել պայքարը որսագորության դեմ: Վերականգնել Գիլի լիճը:

**39. ճշան կարապ, *Cygnus cygnus* (Linnaeus, 1758)**  
**Կարգ՝ ՍԱԳԱՆՍԱՆՆԵՐ, ANSERIFORMES**

Ընտանիք՝ Բաղեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2a:

**Տարածվածությունը:** Տարածման արեալն ընդգրկում է ողջ Եվրոպան, Ականդինավյան երկրները, Ռուսաստանը, Փոքր Ասիան, Անդրկովկասը, Միջին Ասիան, Իրանը, Չինաստանը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է շուրջաններում, իսկ առանձին տարիներին՝ նաև ձմռանը, Սևանա լճի ավազանում և Արարատյան հարթավայրի ձկնարուծական լճակներում:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է առափնյա, խիտ եղեգնութերով պատված, բաց ջրային մակերեսով ջրամբարներում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են առափնյա չոր մասերում, երբեմն, նաև ծանծաղութերում, օգտագործելով եղեցնի և տարբեր բույսերի ճյուղեր և փայտիկները: Զվերը՝ սովորաբար, 4-6, հազվադեպ՝ 7, սպիտակ կամ դեղնավուն, 114-126 մմ: Թխտում՝ 35-40 օր: Զվից դուրս եկած ծագերը երկար մնում են ծնողների հետ և միասին էլ կատարում են աշնանային շվերքը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հանդիպում է աշնանային և գարնանային շուրջաններում 4-50 առանձնյակներից բարկացած խմբերով: Հայաստանում միշտ եղել է հազվագյուտ:


**Կտանգման հիմնական գործոնները:** Ուսումնասիրված չէ, հավանաբար, որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Սևանա լճի ավազանում և Արմաշի ձկնարուծական տնտեսությանը հարող համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

**Անհրաժեշտ է ձմռանը կազմակերպել լրացուցիչ վերահսկում կարապների հանդիպման վայրերում: Արմաշի ձկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարևորագույն թշնաբանական տարածք: Ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:**

40. Փոքր կարապ, *Cygnus columbianus* Yarrell, 1830  
Կարգ՝ ՍԱԳԱՆՍԱՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բաղեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է, որը ոչ կանոնավոր հանդիպում է չոփ և ձմեռման շրջաններում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Եվրասիայի տունդրան՝ Ականդինավյան թերակղզուց մինչև Կովկասյան դելտան, ինչպես նաև Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի արևմտյան կղզիներ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Չոփ և ձմեռման շրջաններում հանդիպում է Սևանա լճի ավագանում, հազվադեպ՝ Արարատի մարզում՝ գ. Արաքսի հովտի ձկնաբուծական տնտեսություններում:

**Ապրելավայրերը:** Խոշոր արհեստական լճակների և լճերի առափնյա տեղամասերը ջրաճականացնելու առկայությամբ, լճերի ծանծաղուտներ, գետաբերաններ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում հանդիպում է չոփ և ձմեռման շրջաններում, հաճախ ճշան կարապի հետ՝ սեպտեմբեր-մարտին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Միշտ հանդիպում է 2-20, հազվադեպ՝ 60, բացառիկ դեպքերում՝ մինչև 230 առանձնյակներից կազմված խմբերով:


**Վտանգման հիմնական գործոնները:** Փոքր թվաքանակը, որսագողությունը, մշտապես անհանգստացնելը ձկնորսների կողմից Սևանա լճի ավագանում՝ ձմեռման վայրերում:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Տեսակը խիստ պահպանության կարիք ունի: Անհրաժեշտ է ցանկապատել Սևանա լճի ծանծաղուտային տեղամասերը Սևանի ծոցում, ինչպես նաև Գավառագետ և Մարիկ գետերի գետաբերաններում՝ արգելելով ձկնորսների մուտքը: Նպատակահարմար է կազմակերպել կարապների ձմեռային կերակրումը լճի այդ հատվածներում:

41. Սպիտակագլուխ բաղ կամ սավկա, *Oxyura leucocephala* Scopoli, 1769)  
Կարգ՝ ՍԱԳԱՆՍԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բադեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Ուկիւտային տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում:  
Տեսակն ընդգրկված է նաև ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered A2bcde+4bcde»  
կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի  
չափորոշիչներով գնահատվում է որպես «Վլանգված»՝ EN A2bcde+4bcde:

**Տարածվածությունը:** Տարածման արեալն ընդգրկում է Պիրենեյան թերակղզու հարավը,  
Աֆրիկայի հյուսիս-արևմուտքը, Ռուսաստանը, Թուրքիան, Միջին Ասիան, Պակիստանը,  
Մոնղոլիան, Չինաստանի հյուսիս-արևմուտքը. Անդրկովկասը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նախկինում բնադրել է միայն Սևանա լճի ավագանում,  
չորս ժամանակ նկատվել է գ. Արաքսի հովտում: 1928-1930 թթ.-ին եղել է առավել բազմաքանակ,  
Սևանա (Չործա) և Գիլի լճերում բնադրող տեսակներից մեկը: Ներկայումս Սևանա լճի  
ավագանում բնադրավայրերը լրիվ ոչնչացել են: Մինչև 1970-ական թվականները դեռևս  
հանդիպում էին առանձին անհատներ: Վերջին տարիներին չեն գրանցվում: Ներկայումս  
հանրապետության ողջ տարածքում միակ ապրելավայրն է Արմաշի ծկնարուծական  
տնտեսության տարածքը, որտեղ և բնադրում են: Բնադրող գույզերի թիվը չի անցնում 20-30  
գույզից:

**Ապրելավայրերը:** Խիստ եղեգնությունով պատված, սակայն բաց ջրային մակերեսով  
ձկնարուծական լճակները: Ներկայումս բնադրավայրերը համարյա ամբողջությամբ ոչնչացել են՝  
ջրի մակարդակի հջեցման և Գիլի լճի չորացման հետևանքով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բույնը. հարթականման, եղեգնից,  
ցամքարում՝ աղվախետուր, խիստ եղեգնություն, փտած ջրածահաճային բույսերի կույտերի վրա:  
Զվերը՝ 5-10, 66-69,5 մմ, խամրասպիտակ: Թխումը՝ 27-29 օր: Զվից դուրս եկած ծագերին,  
չորանալուց հետո, ծննդները երեկոյան ժամերին ուղեկցում են կերակրությունում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Արմաշի ձկնարուծական տնտեսության  
լճակներում և Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում վերջին տարիների  
ընթացքում, բնադրման շրջանում, հաշվառվում է 20-30 գույզ, և բարակակի աճ չի նկատվում:


**Վտանգման հիմնական գործուները:** Եղեգնությունների հրդեհումը և արմատահանումը, ինչպես  
նաև ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի  
Կոնվենցիայի Հավելված 2-ում: Արմաշի ձկնարուծական տնտեսությունում, որը մասնավոր  
սեփականություն է, ինչպես նաև դրան հարող հարևան համայնքներում կազմակերպվում են  
հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝ բնապահանական իրագեկության  
բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է Արմաշի ձկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես  
կարևորագույն բոչնաբանական տարածք: Տարվա բոլոր շրջաններում կազմակերպել թվաքանակի  
հաշվառում: Ուժեղացնել պայքարը որսագողության դեմ: Վերականգնել Գիլի լիճը:

42. Մոխրագույն սազ, *Anser anser* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ՍԱԳԱՆՍԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Քաղեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է, որի թվաքանակը Հայաստանում կտրուկ կրծատվում է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս և Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Անցած դարի 30-40 թթ.-ին լայնորեն տարածված է եղել հանրապետության բոլոր ջրամբարներում: 50-ական թթ.-ի տվյալների համաձայն՝ բնադրել է Սևանա և Արփի լճերում: Սևանա լճի մակարդակի իջեցումից և Գիլի լճի չորացումից հետո այլև չի բնադրում, սակայն հանդիպում է գարնանային և աշնանային չորի ժամանակ: Ներկայումս երբեմն հանդիպում է Սևանա և Արփի լճերում և, առավել հաճախ՝ Արարատյան հարթավայրի ձկնարուծական տնտեսությունների լճակներում և գերխոնավ տարածքներում, որտեղ և ձմեռում է:

**Ապրելավայրերը:** Սևանա լճի ջրավազանում լճի մակարդակի իջեցման հետևանքով բնադրավայրերը ոչնչացել են: Արփի լիճը ջրամբար դարձնելուց հետո անհետացավ ջրածահճային բուսականությունը, և սագերը դադարեցին այստեղ բնադրել: Արարատյան հարթավայրում ձկնարուծական տնտեսությունների ստեղծման հետ մեկտեղ վերականգնվեց կերային բազան և ձվադրավայրերը, այժմ հանդիպում են ողջ տարվա ընթացքում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են եղեգնութի ցողուններից և առափնյա այլ բույսերից ճյուղերից ձկնարուծական լճակներում գտնվող, փարթամ եղեգնութով պատված կղզյակներում: Ցամքարը՝ աղվախետուրներից: Զվերը՝ 4-6, բաց հարդագույն, 80-95 մմ: Թխսումը՝ 25-30 օր: Զվից դուրս եկած ձագերը հսկվում են ծնողների կողմից:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայումս մոխրագույն սազի 30-50 բնադրող գույգերի կարելի է հանդիպել Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում: Ձմեռող անհատների թիվը տատանվում է 50-150 սահմաններում:


**Վտանգման հիմնական գործոնները:** Եղեգնութերի իրդեհումը, ինչպես նաև բնադրման շրջանում անհանգույնացման գործոնը ու որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Ձկնարուծական տնտեսությունում, որը դրանց հիմնական բնադրավայրն է, ինչպես նաև դրան հարող հարեւան համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է Գիլի լճի վերականգնումը, Լիճը լճի մակերեսի մեծացումը: Արմաշի ձկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարևորագույն բոշնաբանական տարածք: Տարվա բոլոր շրջաններում կազմակերպել թվաքանակի հաշվառում, ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:

43. Կարմրախածի սազ, *Branta ruficollis* (Pallas, 1769)  
Կարգ՝ ՍԱԳԱՆՍԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բադեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, պատահական չվահյուր: Տեսակն ընդգրկված է նաև ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered A2bcd+3bcd+4bcd» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN A2bcd+3bcd+4bcd:

**Տարածվածությունը:** Զբաղեցնում է տունդրայի և անտառատունդրայի խիստ սահմանափակ տարածք Յամալ թերակղուց մինչև Թայմիր: Զնուանը հանդիպում է Անդրկովկասում, Կասպից ծովի ափերին, Իրանում, Միջագետքում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Գրանցվել է ընդամենը երկու անգամ՝ Սևանա լճի ավազանում (28.01.67 թ.) և Արմաշի ձկնարուծական լճակներում (27.10.1989 թ.):

**Ապրելավայրերը:** Բնադրման շրջանում հանդիպում է տունդրայի և անտառատունդրայի առավել չոր ու բարձրադիր, ջրին մոտ տարածքներում, ձմռանը՝ ջրամբարներին մոտ գտնվող տափաստաններում, լճակում:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բնադրում են 4-5 զույգերից կազմված գաղութներով, գետերի խոտարույսներով և բիուտներով պատված թեք ափերին: Զվերը 63-69 մմ, 3-6, կաթնազույն կանաչա-կապտավուն երանգով: Երբեմն նույն բնում բնադրում են մի քանի էգեր, և դրանցում կուտակվում է մինչև 50 ձու: Թիսումը՝ 24-26 օր: Զվերից որևէ եկած ձագերը խնամվում են երկու ծնողների կողմից:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Տվյալները բացակայում են:

**Վտանգման հիմնական գործոնները:** Տվյալները բացակայում են:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:  
Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է կազմակերպել թվաքանակի հաշվառումներ ողջ տարվա ընթացքում:

44. Կարմիր բաղ, *Tadorna ferruginea* (Pallas, 1764)  
Կարգ՝ ՍԱԳԱՎՍԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բադեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Նախկինում՝ տարածված և բազմաբանակ: Վերջին տարիների ընթացքում նկատվում է թվաքանակի նվազում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Աֆրիկայի հյուսիս, Բալկանյան թերակղզի, Փոքր Ասիա, Անդրկովկաս, Իրաք, Իրան, Ռուսաստան, Միջին Ասիա, Աֆղանստան, Չինաստան, Հիմալայներ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Սևանա լճի ավազանում, **Արփի լճում**, Ախորյանի, Կեչուտի, Սպանդարյանի, Ապարանի և Հրազդանի ջրամբարներում, բարձր լեռնային լճակներում, ինչպես նաև Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում: Հանդիպում է նաև Արագած լեռան վրա (3200 մ ծ.մ.թ.), Գեղամա, Վարդենիսի և Սևանի լեռնաշղթաներում:

**Ապրելավայրերը:** Խիստ տարաբնույթ են: Բազմացման ավարտից հետո գերադասում է ջրամբարների առափնյա բուսականությունից զուրկ բաց ջրային տարածքները: Գարնանային և աշնանային չոփ շրջաններում կերակրվում են հացահատիկային ցանքատարածություններում, ինչպես նաև Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում: Զնուանը հանդիպում է գ. Արաքսի հովտում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում են մայիսին, լիճը շրջապատող լեռների լանջերին՝ ծառերի փշակներում, լիված շինությունների պատերի ճեղքերում, աղվեսների և փորսութների գետնափոր բներում, արեստական բներում: Բույնը՝ ոչ մեծ խորշանման փոսիկ, առանց ցամքարի բաղադրիչների: Զվերը 60-67 մմ, 8-12, կարճագույն: Երբեմն նույն բնում բնադրում են մի քանի էգեր, և դրանցում կուտակվում է մինչև 50 օր: Թխումը՝ 27-29 օր: Զվերից դուրս եկած ծագերն ի վիճակի են շատ արագ վազելով հետևել ծնողներին, մինչև ջրամբար հասնելը: Զագերի լրիվ զարգացումը տևում է 2 ամիս: Զագերը հիանալի լողում և սուզվում են, խուսափելով թշնամիներից: Կարմիր բադերը հակում ունեն՝ կովելով, խվելու այլ ծնողների ճտախմբերը և համախմբել դրանք շորջը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Բնադրման շրջանում բնադրող զույգերի թվաքանակը տարբեր տարիներին կազմում է 250-1000 զույգ, ձմռանը՝ 1000-2500 անհատներ: Թվաքանակն ավելանում է գարնանային և հատկապես աշնանային չոփ շրջանում: Անցած դարի 70-ական թվականներին միայն Սևանա լճի ավազանում աշնանային չոփ շրջանում գրանցվել է 3000-6000 անհատներից կազմված երամներով: Ներկայումս կարմիր բադերի թվաքանակը կազմում է 500-1000 առանձնյակ: Վերջին տարիներին դիտվում է թվաքանակի աստիճանական նվազում, ինչպես բնադրման, այնպես էլ չոփ ու ձմռնան շրջաններում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով բնադրավայրերը կորցրել են իրենց նշանակությունը: Բացասականորեն է ազդում Սևանա լճի սաղեցումը ձմռանը: Արփի լճում բնադրման շրջանում վտանգման գործոններից է նաև ձկնորսությունը և որսագործությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում: Ազգային պարկերի սահմանակից համայնքներում և Արաքս գետի գերխոննավ տարածքներին հարող համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է կազմակերպել թվաքանակի հաշվառումներ ողջ տարվա ընթացքում, բացահայտել բնադրման հնարավոր վայրերը և ապահովել դրանց պահպանությունը: Չույն շրջանում և ձմռանն ուժեղացնել պայքարը որսագործության դեմ: Արմաշի ձկնաբուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարևորագույն թոչնարանական տարածք:

**45. Խայտարադ, *Tadorna tadorna* (Linnaeus, 1758)**  
**Կարգ՝ ՍԱԳԱՎՄԱՆՆԵՐ, ANSERIFORMES**

Ընտանիք՝ Քաղեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern»

Կարգավիճակով: Բնության պահպանության

միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Բրիտանական կղզիներ, Սիչերկրածովյան երկրներ, Փոքր Ասիա, Եվրոպա, Ուկրաինա, Ռուսաստան, Ականդինավյան երկրներ, Սիրիա Ասիա, Մոնղոլիա, Չինաստան, Չապոնիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Աշնանային և գարնանային չուի շրջաններում հանդիպում է Սևանա լճի ավազանում, Արփի լճում և Արաքս գետի գերխոննավ տարածքներում:

**Ապրելավայրերը:** Բնադրման շրջանում գերադասում է բաց ջրային տարածքների ափամերձ բարձրունքները, որտեղ և բնադրում են: Չուի շրջանում կերակրվում են առափնյա ծանծաղուտներում և Արարատյան հարթավայրի գերխոննավ տարածքներում: Զինաբուժական լճակներ, լճեր: Սևանա լճի մակարդակն իջնելուց առաջ խայտարարդ բնադրել է լճին մոտ գտնվող բներում և ժայռերի ճեղքերում: Ջրաեզրի հեռացման հետևանքով այժմ չի բնադրում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում են մայիսին, լիճը շրջապատող լեռների լանջերին՝ ծառերի փշակներում, լրված շինությունների պատերի ճեղքերում, աղվեսների և փորսութերի գետնափոր բներում: Բույնը՝ ոչ մեծ խորշանման փոսիկ, առանց ցամքարի բաղադրիչների: Դվերը 64-70 մմ, 9-12, խամրասալիտակ: Երբեմն նոյն բնում բնադրում են մի քանի եզեր, և դրանցում կուտակվում է մինչև 50 ձու: Թխսումը՝ 27-29 օր: Դվերից դորս եկած ծագերն ի վիճակի են շատ արագ վազելով հետևել ծնողներին, մինչև ջրամբար հասնելը: Զագերի լրիվ զարգացումը տևում է 2 ամիս: Զագերը հիանալի լողում և սուզվում են, խուսափելով թշնամիներից: Ինչպես և կարմիր բաղերը, հակում ունեն՝ կովելով, խելու այլ ծնողների ճտախմբերը և համախմբել դրանք իրենց շուրջը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին Սևանա լճում չուի ժամանակ գրանցվել են 2-3 առանձնյակներ: Արարատյան հարթավայրում հաշվառվում է 50-100 խայտարար: Ներկայումս հանրապետությունում չի բնադրում: Զնուանը, ոչ ամեն տարի 10-20 թշունների կարելի է հանդիպել գ. Արաքսի հովտում:

**Վտանգման իմնական գործոնները:** Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով բնադրավայրերը կորցրել են իրենց նշանակությունը: Բացասականորեն է ազդում Սևանա լճի սառեցումը ձնուանը: Վտանգման գործոններից է նաև ձկնորսությունը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 1-ում: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Ազգային պարկի սահմանակից համայնքներում և Արաքս գետի գերխոննավ տարածքներին հարող համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է կազմակերպել թվաքանակի հաշվառումներ ողջ տարվա ընթացքում, բացահայտել բնադրման հնարավոր վայրերը և ապահովել դրանց պահպանությունը: Չուի շրջանում և ձնուանն ուժեղացնել պայքարը որսագողության դեմ: Արմաշի ձկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարևորագույն թշնամրանական տարածք:

46. Լայնակտոր բադ, *Anas clypeata* Linneus, 1758  
Կարգ՝ ՍԱԳԱՎԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բադեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Կլոր տարի՝ չվահյուր: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս, Աֆրիկայում, Փոքր Ասիայում, Անդրկովկասում, Միջին Ասիայում, Մոնղոլիայում, Հյուսիսային Ամերիկայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Աշնանային և գարնանային չոփ շրջաններում հանդիպում է Սևանա լճի ավազանում, Արփի լճում և Արաքս գետի գերխոնավ տարածքներում:

**Ապրելավայրերը:** Մինչև Սևանա լճի մակարդակի հջեցումը, բնադրում էր միայն Սևանա լճի ավազանում: Չոփ շրջանում հանդիպում է Սևանա լճի ավազանում, Արփի լճում, Ախուրյանի, Ապարանի, Սպանդարյանի ջրավազաններում: Գերադասում են բաց ջրային մակերեսով և հարուստ ջրային առավելյան բուսականությամբ ջրամբարները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են գետնի վրա, բաց ջրից ոչ հեռու, բիուտային բույսերի տակ: Չվերը 48-58 մմ, 7-11, խամրասալտավ: Թիստում՝ 22-23: Չվերից դուրս եկած ձագերը հիանալի լողում և սուզվում են:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտունները:** Գարնանային և աշնանային չոփ շրջաններում հանդիպում են առավելապես Արաքսի հովտի բնական և արհեստական ջրամբարներում, Սևանա լճի ավազանում՝ առավել քիչ՝ 10-15- անհատներ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Սևանա լճի ավազանում բնադրավայրերի բացակայությունը: Արաքսի հովտում՝ անհանգստացման գործոնը: Վտանգման գործոններից է նաև ձկնորսությունը և որսագորությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Սևանա լճի մակարդակի բարձրացման դեպքում, հավանաբար, բնադրավայրերը կվերականգնվեն:

**Անհրաժեշտ է կազմակերպել թվաքանակի հաշվառումներ ողջ տարվա ընթացքում, բացահայտել բնադրման հնարավոր վայրերը և ապահովել դրանց պահպանությունը: Չոփ շրջանում և ձմռանն ուժեղացնել պայքարը որսագորության դեմ: Արմաշի ձկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարեռագույն թոշնարանական տարածք:**

47. Մարմարյա մրտիմն, *Marmaronetta angustirostris* Menetries, 1832  
Կարգ՝ ՍԱԳԱՎՍԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բադեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Անհետացող տեսակ է: Հազվագյուտ, քիչ տարածված, բնադրող, շփող: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2cd+3cd+4cd» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Լուսնզգված»՝ EN D:

**Տարածվածությունը:** Տարածված է Միջերկրածովյան երկներում, Հնդկաստանում, Վլագայի դելտայում, Կասպից ծովի հարավում, Անդրկովկասում, Միջագետքում, Փոքր Ասիայում, Աֆրիկայի հյուսիսում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում և հատկապես Արմաշի ձկնարուծական տնտեսության լճակներում:

**Սպորտավայրերը:** Խիտ եղեգնով պատված առափնյա ջրային բուսականությամբ լճակները և ճահճուտները, ինչպես նաև ցամաքող աղուտ լճակների առափնյա տարածքները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները կառուցում են լճակների և կղզյակների առափնյա չոր վայրերում, թփուտների ու խոտարույսերի տակ: Բույնը փոսիկան, ցամքարը՝ փետուրներով ծածկված չոր խոտարույսերից: Ձվերը՝ 7-14, գորշ սպիտակ, 42-50 մմ: Թխառում՝ 25-27 օր: Ձվերից դուրս եկած ձագերը խնամվում են մոր կողմից:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Արմաշի ձկնարուծական տնտեսության լճակներում և հարակից գերխոնավ տարածքներում վերջին տարիներին հաղիպում են 5-30 բնադրող գույզեր: Խախկինում գարնանային չոր ժամանակ առանձին առանձնյակներ հանդիպում են և Սևանա լին ավազանում: Ներկայումս չոր շրջաններում 30-50 առանձնյակներ հանդիպում են միայն գ. Արարսի հովտում:


**Վտանգման հիմնական գործոնները:** Եղեգնուտների հրդեհում, ինչպես նաև բնադրման շրջանում անհանգուտացման գործոնը ու որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեննի Կոնվենցիայի Հավելված 2-ում: Ձկնարուծական տնտեսությունում, որը դրանց հիմնական բնադրավայրն է, ինչպես նաև դրան հարող համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և աշխատակիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

**Անհրաժեշտ է Արմաշի ձկնարուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարևորագույն բռնաբանական տարածք:** Տարվա բոլոր շրջաններում կազմակերպել բվաբանակի հաշվառում, ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:

48. Սպիտակավոր սուզաբաղ, *Aythya nyroca* (Gmelin, 1770)  
Կարգ՝ ՍԱԳԱՎԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բադեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Նստակյաց, քիչ  
տարածված տեսակ է: Տեսակն ընդգրկված է  
ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության  
պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես  
«Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Տարածված է Եվրոպայում, Միջերկրածովյան երկրներում,  
Ռուսաստանում, Ուկրաինայում, Փոքր Ասիայում, Միջին Ասիայում, Անդրկովկասում, Իրանում,  
Հյուսիսային Աֆրիկայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սահմանափակ քանակությամբ չուփ շրջանում  
հանդիպում է Սևանա լճի ավազանում, ինչպես նաև Արարատյան հարթավայրի արհեստական  
ձկնաբուծական լճակներում և գերխոնավ տարածքներում և Ստեփանավանի լճակներում:

**Ապրելավայրերը:** Նախընտրում է առափնյա եղեգնուտներով պատված և հարուստ ջրային  
բուսականությամբ ջրավազանները: Սինչև Սևանա լճի մակարդակի իջնելը բնադրավայրերը  
գտնվում էին Գիլի լճում: Ներկայումս բնադրում է Արարատյան հարթավայրի արհեստական և  
բնական լճակներում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են առափնյա  
եղեգնուտներով պատված և հարուստ ջրային բուսականությամբ ջրավազանների ափերին,  
առափնյա բույսերի բնակչությամբ, երբեմն՝ նաև ջրի վրա: Բնում՝ 6-14 ձու, բաց դեղնավուն, 45-52 մմ:  
Ժիսումը՝ 25-27 օր: Զվից դուրս եկած ձագերը, սովորաբար, կերակրվում են առափնյա  
եղեգնուտին մոտ և վտանգի դեպքում անմիջապես թաքնվում են եղեգնուտի մեջ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Բնադրման շրջանում պարբերաբար  
հաշվառվում են 5-30 բնադրող զույգեր: Չուփ շրջաններում հանդիպում են 50-150  
առանձնյակներից կազմված խմբերով: Միշտ եղել է սակավաթիվ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Բնադրավայրերի բացակայությունը: Արարատյան  
հարթավայրի արհեստական և բնական լճակներում անհանգստացման գործոնը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Սևանա լճի  
մակարդակի բարձրացման դեպքում հնարավոր է վերականգնել բնադրավայրերը: Արմաշի  
ձկնաբուծական տնտեսությունում, որը դրանց հիմնական բնադրավայրն է, ինչպես նաև դրան  
հարող հարևան համայնքներում կազմակերպվում են հանդիպումներ բնակչության և  
աշխատակիցների հետ՝ բնապահպանական իրազեկության բարձրացման նպատակով:

Անհրաժեշտ է տարվա բոլոր շրջաններում կազմակերպել թվաքանակի հաշվառում:  
Բացահայտել հիմնական բնադրավայրերը և ապահովել դրանց պահպանությունը: Արմաշի  
ձկնաբուծական տնտեսության ողջ տարածքը հայտարարել որպես կարևորագույն  
թռչնաբանական տարածք և ուժեղացնել պայքարը որսագողության դեմ չուփ շրջանում և ձմռանը:

49. Ծվկան սագ, *Anser erythropus* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ՍԱԳԱՎԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Բադեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Ծվող, բնադրող, ձմեռող, քիչ տարածված, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2bcd+3bcd+4bcd» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU A2bcd+3bcd+4bcd:

**Տարածվածությունը:** Տարածված է Եվրոպայի տունդրայի գոտում՝ Ականդինավյան երկրներից մինչև Չուկոտկա: Զմեռում է Եվրոպայում, առավել հաճախ՝ Բալկանյան թերակղզում, Փոքր Ասիայում, Իրանում, Չինաստանի հարավում, Կորեայում, Շապոնիայում և Անդրկովկասում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է գարնանային և աշնանային չորի ժամանակ Աւանսա լճում և Արաքսի հովտում: Զնոանը՝ Արաքսի հովտում, սակայն ոչ ամեն տարի:

**Ապրելավայրերը:** Բնադրման շրջանում հանդիպում է ոչ միայն տունդրայում, այլև լեռնային լճերում, լեռնային գետերի ստորին մասերում, զատիքափ լեռնային լանջերին: Զնոանը գերադասում է կերով հարուստ, լայն տեսադաշտով տարածքները, դաշտերը, տափաստանները և ջրավազանների ափերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրման համար գերադասում են խոտարույսերով և թփուտներով պատված վայրերը, ժայռուտները: Բնի ցամքարը՝ առատորեն լցված աղվախետութներով ծածկված չոր խոտարույսերից: Զվերը՝ 4-8, սպիտակադեղնավուն, 69-87 մմ: Թխումը՝ 26-28 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Միշտ եղել է սակավաբիզ: Չույն և ձմեռման ընթացքում՝ 5-10 առանձնյակ սագերի խմբում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Աւանսա լճի ավագանում և Արաքսի հովտում անհանգստացման գործոնը ու որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում: Պահպանվում է «Աւանս» ազգային պարկում:

Անհրաժեշտ է ձմեռնան և չորի շրջաններում կազմակերպել թվաքանակի հաշվառում և ապահովել դրանց պահպանումը: Ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:

50. Սպիտակաճակատ սազ, *Anser albifrons* (Scopoli, 1769)  
Կարգ՝ ՍԱԳԱՎԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Քաղեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Չվող, բնադրող, ձմեռող, քիչ տարածված, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խողելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Տարածված է Սառուցյալ օվկիանոսի կղզիներում, ափերի տունդրայում՝ Սպիտակ ծովից մինչև Չուկոտկա, Հյուսիսային Ամերիկայի տունդրայում, Գրենլանդիայում և Իսլանդիայում: Ձմեռում է Եվրոպայում, Արաբյան և Հնդկաստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է գարնանային և աշնանային չոր ընթացքում Սևանա և Արփի լճերում, ինչպես նաև Արաքսի հովտում: Զմռանը՝ Արաքսի հովտում, սակայն ոչ ամեն տարի:

**Ապրելավայրերը:** Բնադրման շրջանում նախընտրում է թփուտային տունդրայի գետերով և լճերով հարուստ վայրերը, ձմռանը՝ դաշտերը, տափաստանները և ջրավազանների ափերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրման համար գերադասում են խոտարույսերով պատված թմբիկները, որոշ դեպքերում՝ հողի և ավազի վրա: Բնի փոսիկը պատում են նախորդ տարվա չորացած խոտարույսերով, որի վրա առատորեն փոռում են աղվագինությունները: Զվերը՝ 3-7, սպիտակավուն, 70-81 մմ: Թխառում՝ 26-28 օր: Զվերից դուրս եկած ձագերն ակտիվ ձևով խնամքում են ծնողների կողմից:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Միշտ եղել է սակավաթիվ: Չոր և ձմեռման ընթացքում՝ 10-20 անհատ, սագերի խմբում:

**Վտանգման իիմնական գործոնները:** Սևանա լճի ավազանում և Արաքսի հովտում անհանգույացման գործոնը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

Անհրաժեշտ է ձմեռման և չոր շրջաններում կազմակերպել թվաքանակի հաշվառում և ապահովել դրանց պահպանումը: Ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:

51. Տուրպան, *Melanitta fusca* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ՍԱԳԱՆՍԱՆՆԵՐ, *ANSERIFORMES*

Ընտանիք՝ Քաղեր, *Anatidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ անհետացող տեսակ է, որոշ տեղերում՝ չվահյուր: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Տարածված է Ականդինավյան թերակղզում, Ասիայի հյուսիսարևմուտքում, Անդրկովկասում, Փոքր Ասիայում, Ռուսաստանում, Ուկրաինայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է միայն Սևանա լճի ավագանում՝ գարնանային և աշնանային շրջաններում:

**Ապրելավայրերը:** Բնադրման շրջանում հանդիպում են առավելագույն գաղթափառ ափերով ջրամբարներում: Բնադրման ավարտից հետո և ձմռանը հանգստանում են ջրամբարների խորօրյա մասերում: Կերակրվում են առավելագույն ծանծաղութերում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են ինչպես ափամերձ, խոտածածկ վայրերում՝ անմիջապես հողի վրա, թփուտների տակ, այնպես էլ քարակույտների տակ և ափամերձ ժայռերում: Դնում են 6-10 կարնագոյն ձու, 64-70 մմ: Թխումը 28-30 օր: Ինչպես և կարմիր բաղերը, հակում ունեն այլ ծնողներից խելու նրանց ճտախումբը և համախմբելու իրենց շուրջը: Զագերը զարգանում են բավականին դանդաղ և քոչել սկսում են սեպտեմբերի կեսերից ոչ շուտ: Սեռահասուն են դառնում կյանքի 2-րդ տարում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Մինչև Սևանա լճի մակարդակի իջեցումը համարվում էր սովորական, նստակյաց տեսակ: Ներկայումս չեն բնադրում: Չույն շրջանում հանդիպում են 3-5 առանձնյակներից ոչ ավել:


**Վտանգման հիմնական գործնները:** Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով բնադրավայրերը կորցրել են իրենց նշանակությունը: Բացասականորեն է ազդում նաև Սևանա լճի սառեցումը ձնուանը և գրեթե շուրջօրյա ձկնորսությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Սևանա լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց, հավանաբար, կվերականգնվեն նախկին բնադրավայրերը:

Անհրաժեշտ է հաշվառումներ կատարել տարվա բոլոր եղանակներին, բացահայտել բնադրման հնարավոր վայրերը և ապահովել դրանց պահպանությունը:

52. Կարմիր ցին, *Milvus milvus* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԲԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ անհետացող տեսակ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գործում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a; D:

**Տարածվածությունը:** Արևմտյան Եվրոպա, Թուրքիա, Իրան Հյուսիսային Աֆրիկա, Ուստաստան, Բելառուս, Ռուսաստան, Մոլդովա, Կովկաս (բացի Վրաստանից):

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանի սահմաններուն բնադրման դեպքեր հավաստիրեն հայտնաբերված չեն: Հավանաբար, բնադրում է հանրապետության հյուսիսարևելյան մասում՝ Ղարաբաղի բարձրավանդակի մնացորդային անտառներում: Կարմիր ցինի մեկ առանձնյակ բռնվել է չորս ժամանակ ք. Երևանի շրջակայքում 1949 թ.-ի մայիսի 11-ին:

**Ապրելավայրերը:** Առավելապես, սաղարթավոր կամ խառն անտառներ, որոնց հերթափոխում են լայն բաց տարածությունները, սովորաբար, 900-1500 մ ծ.մ.բ. բարձրություններում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները գրադեցնելու խիստ օրինաչափություն չի դիտվում, սակայն երբեմն գրադեցնում են նույն բույնը մի քանի տարի շարունակ: Բները, սովորաբար, տեղադրվում են ծառերի վրա: Բազմացման շրջանը սկսվում է ապրիլի վերջից մինչև հուլիսի վերջը :

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանում ընդհանուր թվաքանակը հայտնի չէ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Մշտապես եղել է հազվագյուտ:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆառնայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտրի կոնվենցիա»-յի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է բացահայտել և խստորեն պահպանել կարմիր ցինի բնադրավայրերը Հայաստանի սահմաններում:

**53. Սպիտակապոչ արծիվ, *Haliaeetus albicilla* Linnaeus, 1758**  
**Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, FALCONIFORMES**

**Ընտանիք՝ ճուռակներ, Accipitridae**



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ անհետացող, հազվագյուտ ձմեռող և չվահյուր տեսակ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կտանօվված»՝ EN B1a; D:

**Տարածվածությունը:** Տարածման արեալն ունի բծային բնույթ: Հանդիպում է Ռուսաստանում, Գրենլանդիայում, Հյուսիսային, Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայում, Բալկաններում, Փոքր Ասիայում, Իրանում, Հյուսիս-Արևելյան Չինաստանում, Կորեայում: Զննություն է Կասպից և Սև ծովերում, Միջին Ասիայի խոշոր ջրավազաններում, Հեռավոր Արևելքի հարավում, Հարավային Ասիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Գրանցված է Սևանա լճի ավազանի շրջաններում, ք. Երևանի շրջակայրում, ինչպես նաև Սյունիքի մարզում՝ Որոտան գետի հովտում: Նախկինում սպիտակապոչ արծիվը բնադրել է Հայաստանում, սակայն վերջին տարիներին նկատվել է միայն ձմռանը և չուի ժամանակ:

**Ապրելավայրերը:** Բնադրավայրերը հայտնաբերվել են Սևանա լճի ավազանում՝ նախկին Գիլի լճի շրջակայրի ժայռերում, ինչպես նաև Սյունիքի մարզում՝ Որոտան գետի հովտում: Բնադրավայրերը զգալիորեն քայլավել են՝ կապված Գիլի լճի շրջացման և գ. Որոտանի շրերի աղտոտման հետ, որը հանգեցրել է կերային պաշարների կտրուկ կրծատմանը և սպիտակապոչ արծիվի բների ոչնչացմանը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները սովորաբար տեղադրվում են ծառերի գագաթներին, ավելի հազվադեպ՝ ժայռերի վրա, որպես կանոն, ձկներով հարուստ ջրավազաններին մոտ: Բնադրումը մարտի առաջին կեսին, բնում՝ 1-3 ծու: Թիսմանը մասնակցում են ինչպես էգը, այնպես էլ արուն: Թիստումը տևում է մոտ մեկ ամիս: Զագերը դուրս են գալիս ապրիլին: Թոշող, երիտասարդ բռչուններ նկատվում են հունիսի երկրորդ կեսին-հուլիսի սկզբին: Սնվում են տարրեր տեսակների ձկներով, ջրածահճային բռչուններով, մանր և միջին չափերի կաթնատններով, ինչպես նաև լեշով և մսի մնացորդներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ենթադրվում է, որ թվաքանակը կազմում է մի քանի ձմեռող, սակայն չբնադրող գույզեր: Նախկին ԽՍՀՄ տարրեր կենդանաբանական այգիներում, համաձայն 1976 թ-ի տվյալների պահվել է 23 թռչուն:

**Վտանգման իմնական գործնները:** Ապրելավայրերի քայլայրումը և ջրամբարների աղտոտումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆաունայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտության կոնվենցիա»-յի Հավելված 1-ում:

Անհրաժեշտ է հանրապետության սահմաններում կատարել սպիտակապոչ արձվի թվաքանակի հաշվառումներ: Կազմակերպել բնակչության էկոլոգիական կրթության դասընթացներ՝ պրոպագանիզելով տեսակի պահպանման անհրաժեշտությունը:

54. Գառնանգղ (Մորուքավոր անգղ), *Gypaetus barbatus* Linnaeus, 1758  
Կարգ՝ ԲԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Հնտամիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Սակավարիվ, վտանգված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ և Ռուսաստանի Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական նասը կենտրոնացած է Հարավ-Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Մոտ Արևելքի, Փոքր և Միջին Ասիայի լեռներում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում տարածված է համարյա ամրող տարածքում, բացի հանրապետության արևմուտքից և հյուսիս-արևմուտքից:

**Ասպեկտային բնույթը:** Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խոր ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ.ր. բարձրություններում: Բնադրավայրերը համարյա չեն փոփոխվել, սակայն կերային բազան նկատելիորեն վատքարացել են՝ կապված վայրի սմբակավորների թվաքանակի կրծատման հետ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բները գրադեցնելու խիստ օրինաչափորուն չի դիտվում, սակայն երբեմն զրադեցնում են նույն բույնը մի քանի տարի շարունակ: Բները, սովորաբար, տեղադրում են ժայռերի եզրերին կամ ժայռային խորշերում, որտեղ ցերեկային արևի ճառագայթները չեն հասնում: Զվարդման շրջանը տատանվում է լայն սահմաններում, հավանաբար՝ հունվարի սկզբից մինչև մարտի կեսերը: Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: Զագերը դուրս են զայս փետրվարի երկրորդ կեսին: Կերը հայրհայրում է ինչպես բաց լանջաֆտներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշոր եղջերավոր կենդանիների և միջին չափերի կրծողների ու գիշատիչների դիակներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ենթադրվում է, որ թվաքանակը կազմում է 8-10 քնադրող գույգեր: Պահպում է Երևանի կենդանաբանական այգում՝ 4 առանձնյակ, և Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում՝ 27 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Գառնանգղի թվաքանակի վրա կարող են ազդել բունաքիմիկաների օգտագործումը զյուղատնտեսական և անտառային տնտեսություններում վնասատուների դեմ պայքարի նապատակով, ապօրինի որսը և սպանելը, թակարդներով բռնելը և թունավորումը թակարդներում դրված կերով, ինչպես նաև կերային ռեսուրսների կրծատումը:

**Պահպանության միջոցառումները:** Անկ զույգը բնադրում է «Խոսրովի անտառ» արգելոցում, երկու մյուս զույգերի կերային տարածքները գտնվում են «Շիկահող» արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկում: Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆառնայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտիքի կոնվենցիա»-ի Հավելված 2-ում, Բնոնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է ուժեղացնել ապօրինի որսի և գառնանգդին սպանելու վերահսկողությունը, ինչպես նաև վերանայել զյուղատնտեսությունում բունաքիմիկատների օգտագործումը՝ իրականացնելով այն էկոլոգիապես ավելի անվտանգ մեթոդներով։ ՈՒժեղացնել վերահսկողությունը գիշատիչ բռչունների խրտվիլակների պատրաստման և վաճառքի նկատմամբ։ Մշակել տարսողերմիստների սերտիֆիկացման և նրանց մոտ բերվող գիշատիչ բռչունների դիակները քննելու համակարգ։ Խիստ անհրաժեշտ է կազմակերպել բնակչության էկոլոգիական կրթության դասընթացներ։

**55. Գիշանգ, *Neophron percnopterus* Linnaeus, 1758  
Կարգ՝ ԲԱԶԵՆԱՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES***

## Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Սակավաբիզ, վտանգված տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered A2bcde+3bcde+4bcde» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN A2bcde+3bcde+4bcde:

**Տարածվածություն:** Ենթատեսակը տարածված է Հարավյային Եվրոպայից և Աֆրիկայից, դեպի արևելք՝ մինչև Տյան Շան և Պակիստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքում:

**Ապրելավայրերը:** Բնադրում է առավելագես բարձր լինեների ժայռոտ տեղամասերում, գերազանց խոր ժայռոտ կիրճերո, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ. բարձրություններում:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: Կերը հայրհայրում է ինչպես բաց լանջափուներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշոր եղջերավոր կենդանիների և գիշատիչների դիակներով՝ հաճախ հավաքելով դրանք ճանապարհների վրա:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ենթադրվում է, որ թվաքանակը կազմում է 40-60 բնադրող զույգեր: Պահպում է Երևանի Կենտրոնաբանական այգում՝ 8 առանձնյակ, և Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում՝ 73 առանձնյակ:

**Վասանգման հիմնական գործուները:** Դիշանգի թվաքանակի փրա կարող են ազդել թունարիմիկատների օգտագործումը գյուղատնտեսական և անտառային տնտեսություններում վնասատուների դեմ պայքարի նպատակով, ապօրինի որսը և սպանելը, բակարդներով բռնելը և թունավորումը թակարդներում դրված կերով, ինչպես նաև կերային ռեսուրսների կրծատումը:

**Պահպանության միջցառումները:** 10 գույքերը բնադրում են «Խոսրովի անտա» և «Ծիկահող» արգելոցներում, «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերում: Գրանցված է «Անետացման վտանգի տակ գտնվող ֆաունայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտրի կոնվենցիա»-ի Հավելված 2-ում, Բերնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է ուժեղացնել ապօրինի որսի և գառնանգդին սպանելու վերահսկողությունը, ինչպես նաև վերանայել զյուղատնտեսությունում բունաքիմիկատների օգտագործումը՝ իրականացնելով այն էկոլոգիապես ավելի անվտանգ մեթոդներով։ Ուժեղացնել վերահսկողությունը գիշատիչ թռչունների խրսվիլակների պատրաստման և վաճառքի նկատմամբ։ Մշակել տաքսոդերմիստների սերտիֆիկացման և նրանց մոտ բերվող գիշատիչ թռչունների դիակները քննելու համակարգ։ Խիստ անհրաժեշտ է կազմակերպել բնակչության էկոլոգիական կրթության դասընթացներ։

56. Սպիտակագլուխ անգղ, *Gyps fulvus* (Hablizl, 1783)  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Սակավարիվ, վտանգված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ու Ռուսաստանի Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄԿ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով գնահատվում է որպես «խողելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական մասը տարածված է Հյուսիսային Աֆրիկայից՝ Հարավային և Հարավ-Արևելյան Եվրոպայով դեպի հարավ՝ մինչև Սինայ և Հյուսիս-Արևելյան Պակիստան, Կենտրոնական Ասիա, Տաջիկստան և Ալբայ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքով, բացի հանրապետության հյուսիս-արևելյան տրիբյուտից:

**Ապրելավայրերը:** Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ. բարձրություններում:

**Կենսաբնաւորյան առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: 2007 թ-ին Երևանի Կենդանաբանական այգում գրանցվել է 3 զույգերի բազմացումը, որոնցից ստացվել են երկու ձագեր: Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում գրանցվել է 9 զույգերի բազմացումը, որոնցից ստացվել են երկու ձագեր: Կերը հայրհայրում է ինչպես բաց լանջաթուներում (ինոնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երեմն սնվում է խոշոր եղջերավոր կենդանիների և այլ խոշոր կենդանիների դիակներով:

**Թվաքանակը և որա փոփոխման միտումները:** Ենթադրվում է, որ թվաքանակը կազմում է 35-40 քանարյող զույգեր: Պահպում է Երևանի Կենդանաբանական այգում՝ 15 առանձնյակ, և Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում՝ 110 առանձնյակ:

**Վտանգաման հիմնական գործոնները:** Սպիտակագլուխ անգղի թվաքանակի վրա կարող են ազդել թունաքիմիկատների օգտագործումը գյուղատնտեսական և անտառային տնտեսություններում վնասատուների դեմ պայքարի նպատակով, ապօրինի որսը և սպանելը, թակարդներով բռնելը և բունավորումը թակարդներում դրված կերով, ինչպես նաև կերային ռեսուրսների կրծատումը:

**Պահպանության միջոցառումները:** Առնվազն 5 զույգերը բնադրում են «Խորովի անտառ» արգելոցում: Մյուս զույգերի կերային տարածները գտնվում են «Չիկահող» արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկում: Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆառնայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտության կոնվենցիա»-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է ուժեղացնել ապօրինի որսի և գառնանգդին սպանելու վերահսկողությունը, ինչպես նաև վերանայել զյուղատնտեսությունում բունաքիմիկատների օգտագործումը՝ իրականացնելով այն էկոլոգիապես ավելի անվտանգ մեթոդներով։ ՈՒժեղացնել վերահսկողությունը գիշատիչ բռչունների խրտվիլակների պատրաստման և վաճառքի նկատմամբ։ Մշակել տարսողերմիստների սերտիֆիկացման և նրանց մոտ բերվող գիշատիչ բռչունների դիակները քննելու համակարգ։ Խիստ անհրաժեշտ է կազմակերպել բնակչության էկոլոգիական կրթության դասընթացներ։

57. Անգղիմակ, *Aegipus monachus* (Linnaeus, 1766)  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Հնտաճիր՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, նկատելիորեն կրծատվող թվաքանակով տեսակ: Տեսակն ընդգրկված է ԲՊՄԾ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վստանված»՝ EN D:

**Տարածվածությունը:** Տարածված է հարավային Եվրոպայում, Կովկասում, Միջին և Կենտրոնական Ասիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նկատվել է համբավետության տարբեր շրջաններում: Բները հայտնաբերվել են Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ճյուղերում Արովյանի, Արարատի, Արտաշատի, Ազիզքեկովի և Եղեգնաձորի շրջաններում: Դասվում է Հայաստանի նստակյաց, բնադրող թշունների բվին:

**Սպարելավայրերը:** Լեռնաշղթաների համեմատարար փոքր թեքություն ունեցող լանջերը լեռնատափաստանների տեղամասերով հերթափոխվող գիհու արիդային նոսրանտառների սահմաններում, սովորաբար, 1200-2000 մ ծ.մ. բարձրություններում: Բնադրավայրերը գգալիորեն քայլայվել են՝ կապված որպես արոտավայր տեղանքի ինտենսիվ օգտագործման հետ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բույնը, սովորաբար, տեղադրվում է ծառերի վրա, ավելի հազվադեպ՝ ժայռերի կամ անմիջապես հողի վրա, բլուրների լանջերին: Զվարդնան շրջանը տատանվում է լայն սահմաններում, հավանաբար՝ փետրվարի երկրորդ կեսից մինչև ապրիլի վերջը: Հայաստանում հայտնաբերված բներում սովորաբար եղել է մեկ ծու, որն էզը և արուն հաջորդաբար թիսում են 55 օրվա ընթացքում: Կան տվյալներ, որ կարող են դնել նաև երկու ծու: Զագերը դուրս են գալիս ապրիլի երկրորդ կեսին, ամենաուշ դուրս գալու ժամկետը՝ հունիսի առաջին կերպ: Թոշող, երիտասարդ թշուններ նկատվում են հուլիսի երկրորդ կեսից մինչև սեպտեմբերի վերջը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հավանաբար, չի գերազանցում 50 բնադրող զույգերի:

**Վտանգման իիմնական գործոնները:** Հավանաբար, կերային բազայի վատթարացումը՝ կապված վայրի սմբակավորների թվաքանակի կրծատման հետ, ինչպես նաև ապօրինի որպ և թակարդներով բռնելը:

**Պահպանության միջոցա ռումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում, որտեղ կանոնավոր բնադրում է:

Անհրաժեշտ է համբավետության սահմաններում, այդ բվում «Խոսրովի անտառ» արգելոցում բացահայտել և խստորեն պահպանել տեղադրված սև անգղի բնադրավայրերը:

58. Օճակեր արծիվ, *Circaetus gallicus* (J. F. Gmelin, 1788)  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Հնտամիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Սակավաթիվ, մասնաւուած արեալով տեսակ է, կրճատվող թվաքանակով: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացված է Հյուսիսային Աֆրիկայում, Եվրոպայում, Կովկասում, Փոքր Ասիայում, Արևմտյան Սիրիում, և, հավանաբար, Իրանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է ամենուրեք, բացառությամբ արևմտյան անտառազուրկ շրջաններից:

**Սպերելավայրերը:** Բնադրում է անտառային շրջաններում (ինչպես խառն, այնպես էլ զիհու նորանտառներում): Որպես կատարում է, սովորաբար, բաց տարածքներում:

**Կենարանության առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում է մեկ անգամ, ձվակույտում՝ 1 ձու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախնական տվյալներով, Հայաստանում հաշվառվում են 10-30 քնադրող գույզեր: 2008 թ-ի տվյալներով Եվրասիական տարածաշրջանային ասցիացիայի կենդանաբանական այգիներում պահվում է 4 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Օճակեր արծիվի թվաքանակի վրա ազդող բացասական գործոններից է սողունների անվերահսկելի որպես, բնադրման համար հարմար տարածքների յուրացումը, անտառի և բունաքիմիկատների օգտագործումը գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի ընթացքում, բռչունների ապօրինի որպես: Զվարդման ժամանակ օճակեր արծիվն մեծ վնաս են հասցնում վայրի բույսեր հավաքողները և գրոսաշրջիկները: Վերջին տարիներին մեծացել է ձվերի և ծագերի ապօրինի հավաքը որսագորերի կողմից:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խորովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, «Դիլիջան» ազգային պարկում: Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Հաշվի առնելով պոպուլյացիայի համեմատաբար փոքր թվաքանակը և սպառնացող վտանգների առատությունը, խիստ անհրաժեշտ է կազմակերպել մի շարք միջոցառումներ՝ ուղղված բնադրավայրերի անմիջական պահպանմանը: Օճակեր արծիվի հայտնի և հարմար բնադրավայրերը նպատակահարմար է պահպանել՝ կազմակերպելով արգելավայրեր կամ ժամանակավոր հանգստի գոտիներ բնակեցված բների շուրջը: Դրական արդյունքներ կարող են տալ նաև հատուկ միջոցառումները, օրինակ՝ բացատրական աշխատանքը բնակչության շրջանում՝ ուղղված սողունների զանգվածային ոչնչացման դեմ: Խստացնել անտառային էկոհամակարգերում և գյուղատնտեսության մեջ քունաքիմիկատների օգտագործման

վերահսկողությունը: Ավելացնել օձակեր արծվի ապօրինի որսի, ձագեր հավաքելու և բները քանդելու համար տուգանքի չափը:

59. Տափաստանային մկնաճուռակ, *Circus macrourus* (S. G. Gmelin, 1771)  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ Ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, նկատելիորեն կրծատվող թվաքանակով տեսակ է: Ողջ տարվա ընթացքում չվահյուր: Տևակն ընդգրկված է ԲՊԱՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab(iii)+2ab(iii); D:

**Տարածվածությունը:** Հարավ Արևելյան Եվրոպա, Հյուսիսային Ղազախստան և Հարավ Արևմտյան Միջին:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նկատվել է Արովյանի, Արտաշատի, Սևանի և այլ շրջաններում, առավելապես, կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում: Տափաստանային մկնաճուռակը դասվում է Հայաստանի բնադրող չվող տեսակների թվին:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստաններ, լայնարձակ հարթավայրային հովիտներ, սովորաբար, 800-2000 մ ծ.մ. բարձրություններում: Չորս ընթացքում՝ տարածված:

Ապրելավայրերը զգալիորեն քայլայվել են՝ կապված զյուղատնտեսական կարիքների համար դրանց օգտագործման հետ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բները ընում են ուղղակի հողի վրա, սովորաբար խիտ խոտարույսերում ապրիլի երկրորդ կեսին-մայիսի սկզբին: Զարգացումը՝ 30 օր: Զագերը դուրս են զալիս հունիսի առաջին կեսին: Խոշող, երիտասարդ բոչուններ հանդիպում են հովիսի կեսերից: Սնվում են հիմնականում մկանանման կրծողներով և մանր բոչունների ձագերով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանում ընդհանուր թվաքանակը հայտնի չէ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Ապրելավայրերի զգալի քայլայումը՝ կապված կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում հողերի ինտենսիվ յուրացման հետ, բների ոչնչացումն ապրելավայրերում անառունների արածեցման հետևանքով:

**Պահպանային միջոցառումները:** Պահպանվում է «Աևան» ազգային պարկում:  
Անհրաժեշտ է լայնորեն պրոպագանիկ տափաստանային մկնաճուռակի պահպանման անհրաժեշտությունը:

60. Մարգագետնային մկնածուտակ, *Circus pygargus* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ՔԱԶԵՄՆԱՍՏՆԵՐ, *FALCONIFORMES*

## Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Սակավարիվ, խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածություն:** Պոպուլյացիայի հիմնական մասը բնակեցնում է Արևելյան Եվրոպայից մինչև Արևմտյան Սիրիի տարածքը, հայտնի են հանդիպման առանձին օջախներ Արևմտյան Եվրոպայում և Կովկասում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում բնադրում է միայն ծայր հյուսիսարևմտուրում, չունի ժամանակ հանդիպում է հանրապետության համարյա ամբողջ տարածքում: Հայկական պոպուլյացիայի հիմնական մասը բնադրում է «Արփի լիճ» ազգային պարկում:

**Ապրելավայրերը:**Գերադասում է լեռնամարգագետնային բիոտոպերը:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բնադրում է հողի վրա: Տարեկան ձվադրում է մեկ անգամ, ձվակույտում՝ 2-6, սովորաբար, 3-5 ձու: Կերպ հայթիայրում է բաց տիպի լանջաֆուներում: Սննդում է առավելասպես մանր կաթնասուններով, մանր բոշուններով, երկկենցաղներով, սողուններով և միջատներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Նախնական գնահատմամբ հանրապետությունում այն կազմում է 5-10 քնարող զույգեր: 2008 թ-ի տվյալներով, Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում պահպում է 7 առանձնյակ:


**Վատանգման իհմնական գործուները:** Մարզագետնային մկնաճուռակի թվաքանակի վրա բացասարար է ազդում առանց Էկոլոգիական պայմանները հաշվի առնելու հողային ռեսուրսների օգտագործումը, գյուղատնտեսական վճարատունների դեմ պայքարում բունաքիմիկատների օգնուագործումը, ապօրինի որսը կամ սպանելը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկում:

Անհրաժեշտ է վերանայել հողային ռեսուրսների կառավարման և էկոլոգիական փորձաքննության, ինչպես նաև օյլուտանուեական վճասատուների դեմ պայքարի քաղաքականությունը: ՈՒժեղացնել վերահսկողությունը գիշատիչ թռչունների խրտվիլակների պատրաստման և վաճառքի նկատմամբ: Մշակել տաքսոդերմիսատների սերտիֆիկացման և նրանց մոտ բերվող գիշատիչ թռչունների դիմակները քննելու համակարգ: Կազմակերպել բնակչության էկոլոգիական կրթության դասընթացներ:

61. Եվրոպական ճնճղաճուռակ, *Accipiter brevipes* (Severtzov, 1850)  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆԱՍՍՆԵՐ, *FALCONIFORMES*

## Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Ջիշ ուսումնասիրված, բնադրող չլիոյ, քիչ տարածված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՊՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածքյունը:** Պոպուլյացիայի հիմնական նասր տեղադրվում է Հարավ-Արևելյան Եվրոպայում, բնակվում է նաև Կովկասում և Անդամակցություն Արևելյան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հարավային և հյուսիս-արևելյան շրջաններում:

**Ապրելավայրերը:**Գերադասում է անտառաները, պտղատ այգիները, զետանորերը, պուրակները 600-1200 մ ծ.մ. բարձրություններում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Սնունդը հայրհայքում է կիսաանապատներում և այգիներում: Սնվում է մողեսներով, ուղղաթևավորներով, մաճը թշուններով: Բնապրում է չորային շրջաններում գտնվող գետերի ափերին և այգիներում: Տարեկան ձվադրում են մեկ անգամ: Դնում են 2-3, երբեմն՝ 4 ձու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Մերիի շրջանում, համաձայն վերջին տվյալների, հաշվառվում են 20-25 բնադրող զույգեր:

**Վասնագման հիմնական գործունեություն:** Բացասականորեն կարող են ազդել գյուղատնտեսության մեջ օգտագործվող բռնաքիմիկաները, ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Բնադրում է «Խորորվածանուած» և «Ծիկահող» պետական արգելոցներում: Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆառնայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտիք կոնվենցիա»-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Համելված 2-ում:

Անհրաժեշտ է ուժեղացնել ապօրինի որսի վերահսկողությունը և ավելացնել տուգանքի չափը: Վերահսկողություն սահմանել գյուղատնտեսության մեջ օգտագործվող թռնարխմիկատների, ինչպես նաև գիշատիչ թռչունների խրթվիլակների պատրաստման և վաճառքի նկատմամբ: Մշակել տարսողերմիսատների սերտիֆիկացման և նրանց մոտ թերվող գիշատիչ թռչունների դիակները քննելու համակարգ: Կազմակերպել բնակչության էկոլոգիական կրթության դասընթացներ:

62. Ցախաքրավորս, *Accipiter gentilis* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆԱՍՍՆԵՐ, *FALCONIFORMES*

## Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Զիշտ տարածված, նստակյաց տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խորհելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii); D1:

**Տարածվածություն:** Տեսակը տարածված է Արև Բրիտանիայում, Ֆրանսիայում, Դանիայում, Պորտուգալիայում, Հունաստանում և Սիրիայում:

**Տարածված լուսապատճեն, գումառական և Ծիկայիկ:**

**Կենսաքանության առանձնահատկությունները:** Գերադասում է խիտ անտառները՝ բացառներով, որոր կատարելով առավելապես անտառներում որտեղ և բնադրում է:

**Թվաքանակը և դրա փոփխման միտումները:** Նախնական գնահատման համաձայն, ներկայում Հայաստանում բնության մեջ հանդիպում են մոտ 40-60 զույգեր:


**Վտանգման իմնական գործումները:** Ամենաուժեղ ազդեցությունն է բողոքում մարդկանց կողմից ուղղակի հետապնդումը: Հերթական սպառնացող վտանգ կարող է հանդիսանալ գիշատիչ թշունների մերձարևելյան շուկայի զարգացումը, ինչը բերում է որսագործությանը, վաճառքի կամ տնային պայմաններում թշնին պահելու համար: 2008 թ-ին Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենուանաբանական այօհիներում սահմին է 60 արագների ավագ:

**Պահպանության միջցառումները:** Առնվազն 3 զույգ բնադրում է «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում, ինչպես նաև «Խոսրովի անտառ» արգելոցում: Հավանական է այս տեսակի ներկայությունը «Ծիկահող» արգելոցում:

Հայոց պատմության մեջ առաջիկ է համարվությունը՝ առաջարկությունը, որը պատճենաբանությունը համար առաջարկություն է առաջարկությունը:

63. Փոքր ենթարծիվ, *Aquila pomarina*, C. L. Brehm, 1831  
 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Սակավաթիվ, խոցելի տեսակ է: Գրանցված է Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՊՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացված է Կենտրոնական Եվրոպայում, հանդիպում է նաև Հարավ-Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Հյուսիսային Իրանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում տարածված է համարյա ամենութեր, բացառությամբ՝ անտառներից գուրկ արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների:

**Սպարելավայրերը:** Սաղարթավոր և խառը անտառներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում է անտառների ինչպես փոքր հատվածներում, այնպես էլ խոշոր զանգվածներում: Որպէս կատարում է բաց տեղանքներում: Չոր ժամանակ հանդիպում է համբավետության ամբողջ տարածքում՝ տարբեր լանջաֆուային գոտիներում: Տարեկան ճվադրում է մեկ անգամ: Դնում են 2 ձու, սակայն հանիբալիզմի հետևանքով կենդանի է մնում միայն մեկ ձագը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին Հայաստանում հաշվառվում են 48-52 զույգեր: Համաձայն 2008 թ-ի տվյալների 2 առանձնյակներ պահվում են Երևանի Կենդանաբանական այգում և 14 առանձնյակներ՝ Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Մարդու կողմից ուղղակի հետապնդումը, որսագորությունը, բների ոչնչացումը, հավանաբար, բունաքիմիկատների օգտագործման պետական վերահսկողության բացակայությունը, ինչպես նաև գիշատիչ թռչունների մերձարևելյան շուկայի զարգացումը:

**Պահպանության միջոցառումները:** Մեկական զույգ պահպանվում «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում և Երկուական՝ «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում:

Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում, «Զվոր թռչունների պահպանման մասին» Ռուսաստանի և Հնդկաստանի միջև համաձայնության հավելվածում:

Անհրաժեշտ է անցկացնել մի շարք միջոցառումներ՝ ուղղված ինչպես բնադրավայրերի պահպանմանը, այնպես էլ բնակչության էկոլոգիական դաստիարակմանը: Մեծացնել տուգանքի չափը ապօրինի որսի, ձագերին բներից հանելու և բները ոչնչացնելու համար:

64. Սեծ ենթարծիվ, *Aquila clanga* Pallas, 1811  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Ջիշ քանակությամբ հանդիպող, խոցելի տեսակ, որը հանդիպում է Հայաստանում հիմնականում չոփ ընթացքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable C2a(ii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU C2a(ii):

**Տարածվածությունը:** Հանդիպում է Գերմանիայից և Բալկանյան թերակղզուց մինչև Ամուրի հովիտ, Արևելյան Տյան-Չանում, Կովկասում և Հյուսիս-Արևմտյան Հնդկաստանում: Զմեռում է Հարավ-Արևելյան Անդրկովկասում, Իրանում, Մեսոպոտամիայում, Հնդկաստանում, Բիրմայում, Հարավային Չինաստանում և Եգիպտոսում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է լեռնատափաստանային գոտու նախալեռներում, առավելապես հանրապետության հյուսիսային մասում:

**Ապրելավայրերը:** Չոփ շրջանում գերադասում է բաց տարածքները՝ դաշտերը, լեռնային տափաստանների և մարգագետինների խոպան հատվածները, երբեմն՝ ճահճացած հատվածները:

**Կենարանության առանձնահատկությունները:** Չոփ շրջանում կարող է հանդիպել այլ արծիվների հետ նույն խմբերում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հավաստի տեղեկությունները բացակայում են: Տեղ-տեղ հանդիպում է զարնանային (ապրիլ) և աշնանային (սեպտեմբեր-հոկտեմբեր) չոփ շրջաններում: Նկատվում է թվաքանակի խիստ կրճատում ամբողջ արեալում:

**Վտանգման կիմնական գործոնները:** Փոքր թվաքանակը: Որսագործությունը: Բնորոշ ապրելավայրերի քայլայումը տնտեսական գործունեության արդյունքում:

**Պահպանության միջոցառումները:** Հասուկ միջոցառումներ չեն իրականացվում:

Տեսակը խիստ պահպանության կարիք ունի: Անհրաժեշտ է լայնորեն պրոպագանդել տեսակի պահպանության անհրաժեշտությունը:

65. Տափաստանային արծիվ, *Aquila nipalensis orientalis* Hodgson, 1833  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Քիչ քանակությամբ հանդիպող, խոցելի տեսակ, որը հանդիպում է Հայաստանում հիմնականում չոփ ընթացքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU C2a(i); D1:

**Տարածվածությունը:** Հանդիպում է Արևելյան Եվրոպայից մինչև Արևելյան Ասիա, Հնդկաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է տափաստանային գոտում ինչպես չոփ ժամանակ, այնպես էլ (ոչ սեռահասուն առանձնյակները) բնադրման շրջանում:

**Ապրելավայրերը:** Լեռնատափաստաններ, գյուղատնտեսական հողեր:

**Կենսարանության առանձնահատկությունները:** Հայաստանում չի բազմանում: 2007 թ.-ին, ըստ Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի տվյալների, կենդանաբանական այգիներում եղել է 21 բազմացող զույգ, որոնցից ստացվել են 9 ձագեր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտունները:** Հավաստի տեղեկությունները բացակայում են: Հայաստանում 1995 թ.-ին չոփ ընթացքում հաշվառվել են մոտ 764 առանձնյակներ: 2008 թ.-ին, համաձայն Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի տվյալների, աշխարհում պահպել են մոտ 190 առանձնյակներ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Չոփ ժամանակ որսագողությունը՝ խրտվիլակներ պատրաստելու և իրացնելու նպատակով: Գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկաների ազդեցությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է միջոցները կենտրոնացնել տեղի բնակչության էկոլոգիական կրթության վրա: Ավելացնել տուգանքի չափը, որը նախատեսված է տափաստանային արծվի որսի և թռչունների առգրավման համար:

66. Քլրային արծիվ, *Aquila heliaca* Savigny, 1809  
Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Հայաստանի ֆաունայի համար անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable C2a(ii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU C2a(ii):

**Տարածվածությունը:** Նախկին ԽՍՀՄ Եվրոպական մասի հարավային շրջաններ, Ղազախստան, Ալբայի լեռներ և նախալեռներ, Սինուսինսկի անտառափահատան, Անդրբայկալ, Անդրկովկաս, Թուրքմենիա, Տաջիկստան, Բալկանյան թերակղզի, Իսպանիա, Հյուսիսային Աֆրիկա, Հարավ-Արևմտյան Ասիա: Վերջին տարիներին խիստ կրծատվել են արեալի արևմտյան և հյուսիսային մասերը: Արևելյան պոպուլյացիաները բավականին կայուն են:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է հիմնականում գարնանային և աշնանային չորս ժամանակակից հավանաբար, հազվադեպ ձմեռում է հանրապետության տարածքում: 1955 թ.-ին առաջին անգամ բնադրում է հայտնաբերվել Նոյեմբերյանի շրջանում, Այրումի մոտակայքում: Նոյեմբերյան գերեզմանաբարձիվը բնադրել է 1976 թ.-ին և գրանցվել 1978, 1979 թթ.-ին:

**Ապրելավայրերը:** Բաց տարածություններով հերթափոխվող նոսրացված անտառներ, այգիներ և բարձրաբույս ծառերի խմբերի հովհաններում: Ապրելավայրերը գգալիորեն բայրայվել են՝ կապված գյուղատնտեսության կարիքների համար դրանց օգտագործման հետևանքով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները, որպես կանոն, տեղադրում են բարձր ծառերի վրա, շատ հազվադեպ՝ գետնին: Բնում՝ 1-3 ծու, թխում՝ 43 օր: Թխանանը մասնակցում են երկու ծնողները, սակայն էզի դերն ավելի մեծ է: Զագերը սկսում են թռչել 2,5 ամսեկան հասակում: Սնվում են մանր կաթնասուններով և բոշուններով, երբեմն՝ սողուններով, ուղղաթևավորներով, միջատներով, կենդանիների դիակներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտունները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն:


**Վտանգման հիմնական գործոնները:** Հավանաբար, կերային պաշարների կրծատումը, բնադրման պայմանների վատքարացումը, չորս շրջանում թռչուններին սպանելը: Չորս ժամանակ որսագործությունը՝ խրբվլակների պատրաստելու և իրացնելու նպատակով: Գյուղատնտեսության մեջ օգտագործվող բունարինիկաների ազդեցությունը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆաունայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտիք կոնվենցիա»-յի Հավելված 1-ում:

Անհրաժեշտ է բացահայտել և խստորեն պահպանել միջերկրածովային բազեի բները Հայաստանի ամբողջ տարածքում: Լայնորեն պրոպագանդել տեսակի պահպանության անհրաժեշտությունը:

**67. Քարարծիվ, *Aquila chrysaetos* (Linnaeus, 1758)**  
**Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, FALCONIFORMES**

**Ընտանիք՝ ճուռակներ, Accipitridae**



**Կարգավիճակը:** Սակավաթիվ, խոցելի տեսակ է: Գրանցված է Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Իրերիայից և Հյուսիսային Աֆրիկայից դեպի արևելք՝ Եգիպտոսով և Փոքր Ասիայով մինչև Կովկաս և Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նստակյաց: Համբավետությունում տարածված է համարյա ամենուրեք, խուսափում է ամբողջական անտառային զանգվածներից:

**Ապրելավայրերը:** Ջրաղեցնում է քաց և կիսաքաղաքացի բիոտոպերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում է ժայռերի վրա: Որսը կատարում է քաց տեղանքներում՝ դաշտերում, մարգագետիններում: Տարեկան ծվադրում է մեկ անգամ: Դնում են 1-2 ձու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Համաձայն վերջին տվյալների, Հայաստանում բնադրում են 34-38 գույզեր: Պոպուլյացիայում բավկանանին բարձր է ոչ սեռահասուն առանձնյակների թիվը: Համաձայն 2008 թ.- տվյալների, 7 առանձնյակներ պահպում են Երևանի Կենդանաբանական այգում և 91 առանձնյակներ՝ Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական Տարածաշրջանային Ասոցիացիայի այլ Կենդանաբանական այգիներում:

**Վտանգման իմնական գործոնները:** Ամենաուժեղ բացասական ազդեցությունն է քողնում մարդկանց կողմից ուղղակի հետապնդումը: Հերթական սպառնացող վտանգ կարող է հանդիսանալ մի կողմից՝ գիշատիչ թռչունների մերձ-արևելյան շուկայի զարգացումը, ինչը բերում է որսագողությանը, վաճառքի կամ անազատ պայմաններում թռչնին պահելու համար, մյուս կողմից՝ իրականացվող վերահսկողության և էկոլոգիական կրթության անբավարար վիճակար:

Բացասականորեն կարող են ազդել գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատները, ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բնոնի Կոմիտեցիայի Հավելված 2-ում, «Վող թռչունների պահպանման մասին» Ռուսաստանի և ԱՍՆ, Հնդկաստանի ու Կորեայի միջև երկկողմանի համաձայնությունների հավելվածում: Երեք-չորս գույզեր բնադրում են «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, մեկ-երկուար՝ «Դիլիջան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է անցկացնել մի շարք միջոցառումներ՝ ուղղված ինչպես բնադրավայրերի պահպանմանը, այնպես էլ բնակչության էկոլոգիական դաստիարակմանը: Մեծացնել տուգանքն ապօրինի որսի, ճագերին բներից հանելու և բները ոչնչացնելու համար: Կարգավորել քարարծվի արեալի սահմաններում թունաքիմիկատների օգտագործումը:

68. Գաճաճ արծիվ, *Hieraetus pennatus* (J. F. Gmelin, 1788)

## Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

## Ընտանիք՝ ճուռակներ, *Accipitridae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդուրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածություն:** Այս ենթատեսակը բնադրում է Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայում, Կենարոնական Ասիայում, Ֆրանսիայում, Հնդկաստանում և Իրանում:

**Տարածվածություն:** Հայաստանում հանդիպում է գրեթե բոլոր արևելյան մասերում՝ զբաղեցնելով անտառային զոտին:

**Ապրելավայրերը:** Նախընտրում է բնադրել լայնատերև և համախառն անտառներում, որսի տարածքը հաճախ գտնվում է բաց լեռնատափականացին զոտում:

**ԿԵՆՍԱՔՐԱՆՈՒՐՅԱՆ Առանձնահատկությունները:** Զվարդում են տարին մեկ անգամ՝ դնելով 2 ծու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախնական գնահատմամբ՝ Հայաստանում թվաքանակը կազմում է 60-80 բնադրող զույգ: Ըստ 2008 թ.-ի տվյալների՝ Երևանի կենդանաբանական այգում պահպում է 1, իսկ ըստ Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի տվյալների՝<sup>9</sup> 9 առանձնյակ:

**Վասնական հիմնական գործոնները:** Գաճաճ արձվի քանակի վրա ազդող գործոններից է մարդու կողմից անմիջական հետապնդվելը: Հաճախ գաճաճ արձիվը դառնում է որսագողերի զոհը: Զարգացման շրջանում անհանգստացնող գործոնները կարող են լինել վայրի բույսեր և հավաքողները և զբոսաշրջիկները: Հնարավոր է, որ գաճաճ արձվի թվաքանակի վրա իր ազդեցույթունն ունի նաև բունաքիմիկատների օգտագործումը գյուղատնտեսության մեջ: Թվաքանակի նվազման պատճառներից կարող են լինել նաև որսագողերի ակտիվությունը վերջին տարիներին, ովքեր կամ բռնում են գաճաճ արձվի ձագերին, կամ որսում են արդեն հասուն թռչուններին՝ խրսվիակ պատրաստելու նպատակով:

**Պահպանության միջոցառումները:** Սույն 5 գործ բնադրում է ՀՊՏ-ում, «Դիլիջան» ազգային պարկում, «Խոսրովի անտառ» և «Ծիկահող» արգելոցներում:

Կապված պոպուլյացիայի սակավաթվուրյան և սպառնացող վտաճիքերի բազմազանության հետ, անհրաժեշտ է միջոցները կենտրոնացնել բնադրավայրերի պահպանության և տեղի բնակչության կրթության վրա: Անհրաժեշտ է նաև բարձրացնել գաճաճ արձվի բույնը քանդելու և որսի համար օրենքով նախատեսված տուգանքի չափը:

## 69. Չրաքիլ, *Pandion haliaetus* (Linnaeus 1758)

Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Հնտանիք՝ Չրաքիլներ, *Pandionidae*



**Կարգավիճակը:** Սակավարիլ, վտանգված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը հանդիպում է Եվրոպայում՝ Լավլանդիայից մինչև Միջերկրական ծով, Ասիայում՝ անտառային բուսականության սահմանից մինչև Կամչատկա և Շապոնիա արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում, Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Ամերիկայում և Ավստրալիայում: Բացակայում է Կենտրոնական Ասիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է Սևանա լճի մերձափնյա գոտում, Արար գետի հովտում և բնական ու արհետական ջրավազաններին մոտ՝ համապետության տարբեր տարածաշրջաններում:

**Ապրելավայրերը:** Չրաքիլը մասնագիտացված ձկնակեր է, հետևապես բնակվում է ջրավազանների մոտ, որոնք պետք է լինեն բավարար չափով պարզ, մինչև 2000 մ ծ.մ.ր. բարձրությունները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում է հիմնականում ծառերի, երբեմն՝ ժայռերի վրա: Տարեկան ձկադրում է մեկ անգամ՝ դեկտյուն 2-3 ժութ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը Հայաստանում կազմում մոտ 3-6 զույգ: 2008 թ-ի դրությամբ, Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում պահպում է 3 առանձնյակ:

**Վտանգան հիմնական գործուները:** Հայաստանում ջրարձվի թվաքանակի վրա ազդող բացասական գործուներից է մերձհունային բարձրարուն անտառների հատումը: Բացի այդ, բացասականորեն կարող է ազդել ջրի աղտոտվածությունը և գյուղատնտեսության մեջ վնասատուների դեմ պայքարի ժամանակ քրոնաքիմիկաների օգտագործումը: Կապված Արարատյան հարթավայրում ձկնարուծարանների բվի մեծացման հետ, ջրարձիվ բնակչության կողմից կարող է դիտարկվել որպես ձկնային տնտեսությանը վնաս հասցնող տեսակ և, հետևաբար, ենթարկվել հետապնդմանը:


**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում, «Չվող թռչունների պահպանան մասին» Ռուսաստանի և ԱՄՆ, Հնդկաստանի ու Կորեայի միջև երկկողմանի համաձայնությունների հավելվածում: Մեկ զույգը բնադրում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է արգելել մերձհունային բարձրաբուն անտառների հատումը և կանոնակարգել գյուղատնտեսության վճարատուների դեմ պայքարում քունաքիմիկատների օգտագործումը, ինչպես նաև անցկացնել մի շարք միջոցառումներ՝ ուղղված քնաղրավայրերի պահպանանը և քնակչության էկոլոգիական դաստիարակությանը։ Զրարծիվը հաջողությամբ ռեինտրոդուցվել է այլ վայրերում, նման ծրագրեր կարող են կիրառվել նաև Հայաստանում։ Անհրաժեշտ է մեծացնել տուգանքն ապօրինի սպանելու, ծագերին բներից հանելու և ջրարծվի բները ոչնչացնելու համար։

70. Հայաստանային հողմավար բազե, *Falco naumanni* Fleischer, 1818

Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՐԱՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ Բազեներ, *Falconidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է բնադրման տեղային բնույթով: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2bce+3bce+4bce» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2bce+3bce+4bce:

**Տարածվածությունը:** Միջերկրածովային երկրներ, Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Եվրոպա, Փոքր Ասիա, դեպի արևելք՝ մինչև Իրան, Մոնղոլիա և Չինաստան: Զմեռում է Աֆրիկայում, Արարիայում, Հնդկաստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնադրավայրերը հայտնաբերված են Սյունիքի մարզի Սպանարյանի ջրամբարի շրջակայրում, հավանաբար, տեղ-տեղ բնադրում է Արաքսի հովտում և Հյուսիսային Հայաստանում: Չոփի շրջանում հանդիպում է լեռնատափաստանային գրուում նախալեռներում, առավելապես հանրապետության հյուսիսային և կենտրոնական շրջաններում:

**Ապրելավայրերը:** Բնադրման շրջանում հանդիպում է կիսաանապատում, չոր լեռնային տափաստաններում՝ ընդհուպ մինչև բարձր լեռնային մարգագետիններ: Չոփի շրջանում նախընտրում է քաղ լանջափտներ՝ դաշտեր, լեռնային տափաստանների և մարգագետինների խոպան տեղամասեր:

**Կենսաբնույթյան առանձնահատկությունները:** Հայաստան գալիս են մարտի վերջին-ապրիլին: Բնադրում են գաղորդներով կամ առանձին զույգերով: Բները, սովորաբար, տեղադրված են ժայռերին և շինությունների տանիքների տակ: Զվարդում են (3-8 ձու) ապրիլի կեսերին-մայիսին: Թխառում է (28 օր) հիմնականում էզր: Զագերը դուրս են գալիս հունիսի վերջին-հուլիսի առաջին կեսին: Սննում են, հիմնականում, անողնաշար կենդանիներով (սարդակերպեր, ուղարձնավորներ, բգեզներ, ճպուռներ) և մանր ողնաշարավորներով (դաշտային մկներ, գետնափորներ, մողեսներ, երրեմն՝ ճնճղուկազգիներ): Չոփի շրջանում կազմում են 30-50 առանձնյակներից կազմված խմբեր: Աշնանային չուն տեղի է ունենում սեպտեմբեր-հոկտեմբերին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը խիստ կրճատվել է՝ ինչպես ամբողջ արեալում, այնպես էլ Հայաստանում: XX դարի սկզբում սովորական, Արաքսի հովտի կիսաանապատներում բնադրող տեսակ էր, ներկայումս այդ բնադրավայրը հավաստիրեն հայտնի չեն: Հայտնի տվյալներով՝ Հայաստանում բնադրող զույգերի թիվը չի գերազանցում 25-30-ի:

**Վտանգման իմնական գործոնները:** Փոքր թվաքանակը, որսագողությունը և բների քանդումը: Տնտեսական գործունեության արդյունքում բնորոշ ապրելավայրերի քայլայումը:

Տեսակի հիմնական սնունդ ներկայացնող միջատների և վնասատու կրծողների դեմ պայքարում բունաքիմիկատների օգտագործումը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում: Տեսակը խիստ պահպանության կարիք ունի: Անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունը ապօրինի որսի նկատմամբ և նվազեցնել անհանգստացման գործոնները բնադրող գաղութների շրջակայքում: Բացահայտել անհայտ գաղութները, կառուցել բների համար արհեստական հիմքեր (խորշեր և ճեղքեր ունեցող պատեր) հանրապետությունում տեսակի ներկա և պատմական արեալի սահմաններում թվաքանակի վերականգնման և վերաբնակեցման նպատակով: Բնադրավայրերի շրջակայքում սահմանել գյուղատնտեսության մեջ բունաքիմիկատների օգտագործման վերահսկողություն և կազմակերպել էկոլոգիական կրթության դասընթացներ տեղի բնակչության համար:

71. Կարմրառու բազե, *Falco vespertinus* Linnaeus, 1766

Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՄՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ Բազեներ, *Falconidae*



**Կարգավիճակը:** Անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի» VU B1ab(iii)+2ab(ii); D1:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Արևմտյան Սիրիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արտաշատի, Հոկտեմբերյանի և Էջմիածնի շրջաններ, առավելապես՝ Արարու գետի հովտում և Վտակներում: Բնադրավայրը հայտնաբերվել են նաև Հրազդանի շրջանի գ. Ծաղկաձորում: Դասվում է Հայաստանի բնադրող, չվող թռչունների թվին:

**Ապրելավայրերը:** Բնակվում են լայնատարած կիսաանապատային և տափաստանային տեղամասերում անտառակների կամ ծառերի առանձին խմբերի առկայությամբ, հաճախ գետերի հովտներում կամ այլ ջրամբարների հարևանությամբ, երբեմն՝ նոսրանտառներում և անտառեզրերում, լեռներում՝ մինչև 1500 մ ծ.մ.ր. բարձրություններ: Հայաստանում ապրելավայրերը զգալիորեն քայլայվել են գյուղատնտեսական նպատակով այդ տեղամասերի յուրացման հետևանքով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները, սովորաբար, տեղադրված են ծառերի, հազվադեպ՝ հին շինությունների պատերի կամ տաճքների վրա: Զվարդում են (2-4, հազվադեպ՝ 6 ձոր) մայիսի երկրորդ կեսին-հունիսի սկզբին: Թխանանը (28-30 օր) մասնակցում են և՝ էգը, և՝ արուն: Զագերը դուրս են զայիս հունիսի վերջին-հուլիսի առաջին կեսին: Երիտասարդ թռչուններ նկատվում են մինչև հուլիսի վերջը-օգոստոսի երկրորդ կեսը: Սննում են, հիմնականում, տարբեր միջատներով, մասն սողուններով և կրծողներով, երբեմն՝ մասն թռչուններով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայտնի չեն: Վերջին տարիներին բնադրման դեպքեր չեն նկատվել:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հավանաբար, ապրելավայրերի քայլայումը և կերային պաշարների կրճատումը:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է լայնորեն պրոպագանիկ տեսակի պահպանման անհրաժեշտությունը, հանրապետության սահմաններում բացահայտել և խստորեն պահպանել կարմրառու բազեի բնադրավայրերը:

## 72. Աղավնարազե, *Falco columbarius* Linnaeus, 1758

Ենթատեսակ *Falco columbarius aesalon* (Tunstall, 1771)

Կարգ՝ ՔԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

Հնտաճիք՝ Բազեներ, *Falconidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, անհետացող, սակավաբիլ և քիչ ուսումնասիրված տեսակ է, Հայաստանում՝ չվահյուր և ձմեռող: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Հյուսիսային Եվրոպայից դեպի արևելք՝ մինչև Կենտրոնական Սիրիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Առավելապես չվահյուր՝ ք. Երևանի շրջակայրում և Հրազդանի շրջանում, նաև ձմեռող:

**Ապրելավայրերը:** Հիմնականում կիսաանապատային գոտու բաց տարածություններ ծառերի խմբերի առկայությամբ, հաճախ՝ թփուտների առկայությամբ գետերի հովիտներում: Հայաստանում ապրելավայրերը զգալիորեն քայլային են գյուղատնտեսական նպատակով այդ տեղամասերի յուրացման հետևանքով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չի բնադրում: Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ 2-5 ձու: Սնվում է, հիմնականում, թռչուններով: Անազատ պայմաններում բազմացման վերաբերյալ տվյալներ չկան:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն, սակայն հանդիպումները կրում են կանոնավոր բնույթ:


**Վտանգման իմանական գործոնները:** Վտանգման գործոնները բավարար ուսումնասիրված չեն, սակայն հնարավոր վտանգ է ներկայացնում որսագողությունը, ինչպես նաև Սերծավոր Արևելքում որսորդական թռչունների վաճառքով զրավողների գործունեությունը, որը բներից ճագերին հանելու և հաստի թռչուններին բռնելու վտանգ է ներկայացնում:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է հաշվառել թվաքանակը ձմեռման վայրերում և հետազոտել մարդածին գործոնների ազդեցությունը պոպուլացիայի վրա՝ հետագայում տեսակը և ապրելավայրերը պահպանելու նպատակով: Անհրաժեշտ է լայնորեն պրոպագանդել տեսակի պահպանման անհրաժեշտությունը և մեծացնել տուգանքի չափը ապօրինի որսի համար:

**73. Միջերկրածովային բազե, *Falco biarmicus* Temminck, 1825  
Ենթատեսակ *Falco biarmicus feldgei* (Schlegel, 1843)**

**Կարգ՝ ԲԱԶԵԱՆՍԱՆՆԵՐ, *FALCONIFORMES***

**Հնտանիք՝ Բազեներ, *Falconidae***



**Կարգավիճակը:** Սակավարիվ, քիչ ուսումնասիրված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Հարավային Եվրոպայից մինչև Փոքր Ասիա և Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում բնադրում է կենտրոնական մասում:

**Ասպելավայրերը:** Լայն կիսաանապատային և լեռնատափաստանային տեղամասերի հետ հերթափոխվող ոչ բարձր ժայռոտ լեռների խորշերի և ժայռեզրերի առկայությամբ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բույնը. Ժայռաքիվերին, խորշերում, ծառերի վրա, կարող է օգտագործել այլ գիշատիչների հին բներ: Ձվերը. 50 մմ, 3-4, սպիտակ, կարմրագորշ պտերով: Բները տեղադրված են ժայռեզրերին և ժայռերի խորշերում, տվյորաբար, ուղիղ արևի ճառագայթներից պաշտպանված հատվածներում: Զվարդում են տարեկան մեկ անգամ, հավանաբար, մարտի առաջին կեսին-ապրիլի սկզբին: Դնում են, սովորաբար, 3-4 ձու:

**Զարգացումը՝** մեկ ամիս: Զագերը դուրս են գալիս ապրիլի վերջին-մայիսի սկզբին: Սնվում են հիմնականում թռչուններով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Կերային ռեսուրսները խիստ կրճատվել են, հիմնականում քարակարավների թվաքանակի կրճատման հետևանքով: Թվաքանակի արդի փիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: Հավաստիորեն հայտնի է միայն մեկ գույզի առկայությունը:

**Վտանգման իհմնական գործոնները:** Հավանաբար, կիսաանապատային և լեռնատափաստանային զոտիների հողերի ինտենսիվ յուրացումը գյուղատնտեսական նպատակներով և բունաքիմիկատների օգտագործումը, որը բացասական է ազդում ինչպես վերաբտադրողական ունակությունների, այնպես էլ անմիջապես հասուն թռչունների վրա: Բացասական ազդեցություն ունի նաև Սերձավոր Արևելքում որսորդական թռչունների վաճառքը գրադարձների գործունեությունը, որը բներից ձագերին հանելու և հասուն թռչուններին բռնելու վտանգ է ներկայացնում:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է բացահայտել և խստորեն պահպանել միջերկրածովային բազեի բները Հայաստանի ամբողջ տարածքում: Նվազեցնել մարդածին գործոնների ազդեցությունը պոպուլյացիայի վրա՝ հետազոտմ տեսակը և ասպելավայրերը պահպանելու նպատակով:

74. Բաղրան, *Falco cherrug* J. E. Gray, 1834

Կարգ՝ ԲԱՂԵԱՆՍԱՐԱՆԵՐ, *FALCONIFORMES*

Ընտանիք՝ Բազեներ, *Falconidae*



**Կարգավիճակը:** Հայաստանի համար անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գործում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered A2bcd+3cd+4bcd» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կտազգված»՝ EN A2bcd+3cd+4bcd:

**Տարածվածությունը:** Արևելյան Եվրոպայի տափաստանային և անտառատափաստանային գոտիներ՝ մինչև Նախակովկաս, Ղազախստան, Միջին Ասիա, Արևմտյան Սիբիր, Ալքայ, Տուվա, Անդրբայկալ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Երևանի շրջակայրում, Գավառի, Վայքի, Արարատի, Վարդենիսի, Շամբարակի, Ստեփանավանի, Թալինի, Էջմիածնի շրջաններում: Հավանաբար, Հայաստանում նստակյաց, բնադրող տեսակ է:

**Ապրելավայրերը:** Հավանաբար, Ախուրյանի հովտի ժայռային զանգվածները, որոնք շրջապատված են ծառերից գորիկ կիսաանապատային տեղամասերով: Ներկայումս ապրելավայրերն ինտենսիվորեն օգտագործվում են որպես արոտավայրեր:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բները, սովորաբար, տեղադրված են ժայռեղբերին և խորշերում: Հայտնի է բնադրում ծառերի վրա: Զվարդում են ապրիլին, դներով 1-6, ավելի հաճախ՝ 3-4 ձու: Թխանանը, որը տևում է 30 օր, մասնակցում են ինչպես էգը, այնպես էլ արուն: Զվարդման շրջանը՝ 40-45 օր, երիտասարդ թռչուններ նկատվում են հուլիսի առաջին կեսում: Սնվում են միջին չափերի կարնատուններով և բոչուններով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Հայտնի չեն:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Աևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է կազմակերպել տեսակի թվաքանակի հաշվառումներ: Հայտնաբերել և խստորեն պահպանել միջերկրածովային բազեի բները Հայաստանի ամբողջ տարածքում:

75. Սապան, *Falco peregrinus* Tunstall, 1771  
Ենթատեսակ *Falco peregrinus brookei* (Sharpe, 1873)

## Կարգ՝ ՔԱԶԵԱՆԱԱՆՆԵՐ, *FALCONIFORMES*

## Ընտանիք՝ Քաղեներ, *Falconidae*



**Կարգավիճակը:** Նստակյաց տեսակ է: Ընդգրկված է ԲՊԱՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածություն:** Տվյալ ենթատեսակը փոքր թվաքանակով հանդիպում է Կենտրոնական և Հյուսիս-Արևմտյան Եվրոպայում, Միջիայում և Լիբանանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է գրեթե ամբողջ տարածքում՝ զբաղեցնելով ժայռային միջավայրերը:

**Ապրելավայրերը:** Բնակվում է ժայռերի առկայությամբ տարբեր տիպի բիոտոպներում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բնադրում է ժայռերի վրա՝ խոշերում կամ ժայռափերին։ Տապակա և այլներ առաջարկաբար ենթադրություն բնակչության մեջ։

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նախնական հաշվառմանը, Հայաստանում սապսանի թվաքանակը կազմում է 60-70 զույգ: Ըստ 2008 թ-ի տվյալների, Կենդանաբանական այգիների Եվրասիական աստղիագիայի զանգում պահպում է 48 առանձնյալ:

**Վանզգման հիմնական գործոնները:** Բացասական ազդեցուրյուն ունի վերջերս Արաբական երկրներում առաջացած հետաքրքրությունը սապասանի հանդեպ որպես որպի թռչուն, որը ստեղծում է պոտենցիալ շուկա Հայաստանում և նապաստում որսագողությանը: Բացասական ազդեցուրյուն կարող է ունենալ նաև միջավայրի բունավորումը հանքային արդյունաբերության թափոններով, գյուղատնտեսության մեջ օգտագործվող բունարիմիկատներով և անտառի վնասատուների դեմ պարարի հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:**Գրանցված է CITES-ի Հավելված 1-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է ուժեղացնել որսագործության նկատմամբ հսկողությունը, հատուկ պահպանել բնադրավայրերը: Վերանայել անտառի վնասատուների դեմ պայքարի միջոցները և գյուղատնտեսության մեջ բունաքիմիկատների օգտագործումը՝ փոխարինելով այն բնական պայքարի միջոցներով:

76. Կովկասյան մարեհավ, *Tetrao mlokosiewiczi* (Taczanowski, 1875)

Կարգ՝ ՀԱՎԱՆՍԱՆՆԵՐ, *GALLIFORMES*

Ընտանիք՝ Մարեհավայիններ, *Tetraonidae*



**Կարգավիճակը:** Անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲԴՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Կովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավ արևելյան շրջաններում:

**Սարկելավայրերը:** Ենթալայան մարգագետինների սահմանը, կեչու պուրակներ, մրտավարդենու /ռողդենդրոն/ մացառներ, 1800-2500 մ ծ. մ. բարձրության վրա: Զննանք հանդիպում է առավել ցածր բարձրությունների վրա:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Նստակյաց: Բնադրում է գետնին: Տարեկն մեկ ձվադրում՝ արեալի տարրեր մասներում, ապրիլի կեսերից մինչև հուլիս: Ձվերի զարգացումը՝ 21 օրից ավելի: Բույնը՝ ոչ մեծ փոսիկ գետնի վրա, ցամքարը՝ խոտարույսեր, փետուրներ, թփուտների տակ կամ խիտ խոտարույսերի մեջ: Ձվերը 51 մմ 2-10, դեղնասպիտակ՝ կարմրագորշ պտերով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Քանակը հստակ որոշելու համար տվյալները բավարար չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Բնադրման վայրերի քայրայումը գյուղատնտեսական գործունեության արդյունքում: Ուսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Տեսակի արեալի մի մասն ընդգրկված է «Դիլիջան» ազգային պարկի և «Շիկահող» արգելոցի տարածքում:

Խիստ պահպանության կարիք ունի: Անհրաժեշտ է սահմանել խիստ վերահսկողություն որսագողության վրա, ինչպես նաև կիրառել ենթալայիան մարգագետինների օգտագործման էկոլոգիապես ընդունելի եղանակներ:

77. Անապատային կաքավ, *Ammoperdix griseogularis* (Brandt, 1843)

Կարգ՝ ՀԱՎԱՆՍԱՆՆԵՐ, *GALLIFORMES*

Ընտանիք՝ Փափամներ, *Phasianidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչիներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU D1.

**Տարածվածությունը:** Մեսոպոտամիայից մինչև Իրան և Ինդ ու Պենջար, դեպի հյուսիս հասնում է մինչև Թուրքմենիա և Տաջիկստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է հանրապետության ծայր հարավում, Մելրի շրջանում՝ Իրանի սահմանի մոտ:

**Ապրելավայրերը:** Աղբատ չորային բուսականությամբ ծածկված Մելրիի լեռնաշղթայի հարավային քարքարոտ լանջերի ցածր լեռնային շրջանում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Նստակյաց; Բնադրում է հողի վրա: Տարեկան մեկ ձվադրում՝ արեալի տարբեր մասերում, ապրիլի կեսերից մինչև հուլիս: Ձվակույտում 8-12 ձու: Ձվերի զարգացումը՝ 21 օրից ավելի:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ոչ կանոնավոր բնադրող տեսակ է, ծայրահեռ փոքր թվաքանակով:

**Վտանգման իիմնական գործոնները:** Փոքր թվաքանակը: Բնորոշ ապրելավայրերի քայլայումը տնտեսական գործունեության արդյունքում: Որսագողությունը:


**Պահպանության միջոցառումները:** Տեսակի արեալի մի մասն ընդգրկված է «Արևիկ» ազգային պարկի տարածքում:

Խիստ պահպանության կարիք ունի: Անհրաժեշտ է սահմանել խիստ վերահսկողություն որսագողության վրա:

**78. Կայրի հնդկահավ (Ուզար), *Tetraogallus caspius* (S. G. Gmelin, 1784)**  
**Ենթատեսակ՝ *Tetraogallus caspius caspius* (Gmelin, 1784)**

**Կարգ՝ ՀԱՎԱՆՍԱՆՆԵՐ, *GALLIFORMES***

**Ընտանիք՝ Փասիաններ, *Phasianidae***



**Կարգավիճակը:** Սակավաբիվ խոցելի տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a+2a; C2a(i); D 1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Հարավային և Արևելյան մունիչայի, Փոքր Կովկասի և Անդրկովկասի լեռներում, ինչպես նաև Աղբեջանում և Հյուսիս-Արևելյան Իրանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է համարյա բոլոր բարձր լեռնային լանջափուներում, որտեղ կան ժայռային օջախներ:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է բարձր լեռներում՝ բնակեցնելով ժայռային բեկորներով թեք լանջերը, 2500-3500 մ ծ.մ.թ. բարձրություններում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում է հողի վրա՝ ժայռաքեկորների և քարերի ծածկի տակ: Տարեկան ծվարքում է մեկ անգամ՝ դնելով 5-8 ձու: Կերը հայրհայրում է լանջերին, սնվում է բուսականությամբ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Զանգեզուրի լեռնաշղթայում խտորյունը կազմում է միջին հաշվով 0,05 թռչուն 1 հա-ին, իսկ Վարդենիսի, Փամբակի և Բագումի լեռնաշղթաներում՝ մոտ երկու անգամ պակաս:

**Վտանգման ինմանկան գործոնները:** Ուզարի թվաքանակի վրա բացասականորեն կարող են ազդել անասունների գերարածեցումը, անհանգուտացնելը վայրի բույսեր հավաքողների և հովիվների շների կողմից, ինչպես նաև ապօրինի որսը:


**Պահպանության միջոցառումները:** Ապրելավայրերի մի մասը գտնվում է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում: Գրանցված է «Անհետացման վտանգի տակ գտնվող ֆաունայի և ֆլորայի տեսակների միջազգային առևտուրի կոնվենցիա»-ի Հավելված 1-ում:

**Անհրաժեշտ է վերանայել բարձրադիր գոտիներում անասունների արածեցման մեխանիզմները:** Նպատակահարմար է սեղոնային արգելավայրերի, կամ ժամանակավոր հանգստի գոտիների ստեղծումը, ինչպես նաև ապօրինի որսի նկատմամբ վերահսկողության ուժեղացումը: Խիստ անհրաժեշտ է անցկացնել դասընթացներ բնակչության էկոլոգիական կրթության իրականացման նպատակով:

79. Թուրազ, *Francolinus francolinus* (Linnaeus, 1766)

Կարգ՝ ՀԱՎԱՆՍԱՆՆԵՐ, *GALLIFORMES*

Ընտանիք՝ Փափաններ, *Phasianidae*



**Կարգավիճակը:** Փոքր թվաքանակով, խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Տարածված է Կիպրոս կղզում և Փոքր Ասիայում մինչև Հյուսիսային Իրար, Հյուսիս-Արևմտյան Իրան և Կասպից ծովի հարավային ափի:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է միայն Մեղրիի շրջանում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է գետերի հովիտներում՝ խիտ թփուտներում, կամ բարձր խոտերով ծածկված բացատների հետ հերթափոխվող եղեգնուտներում: Մեղրիի շրջանում բնակեցնում է Արար գետի մերձինային հատվածը:

**Կենարամության առանձնահատկությունները:** Նստալյաց է: Բնադրում է թփուտներում: Սնվում է կանաչ ծիլերով, պտուղներով, սերմերով, միջատներով: Կերը հավաքում է ինչպես գետնից, այնպես էլ ճյուղերից: Տարեկան ծվադրում է մեկ անգամ: Դնում են սովորաբար 8-12 ձու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: 2008 թ-ի տվյալներով քորածներ պահպում են Երևանի կենդանաբանական այգում:


**Վտանգման իմնական գործոնները:** Ջանի որ թուրազի տարածման շրջանը գտնվում է մերձսահմանային գոտում, ապօրինի որսը անհնար է սահմանային ռեժիմի շնորհիվ: Սահմանափակ է նաև մարդու և անասունների կողմից բազմացման շրջանում անհանգստացնելը:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է հետազոտություններ կատարել պոպուլյացիայի վրա մարդածին գործոնի ազդեցությունը պարզելու համար և անցկացնել բնապահպանական իրազեկության բարձրացման դասընթացներ սահմանապահ գորքերում:

80. Անդրկովկասյան փասիան, *Phasianus colchicus* (Linnaeus, 1758)

## Կարգ՝ ՀԱՎԱՆԱԱՆՆԵՐ, *GALLIFORMES*

## Ընտանիք՝ Փափաններ, *Phasianidae*



**Կարգավիճակը:** Փոքր թվաքանակով, խոցելի տեսակ է, Հայաստանի պայմաններում՝ սակավ ուսումնասիրված: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածություն:** Կովկասից մինչև Հեռավոր Արևելք:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է բացառապես Սյունիքի մարզի հարավարևմտյան և հարավական մասերի մերձականացրած շրջաններում:

**Ապրելակայքը:** Բնակում է ցածրադիր նախալեռնային գոտում, իսկ թփուտներում, ինչպես նաև եղեգնուտներում: Վարում է բարնակած կենսակերպ, վտանգի դեպքում արագ վագրով փախչում է կամ կտրուկ թռչում նացառուտների եզրով:

**ԿԵՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ Առանձնահատկությունները:** Հայաստանի տարածքում հավաստի բնադրավայրեր հայտնի չեն, չնայած, կան դրա կողմնակի, ինչպես նաև բանակոր վկայությունները՝ բոշուններին ձագերի հետ հանդիպելու մասին հունիսի կեսերին և վերջում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Կապանի շրջանում խտությունը կազմում է մոտ 0,05 բոչուն 1 հա-ին, իսկ Սեղմի շրջանում, Արարսի գետի երկայնքով այն մոտ 1,5 անգամ բարձր է: 2008 թ-ին հայտնի է անազատ պայմաններում մեկ արու պահելու դեպք:

**Վտանգման հիմնական գործոնները:** Փասիանի թվաքանակի վրա բացասական ազդեցություն կարող է ունենալ բազմացման շրջանում վայրի բույսեր և պտուղներ հավաքողների կողմից անհանգստացնելը, ինչպես նաև ապօրինի որսը:


**Պահպանության միջոցառումները:** Այրելավայրերի տեղամասերի մի մասը պահպանվում է պետական սահմանների պահպանության ռեժիմով, քանի որ այն գտնվում է Սեղրիի շրջանի մերձափական գոտում:

Անհրաժեշտ է հետազոտել տեսակի էկոլոգիան և պոպուլյացիայի համար հնարավոր վտանգները: Վերանայել պետական սահմանների պահպանության ապահովման ձևերը՝ բացառելով խիստ նացառութեան սեղոնային հրդեհումը վերահսկվող տարածքներում: Ստեղծել ժամանակավոր հանգստի գործներ և անցկացնել սահմանապահ գորքերի ու բնակչության շրջանում բնապահպանական իրազեկության բարձրացման դասընթացներ:

81. Գեղանի կռունկ, *Arthropoides virgo* Linneus, 1758

Կարգ՝ ԿՈՌՎԿԱՆՍԱՄՆԵՐ, *GRUIFORMES*

Ընտանիք՝ Իսկական կռունկներ, *Gruidae*



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ քիչ տարածված, շվող, հազվագյուտ տեսակ է: որի թվաքանակը վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Աֆրիկա, Իսպանիայից՝ մինչև Բայկալ, Մոնղոլիա, Միջին Ասիա, Փոքր Ասիա, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Առավելապես հանդիպում են հանրապետության կենտրոնական և հյուսիսային շրջաններում: Հանրապետությունում հանդիպում են միայն աշնանային և գարնանային չորս շրջաններում 200-300 առանձնյակներից կազմված երամներով: Հանգստի համար օգտագործում են վարելահողերը և գյուղատնտեսական ցանքատարածությունները:

**Ապրելավայրերը:** Բնակվում է քարքարոտ, ցածր խոտածածկով կիսաանապատներում, նախալեռնային տափաստաններում և գյուղատնտեսական ցանքատարածություններում, արոտավայրերում, մարգագետիններում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են հողի վրա, չոր վայրերում, բայց ջրին մոտ, որը կարող է լինել առվակ, լիճ կամ ճահճուտ, հաճախ՝ նաև բնակավայրերի մոտ: Չվերը՝ 2, 81-94 մմ, մուգ կարնագույն, մակերեսային դեղնա-դարչնագույն բծերով: Թիսումը՝ մոտ 30 օր: Չվից դուրս եկած ձագերը, չորանալուց հետո ի վիճակի են հետևելու ծնողներին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է: Աշնանային և գարնանային չորս շրջաններում հանդիպում են 200-300 առանձնյակներից բաղկացած երամներով, որոնք հանգստի համար օգտագործում են առավելապես Սևանի ավազանի ցանքատարածությունները:


**Վտանգման իմնական գործոնները:** Վաղ գարնան շրջանում, եղանակի կտրուկ փոփոխման հետևանքով կարող են ցրտահարվել:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է կազմակերպել հաշվառում չորս շրջաններում, իսկ անբարենպաստ պայմանների ժամանակ՝ կերակրում:

82. Սովորագույն կռունկ, *Grus grus* (Linnaeus, 1758)

Կարգ՝ ԿՌՈՒՆԿԱՆՍԱՄՆԵՐ, *GRUIFORMES*

Ընտանիք՝ Իսկական կռունկներ, *Gruidae*



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ քիչ տարածված տեսակ է, որի թվաքանակը վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

**Տարածվածությունը:** Եվրոպայից մինչև Միջին Ասիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Նախկինում մշտակես բնադրել է Սևանա լճի ջրավազանում, զիսավորապես՝ Գիլլի լճի եղեգնուտներում: Վերջին տարիներին բնադրավայրերը հայտնաբերվել են Աշոցքի, Տավուշի և Ստեփանավանի շրջաններում:

**Սպարելավայրերը:** Համեմատաբար փոքր մակերևույթ ունեցող լճեր ճահճացած ափերով եղեգնուտների և ջրային այլ բույսերի առկայությամբ, ինչպես նաև այդ լճերի շրջակայքում եղած խոնավ մարգագետիններ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Գարնանը Հայաստան են գալիս մարտի վերջին-ապրիլի սկզբին: Բները պատրաստում են ծառերի մանր ճյուղերից և տարրեր խոտարույսների չորացած ցողուններից: Ապրիլի կեսին-մայիսի սկզբին դնում են 2, հազվադեպ՝ 3 ձու: Երբեմն մայիսի վերջին ձվադրում են երկրորդ անգամ: Զագերը դրու են գալիս մայիսի վերջին-հունիսի սկզբին: Զագերի խնամքին և կերակրելուն մասնակցում է ինչպես էգը, այնպես էլ արուն: Հուլիսի երկրորդ կեսին ճագերը սկսում են թռչել: Աշնանային չուն սկսվում է օգոստոսի երկրորդ կեսին և շարունակվում մինչև հոկտեմբերի կեսը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Աշոցքի շրջանում ամեն տարի բնադրում են 2-3, Տավուշի շրջանում՝ 4-5, Ստեփանավանի շրջանում՝ 2 գույգեր: Հնդիանուր առմամբ, Հայաստանում բնադրում են, հավանաբար, մոխրագույն կռունկի մոտ 10 գույգեր:

**Վտանգման իմնական գրձումները:** Թվաքանակի վրա բացասական ազդեցություն են թողնում ճահճացած տարածների չորացումը և մարգագետինների ինտենսիվ օգտագործումը որպես արոտավայրեր:


**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է պահպանության տակ վերցնել բնադրավայրերը Աշոցքի, Տավուշի և Ստեփանավանի շրջաններում:

### 83. Մարգահավ, *Crex crex* (Linnaeus, 1758)

## Կարգ՝ ԿՈՌՆԿԱՆԱԱՆՆԵՐ, *GRUIFORMES*

## Ընտանիք՝ Ջրահովովիկներ, *Rallidae*



**Կարգավիճակը:** Խոցելի տեսակ է: Ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածություն:** Տարածված է Արևմտյան Եվրոպայի միջև Արևմտյան Սիրիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է հանրապետության հյուսիսում:

**Ապրելավայրերը:** Բնադրում է Լեռնա-մարզագետնային, մարզագետնա-տափաստանային բիոտոպներում։ Ապրելավայրերը յուրացվում են գյուղատնտեսական նպատակներով։

12 ձու: Հայտնի են կրկնակի ծվաղընան երևույթներ՝ կորավածի փոխարեն:

**Թվաքանակը և դրա փոփոխնան միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: Համաձայն 2009 թ-ի տվյալների, Խարկովի Կենդանաբանական պարկ սպառելով է մինչև սպառելու:

**Վատանգման իհմնական գործոնները:** Մարգահավի թվաքանակի վրա բացասաբար ազդում են բնադրման շրջանում կատարվող գյուղատնտեսական աշխատանքները, ինչպես նաև անհանգստության գործոնը անասունների արածեցնան (որը ներառում է նաև ուղղակիորեն հասցվող վնասը հովհանքների շների կողմից) և վայրի խոտաբույսերի հավաքելու ժամանակ: Հասարակությունը պատճենական է առաջարկությունների վեհականության վերաբերյալ:

**Պահպանքյան միջոցառումները:** Անհրաժեշտ է ներառել այս տեսակը կենսաբազմազանության մոնիթորինգի պլանում, վերանայել տեսակի հաղիպման վայրերում հողային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը՝ ստեղծելով սեզոնային հաճախ գոտիներ կամ արգելավայրեր։ Անհրաժեշտ է նաև մեծացնել տուգանքի չափը և կազմակերպել Էնուոհական հրամանական բառարարության դաստիարակությունը։

84. Սուլքանական հավ, *Porphyrio porphyrio* (Linnaeus, 1758)  
Ենթատեսակ՝ *Porphyrio porphyrio caspius* (Hartert, 1917)

Կարգ՝ ԿՈՂԻՆՎԱՆԱՄՆԵՐ, *GRUIFORMES*

Ընտանիք՝ Ջրահովվիկներ, *Rallidae*



**Կարգավիճակը:** Սակավ ուսումնասիրված տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Հարավային Եվրոպայից և Հյուսիսային Աֆրիկայից մինչև Առաջավոր և Հարավային Ասիա, Սիրիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է Սևանա լճի հարավարևմտյան ափի երկայնքով, Արաքսի հովտում՝ Արարատի շրջանում և հանրապետության ծայր հարավում՝ Մելրիի շրջանում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է եղեգնուտի խիտ մացառուտներում՝ բնական ջրամբարների, ինչպես նաև ձկնարուծական տնտեսությունների ծանծաղուտային ափերի երկայնքով: Ապրելավայրերի տարածքի կրծատումը կապված է բնակչության համար հանգստի գոտիներ, լողափեր, ձկնարուծական տնտեսություններ ստեղծելով և գյուղատնտեսական կարիքների համար այդ տարածքների յուրացման հետ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում է 1-2 անգամ՝ դնելով 3-5 ձու: Հայտնի են կրկնակի ձվադրման երևույթներ՝ կորսվածի փոխարեն: Կան տվյալներ Մոսկվայի, Բաքվի և Մինսկի Կենտրանարանական այգիներում սուլքանական հավերի բազմացման վերաբերյալ:


**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի փիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: 2008 թ-ի տվյալներով, Կենտրանարանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենտրանարանական այգիներում պահպում է 73 առանձնյակ:

**Կտանօնական հիմնական գործոնները:** Սուլքանական հավի թվաքանակի վրա բացասականորեն ազդում է անհանգստացնելով գործոնը ձկնարուծական լճակների շահագործման ընթացքում, մասնավորապես՝ ջրի մակարդակի հաճախակի տատանումները: Հնարավոր է նաև ապօրինի որսը ջրլող բռչունների պաշտոնական որսի ժամանակահատվածում:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է ներառել այս տեսակը կենսաբնագանության մոնիթորինգի պլանում, վերանայել տեսակի հաղիպման վայրերում ջրային ռեսուրսների կառավարման քաղաքանությունը՝ ստեղծելով սեզոնային հանգստի գոտիներ կամ արգելավայրեր: Անհրաժեշտ է նաև մեծացնել տուգանքի չափը և կազմակերպել էկոլոգիական իրազեկության բարձրացման դասընթացներ:

85. Փոքր արոս, *Tetrao tetrix* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԿՌՈՒՆԿԱՆՍԱՆԵՐ, *GRUIFORMES*

Ընտանիք՝ Արոսներ, *Otididae*



**Կարգավիճակը:** Խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է բռնկա (B2ab(iii); Ca(i); D1):

**Տարածվածությունը:** Տեղ-տեղ տարածված է Արևմտյան Եվրոպայում, բնակեցնում է Հարավային և Հարավ-Արևելյան Եվրոպան, դեպի արևելք՝ մինչև Կենտրոնական Սիբիր:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է միայն չոփ շրջանում, իիմնականում հանրապետության արևմուտքում:

**Ապրելավայրերը:** Չոփ շրջանում հանդիպում է կիսաանապատային և լեռնատափառանային տեղամասերում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դնելով սովորաբար 3-4 ձու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: 2008 թ-ի տվյալներով, Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում պահպում են 17 առանձնյակներ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Փոքր արոսի թվաքանակի նվազեցման վրա չոփ շրջանում բացասաբար է ազդում ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Անհրաժեշտ է ուժեղացնել չոփ շրջանում ապօրինի որսի նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև մեծացնել տուգանքի չափը և կազմակերպել էկոլոգիական իրազեկության բարձրացման դասընթացներ:

86. Улъ урну, *Otis tarda*

Կարգ՝ ԿՈՒԽԱԿԱՆՍԱՆԵՐ, *GRUIFORMES*

## Ընտանիք՝ Արուսելք, *Otididae*



**Կարգավիճակը:** Խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2c+3c+4c» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2c+3c+4c:

**Տարածված շաղկալութեալու գանձաւունքն է պահանջման և պահանջման համար» («Հայաստան» 1925 թ. 7 թ.)։**

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է միայն չոփ շրջանում, իմնականում՝ հանրապետության արևմուրում:

**Ապրելավայրերը:** Չոփ շրջանում հանդիպում է կիսաանապատային և լեռնատափառանային առտիճերում:

**ԿԵՆՏԱՐԱՆՆՈՐՅԱՆ ԱՊԲԱԾԱԿԱՆԱԿՈՐՅՈՒՆՆԵՐԸ:** Տարեկան ծվաղություն է մեկ անգամ՝ դնելով 1-4. սովորական՝ 2-3 ձու:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: Բավականին կանոնավոր հանդիպում է չորս շրջանում: 2008 թ.-ի տվյալներով, Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրոպական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում պահվում են 36 արագածածներ:


**Վատանգման իիմնական գործողութերը:** Թշվաքանակի վրա բացասարար է ազդում ապօրինի բռն:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոմիտեինսական Համեմունք 1-ում:

Անհրաժեշտ է ուժեղացնել չոփ շրջանում բռչունեթին բռնելու և ապօրինի որսի նկատմամբ վերահսկողությունը և մեծացնել տուգանքի չափը: Խիստ անհրաժեշտ է բարձրացնել բնակչության ընսասահասնականի հոգագելության մակարուակը:

87. Կողար-կաշաղակ, *Haematopus ostralegus* Linnaeus, 1758  
 Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՍԱՆԵՐ, CHARADRIIFORMES

Ընտանիք՝ Կողար-կաշաղակներ, *Haematopodidae*



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ հազվագյուտ, սակավաբիզ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

**Տարածվածությունը:** Լայն տարածված է գրեթե ամբողջ Երկրագնդի վրա, սակայն թվաքանակը մեծ չեղած է:

**Տարածվածությունը Հայաստանում:** 30-40-ականների տվյալներով՝ Հայաստանում հանդիպել է ամենուրեք: 50-ականներին եզակի առանձնյակներ նկատվել են Սևանա լճի ջրավազանում և Արաքս գետի հովտում: Ներկայումս՝ չվահյուր Սևանա լճի ջրավազանում և Արաքս գետի հովտում:

**Ապրելավայրերը:** Սևանա և Լիճք (Մարտունու շրջան) լճերի ծանծաղութեներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Դնում են 2-4 ձու: Թխումը տևում է 21-27 օր: Հայաստանում չի բնադրում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Եզակի առանձնյակներ հանդիպում են Նախիկին Գիլլ և Լիճք լճերի շրջակայքում:


**Վտանգման հիմնական գործուները:** Թվաքանակի վրա բացական ազդեցություն են քողեն Արարատյան հարթավայրի ճահճացած տարածքների չորացումը և Սևանա լճի ծանծաղութեների անհետացումը՝ կապված լճի մակարդակի իջեցման հետ:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է կատարել հաշվառումներ՝ թվաքանակի և տարածվածության արդի վիճակը պարզաբնուրության ավելի արդյունավետ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

88. Ծովային քարադր, *Charadrius alexandrinus* Linnaeus, 1758  
Կարգ՝ ՋԱՐԱՎԴՐԱՆԱՍԻՆԵՐ, CHARADRIIFORMES

## Ընտանիք՝ Քարաղրներ, *Charadriidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՄԾ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնհանավորված է որպես «Խողելի»՝ VU D1:

**Տարածվածություն:** Տարածված է Պորտուգալիայից մինչև Շապունիա, դեպի հարավ՝ մինչև Կապյան Երկիր, Յելլոն, Տամանիա, ԱՄՆ և Վեստ-Ինդիա ու Չիլիի ափեր:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնադրում է Արարատի մարզում՝ Արմաշի ձկնարուծական տնտեսության տարածքում, հավանաբար, նաև մասնատված՝ Արմավիրի մարզում, Արմավիր քաղաքի շրջակայրում:

**Ապրելավայրեր:** Աղուտներ, աղային և կավային տեղամասեր:

**Կենսաբանության առանձնահատկությունները:**Հայաստանում չվող, բնադրավայրերում հանդիպում է մարտ-ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է հողի վրա: Ձվադրում՝ սպիրարար, տարեկան մեկ անգամ՝ ապրիլ-հունիսին: Դնում են 2-4, սպիրարար, 3 ճու: Զարգացում՝ 24-27 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Բնադրավայրերը հայտնի են միայն Արմաշի ձկնարդական տնտեսության տարածքից: Պոպուլյացիան կազմված է, հավանաբար, 30-40 տուանին:

**Վասնագման հիմնական գործուները:** Փոքր թվաքանակ: Բնորոշ ապրելավայրերի ոչչացումը տևական գործունության արդյունքում: Անառուների արածեցումը ենթադրվող բնառուականությունը:

**Պահապատճենական միջոցարրությունները:** Չեն իրականացվում:

Տեսակը իսկան պահպանման կարիք ունի: Անհրաժեշտ է ցանկապատճե Արարատի մարզի հայտնի բնադրավայրերը՝ բազմացման շրջանում մարդկանց և անասունների մուտքը կանխելու խայր:

89. Հայտակող քարաղ, *Charadrius leschenaultii* Lesson, 1826  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՍԱՆԵՐ, CHARADRIIFORMES

Ընտանիք՝ Քարաղներ, *Charadriidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a; Ca(i); D:

**Տարածվածությունը:** Թուրքիայից և Հյուսիսային Իրանի անապատներից մինչև Մոնղոլիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** XX դարի սկզբում բնադրել է Արմավիրի մարզի Սարդարապատի տափաստանում:

**Ապրելավայրերը:** Կավային, աղուտային և խճային անապատներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Չվող, բնադրավայրերում հանդիպում է մարտ-ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է հողի վրա: Բնադրումը մարտի վերջից մինչև ապրիլի կեսերը: Դնում են 2-4, սովորաբար, 3 ձու: Զարգացումը՝ մոտ 24 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայումս Հայաստանում բնադրումներ հայտնի չեն:

**Վտանգման իմնական գործոնները:** Հայտնի չեն: Սակայն տեսակի փոքր թվաքանակը և մարդու տնտեսական գործունեությունը պատճական բնադրավայրերում կարող է հն բացասական ազդեցություն ունենալ Հայստանում տեսակի պոպուլյացիայի վրա:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Անհրաժեշտ է փնտրել բնադրավայրերը Սարդարապատի տափաստանում:

90. ճախրուկ, *Chettusia gregaria* Pallas, 1771  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՍԱՆԵՐ, CHARADRIIFORMES

Ընտանիք՝ Քարադրներ, Charadriidae



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ հազվագյուտ տեսակ է, որի թվաքանակը արագորեն կրծատվում է: Նախկին ԽՍՀՄ էնդեմիկ: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Critically Endangered A3bc+4bc» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a; Ca(i); D:

**Տարածվածությունը:** Կղզյակային տարածվածություն ունի Վոլգայի աջափնյա տափատանային և կիսանճապատային շրջաններից՝ մինչև Չայսանի գոգգածք և Տարբագատայի Չելիկտինյան հովիտ արևելքում: Չորս ժամանակ հանդիպում է Ղազախստանում, Միջին Ասիայում, Ուկրաինայում և Անդրկովկասում: Զննում է Հյուսիս-Արևելյան Աֆրիկայում, Իրանում, Իրաքում, Հյուսիս-Արևմտյան Հնդկաստանում և Պակիստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Եզակի առանձնյակներ նկատվել են Արաքս գետի հովտում և Գեղամա լեռնաշղթայի լեռնատափաստաններում :

**Ապրելավայրերը:** Ուսումնասիրված չեն:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում են խմբերով, ապրիլի երկրորդ կեսին: Դնում են 4 ձու: Թխսումը տևում է 25 օր: Հայաստանում չի բնադրում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Տվյալներ չկան:

**Վտանգման հիմնական գործոնները:** Մշտապես եղել է սակավաթիվ:

**Պահպանության միջոցառումները:** Հայաստանում պահպանության հատուկ միջոցառումներ մշակված չեն:

Անհրաժեշտ է կատարել հաշվառումներ՝ թվաքանակի և տարածվածության արդի վիճակը պարզաբանելու և պահպանության ավելի արդյունավետ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

91. Սպիտակապոչ եղտյուրիկ, *Chettusia leucura* (M.N.K. Lichtenstein, 1823)  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱԾԱՆԵՐ, *CHARADRIIFORMES*

Ընտանիք՝ Քարադրներ, *Charadriidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Տարածված է Կենտրոնական Թուրքիայից, Իրաքից և Իրանից դեպի արևելք մինչև Հարավ-Արևելյան Աֆրիկա, Պակիստան և Հյուսիս-Արևմտյան Հնդկաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Վերջին տարիներին՝ հանրապետությունում առաջացնում է գաղութելը: Բնադրավայրերը հայտնաբերված են Արարատի մարզի Արմաշի ձկնարուծական տնտեսության տարածքում:

**Ապրելավայրերը:** Կավային աղուտային տեղամասեր ջրավազանների մոտ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող, բնադրավայրերում հանդիպում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է հողի վրա: Ձվադրումը՝ տարեկան մեկ անգամ՝ ապրիլին-մայիսի սկզբին: Դնում են 3, հազվադեպ՝ 4 ձու: Զարգացումը՝ 22-24 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Բնադրավայրերը հայտնի են միայն Արմաշի ձկնարուծական տնտեսության տարածքում: Պոպուլյացիայում հաշվառվում է, հավանաբար, 30-40 զույգից ոչ ավել:


**Վտանգման իմնական գործոնները:** Փոքր թվաքանակը: Բնորոշ բնադրավայրերի ոչնչացումը տնտեսական գործունեության արդյունքում: Անասունների արածեցումն անմիջապես բնադրավայրերի մոտ: Որսագործությունը:

**Պահպանության միջոցառումները:** Չեն կիրառվում:

Տեսակը խիստ պահպանման կարիք ունի: Անհրաժեշտ է սահմանել խիստ վերահսկողություն բնադրավայրերում՝ բազմացման շրջանում մարդկանց և անասունների մուտքը կանխելու համար:

**92. Սեծ իլիկակոցար, *Limosa limosa* (Linnaeus, 1758)**  
**Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՑՄԱՆԵՐ, CHARADRIIFORMES**

**Ընտանիք՝ Մորակոցարմեր, Scolopacidae**



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ հազվագյուտ տեսակ է, որի թվաքանակը արագորեն կրծատվում է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2b:

**Տարածվածությունը:** Տարածված է հսկանդիայից մինչև Կամչատկա, Սև ծովի հարավային շրջաններում, Անդրկովկասում, Կասպից ծովում, Միջին Ասիայում, Սննդոլիայում: Զնեռում է Եվրոպայում, Հարավային Ասիայում, Աֆրիկայում, Ավստրալիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է գարնանային և աշնանային չորս շրջաններում Սևանա լճի ավազանում, Արարատյան հարբավայրում:

**Սարելավայրերը:** Նախընտրում է գետաբերանները, ճահճուտները, գերխոնավ տարածքները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են ջրին մոտ խոտաբույսերի մեջ, թփուտների տակ: Դնում են բաց կանաչավուն, 48-59 մմ չափեր ունեցող 4 ձու: Թիսումը՝ 24 օր: Զագերն աճում են շատ արագ և մեկ ամիս հետո կարողանում են քոչել:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հատուկ ուսումնասիրություններ չեն կատարվել:

**Վտանգման իմնական գործոնները:** Չորս շրջաններում չկանոնավորված դրսը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում են «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

**Անհրաժեշտ է կանխել չկանոնավորված որսը: Ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:** Չորս շրջանում կազմակերպել թվաքանակի հաշվառում:

**93. Սեծ արորիկ, *Numenius arquata* (Linnaeus, 1758)**  
**Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՍՆԵՐ, CHARADRIIFORMES**

**Ընտանիք՝ Մորակտցարմեր, Scolopacidae**



**Կարգավիճակը:** Հայաստանի համար՝ հազվագյուտ տեսակ է, որի թվաքանակը արագորեն կրծատվում է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2b:

**Տարածվածությունը:** Տարածված է Բրիտանական կղզիներից մինչև Սերմալթիկա, Եվրոպայում, Կրիմում, Կովկասում, Անդրկովկասում, Սոնողիայում: Զննում է Հյուսիսային և արևադարձային Աֆրիկայում, Պարսկական ծովածոցում, Հնդկաստանում, Չինաստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է գարնանային և աշնանային չորաշաբաթներում Սևանա լճի ավազանում և Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքներում:

**Ասրելավայրերը:** Շահնուտներ, բաց մարգագետիններ, գերխոնավ տարածքներ, ջրամբարների ափեր:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են ջրին մոտ խոտարույսերի մեջ: Դնում են բաց կանաչավուն, 65-66 մմ չափեր ունեցող 4 ծու: Թիսումը՝ 26-28 օր: Ձագերն աճում են շատ արագ և 1,5 ամիս հետոն կարողանում են թռչել:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հատուկ ուսումնասիրություններ չեն կատարվել:


**Վտանգման հիմնական գործոնները:** Չոր շրջաններում չկանոնավորված որսը և որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում են «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

**Անհրաժեշտ է կանխել չկանոնավորված որսը: Ուժեղացնել պայքարը որսագողության դեմ:** Չոր շրջանում կազմակերպել թվաքանակի հաշվառում:

94. Կրկնակտցար, *Gallinago media* (Latham, 1787)  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՍԱՆԵՐ, CHARADRIIFORMES

Ընտանիք՝ Մորակտցարներ, Scolopacidae



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Տարածված է Ավանդինավան երկրներում, Եվրոպայում, Ուկրայինայում, Ռուսաստանում, Անդրկովկասում: Զննում է Հարավային Աֆրիկայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է գարնանային և աշնանային չոր շրջաններում Սևանա և Արփի լճերի ավազաններում, Արարատյան հարթավայրում, արհեստական ջրամբարների ափամերձ տարածքներում, Լոռվա մարզում:

**Ապրելավայրերը:** Նախընտրում է գետաբերանները, լճափերը, ճահճուտները, խոնավ մարգագետինները, գերխոննավ տարածքները:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բները պատրաստում են ճիմապատ, լավ թաքնված վայրերում: Բնադրում է հողի վրա: Դնում են բաց մոխրագույն, 41-45 մմ չափեր ունեցող 4 ձու: Թիսումը՝ 22-24 օր: Զագերն աճում են շատ արագ, մոտ մեկ ամիս հետո հասնում են ծնողների չափերին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հատուկ ուսումնասիրություններ չեն կատարվել:

**Վտանգման հիմնական գործոնները:** Չոր շրջաններում չկանոնավորված որսը և որսագողությունը:


**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում են «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

Անհրաժեշտ է կանխել չկանոնավորված որսը: Ուժեղացնել պայքարը որսագողության դեմ: Չոր շրջանում կազմակերպել թվաքանակի հաշվառում:

**95. Ոտնացույիկ, *Himantopus himantopus* (Linnaeus, 1758)**  
**Ենթատեսակ՝ *Himantopus himantopus himantopus* (Linnaeus, 1758)**

Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՍՍԱՆՆԵՐ, *CHARADRIIFORMES*

Ընտանիք՝ Բզակտուցներ, *Recurvirostridae*



**Կարգավիճակը:** Խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Եվրոպայում և Աֆրիկայում՝ մինչև Հարավային Եվրոպա, դեպի արևելք՝ մինչև Մոնղոլիա և դեպի հարավ՝ մինչև Հարավային Աֆրիկա, Մադագասկար և Յեյլոն:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հիմնականում բնադրում է Արարատյան հարրավայրում ինչպես նաև Արփի ու Սևանա լճի շրջակայրում:

**Ապրելավայրերը:** Նախընտրում է կանգնած, դանդաղահոս ջրերը նոր բուսականությամբ:

**Կենսաբնակչության առանձնահատկությունները:** Բնադրում է քաց ջրային ծանծաղուտ տարածներում է ոչ մեծ զաղութերով՝ չոր կամ ճահճացած հողի վրա: Բույնը՝ գետնին փոքր թմբերի վրա: Զվարդում՝ տարեկան մեկ անգամ՝ հունիսին: Դնում է 3-4 ձու, ձվերը կորցնելու դեպքում հնարավոր է կրկնակի ձվարդում: Սնվում է հիմնականում ջրային անողնաշար կենդանիներով և դրանց թրթուրներով:

**Ժվարանակը և դրա փոխիմնան միտումները:** Համաձայն վերջին հաշվառումների՝ Հայաստանում գրանցված է 50-70 զույգ: Մոսկվայի կենդանաբանական այգում գտնվում է 6 առանձնյակ, որտեղ հայտնի է անազատ պայմաններում բազմանալու մեկ դեպք:


**Վտանգման հիմնական գործոնները:** Միշտ եղել է սակավաթիվ: Զվարդման ժամանակ վնաս են կրում ընտանի անաստների կողմից: Ոտնացույիկի թվաքանակի վրա ազդում է ճահիճների չորացումը, թունաքիմիկատների օգտագործումը, շրջակա գյուղերի բնակչների կողմից բնադրման ընդացքում թռչուններին անհագտություն պատճառելը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

Անհրաժեշտ է վերանայել ինչպես ճահիճների կառավարումը, այնպես էլ բունաքիմիկատների օգտագործումը, իրականացներով այն ավելի անվտանգ, էկոլոգիական մերողներով՝ տեսակի և դրա ապրելավայրերի պահպանման համար:

96. Բզակոտոց *Recurvirostra avosetta* Linnaeus, 1758  
Կարգ՝ ՔԱՐԱՎՈՐԱՆՍԱՆԵՐ, CHARADRIIFORMES

Ընտանիք՝ Բզակոտոցներ, *Recurvirostridae*



**Կարգավիճակը:** Հայաստանում խիստ հազվագյուտ, սակավաթիվ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Սպորադիկ տարածված է ամբողջ Եվրասիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Արաքս գետի հովտում և Սևանա լճի ավազանում:

**Ապրելավայրերը:** Նախկինում բնադրել է Արարատյան հարթավայրի աղի ջրավազանների հարք ափերին, ինչպես նաև Գիլի լճում: Ապրելավայրերի վիճակը վերջին տարիներին որոշ չափով լավացել է՝ կապված Արարատյան հարթավայրի ջրային հանդակների լայնացման հետ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում է չոր, բաց տեղերում, ջրից ոչ հեռու: Ջվադրում է մայիսի կեսերից մինչև հունիսի կեսերը: Դնում է 4 ձու: Թխասում՝ մոտ 23 օր: Վերջին տարիներին կրկին բնադրում է Արարատյան հարթավայրում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** 1969 թ-ի ապրիլի 16-ին Լիճը լճում հանդիպել են մի քանի բոչուններ:


**Կտանգման հիմնական գործոնները:** Հանրապետությունում միշտ եղել է սակավաթիվ:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

**Հատուկ միջոցառումներ չեն կիրառվում:** Անհրաժեշտ է ճշգրտել բվաբանակը և տարածումը հանրապետությունում:

97.Մարզագետնային ծիծառակլոցար *Glareola pratincola* (Linnaeus, 1766)  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱԾԱՆԵՐ, *CHARADRIIFORMES*

Հնտամիք՝ Ծիծառակլոցարներ, *Glareolidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է, բնադրման տեղային բնույթով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպա, Աֆրիկա, Հարավ-Արևմտյան Ասիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Չորս շրջանում հանդիպում է Շիրակի, Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում: Բնադրավայրեր հայտնաբերվել են Արմավիրի (գ. Տարոնիկ), Արարատի (Արմաշի ձկնաբուծական տնտեսություն) և Գեղարքունիքի (Սևանա լիճ) մարզերում:

**Ապրելավայրերը:** Խոտարուսածածկով տափաստաններ, կավային և աղուտային տարածքներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Գաղութային տեսակ է: Հայաստանի բնադրավայրերում հանդիպում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է հողի վրա, ջրից ոչ հեռու: Զվարդում է տարեկան մեկ անգամ՝ ապրիլին-մայիսի սկզբին: Դնում է 3, հազվադեպ՝ 2 կամ 4 ձու: Թխաւոմ՝ մոտ 17-19 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Կանոնավոր բնադրավայրերը հայտնի են միայն Արմաշի ձկնաբուծական տնտեսության տարածքից: Բնադրող գաղութի թվաքանակը հայտնի չէ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Փոքր թվաքանակը: Բնորոշ ապրելավայրերի քայլայումը տնտեսական գործունեության արդյունքում: Անասունների արածեցումն անմիջապես բնադրավայրերի մոտակայքում: Որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Հատուկ միջոցառումներ չեն կիրառվում:

Անհրաժեշտ է ցանկապատել Արմաշի ձկնաբուծական տնտեսության տարածքում գտնվող բնադրավայրերը՝ բնադրման շրջանում մարդու և ընտանի խոշոր եղջերավոր անասունների մուտքը կանխելու նպատակով: Կազմակերպել որսորդների և բնակչության էկոլոգիական դաստիարակման դասընթացներ:

98. Տափաստանային ծիծառակոցար, *Glareola nordmanni* J. G. Fischer, 1842  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱԾԱՆԵՐ, *CHARADRIIFORMES*

Ընտանիք՝ Ծիծառակոցարներ, *Glareolidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ, չոփ շրջանում հանդիպող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii); D1:

**Տարածվածությունը:** Դունայի ստորոտների տափաստաններից մինչև Մերձբալթյան տափաստաններ, դեպի հյուսիս՝ մինչև հարավային Բելոռուսիա, Դոնի միջին հոսանք, Սամարա, Օմսկ, դեպի հարավ՝ մինչև Նախակովկաս, Աստրախան, Արալյան ծով և Զայսան լիճ: Տեղ-տեղ բնադրում է Ռումինիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Չոփ շրջանում հանդիպում է Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում:

**Ապրելավայրերը:** Խոտարուսածածկով տափաստաններ, կավային և աղուտային տարածքներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող երանակները նկատվում են գարնանը (մարտ-ապրիլ), ջրամբարներին մոտ: Հաճախ հանդիպում են քարաղրների հետ ընդհանուր խմբերում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Բնադրման վերաբերյալ տվյալները ճշգրտման կարիք ունեն: Չվող երանակները նկատվում են ոչ կանոնավոր և, սովորաբար, կազմված են 5-15 առանձնյակներից:


**Վտանգման հիմնական գործոնները:** Տեսակի ամրող արեալում նկատվում է թվաքանակի կրծատում: Բնորոշ ապրելավայրերի քայլայումը տնտեսական գործունեության արդյունքում: Որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Չոփ շրջանում օգտագործվող տարածքների մի մասը պահպանվում են «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է կազմակերպել որսորդների և բնակչության էկոլոգիական դաստիարակության դասընթացներ:

99. Հայկական որոր, *Larus armenicus* Buturlin, 1934  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՍԱՆԵՐ, *CHARADRIIFORMES*

Ընտանիք՝ Որորներ, *Laridae*



**Կարգավիճակը:** Բնութագրվում է սահմանափակ արեալով և հեշտ խոցելի բնադրավայրային բիոտոպերով: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Հայաստան, Արևելյան Թուրքիա, Արևմտյան Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Ամբողջ տարվա ընթացքում հանդիպում է Սևանա լճի ավագանում, այստեղ է գտնվում նաև հիմնական գաղութը: Բնադրում է Արփի լճի կղզիներում: Հանդիպում է զգ. Արարսի, Հրազդանի և Ախուրյանի հունի երկայնքով: Վերջին տարիներին՝ կապված Արարատյան հարթավայրում ձկնաբուծական տնտեսությունների զարգացման հետ, դարձել է սովորական տեսակ, սակայն այստեղ չի բնադրում:

**Սպրելավայրերը:** Մինչև Սևանա լճի մակարդակի իջնելը բնադրել է ջրաեզրին մոտ՝ ուղղաբերձ լանջերին: Բնադրման բարենպաստ պայմաններից բացի, առկա էր հարուստ կերային բազու՝ շնորհիվ ինչպես լճում ձկների բարձր թվաքանակի, այնպես էլ ձկնամշակման գործարանի բափոնների առկայության: Լճի մակարակի իջեցումը հանգեցրեց բնադրման պայմանների և կերային բազայի խիստ վատքարացմանը: Սակայն լճի մակարակի իջեցման շնորհիվ զ. Նորաշենի մոտակայրում առաջացան երկու կղզյակներ, որոնք որորները հաջողությամբ յուրացրեցին որպես բնադրավայր: Ներկայումս որորների սննման համար կարևոր դեր են խաղում սննդային մնացորդները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրային հիմնական երկու գաղութները գրադեցնում են 3,5 հա մակերեսով երկու կղզյակները: Դիտվում է Արփա լճում բնադրող գույգերի թվաքանակի մեծացման միտում: Մայիսի վերջին-հունիսի սկզբին կարելի է հանդիպել ինչպես ձվերով բներ, այնպես էլ կղզյակների մոտ լողացող ձագեր: Կախված տվյալ տարվա պայմաններից՝ բազմացմանը մասնակցում են 20-86% որորներ: Սովորաբար, դնում են 3, հազվադեպ՝ 2 կամ 4 ձու: 1965-1970 թթ.-ին Սևանա լճի գաղութում հաշվառվել է 60-100 բույ: Սուպել բարենպաստ տարիներին հաշվառվում է մինչև 500 բույ: Կախված վտանգման գործոնների առկայությունից՝ պահպանվում են ծագերի 17-56%-ը:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը խիստ անկայուն է և որոշվում է բնադրման և կերային առկա պայմաններով: Միջինացված տվյալների համաձայն՝ գարնան այստեղ հանդիպում է 800, ամռանը՝ 700, աշնանը՝ 1000, ձմռանը՝ 500 առանձնյակ: Սևանա լճի սառեցման դեպքում որորների հիմնական մասը չվում է զ. Արարսի հովիտ: Առավել բարենպաստ տարիներին ձմռելուց առաջ որորների թվաքանակը չի գերազանցում 1200 առանձնյակի:


**Կտանգման հիմնական գործոնները:** Բնադրավայրերի ոչնչացումը: Մարդու կողմից պատճառվող անհանգստությունը և որորների ուղղակի ոչնչացումը: Բնադրման պայմանների և կերային բազայի վատքարացումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում: Նորաշենի կղզյակները ներգրավվել են արգելոցային գոտում:

Անհրաժեշտ է ավահովել որորների պահպանությունը ինչպես լճում, այնպես էլ աղբանոցների մոտ: Մշտապես անցկացնել բացատրական աշխատանքներ բնակչության շրջանում:

100. Որորակտուց ջրածիծառ, *Sterna nilotica* (J. F. Gmelin, 1789)  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱԾԱՆԵՐ, *CHARADRIIFORMES*

Ընտանիք՝ Ջրածիծառներ, *Sternidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնահատվում է որպես «հսոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Հարավային և Միջին Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Աֆրիկա,  
Ավստրալիա, Ամերիկա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հավանաբար, բնադրում է Արարատի մարզի Արմաշ  
ձկնաբուծական տնտեսության տարածքում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի նախկին Գյվի  
լճի շրջակայրում:

**Ապրելավայրերը:** Աղուտային, աղային և կավային տեղամասերը՝ ջրավազանների մոտ:  
Լեռնատափատանային լճերը և ճահճացումները:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող, հանդիպում է ապրիլց  
մինչև սեպտեմբեր, արեալի մասերում բնադրում է հողի վրա: Զվարդումը՝ ապրիլի վերջին-  
մայիսի սկզբին: Դնում են 1-4 ձու: Չարգացումը՝ 22-23 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանում բնադրումները հայտնի չեն:  
Տեսակը հանդիպում է զույգերով, կամ 4-6 առանձնյակներից կազմված խմբերով:

**Վտանգան հիմնական գործուները:** Փոքր թվաքանակը: Բնորոշ բնադրավայրերի  
ոչնչացումը տնտեսական գործունեության արդյունքում: Անասունների արածեցումը ենթադրվող  
բնադրավայրերի մոտ:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Տեսակը խիստ պահպանման կարիք ունի: Անհրաժեշտ է ցանկապատել բնադրավայրերը  
Արարտի և Գեղարքունիքի մարզերում՝ բազմացման շրջանում մարդկանց և անասունների մուտքը  
կանխելու համար:

101. Փոքր ջրածիծառ, *Sterna albifrons* Pallas, 1764  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱՍԱՆԵՐ, CHARADRIIFORMES

Ընտանիք՝ Ջրածիծառներ, Sternidae



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Հարավային և Սիրիա Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Կենտրոնական և Հարավային Ասիա, Ավստրալիա, Պոլինեզիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնադրում է Արմավիրի և Արարատի մարզերում: Արարատի մարզում՝ Արմաշի ձկնաբուծական տնտեսության տարածքում:

**Ապրելավայրերը:** Ջրավազաններին մոտ գտնվող աղուտները, աղային և կավային տեղանակները:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Գաղութային տեսակ է: Հայաստանում՝ չվող, հանդիպում է ապրիլ-մայիսից նիմշև սեպտեմբեր-հոկտեմբեր: Բնադրում է հողի վրա: Զվարդումը՝ մայիսի վերջից մինչև հուլիսի կեսերը: Դնում են 1-3 ձու: Զարգացումը՝ 18-22 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Բնադրավայրերում հանդիպում են առանձին գույգերով կամ 4-6 գույգերից կազմված փոքր գաղութներով, հաճախ՝ կտցարների հետ խառը գաղութներում: Արարատյան հարթավայրի հարմար բիոսոպերում ամենուրեք հազվադեպ է:

**Վտանգման հիմնական գործոնները:** Փոքր թվաքանակը: Անասունների արածեցումը ենթադրվող բնադրավայրերի մոտ:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Տեսակը խիստ պահպանման կարիք ունի: Անհրաժեշտ է ցանկապատել բնադրավայրերը՝ բազմացման շրջանում մարդկանց և անասունների մուտքը կանխելու համար:

102. Սալտակայտ ջրածիծառ, *Chlidonias hybrida* (Pallas, 1811)  
Կարգ՝ ՔԱՐԱԴՐԱՆԱԾԱՆԵՐ, *CHARADRIIFORMES*

Ընտանիք՝ Ջրածիծառներ, *Sternidae*



**Կարգավիճակը:**Հայաստանում մասնատված արեալով բնադրող, սակավաթիվ տեսակ է:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Հարավային և Սիջին Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա,  
Կենտրոնական և Հարավային Ասիա, Պոլինեզիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնադրում է Արմավիրի, Արարատի, Շիրակի և  
Գեղարքունիկի մարզերում:

**Ապրելավայրերը:** Բնադրում է տափաստանային և կիսաանապատային շրջանների ջրային  
և մերձջրային բուսականությամբ կանգուն և բույլ հոսքով հարթավայրային ջրավազաններում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Գաղութային տեսակ է: Հայաստանում չվող,  
հանդիպում է ապրիլ-մայիսից մինչև սեպտեմբեր-հոկտեմբեր: Գաղութները տեղակայվում են  
բուսականությամբ ջրավազաններում: Բները հաճախ տեղադրված են լողացող տերևների վրա:  
Ձվադրումը՝ մայիսի վերջից մինչև հունիսի կեսերը: Դնում են 2-3 ձոլ: Զարգացումը՝ 18-20 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Բնադրավայրերում հանդիպում է առանձին  
գույզերով, կամ ոչ մեծ գաղութներով, հաճախ՝ այլ ջրածիծառների հետ խառը գաղութներում:  
Բնորոշ բիոտոպերում ամենուրեք հազվադեպ է կամ սակավաթիվ:

**Վտանգման իիմնական գործուները:** Փոքր թվաքանակ: Բնորոշ ապրելավայրերի  
ոչնչացումը տնտեսական գործունեության արդյունքում: Անասունների արածեցումը ենթադրվող  
բնադրավայրերի մոտ: Որսագողությունը:

**Պահպանության միջոցառումները:** Բնադրավայրերի մի մասը գտնվում է «Սևան» ազգային  
պարկի տարածքում:

Տեսակը խիստ պահպանման կարիք ունի: Անհրաժեշտ է ցանկապատել հարմար  
բնադրավայրերը՝ բազմացնալ շրջանում մարդկանց և անասունների մուտքը կանխելու համար:

103. Սևափոր դրլոն, *Pterocles orientalis* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԴՈԼՈՆԱՆՍԱՆՆԵՐ, *CICONIFORMES*

Ընտանիք՝ Դոլոններ, *Pteroclidae*



**Կարգավիճակը:** Սակավաթիվ, խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii); C2a(i); D1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Իրերիական թերակղզուց, Հյուսիսային Աֆրիկայից և Փոքր Ասիայից, դեպի արևելք՝ մինչև Իրան-Թուրքիա սահմանը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Արարատի և Արմավիրի մարզերի կիսանապատճերում:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է կիսանապատճերում՝ բնակեցնելով համեմարտար թեր լանջերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Բնադրում է հողի վրա: Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դեկտու 2-3 ձու: Զվերը կորցնելու դեպքում կրկին ձվադրում է: Սնվում է կանաչ դալար խոտաբույսերով, սերմերով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն:

**Վտանգման հիմնական գործուները:** Սևափոր դրլոնի թվաքանակի վրա բացասականորեն կարող է ազդել անասունների զերարածեցումը, ձվադրման շրջանում անհանգստացնելը վայրի բույսեր հավաքողների և հովիվների շների կողմից, ինչպես նաև ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Ապրելավայրերի մի մասը գտնվում է «Խոսրովի անտառ» արգելոցի տարածքում:


**Անհրաժեշտ է վերանայել կիսանապատային գոտում՝ տեսակի արեալի սահմաններում, անասունների արածեցման մեխանիզմները: Նպատակահարմար է սեղոնային արգելավայրերի կամ հանգստի գոտիների ստեղծումը:**

**Անհրաժեշտ է ուժեղացնել ապօրինի որսի նկատմամբ վերահսկողությունը և բարձրացնել բնակչության էկոլոգիական իրազեկության մակարդակը:**

**104. Բվեճ, *Bubo bubo* (Linnaeus, 1758)**  
**Ենթատեսակ՝ *Bubo bubo interpositus* (Rothschild and Hartert, 1910)**

Կարգ՝ ՔՎԱՆՍԱՎՆԵՐ, *STRIGIFORMES*

Ընտանիք՝ Բվեճ, *Strigidae*



**Կարգավիճակը:** Սակավաբիվ, խոցելի տեսակ է: Գրանցված է Ռուսաստանի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a; C2a(i); D1:

**Տարածվածությունը:** Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացված է նոմինատիվ Ենթատեսակի տարածման շրջանից դեպի հարավ, Քեսարարիայում, Ղրիմում, Կովկասում, Փոքր Ասիայում, Սիրիայում: Հյուսիսային սահմաններն անցնում են մոտավորապես Խարկովի մարզի հարավային մասերով, Կիևի մարզով, Պողոլիայով, Քեսարարիայով, Թավրիզյան տափաստաններով, Դնեպրի ստորոտներով: Հանդիպում է նաև Հյուսիսային Կովկասում, դեպի արևելք՝ մինչև Էրզրում, դեպի հարավ՝ մինչև Սիրիա, Հյուսիսային Պաղեստին և Հյուսիսարևելյան Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում համարվում է համարյա ամենուրեք:

**Ապրելավայրերը:** Նստակյաց է: Լայնորեն տարածված է և բնադրում է տարբեր գոտիներում՝ կիսանմասապատից մինչև լեռնային տափաստաններ 2700 մ ծ.մ.բ. բարձրություններում: Լեռներում կատարում է ուղղահայց միզրացիաներ՝ ձմռանը իջնելով հարթավայրեր:

**Կենարանության առանձնահատկությունները:** Բնադրում է քարանձավներում, ժայռերի միջև և խոլ կիրճներում: Որսի դուրս է գալիս մթնշաղին և որս կատարում մինչև լուսաբաց: Սնվում է, առավելապես, կրծողներով և բռչուններով: Նստակյաց: Բնադրում է փշակներում, արեալի այլ հատվածներում հաջողությամբ բնակեցնում է բռչնաբները: Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դնելով 2-4 ձու: Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում 2007 թ.-ին գրանցվել են 13 բազմացող գույզեր, որոնցից ստացվել են 16 ձագեր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: 2008 թ.-ի տվյալներով, Երևանի Կենդանաբանական այգում պահվում են 9, իսկ Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում՝ 154 առանձնյակ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Տվյալները բավարար չեն, սակայն, հավանաբար, բացասական գործոններից է մարդու կողմից ուղղակի հետապնդվելը: Բազմաթիվ են անազատ

պայմաններում պահելու կամ խրտվիլակներ պատրաստելու նպատակով բվեճին բռնելու դեաքերը: Հավանաբար, թվաքանակի վրա ազդում է նաև բունաքիմիկատների օգտագործման պետական կարգավորման անբավարութվյունը, ինչպես նաև բնական բիոտոպերի՝ կերակրավայրերի, յուրացունը գյուղատնտեսական կարիքների համար, քանի որ բվեճը խիստ զգայուն է բիոտոպերի փոփոխման նկատմամբ:

**Պահպանության միջոցառումները:** Գրանցված է CITES-ի Հավելված 2-ում, Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում: Պահպանվում է պետական մի շարք արգելոցներում և արգելավայրերում:

Հաշվի առնելով թվաքանակի վերաարերյալ տվյալների սակավությունը, անհրաժեշտ է ներառել այս տեսակը կենսաբազմազանության մոնիթորինգի պլանում՝ ամենամյա հաշվառումներ կատարելու համար: Նկատի ունենալով բազմաթիվ վտանգները, խիստ անհրաժեշտ է մշակել մի շարք միջոցառումներ ինչպես բնադրավայրերը պահպանելու, այնպես էլ բնակչության էկոլոգիական դաստիարակման ուղղությամբ: Անհրաժեշտ է վերանայել բվեճի բնադրավայրերում հողային ռեսուրսների կառավարման և գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի մերողները՝ կիրառելով էկոլոգիապես ավելի անվտանգ միջոցներ: Մեծացնել տուգանքի շափր ապօրինի որսի համար:

105. Թավշառու բու, *Aegolius funereus* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԲՎԱՆՍԱՆՆԵՐ, *STRIGIFORMES*

Ընտանիք՝ Բվեր, *Strigidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ, ռելիկտային տեսակ է, խիստ սահմանափակ արեալով:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնահատվում է որպես «Խողելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Հյուսիսային և Միջին Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա: *Caucasicus*  
ենթատեսակը, որը հանդիպում է Հայաստանում, բնակեցնում է Կովկասը և Թուրքիան:

**Տարածվածությունը Հայաստանում:** «Խորովի անտառ» արգելոցում հայտնի են մի քանի  
մեկուսացված ապրելավայրեր:

**Ապրելավայրերը:** Ապրում է լեռնալանջերի, ձորակների լայնատերև անտառներում և գետերի  
հովիտներում, որտեղ կան հին փշակավոր ծառեր:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Նստակյաց: Բնադրում է փշակներում,  
արեալի այլ հատվածներում հաջողությամբ բնակեցնում է բոչնաբները: Տարեկան մեկ ձվադրում՝  
փետրվարից մինչև հունիս, կախված կերային բազայի առկայությունից: Դնում են 1-10,  
սովորաբար, 3-7 ձու: Զարգացում՝ 25-32 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միասնական տեսակ:** Խիստ հազվագյուտ տեսակ է  
չբացահայտված տարածմամբ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Փոքր թվաքանակը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խորովի անտառ» արգելոցում:

Տեսակը խիստ պահպանման կարիք ունի: Անհրաժեշտ է հայտնաբերել նոր բնադրավայրեր  
և կատարել միջոցառումներ տեսակին արհեստական բնադրավայրեր-բոչնաբներ գրավելու  
համար:

106. Կանաչ մեղվակեր, *Merops persicus* Pallas, 1773  
Կարգ՝ ՆԵՐԿԱՐԱՐԱՆԱՆՆԵՐ, *CORACIIFORMES*

Ընտանիք՝ Մեղվակերներ, *Meropidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Հյուսիսային Եգիպտոսից և Սերմանիա Արևելքից մինչև Ղազախստան և Հյուսիս Արևելյան Հնդկաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արարատյան հարբավայրի կիսաանապատային տեղանքներ:

**Ապրելավայրերը:** Կիսաանապատային դարավնյա կամ բլրոտ տեղամասեր: Արեալն աստիճանաբար յուրացվում է գյուղատնտեսական նպատակներով:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Սովորաբար, փորում են 0,3-0,8 մ խորությամբ բներ դարավին, բլուրներում: Դնում են 5-6: Թխսումը՝ մոտ 20 օր : Հովհան-օգոստոսին կարելի է տեսնել թռչող ընտանեկան երամակներ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանում խիստ սակավաթիվ տեսակ է:

**Վտանգման իմնական գործունները:** Քանի որ շատ նման է ուկեգույն մեղվակերին, մեծ քանակությամբ ոչնչացվում է մեղվապահների կողմից:


**Պահպանության միջոցառումները:** Պահպանման հատուկ միջոցառումներ չեն իրականացվում:

Անհրաժեշտ է լայնորեն պրոպագանդել տեսակի պահպանման անհրաժեշտությունը:

107. Ներկարար, *Coracias garrulus* (Linnaeus, 1758)  
Ենթատեսակ՝ *Coracias garrulus garrulus* (Linnaeus, 1758)

Կարգ՝ ՆԵՐԿԱՐԱՐԱՆԱԿԱՆԵՐ, CORACIFORMES

Ընտանիք՝ Ներկարարներ, *Coraciidae*



**Կարգավիճակը:** Սակավաբիվ, օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Հյուսիսային Աֆրիկայից և Եվրոպայից, դեպի արևելք՝ մինչև Փոքր Ասիա, Իրան, Հարավ-Արևմտյան Սիրիի:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում՝ բնակեցնելով հարաբերականորեն թեք լանջերը քսերոֆիտային բուսականության և ժայռերի առկայությամբ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դնելով 3-6 ձու: Սնվում է, հիմնականում, միջատներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: Մեղրիի ջրանում խտությունը կազմում է 0,22 բռչուն 1 հա-ին:

**Վտանգման իիմնական գործուները:** Ներկարարի թվաքանակի վրա բացասականորեն ազդում են կիսաանապատների յուրացումը գյուղատնտեսական նպատակներով, որը կրծատում է կերակրավայրերը, և բունաքիմիկատների օգտագործումը գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարում:

**Պահպանության միջոցառումները:** Պոպուլյացիայի մի մասը բնակվում է «Խոսրովի անտառ» արգելոցի տարածքում:

Հաշվի առնելով թվաքանակի վերաբերյալ տվյալների սակավությունը, անհրաժեշտ է ներառել այս տեսակը կենսաբազմազանության մոնիթորինգի պլանում՝ ամենամյա հաշվառումներ (ապրիլի վերջ – մայիսի սկիզբ) կատարելու համար: Նկատի ունենալով տեսակի օլիգոտոպությունը և ապրելավայրերի յուրացման հետ կապված վտանգները, անհրաժեշտ է վերանայել կիսաանապատային գոտու յուրացման քաղաքականությունը և դիտարկել արգելավայրերի ստեղծման հնարավորությունը: Անհրաժեշտ է նաև գյուղատնտեսության մեջ բունաքիմիկատների օգտագործումը իրականացնել էկոլոգիապես ավելի անվտանգ մեթոդներով:

108. Սև փայտփոր, *Dryocopus martius* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ՓԱՅՏՓՈՐԱՆԱՄՆԵՐ, *PICIFORMES*

Ընտանիք՝ Փայտփորներ, *Picidae*



**Կարգավիճակը:** Հազվագյուտ տեսակ է սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄԾ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Եվրոպա, Ասիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Լոռվա, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի անտառային շրջաններում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է լայնատերև անտառներում՝ բարձրաբուն ծառերի պարտադիր առկայությամբ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Նստակյաց է: Բնադրում է ինքնուրույն փորփած ծառաբնություն: Տարեկան ծվաղրում է մեկ անգամ, ապրիլի սկզբին: Դնում են 1-9, սովորաբար, 4-6 ձու: Զարգացում՝ 12-14 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը կրճատվել է, հավանաբար, վերջին տասնամյակում բարձրաբուն ծառերի ինտենսիվ հատման պատճառով:

**Վտանգման իիմնական գործոնները:** Անտառների հատումները, որը հանգեցնում է բիոտոպի մասնատմանը և բնադրման համար հարմար ծառերի ոչնչացմանը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Շիկահող» արգելոցում, «Դիլիջան» ազգային պարկում և Տավուշի մարզի պետական արգելավայրերում:

Խիստ պահպանման կարիք ունի: Անհրաժեշտ է ստեղծել լրացուցիչ արգելավայրեր՝ անտառի բարձրաբուն ծառերի ներառմամբ:

109. Դեղնագլուխ խաղտտիկ, *Motacilla citreola* Pallas, 1776  
Կարգ՝ ՃԱՇՆՈՒԿԱՆՍԱՆՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Խաղտտնիկներ, *Motacillidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միջության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

**Տարածվածությունը:** Արևելյան Եվրոպա, Ասիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է բնադրավայրում Արփի լճի մոտ և  
Սևանա լճի ջրավազանում:

**Ապրելավայրերը:** Բարձրադիր մարգագետինների ջրածածկ տեղամասերում, տեղ-տեղ  
գյուղերի միջև:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չվոր, բնադրավայրերում  
հանդիպում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է հողի վրա, կամ շինությունների  
որմնաքարերում: Սովորաբար, տարեկան մեկ ձվադրում՝ ապրիլ-հունիսին: Դնում են 4-7 ձու:  
Զարգացումը՝ 14-15 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին կազմում է սակավաբիկ  
գաղութներ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Հայտնի չեն:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Աևան» ազգային պարկի տարածքում:  
Շիրակի մարզի բնադրավայրերը գտնվում են «Արփի լիճ» ազգային պարկի սահմաններում:

**Պահպանման հատուկ միջոցառումների կարիք չունի:**

110. Կարմրակատար շամփրուկ, *Lanius senator* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ՃՆՃՂՒԿԱՆՍԱՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Շամփրուկներ, *Laniidae*



**Կարգավիճակը:** Մակավաբիվ օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային մնության Կարմիր ցուցակի շափորչիներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Տարածված է Կիլիլոս կղզուց և Լիբանանից դեպի արևելք՝ մինչև Փոքր Ասիա և Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է հանրապետության հարավային, հարավարևելյան և հյուսիս-արևելյան շրջանների կիսաանապատային գրտում:

**Ապրելավայրերը:** Ապրում է կիսաանապատներում և լեռնային չորային տափաստաններում՝ բնակեցնելով շորային բուսականությամբ ծածկված, համեմատաբար թեք լանջերը՝ թփերի պարտադիր տակայությամբ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում է մեկ անգամ: Դնում են 5-7, սովորաբար, 6 ձու: Սնվում է միջատներով, սողուններով, երբեմն՝ կրծողներով և մանր ճնճղուկանմաններով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Սեղմի շրջանում խտությունը կազմում է միջին հաշվով 0,34 թռչուն 1 հա-ին:

**Վտանգման հիմնական գործոնները:** Կարմրակատար շամփրուկի թվաքանակի վրա կարող է բացասականորեն ազդել կիսաանապատների յուրացումը գյուղատնտեսական նպատակներով, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարում թունաքիմիկատների օգտագործումը:

**Պահպանության միջոցառումները:** Պոպուլյացիայի մի մասը բնակվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

Հաշվի առնելով թվաքանակի վերաբերյալ տվյալների սակավությունը, անհրաժեշտ է ներառել այս տեսակը կենսաբազմազանության մոնիթորինգի պլանում՝ ամենամյա հաշվառումներ (ապրիլի վերջ – մայիսի սկիզբ) կատարելու համար: Նկատի ունենալով տեսակի օլիգոտոպությունը և ասպրելավայրերի յուրացման հետ կապված վտանգները, անհրաժեշտ է վերանայել կիսաանապատային գրտում յուրացման քաղաքականությունը և դիտարկել արգելավայրերի ստեղծման հնարավորությունը: Կիրառել գյուղատնտեսության մեջ թունաքիմիկատների օգտագործման էկոլոգիապես ավելի անվնաս մեթոդներ:

111. Սպիտակափող սոխակ, *Irania gutturalis* (Günrin, 1843)  
Կարգ՝ ՃԱՇՆՈՒԿԱՆԱՐԱՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Կենոնեխմներ, *Turdidae*



**Կարգավիճակը:** Սակավաբանակ, քիչ ուսումնասիրված, օլիգոտոպային տեսակ է Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Տարածված է Թուրքիայից դեպի արևելք՝ մինչև Փոքր Ասիա և Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է հանրապետության կենտրոնական, հարավային և հարավ-արևելյան շրջանների կիսաանապատային և լեռնատափաստանային գրտիներում:

**Ասպելավայրերը:** Ապրում է կիսաանապատներում և լեռնային չորային տափաստաններում՝ բնակեցնելով չորային բուսականությամբ ծածկված, համեմատաբար թեր լանջերը՝ թփերի և ծառերի պարտադիր առկայությամբ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Տարեկան ճվարում է մեկ անգամ: Դնում են 4-5 ձու: Սնվում է առավելապես միջատներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Պոպուլյացիայի խոտությունն արեալի տարբեր մասերում խիստ տատանվում է:


**Վտանգման իմմնական գործոնները:** Սպիտակափող սոխակի թվաքանակի վրա կարող են բացասականորեն ազդել կիսաանապատների և լեռնային տափաստանների յուրացումը զյուղատնտեսական նպատակներով, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարում բունաքիմիկատների օգտագործումը:

**Պահպանության միջոցառումները:** Պոպուլյացիայի մի մասը բնակվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:

**Հաշվի առնելով թվաքանակի վերաբերյալ տվյալների սակագությունը, անհրաժեշտ է ներառել այս տեսակը կենսաբազմազանության մոնիթորինգի պլանում՝ ամենամյա հաշվառումներ (ապրիլի վերջ – մայիսի սկիզբ) կատարելու համար: Նկատի ունենալով տեսակի օլիգոտոպությունը և ապրելավայրերի յուրացման հետ կապված վտանգները, անհրաժեշտ է վերանայել կիսաանապատային գոտու յուրացման բաղաքականությունը և դիտարկել արգելավայրերի ստեղծման հնարավորությունը: Կիրառել զյուղատնտեսության մեջ բունաքիմիկատների օգտագործման էկոլոգիապես ավելի անվնաս մեթոդներ:**

112. Ծիկապոչ քարաքոչնակ, *Oenanthe xanthopyrymna* (De Filippi, 1863)  
 Կարգ՝ ԹՍԾՂՈՒԿԱՆԱԿԱՆՆԵՐ, *PASSERIFORMES*

Հնտաճիք՝ Կեռմեխներ, *Turdidae*



**Կարգավիճակը:** Փոքր թվաքանակով, խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a; D:

**Տարածվածությունը:** Տեսակի պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացած է Անդրկովկասում, Իրանի հյուսիսում, Հարավային Տաջկիստանի ու Աֆղանստանի արևելքում և Արևմտյան Պակիստանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանը այս տեսակի արեալի ծայրհյուսիսային կետերից մեկն է, հանդիպում է Ուրծի լեռնաշրայում և Սեղրիի շրջանում:

**Ապրելավայրերը:** Հայաստանում հանդիպում է կիսաանապատներում՝ բնակեցնելով քարքարոտ լանջերը:

**Կենսաքանորդյան առանձնահատկությունները:** Բները տեղադրվում են ժայռերի նեղ ճեղքերում: Տարեկան ձվադրում է երկու անգամ՝ դնելով 4-6 ձու: Սնվում են միջատներով, հիմնականում՝ մրջյուններով, բզեզներով և բրդուրներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտուները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Սեղրիի շրջանում խտությունը կազմում է միջին հաշվով 0,23 թռչուն 1 հա վրա:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հայաստանում շիկապոչ քարաքոչնակի թվաքանակի վրա ազդող բացասական գործոններից է մարդու կողմից բնական բիոտոպերի յուրացումը և, հավանաբար, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարում թունաքիմիկատների օգտագործումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում: Նկատի ունենալով Հայաստանում տեսակի արեալի փոքր չափորոշիչը և ապրելավայրերի յուրացման հետ կապված վտանգները, անհրաժեշտ է վերանայել կիսաանապատային գոտու յուրացման քաղաքականությունը և դիտարկել արգելավայրերի ստեղծման հնարավորությունը: Անհրաժեշտ է նաև ուժեղացնել գյուղատնտեսությունում թունաքիմիկատների օգտագործման վերահսկողությունը:

113.Սոխականման ճղկահավ, *Locustella luscinioides* (Savi, 1824)  
Կարգ՝ ԹՍԾՂՈՒԿԱՆՄԱՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Ծակրիկներ, *Sylviidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

**Տարածվածությունը:** Արեալն ընդհատվող է՝ Հյուսիսային ծովից և Ալժրից արևմուտքում  
մինչև Օք գետի ջրավազանի վերնամասերը և Տյան-Չանի նախալեռները:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է Արարատի մարզի Արմաշի  
ձկնարուծական տնտեսության տարածքում:

**Ապրելավայրերը:** Եղեգնուտներ:

**Կենարանության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող, բնադրավայրերում  
հանդիպում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է հողի վրա՝ ջրաճահճային բուսականության  
մացառներում: Զվարդումը, սովորաբար, տարեկան մեկ անգամ՝ ապրիլ-մայիսին: Դնում են 3-6  
ձու: Չարգացումը՝ 10-14 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին կազմում է սակավաբիզ  
գաղութներ:

**Կտանգման իիմնական գործոնները:** Բները կարող են ոչնչացվել ձկնարուծական  
տնտեսություններում եղեգնուտների այրման հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** Զեն իրականացվում: Անհրաժեշտ է կարգավորել  
եղեգնուտների արեստականորեն այրելը Արմաշի ձկնարուծական տնտեսությունում և դրանք  
հնարավորինս հարմարեցնել ոչ բնադրման ժամանակաշրջաններին:

114. Հնդկական եղիգնաքչնակ, *Acrocephalus agricola* (Jerdon, 1845)  
Կարգ՝ ԹՍԴՂՈՒԿԱՆՍԱՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Շահրիկներ, *Sylviidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ հանդիպող տեսակ է, սահմանափակ արեալով:  
Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:  
Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով  
գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

**Տարածվածությունը:** Փոքր Ասիա, Կովկաս, Հյուսիսային Իրան, Հյուսիսային Հնդկաստան,  
Հիմալայներ, Չինաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է Արմավիրի մարզի Մասիս քաղաքի  
մոտ, բնադրման վայրում և Արարատի մարզի Արմաշի ձկնաբուծական տնտեսությունում:

**Ասպելավայրերը:** Եղեգնուտներ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող տեսակ է,  
բնադրավայրերում հանդիպում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է եղեգնուտներում,  
հավանաբար տարեկան երկու անգամ, մայիս-հունիսին: Դնում են 3-6 ձու: Զվերի զարգացումը՝ 12  
օր:


**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին կազմում է սակավաթիվ  
գաղութներ:

**Վտանգաման կիմնական գործոնները:** Բները կարող են ոչնչանալ ձկնաբուծական  
տնտեսություններում եղեգնուտներն այրելու հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում: Անհրաժեշտ է կարգավորել  
եղեգնուտների այրելը Արմաշի ձկնաբուծական տնտեսությունում և դրանք հնարավորինս  
հարմարեցնել ոչ բնադրման ժամանակաշրջաններին:

115.Կիսասպիտակավիզ ճանճորս, *Ficedula semitorquata* (Homeyer, 1885)  
Կարգ՝ ՃԱՆՃՈՐՍՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ ճանճորսներ, *Muscicapidae*



**Կարգավիճակը:** Սակավ ուսումնասիրված, օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Տեսակը տարածված է Կովկասում և Հյուսիսային Իրանում, դեպի արևմուտք՝ տեղ-տեղ, մինչև Բաղկաններ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է հյուսիսում, հյուսիսելքում և հարավ-արևելքում՝ բնակեցնելով սաղարթավոր և խառն անտառները:

**Ապրելավայրերը:** Բնակվում է լայնատերև անտառներում՝ հիմ փշակավոր ծառերի պարտադիր առկայությամբ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դնելով 3-7 ձու: Սնվում է քոչող միջատներով:


**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: Սեղրիի շրջանում խտությունը կազմում է 0,09 քոչուն 1 հա վրա:

**Վտանգան հիմնական գործոնները:** Ուսումնասիրված չէ, սակայն ենթադրվում է, որ անտառահատումների հետևանքով ապրելավայրերը կրծատվում են:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է հետազոտել պոպուլյացիայի վիճակը և մարդածին գործոնների ազդեցությունը պոպուլյացիայի վրա՝ հետազոտմ տեսակը և ապրելավայրերը պահպանելու նպատակով: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել անտառային գանգվածների կառավարման հարցին՝ ուղղելով այն բնական բիոտոպերի՝ հիմ անտառազանգվածների պահպանմանը (հավանաբար, ստեղծելով արգելավայրեր) և անտառատարածքների մասնատման կանխմանը: Անհրաժեշտ է վերանայել անտառօգագործման հետ կապված էկոլոգիական փորձաքննության անցկացման քաղաքանությունը և ներգրավել տեսակը անտառների կենսաբազմազանության մոնիթորինգի սլանում:

116.Միջերկուածովային երաշտահավ, *Parus lugubris anatoliae* (Temminck, 1820)  
Կարգ՝ ՃՆՃՂՒԿԱՆՍԱՆՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Երաշտահավեր, *Paridae*



**Կարգավիճակը:** Սակավաբիկ օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային մնության Կարմիր ցուցակի չափորոշիչներով զնահատվում է որպես «Խողելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii); C1a(i):

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Հունաստանի Լեսրոս կղզուց դեպի արևելք՝ մինչև Փոքր Ասիա և Հարավային Անդրկովկաս, և դեպի հարավ՝ մինչև Լիբանան և հյուսիսային Իրաք:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է Սեղրիի շրջանի գիհու նորանտառների գոտում:

**Ասրելավայրերը:** Հանդիպում է գիհու նորանտառներում՝ բնակեցնելով նաև ապրելավայրերին կից այգիներում:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Տարեկան ծվաղրում է երկու անգամ՝ դնելով 4-9 ձու: Սնվում է առավելապես միջատներով:


**Թվաքանակը և լրա փոփոխման միտումները:** Թվաքանակը բնության մեջ, համաձայն վերջին հաշվառումների, կազմում է 250-350 զույգ:

**Վտանգաման հիմնական գործոնները:** Միջերկուածովային երաշտահավի թվաքանակի վրա բացասաբար կարող են ազդել վերջին տարիներին Սեղրիի շրջանում հաճախակի դարձած անտառային հրդեհները, ինչպես նաև զյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարում բունարքիմիկատների օգտագործումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում: Անհրաժեշտ է ստեղծել հակահրեհային միջոցառումների իրականացնան համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա «Արևիկ» ազգային պարկում և պրոպագանդել հրդեհների կանխարգելման անհրաժեշտությունը Սեղրիի բնակչության շրջանում: Անհրաժեշտ է նաև զյուղատնտեսության մեջ բունարքիմիկատների օգտագործումը իրականացնել էկոլոգիապես ավելի անվնաս մեթոդներով:

117. Սեծ ժայռային սիտեղ, *Sitta tephronota obscura* Sharpe, 1872  
Կարգ՝ ՃՆԾՈՒԿԱՆՍԱՆՆԵՐ, *PASSERIFORMES*

Հնտաճիք՝ Սիտեղներ, *Sittidae*



**Կարգավիճակը:** Սակավարիվ, նեղ արեալային օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Հայաստանից մինչև Նախիջևան, դեպի արևելք՝ մինչև Էլբուրսի լեռնաշղթան, և դեպի հարավ՝ մինչև Քելուջաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է առավելապես համրապետության հարավային և հարավ-արևելյան շրջանների կիսաանապատային գոտում:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է կիսաանապատներում՝ բնակեցնելով ժայռային բիոտոպերը:

**Կենաքանության առանձնահատկությունները:** Տարեկան ձկադրում է մեկ անգամ՝ դնելով 5-8 ձու: Սնվում է առավելապես միջատներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն: Սեղմի շրջանում խտությունը կազմում է միջին հաշվով 0,6 թռչուն 1 հա վրա:


**Վտանգման իիմնական գործոնները:** Սեծ ժայռային սիտեղի թվաքանակի վրա բացասական ազդեցություն կարող է բողնել գյուղատնտեսության վնասատումների դեմ պայքարում թունաքիմիկատների օգտագործումը:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է նաև գյուղատնտեսության մեջ թունաքիմիկատների օգտագործումը իրականացնել Էկոլոգիապես ավելի անվնաս մեթոդներով:

118. Καιρούμενης μωρογονής, *Tichodroma muraria* (Linnaeus, 1766)  
Σε παραπάνω αλλαγή, *Tichodroma muraria muraria* (Linnaeus, 1766)

## Կարգ՝ ԹՆԹԱՐԿԱՆՄԱՆԵՐ, *PASSERIFORMES*

## Ընտանիք՝ Սինեղներ, *Sittidae*



**Կարգավիճակը:** Սակավարիկ օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածություն:** Ենթատեսակը տարածված է Հարավային Եվրոպայից դեպի արևելք՝ մինչև Արևմտյան Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքում՝ բարձր լեռներում՝ բնակեցներով ժայռային բիոտոպեր:

**Ապրելավայրերը:** Հանդիպում է բարձր լեռներում՝ բնակեցնելով ժայռային կիրճերը և բարձր ժայռերով հատվածները:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Տարեկան, սովորաբար, ճվադրում է մեկ անգամ՝ դնելով 4-5 ծու: Անվորում է առավելապես միջատներով:

**Թվաքանակը և դրա փոխիշման միտումները:** Ներկայիս թվաքանակի գնահատման համար տվյալները բավարար չեն:

**Վասնական հիմնական գործոնները:** Բացասական գործոնների ազդեցությունն ուսումնասիրված չէ:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է ուսումնասիրել մարդածին գրքոների ազդեցությունը՝ հետազայտմ տեսակի և դրա ապրելավայրերի պահպանման միջոցառումների պլանավորման համար:

### 119. Ճայռային ղրախտապան, *Emberiza buchanani* Blyth, 1844

## Կարգ՝ ԹՆԵՐԱԿԱՆԱՍՆԵՐ, *PASSERIFORMES*

## Ընտանիք՝ Դրախտապաններ, *Emberizidae*



**Կարգավիճակը:** Սակավարիկ օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊԱՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածություն:** Ենթատեսակը տարածված է Անդրկովկասից և Թուրքիայից մինչև Իրան և Թուրքմենիայի հարակից շրջաններ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Հայաստանի հարավ-արևելյան շրջանների կիսաանապատային տեղանքներում, ինչպես նաև Արագածի և Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին՝ մինչև 1900 մ ծ.մ. բարձրություններ:

**Ապենալվայրեքը:** Կիսաանապատային գոտու հարաբերականորեն փոքր թեքությամբ լանջերը պարտադիր թփուտների առկայությամբ:

**ԿԵՆՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ Առանձնահատկությունները:** Գարնանային չուն նկատվել է ապրիլի կեսերին: Բազմանում են մայիսից մինչև հուլիս: Բները պատրաստում են քարերի կամ փոքր բիերի տակ: Առավել ուշ ձվադրմանը բնում հայտնաբերվում է 3-5 ճու: Էզր թխում է 13 օր: Զագերին կերակրում են սերմերով, բիերների բրուրներով, տարբեր միջատներով և դրանց թրթուրներով: Բույնը լրում են 11-13-րդ օրը: Հովհաննեսի օգոստոսին դիտվում են կրկնակի ձվադրումներ: Թոշող ձագերը հանդիպում են հունիսի կեսերից մինչև օգոստոս: Ծվում են սեպտեմբերի առաջին կեսին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Սակավարիկ է: Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: Հարմար թիոտոպերում հանդիպումների հաճախականությունը բավականին բարձր է:

**Կտանգման հիմնական գործունեություն:** Կիսաանապատային ապրելավայրերի յուրացումը տնտեսական նպատակներով:

**Պահպանության միջոցառումները:** Բնադրավայրերի մի մասը գտնվում է «Խոսրովի անտառ» արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է կատարել տեսակի համայնք ուսումնասիրություններ, ընդգրկելով այն ամենամյա հաշվառումների հիման վրա կատարվող կենսաբազմազանության մոնիթորինգի պլանում: Հաշվի առնելով Հայաստանում այս տեսակի արեալի փոքր չափերը, տեսակի օլիգոտոպությունը և ապրելավայրերի յուրացման վտանգը, անհրաժեշտ է վերանայել կիսաանապատային գոտու յուրացման քաղաքականությունը և դիտարկել արգելավայրերի ստեղծման հնարավորությունը: Անհրաժեշտ է նաև լայնորեն անցկացնել բացատրական աշխատանքներ տեսակի պահպանման անհրաժեշտության վերաբերյալ:

120.Անապատային խածկտիկ, *Rhodopechys githaginea* (Lichtenstein, 1823)

Կարգ՝ ԾՆԾՂՈՒԿԱՆՍԱՆՆԵՐ, *PASSERIFORMES*

Հնտանիք՝ Սերինոսներ, *Fringillidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄԿ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Հյուսիսային Աֆրիկա, Փոքր Ասիա, Իսրայելից և Առաջավոր Ասիայից մինչև Պակիստան, Հյուսիս-Արևմտյան Հնդկաստան, Կենտրոնական Ասիա և Սոնդողիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է Արարատի մարզի ք. Վեդիի շրջակայրի բնադրավայրում: Առանձին առանձնյակներ նկատվել են Արարատի մարզի այլ մասերում և Կոտայքի մարզում:

**Ապրելավայրերը:** Բնակեցնում է նոր խոտարույսերով և թփերով ծածկված անապատային խճային լանջերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող, բնադրավայրում հանդիպում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է ժայռերի ճեղքերում, մեծ քարերի կույտերում: Տարեկան ծվաղրում է երկու անգամ՝ ապրիլի վերջին-մայիսի սկզբին: Դնում են 4-6 ձու: Զարգացումը՝ 11-14 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Խիստ սակավաթիվ տեսակ է օջախային բնադրմամբ:

**Վտանգման իմնական գործոնները:** Փոքր թվաքանակ: Ապրելավայրերի փոփոխումը տնտեսական գործունեության արդյունքում:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել արգելավայր ք. Վեդիի շրջակայրում, ներառելով քաղաքի հյուսիսային մասում գտնվող խճային լանջերը և ժայռերը:

121.Անապատային խածկտիկ, *Rhodopechys mongolica* (Swinhoe, 1870)  
Կարգ՝ ԹՍԾՂՈՒԿԱՆԱՄԱՆԵՐ, *PASSERIFORMES*

Հնտաճիք՝ Սերինոսներ, *Fringillidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Հարավային Մուրքիա, դեպի արևելք՝ Անդրկովկասով, Հյուսիսային Իրանով, Կենտրոնական Ասիայով մինչև Գորի անապատը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնադրավայրը հայտնաբերված է Արարատի մարզի Վեդի քաղաքի շրջակայրում:

**Ապրելավայրերը:** Բնակեցնում է սակավ խոտարույսերով և թփուտներով ծածկված անապատային խճային լանջերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող տեսակ է, բնադրավայրում հանդիպում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Բնադրում է ժայռերի ճեղքերում, մեծ քարերի կույտերում: Չվարում՝ ապրիլի երկրորդ կեսերին: Դնում են 3-8, ավելի հաճախ՝ 4-6 ձու: Զարգացումը՝ հավանաբար, 11-14 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին՝ գաղութային: Խիստ սակավաթիվ տեսակ է՝ մասնաւուկած և ոչ ամենամայ բնադրմամբ:


**Վտանգման հիմնական գործուները:** Փոքր թվաքանակը: Ապրելավայրերի փոփոխումը տնտեսական գործունեության արդյունքում:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Անհրաժեշտ է կազմակերպել արգելավայր Վեդի քաղաքի շրջակայրում՝ ներառելով քաղաքի հյուսիսում տեղադրված խճային ժայռերը և բլուրները:

122.Խաչկոտոց, *Loxia curvirostra* Linnaeus, 1758  
Կարգ՝ ԹՍԾԴՂՈՒԿԱՆԱԱՆԵՐ, PASSERIFORMES

Հնատաճիր՝ Սերինոսներ, *Fringillidae*



**Կարգավիճակը:** Սակավարիվ, օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Ենթատեսակը տարածված է Ղրիմում, Կովկասում, Թուրքիայում և Կիպրոսում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում հանդիպում է հյուսիս-արևելքում, բնակեցնելով խառն անտառները:

**Ապրելավայրերը:** Բնակվում է սոճու պարտադիր առկայությամբ անտառներում, որտեղ սնվում է առավելապես սոճու սերմերով:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Տարեկան ծվաղրում են մեկ անգամ, դնելով 3-4 ձու:

**Ժվարանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակի արդի վիճակը գնահատելու համար տվյալները բավարար չեն: Անազատ պայմաններում պահելու վերաբերյալ տեղեկությունները բավակայում են:

**Վտանգման հիմնական գործոնները:** Բավարար ուսումնասիրված չէ: Հավանաբար, ապրելավայրերը կրծատվում են անկանոն անտառահատումների, մասնավորապես սոճու հատման հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** Անհրաժեշտ է հետազոտել խաչակտուցի պոպուլյացիայի վիճակը, ինչպես նաև մարդածին գործոնների ազդեցությունը պոպուլյացիայի վրա՝ հետազույն տեսակը և ապրելավայրերը պահպանելու նպատակով:

123.Իսպանական ճնճղուկ, *Passer hispaniolensis* (Temminck, 1820)  
Կարգ՝ ԹՍԾՂՈՒԿԱՆԱՐԱՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Ճնճղուկներ, *Ploceidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպայից, Կանարյան և Սիցիլիական ծովի ու Հյուսիսային Աֆրիկայի կղզիներից՝ Փոքր Ասիայով մինչև Աֆղանստան և Հյուսիս-Արևմտյան Հնդկաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է Տավուշի մարզի գ. Սևքարի շրջակայրում՝ բնադրավայրում:

**Սարքելվածությունը:** Բնակեցնում է մշակովի լանդշաֆտը՝ այգիները, բնակավայրերի շրջակայրերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Հայաստանում չվող, կամ նստակյաց, ձմռանը հանդիպում է Արաք գետի հովտի եղեգնություններում: Տարեկան 2, երբեմն 3 ձվադրում, առաջինը՝ ապրիլի կեսերին: Դնում են 2-8, ավելի հաճախ՝ 4-6 ձու: Զարգացումը՝ հավանաբար, 11-13 օր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Վերջին տարիներին կազմում է սակավաթիվ գաղութներ: Խիստ սակավաթիվ տեսակ է նաև առատված արեալով և ոչ ամենամյա բնադրմամբ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Փոքր թվաքանակ:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Պահպանման հասուլ միջոցառումների կարիք չունի:

124. Ալպիական ճայ, *Pyrrhocorax graculus* (Linnaeus, 1766)  
Կարգ՝ ԹՍԾՂՈՒԿԱՆԱՎԱՆԵՐ, *PASSERIFORMES*

Ընտանիք՝ Ճայեր, *Corvidae*



**Կարգավիճակը:** Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպայի, Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայի, Փոքր, Առաջավոր և Սիրիան Ասիայի լեռները, Արևմտյան Տիբեթ, Հիմալայներ և Ալթայ:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում բնադրում է մեկուսացված օջախներով Զանգեզուրի լեռնաշղթայում և լեռնաճողերում:

**Սպորտականությունը:** Բնակեցնում է սուրալպիան և ալպիան շրջանների ժայռերը և դրանց մերձակայքը: Զնանք հանդիպում է ցածր լեռնային շրջանում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Նստակյաց և չվող: Բնադրում է ոչ մեծ գաղութներով: Բները պատրաստում է դժվար հասանելի ժայռերում և կիրճերում: Զվարդումը մայիս-հունիսին: Դնում են 3-6 ձու: Զարգացումը՝ 18-21 օր:

**Ժվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Խիստ սակավաթիվ տեսակ է օջախային բնադրմամբ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հայտնի չեն, հավանաբար, փոքր թվաքանակը:

**Պահպանության միջոցառումները:** Ապրելավայրերի մի մասը ներգրավված է «Զանգեզուր» արգելավայրում և «Արևիկ»ազգային պարկում: Պահպանվում է «Բողաքար» պետական արգելավայրում:

**Պահպանման հատուկ միջոցառումների կարիք չունի:**

ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ, *MAMMALS*

125. Լայնականց ողնի, *Erinaceus (Hemiechinus) auritus* Gmelin, 1770  
Կարգ՝ ՍԻԶԱՏԱԿԵՐՆԵՐ, INSECTIVORA

Ընտանիք՝ Ողնիակերպեր, *Erinaceidae*



**Կարգավիճակը:** Հազվադեպ հանդիպող տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածություն:** Հարավ-Արևելյան Եվրոպա, Առաջավոր, Միջին և Կենտրոնական Ասիա, Արևմտյան Սիրիա, Հյուսիսային Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սյունիքի, Վայոցձորի, Արարատի և Արմավիրի մարզեր, ինչպես նաև Արագածոտնի հարավային և հարավ-արևմտյան շրջանները:

**Ապրելավայրեր:** Չոր տափաստաններ, կիսաանապատներ, անապատներ: Խուսափում է խիտ բուսածածկով և մշակված տարածություններից: Լեռներում բարձրանում է մինչև 1355 մ ծ.մ.ք. բարձրություններ: Առավել գերադասում է խաղողայինները, պտղատու այգիները և տնամերձ բանջարանցները:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Սրնչաղագիշերային կենդանիներ են: Սնվում են իմանականում անողնաշար կենդանիներով (անձրևարդեր, բգեղներ, ծղրիդաննաններ), ինչպես նաև մողեսներով, ավելի հազվադեպ՝ մանր կրծողներով և մանր բոչունների ծագերով: Բազմացման շրջանը երկարածզված է: Հղի էգերը և նորածինները հանդիպում են վաղ գարնանից մինչև ամռան կեսերը: 1-7 ձագերը ծնվում են մերկ և կույր: Զնուանը բուն են մտնում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Չնայած լայն տարածմանը Հայաստանի սահմաններում արեալի մեծ մասում թվաքանակը բավականին փոքր է: Թվաքանակն առանձին պոպուլյացիաներում շարունակում է կրճատվել:


**Վտանգման իիմնական գործոնները:** Բնորոշ ապրելավայրերի քայլայումը, խաղողայինների և պտղատու այգիների ոչնչացումը, ճանապարհներին՝ մերենաների անխվների տակ ընկնելու բարձր տոկոսը, ապօրինի որսը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում, «Գոռավանի ավազուտներ» արգելավայրում և «Արևիկ» ազգային պարկում:

Ողնիների հանդիպման վայրերում ճանապարհներին տեղադրել արագությունը սահմանափակող վահանակներ: Խստացնել պատժամիջոցները լայնականց ոգնու ապօրինի որսի համար:

126. Շելկովնիկովի կուտորա, *Neomys schelkovnikovi* Sat., 1913  
 Կարգ՝ ՄԻՋԱՏԱԿԵՐՆԵՐ, INSECTIVORA

Հնտանիք՝ Գետնափորներ, *Soricidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

**Տարածվածությունը:** Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, Առաջավոր, Սիհին և Կենտրոնական Ասիա՝ դեպի արևելք՝ մինչև Օխոտյան ծով, Կովկաս, Անդրկովկաս, Իրան, Թուրքիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սյունիքի, Վայոցձորի, Կոտայքի, Տավուշի, Լոռու, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզեր:

**Ապրելավայրերը:** Գետերի և գետակների ափերը՝ ինչպես բարձրադիր գոտիներում (մինչև 2500 մ ծ.մ.թ. բարձրություններ), այնպես էլ կիսաանապատներում և անտառային զանգվածներում: Գերադասում են գետասահանքներով, մացառուտներով հատվածները և նոր բուսածածկով մերկացած, քարքարոտ ափերը:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** Ակտիվ են օրվա տարբեր ժամերին և տարվա տարբեր եղանակներին: Կարող են արագ վազել ջրավազանի հատակով, սուզվել և լողալ: Բազմանում են վաղ գարնանից մինչև ամռան վերջը: Բերում են 4-10 ձագ: Սնվում են տարբեր հողվածուտանիներով, որդերով, փափկամարմիններով, մանրաձկներով, շերեփուկներով, ձկնիթով և գրունկիթով, ինչպես նաև մանր կրծողներով: Հայաստանում կուտորայի էկոլոգիան ուսումնասիրված չէ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Մեծ կուտակումներ չի առաջանում: Ավելի հաճախ ապրում է առանձին կամ 2-5 առանձնյակներից կազմված փոքր խմբերով: Ջրավազանների աղտոտման և բնական ապրելավայրերի քայլայման պատճառով մի շարք շրջաններում (Հանքավան, Դիլիջան, Խջևան և այլն) թվաքանակը զգալիորեն կրճատվել է:

**Վտանգման իմնական գործումները:** Ջրավազանների աղտոտումը և մարդու տնտեսական գործունեությունը:

**Պահպանության միջոցառումները:** «Շիկահող» արգելոցում, «Դիլիջան» և «Արևիկ» ազգային պարկերում:

Անհրաժեշտ է ազգային պարկերում, արգելոցներում և պահպանվող այլ տարածքներում կուտորայի ապրելավայրերին տալ հատուկ կարգավիճակ՝ արգելով այդ տեղամասերում գրուսաշրջիկների հանգստի կազմակերպումը և ձկնորսությունը:

127. Պատիկ սպիտակատամ, *Suncus etruscus* Savi, 1822  
Կարգ՝ ՍԻԶԱՏԱԿԵՐՆԵՐ, INSECTIVORA

Ընտանիք՝ Գետնափորներ, *Soricidae*



**Կարգավիճակը:** Հազվադեպ հանդիպող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B2a (ii):

**Տարածվածություն:** Արեալն ընդգրկում է Հարավային Եվրոպան, Արաբական թերակղզին, Իրաքը, Սիրիան Ասիան, Չինաստանը, Հնդկաստանը և Հարավային Աֆրիկան (?):

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերված է Գեղարքունիքի մարզի գգ. Վարդենիսի և Այգուտի մոտակայքում

**Ապրելավայրերը:** Կիսաանապատներ և լեռնային մարգագետնատափաստաններ, մինչև 2150 մ ծ.մ.ր. բարձրությունը, նոսր բուսականությամբ: Կարող են բնակվել բանջարանցներում և բնակելի շինություններում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Ուսումնասիրված չէ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** 1915 թ.-ին Հայաստանում հայտնաբերվել է մեկ առանձնյակ, որից հետո՝ 2000 թ.-ին՝ 11 առանձնյակ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Ուսումնասիրված չէ:

**Պահպանության միջոցառումները:** Արեալի մի մասը գտնվում է «Աևան» ազգային պարկի տարածքում:

Անհրաժեշտ է հետազոտել տեսակի կենսաբանության առանձնահատկությունները և տարածումը հանրապետությունում:

128. Հարավային պայտաքիթ, *Rhinolophus euryale* Blasius, 1853  
Կարգ՝ ՉԵՌԱՋԱՔՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Ընտանիք՝ Պայտակքայիններ, *Rhinolophidae*



**Կարգավիճակը:** Հազվադեպ, քիչ ուսումնասիրված տեսակ է՝ սահմանափակ նեղ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1ab+2a:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպայից՝ Հյուսիսային Աֆրիկայից և Փոքր Ասիայից մինչև Կովկաս և Անդրկովկաս, դեպի արևմուտք՝ մինչև Հարավ-Արևմտյան Թուրքմենիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում տեսակի արեալը սահմանափակվում է Սյունիքի և Վայոցձորի մարզերով (Արենի, Չիվա, Ելփին, Զառիթափ, Մարտիրոս, Հեր-հեր, Խնձորեսկ գյուղերի և ք. Կապանի շրջակայքեր):

**Ապրելավայրերը:** Բացառապես լեռնատափաստանային, անտառատափաստանային և անապատային գոտիների քարանձավներում բնակվող տեսակ է:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Ակտիվությունը սկսվում է մինչև մուրճ ընկնելը և շարունակվում մինչև մայրամուտը: Ի տարբերություն այլ պայտաքայինների՝ ագրեսիվ չէ: Հունիսի սկզբին եզր ծնում է մեկ ձագ, որը մշտապես մնում է մոր կրծքին կպած: Զննում են ամառային թաքսոնություն: Սնվում են մանր թեփուկաթևավորներով, երկթևավորներով և բգեցներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը հանրապետությունում վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է:

**Վտանգման իմնական գործոնները:** Մարդու այցելությունները քարանձավներ բազմացման և ձմեռման շրջաններում:

**Պահպանության միջոցառումները:** Քարանձավների մի մասը ընդգրկվել է բնության հուշարձանների ցանկում: 2008 թ.-ին Հասարակական կազմակերպությունների միջոցներով Նորագանքի կիրճի «Մագիլ» քարանձավը (Եղեգնաձորի շրջան) փակվել է այցելուների համար:

Անհրաժեշտ է հարավային պայտաքիթի ապրելավայրեր հանդիսացող քարանձավների մուտքը փակել այցելուների համար:

129. Սեհելիի պայտաքիթ չղջկ, *Rhinolophus mehelyi* Matschie, 1901  
Կարգ՝ ՁԵՌԱՋԱՔԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Ընտանիք՝ Պայտակբայիններ, *Rhinolophidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A4c» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ B1a+2ab(iii):

**Տարածվածությունը:** Անդրկովկասն այս տեսակի արեալի արևելյան սահմանն է, Հայաստանը՝ հարավային: Ուստինիա, Ֆրանսիա, Իսպանիա, Հյուսիսային Աֆրիկա, Լեռնային Ղարաբաղ, Վրաստան, Աղրբեջան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում առաջին անգամ հայտնաբերվել է 1945 թ.-ին, Մարտունու շրջանի Արծվանիստ գյուղում: Ներկայումս դրանց փոքր խմբերին (3-15 առանձնյակ) կարելի է հանդիպել Երևանի շրջակայրում (Կարմիր Բլուր, Զրաբդան գետով դեպի վեր՝ մինչև գ. Մեղրաձոր (Կոտայքի մարզ): Ընդհանուր առմամբ, տեսակի արեալը ներառում է ք. Գորիսից (գ. Խնձորեսկ) դեպի արևմուտք՝ մինչև ք. Արմավիր, և ք. Երևանից դեպի հյուսիս՝ մինչև Իջևանի շրջան (Տավուշի մարզ) տարածքները:

**Սպրեւավայրերը:** Չարանձավներ, անձավներ, տաճարներ, եկեղեցիներ, փլատակներ, նկուղներ, բունելներ, հանքահորեր և այլն: Պայտաքթերին կարելի է հանդիպել ինչպես անտառային զանգվածներում, այնպես էլ կիսաանապատներում: Ապրելավայրի մոտակայքում պարտադիր է ջրավազանի առկայությունը:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Ակտիվ են օրվա մութ ժամերին: Առանձ սկզբում է գր ծնում է մեկ ձագ: Սնվում են մասր և միջին չափերի թեփուկաթևավորներով, երկթևավորներով և կարծրաթևավորներով: Երբեմն ձմեռում են ամառային թարսուցներում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանի ամբողջ տարածքում նկատվում է թվաքանակի զգալի կրճատում, իսկ որոշ տեղերում (Կարմիր Բլուր, Մագիլի, Չայկենդ) մնացել են եզակի առանձնյակներ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Մարդու այցելությունները քարանձավներ բազմացնան, ձագերի զարգացման և ձմեռման շրջաններում: Եկեղեցիների, շինությունների, կամուրջների, հանքահորերի վերականգնումը կամ քանդումը:

**Պահպանության միջոցառումները:** Քարանձավների մի մասը ընդգրկվել է բնության հուշարձանների ցանկում: Նորավանի կիրճի «Մագիլի» քարանձավը (Եղեգնաձորի շրջան) փակվել է այցելուների համար: Մեհելիի պայտաքթի ապրելավայրերին տալ

արգելավայրերի կարգավիճակ: Անհրաժեշտ է Սեհելիի պայտաքրի ապրելավայրեր հանդիսացող քարանձավների մուտքը փակել այցելուների համար:

130. Բլազիի պայտաքիր, *Rhinolophus blasii* Peters, 1866  
Կարգ՝ ՉԵՌ-ՉԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

## Ընտանիք՝ Պայտակթայիններ, *Rhinolophidae*



**Կարգավիճակը:** Հազվադեպ, անհետացող, չուսումնասիրված տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

**Տարածվածությունը:** Հարավային Եվրոպայի միջերկրածովային երկրներ,  
Հյուսիսային Աֆրիկա, Հարավ-Արևմտյան Թուրքմենիա, Հարավային Անդրկովկաս, Իրան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանը տեսակի արեալի հյուսիսային սահմանն է: Հայտնաբերված է Լեռնային Ղարաբաղ, Նախիջևանի և Իրանին սահմանակից Սյունիքի մարզի հարավում գտնվող Երեք քարանձավներում:

**Ապրելավայրերը:** Հանրապետության լեռնատափաստանային և կիսաանապատային գոտիներում բացառապես քարանձավներում ապրող տեսակ է:

**ԿԵՆԱՐԱՆՈՒՐՅԱՆ ԱՊԱՆԴԱԿԱԽԱՏԼՈՒՐՅՈՒՆՆԵՐԸ:** Կենարանական  
առանձնահատկությունները լավ ուսումնասիրված չեն: Եզր տարեկան ծնում է մեկ ձագ:  
Կեր հայրհայքելու համար քարանձավներից դրւս են գալիս մթնչաղին և վերադառնում  
յուսարազին:

**Թվաբանակը և դրա փոփոխման միտումները:** Հազվադեպ հանդիպող, քիչ ուսումնասիրված տեսակ է սահմանափակ և նկատելիորեն կրճատվող արեալով:

**Վտանգման հիմնական ռողծութերը:** Հայոց չեն:

**Պահպանության միջոցարդումեռք:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:

Անհրաժեշտ է Բլազիի պայտաքի ապրելավայրեր հանդիսացող քարանձավների մուտքը փակել ազերունենի համար:

131. Սովորական երկարաք չղջիկ, *Miniopterus schreibersi* Kuhl, 1819  
Կարգ՝ ԶԵՌԱՋԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

## Ընտանիք՝ Հարթարթայիններ, *Vespertilionidae*



## Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է

ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խողելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

**Տարածվածություն:** Իսպանիա, Աֆրիկա, Մադագասկար, Հնդկաստան, Չինաստան, Միջին Ասիա, Մալայան արշիպելագ, ճապոնիա, Ավստրալիա, Նոր Գվինեա, Ղրիմ, Կովկաս, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Տարածված է բոլոր շրջաններում, բացի Շիրակի ու Արագածոտնի մարզերից, ինչպես նաև Գեղարքունիքի հյուսիսից։ Առավել հաճախ կարելի է հայտնաբերել ք. Երևանում, Արմավիրի, Վայոցձորի և Սյունիքի մարզերում։

**Ապրելավայրերը:** Բացառապես քարանձավային տեսակ է: Գերադասում են կարստային ծագում ունեցող լայն, լավ օդափոխվող քարանձավները: Սրանց հաճախ կարելի է հանդիպել այլ հարթաքրայինների և պայտաքրայինների հետ:

**ԿԵՆՍԱՐԱՅԻՆ ԱՌԱՆԴՆԱՀԱՏԿՈՐԺՅՈՒՆՆԵՐԸ:** Զմռանը լրում են բարստոցները և հաճախ չփում հանրապետության սահմաններից դուրս: Ակտիվ են վաղ զարնանից մինչև ուշ աշուն: Թոշում են արագ՝ միջատներին բռնելով ջրի մակերեսից, ավտոճանապարհներից և այլ բաց տարածություններից (անտառեզրեր, կիրճեր, գյուղերի և քաղաքների հրապարակներ): Մայիսի վերջում-հունիսի սկզբում էգը ծնում է մեկ ձագ: Որոշ դեպքերում ձևավորում են բազմաքանակ մայրական գաղործեր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայում թվաքանակը գաղութներում և երկարաք չղջիկների ընդհանուր թվաքանակը պոպուլացիաներում զգալիորեն կրճատվել է:

**Վտանգման հիմնական գործողությունը:** Մարդու կողմից անհանգստացնելը բազմացման և ձագերի զարգացման ընթացքում: Զմեռման խանգարումը:

**Պահպանության միջոցառումները:** Զարանձավների մի մասը ընդգրկվել է բնության հուշարձանների ցանկում: «Մագելի», «Մողրով» և «Արջի-Մեղվեժյա» քարանձավները փակվել են այցելուների համար:

Անհրաժեշտ է սովորական երկարաթև չղջիկի ապրելավայրեր հանդիսացող քարանձավների մուտքը փակել այցելուների համար:

132. Արաքսյան գիշերազդիկ, *Myotis schaubi araxenus* Dahl, 1947  
Կարգ՝ ԶԵՌՈՋԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Ընտանիք՝ Հարթաքրայիններ, *Vespertilionidae*



**Կարգավիճակը:** 1987 թ.-ին այս տեսակը Հայաստանի Կարմիր գրում գրանցվել է որպես Նատերերի գիշերային չղջիկի (*Myotis nattereri*) ենթատեսակ՝ Նատերերի արաքսյան գիշերային չղջիկ: Այսօր այն առանձնացվել է որպես ինքնուրույն տեսակ գիշերային չղջիկների *Myotis* ցեղի կազմում: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Data Deficient» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

**Տարածվածությունը:** Հայտնաբերված է միայն Անդրկովկասի հարավում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Վայոցձորի (Վայրի և Եղեգնաձորի շրջաններ) և Սյունիքի (Կապանի և Սեղմիքի շրջաններ) մարզերում:

**Սպառելավայրերը:** Բնակվում է քարանձավներում, անձավներում, ժայռերի ճեղքերում, ծառերի փշակներում, նկուղներում, տների ճեղնահարկերում, անասնագոմերում և այլն:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հավաստի տեղեկություններ չկան: Հայտնի է միայն, որ էզր հունիսի վերջին ծնում է մեկ ձագ: Ապրում են 2-7 առանձնյակներից կազմված փոքր խմբերով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ծայրաստիճան հազվադեպ, քիչ ուսումնասիրված և նեղ արեալով տեսակ է: Սակավաթվության հետևանքով կարող է լիովին անհետանալ:

**Վտանգման իիմնական գործոնները:** Մարդու կողմից անհանգստացնելը բազմացնած և ձմեռման ընթացքում:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում: Քարանձավների մի մասը ընդգրկվել է բնության հուշարձանների ցանկում:

**Անհրաժեշտ է Արաքսյան գիշերազդիկի ապրելավայրեր հանդիսացող բարանձավների մուտքը փակել այցելուների համար:**

133. Հայկական գիշերաշղիկ, *Myotis hajastanicus*, Argyropulo, 1939  
Կարգ՝ ՉԵՌԱՋԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Ընտանիք՝ Հարթաքրայիններ, *Vespertilionidae*



**Կարգավիճակը:** Առաջին անգամ տեսակը նկարագրվել է Սևանա լճի հյուսիսարևմտյան ափի տարածքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Critically Endangered D» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B1a+D:

**Տարածվածությունը:** Առաջին անգամ հայտնաբերվել է (2000-2001 թթ.) Սևանա լճի ափին (Գեղարքունիքի մարզ)՝ Արտանիշի տեղամասի անձավներում, և Ծափաթաղ գյուղի մոտակայքում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Սևանի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջին բռնվել և գրանցվել են դետեկտորի օգնությամբ (Pettersson-200), 11 կմ երկարությամբ տարածքում:

**Ապրելավայրերը:** Բնորոշ բիոտոպերն են կրա-խճարարային լանջերն անձավների և ճեղքերի առկայությամբ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Ուսումնասիրված չել: Հայտնի է, որ բնակվում են 2000-2300 մ ծ.մ.թ. բարձրություններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ծայրաստիճան հազվադեպ, քիչ ուսումնասիրված և նեղ արեալով տեսակ է: Արեալի նման սահմանափակությունը դիտվում է առաջին անգամ:

**Վտանգման իմնական գործոնները:** Հայտնի չեն:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան» ազգային պարկում:

Անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունը «Սևան» ազգային պարկի սահմաններում գտնվող ապրելավայրերի նկատմամբ: Անհրաժեշտ է Հայկական գիշերաշղիկի ապրելավայրեր հանդիսացող քարանձավների մուտքը փակել այցելուների համար:

134. Բեխտեյնի գիշերաշղիկ, *Myotis bechsteinii* Kuhl, 1818  
Կարգ՝ ՁԵՌԱՋԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Ընտանիք՝ Հարթաքրայիններ, *Vespertilionidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a:

**Տարածվածությունը:** Անգլիա, Մերձբալթյան երկրներ, Ֆրանսիա, Իսպանիա, Գերմանիա, Ըվեյցարիա, Հունգարիա, Լեհաստան, Հարավային Կովկաս և Անդրկովկաս՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Առաջին անգամ տեսակը նկարագրվել է 2003 թ.-ին Սյունիքի մարզի հյուսիս-արևելքում (Գորիսի շրջան), իսկ 2004 թ.-ին՝ Լեռնային Ղարաբաղին սահմանակից գյուղերում: Իննոնքներ և ք. Գորիսի շրջակայքը (գգ. Թեղ և Կոռնիձոր):

**Ապրելավայրերը:** Բնորոշ ապրելավայրերն են անտառապատ լանջերը և լեռնային գետակների կիրճերը:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Ապրում են անհատորեն կամ փոքր խմբերով՝ առավելապես ծառերի փշակներում, կամ կեղևի տակ, երթեմն՝ բնակելի շինությունների, ցախատների և գերանածածկ անասնագոմերի տանիքների տակ: Ակտիվ են օրվա մթնշաղին: Կերը բռնում են՝ բռնելով ծառերի կամ ջրավազանների վրայով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հազվադեպ, քիչ ուսումնասիրված տեսակ է: Թվաքանակը և պոպուլյացիաների սահմաններն ուսումնասիրված չեն:


**Վտանգման հիմնական գործոնները:** Անտառների հատումը և բունաքիմիկատներով մշակումը:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

**Պահպանության միջոցառումներում ներառել այն ծառերը, որոնց փշակներում բնակվում են չղջիկները:**

135. Ասիական լայնականց չղջիկ, *Barbastella leucomelas* Gretzschmar, 1830  
Կարգ՝ ՉԵՌՋԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Ընտանիք՝ Հարթաքրայիններ, Vespertilionidae



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

**Տարածվածությունը:** Անդրկովկասից մինչև Դաղստան, Հարավային Թուրքմենիա, ամբողջ Ղեռնային Թուրքմենիան և Հիմալայները, մինչև Սի Չուան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանն այս սակավաթիվ տեսակի արեալի արևմտյան սահմանն է: ք. Երևանի շրջակայքը, Կոտայքի մարզ (Գառնի, Գեղարդ, Արգիս, Արդվիան), Վայոցձորի մարզ (գգ. Արփի, Ելփին, Չիվա, Արենի, Հեր-հեր, Մարտիրոս և այլն), Սյունիքի մարզ (գգ. Խնձորեսկ, Նյուվաղի, քք. Սեղրի և Գորիս), Տավուշի և Լոռու մարզեր:

**Ապրելավայրերը:** Սովորաբար, ապրում և ձմեռում են քարանձավներում և անձավներում, հազվադեպ՝ տարբեր շինությունների նկուղներում և ձեղնահարկերում: Գերադասում են բնակվել նոսրանտառներում, ջրավազաններին մոտ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Երբեք մեծ գաղութներ չեն առաջացնում, ավելի հաճախ ապրում են անհատորեն կամ փոքր խմբերով (2-7 առանձնյակ): Ակտիվ են օրվա բոլոր մուր ժամերին: Էզր մայիսի վերջին-հունիսի սկզբին ծննում է մեկ, հազվադեպ՝ երկու ձագ: Զնուանն անցնում են ավելի խոր և համեմատաբար տաք թարսություններ: Սնվում են ճանճերով, մոծակներով, մանր թիթեռներով և քեզներով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Արեալը նկատելիորեն կրճատվում է հյուսիսից դեպի հարավ: Այս տեսակի հանդիպման սովորական վայրերում ևս թվաքանակը կրճատվել է:


**Վտանգման իմնական գործոնները:** Բնական հարմար թաքսոնների կրճատումը և քանդումը:

**Պահպանության միջոցառումները:** Քարանձավների մի մասը ընդգրկվել է բնության հուշարձանների ցանկում: «Մագիլի» քարանձավը փակվել է այցելուների համար:

Փակել քարանձավները այցելուների համար: Անհրաժեշտ է հարավային պայտաքրի ապրելավայրեր հանդիսացող «Պտիչյա» և «Չայկենդ» քարանձավների մուտքը փակել այցելուների համար:

136. Գորշ ականջեղ, *Plecotus auritus* L., 1758  
Կարգ՝ ԶԵՌԱՋԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Ընտանիք՝ Հարթաքրայիններ, *Vespertilionidae*



**Կարգավիճակը:** Սակավաբիզ տեսակ է թվաքանակի կրծատման միտումով: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a:

**Տարածվածություն:** Հարավային Եվրոպա և Արևի Անչժուրիա, Հյուսիսային Մոնղոլիա, Ալթայ, Անդրկովկաս:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանրապետության հյուսիսային և հյուսիսարևելյան շրջանները:

**Ապրելավայրերը:** Բնակվում են տարբեր շինությունների նկուղներում և ձեղնահարկերում: Մրանց կարելի է հանդիպել նաև ծառերի փշակներում, ժայռերի ճեղքերում մինչև 2450 մ ծ.մ.ք. բարձրությունում: Գերադասում են լեռնատափաստանային, անտառատափաստանային և անտառային բացատները ջրավազաններին մոտ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Սիասեռ ձմեռող գաղութները կարող են կազմված լինել 170 և ավելի առանձնյակներից: Էզերը երիտասարդ չղջիկների հետ միասին ձմեռում են արուներից առանձնացված: Ակտիվ են գիշերը: Քրիչքը սավառնող է: Էզը հունիսի կեսերին ծնում է մեկ, հազվադեպ՝ երկու ձագ: Սնվում են մանր թեփուկաթևակորներով, մոծակներով, հաճախ հավաքում է թրթութներ և մանր թիթեռներ ծառերի ու թփերի ճյուղերից:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Արեալը նկատելիորեն կրծատվում է: Գաղութներում և պոպուլյացիաներում թվաքանակը ևս կրծատվում է:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հաստաքուն, փշակավոր ծառերի հատումը, հին փայտյա շինությունների քանդումը:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Անհրաժեշտ է գորշ ականջեղի ապրելավայրերի հանդիսացող տեղամասերին տալ արգելավայրերի կարգավիճակ:

137. Ծալքաշուրք լայնականց չղջիկ, *Tadarida teniotis* Rafinesque, 1819  
Կարգ՝ ՉԵՌԱՋԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA

Հնտանիք՝ Բուլղոզայիններ, Molossidae



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

**Տարածվածությունը:** Ամենուրեք հազվադեպ: Այս տեսակի առանձին առանձնյակներ նշվել են Աֆրիկայի մերձարևադարձային շրջաններում, Եվրոպայում, Ասիայում, կովկասում, Անդրկովկասում լեռնային Ղարաբաղում, Իրանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանը, ամենայն հավանականությամբ, արեալի արևմտյան սայմանն է: 1974-1975 թթ.-ին այն նկատվել է Տավուշի մարզում (Բերդ, Ենոքավան, Պապանինո), իսկ 2004 թ.-ին՝ Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջերին, Լեռնային Ղարաբաղի սահմանին մոտ:

**Ապրելավայրերը:** Գերադասում է անտառային հատվածները ջրավազաններին մոտ: Զբաղեցնում է ծառերի փշակները, ժայռերի ճեղքերը և ծառերի անջատված կեղևի տակ դատարկությունները:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բավարար չափով ուսումնասիրված չել: Էզերը հունիսին ծնում են մեկ ձագ: Կարող են թռչել ծառերի սաղարթների վրայով, նոյնիսկ մինչև արևի մայր մտնելը, և դրանց կարելի է շփոթել ջրածծառների հետ: Բազմաքանակ գաղութներ չեն առաջացնում, ավելի հաճախ ձևավորում են 2-6 առանձնյակներից կազմված խմբեր:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** 30 տարի անց հայտնաբերվել է երկրորդ առանձնյակը, որը վկայում է տեսակի խիստ սակավաթվության և խիստ վտանգված լինելու մասին:

**Վտանգման հիմնական գործոնները:** Հաստաբուն, փշակավոր ծառերի հատումը և էկոլոգիայի խախտումը ապրելավայրերում:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Անհրաժեշտ է ուսումնասիրել տեսակի կենսաբանական առանձնահատկությունները, ճշգրտել պոպուլյացիայի սահմանները և մշակել պահպանության միջոցառումներ:

138. Հնդկական վայրենակերպ կամ մացառախող, *Hystrix indica* Kerr, 1792  
Կարգ՝ ԿՐԾՈՂՆԵՐ, RODENTIA

Հնտանիք՝ Վայրենակերպեր, *Hystricidae*

Ենթատեսակ՝ *Hystrix indica hirsutirostris* Brandt, 1835



**Կարգավիճակը:** Նեղ արեալային տեսակ է խիստ մասնատված արեալով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B2a:

**Տարածվածությունը:** Փոքր, Առաջավոր և Սիջին Ասիա, Լևանտ, Արևմտյան Արարիա, Անդրկովկաս, Հարավային Ղազախստան, Հնդկաստան, Շիբեր, Չին Լանկա: Ենթատեսակը տարածված է Փոքր Ասիայում, Հարավային և Հարավ-Արևելյան Հայաստանում, Արցախում, Թափիշում և, հավանաբար, Աղբքեցանում՝ Նախիջևանում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնակեցնում է Սյունիքը, հանդիպում է «Խոսրովի անտառ» արգելոցում, Արդանիշի թերակղզում, 550-1900 մ ծ.մ.թ. բարձրություններում, վայրենակերպի ասեղներ հայտնաբերվել են Վայրում:

**Ապրելավայրերը:** Գերադասում է տարբեր բիոերով և բարձր խոտաբույսերով ծածկված ժայռային բիոտոպերը, հանդիպում է կիրճերում և գետերի հովտում՝ տամարիքսի բիոերով և եղեգնութերով ծածկված քարքարոտ ու ժայռային ելքերով: Երբեմն հանդիպում է նոսրացված արիդային անտառներում՝ շիբյակի մացառուտներում, զիհու նոսրանտառներում, ընտրելով քարքարոտ և ժայռային տեղամասերը: Երբեմն, ժամանակավորապես կարող է բնակվել բանջարանոցների և բուտանների մոտակայքում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Չատ գգույշ է: Վարում է թաքնված կենսակերպ և ցերեկային ժամերին դուրս չի գալիս: Ակտիվ է բացառապես գիշերը: Լեռներում և նախալեռներում, սովորաբար, ինքնուրույն փորում է բավականին բարդ կառուցվածքով, ճյուղավորված, մինչև 20 մ երկարությամբ բներ, սակայն հաճախ բնակվում է քարայրներում և անձավներում, ժայռերի միջև եղած դատարկություններում և քարերի ցրվածքներում: Անվում է խոտաբույսերով, սոխուկներով, կոճղարմատներով, բանջարաբուստանային կուլտուրաներով, ընկույզներով, վայրի և մշակովի բույսերի պտուղներով և հատապտուղներով: Հաճույքով հավաքում է այգիներում ծառերից թափած պտուղները, սնվում հասած խաղողով: Զմունը սնվում է ծառերի կեղևով և տարբեր բիոերի ու ծառերի երիտասարդ ընձյուղներով: Զուն չի մտնում, սակայն ձմռանը սակավակտիվ է: Բազմանում է տարեկան մեկ անգամ՝ գարնանը, սակայն զուգավորման և ձագեր ունենալու ժամկետները կախված են ապրելավայրերի բարձրությունից և տատանվում են մարտից մինչև ապրիլի վերջը: Բերում են 2-4 ձագ, որոնք սեռահասուն են դառնում կյանքի երկրորդ տարում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ամենուրեք հազվադեպ տեսակ է, կրծատվող, մասնատված արեալով և խիստ փոքր թվաքանակով: Նորավանքի պոպուլյացիան անհետացել է, ինչպես և, հավանաբար, Արփա գետի հովտում բնակվող առանձնյակները:

**Վտանգման հիմնական գործոնները:** Մարդու տնտեսական գործունեությունն արեալի տարածքներում, մասնավորապես, բնական կիրճերի գետակների հունի փոփոխումը և մացառախոզերի բնակության համար հարմար կիրճերում ջրամբարների ստեղծումը, որագորդությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ», «Շիկահող» արգելոցներում և «Սևան» ազգային պարկի Արդանիշի արգելոցային գոտում:

Անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը որսագողության դեմ, նաև նվազեցնել մացառախոզերի ապրելավայրերում անհանգստացնող գործոնների թիվը:

139. Դալի ավազամուկ, *Meriones dahli* Shidlovski, 1962  
Կարգ՝ ԿՐԾՈՂՆԵՐ, *RODENTIA*

Հնտանիք՝ Ավազամկնանմաններ, *Gerbillidae*



**Կարգավիճակը:** Արարատյան հարթավայրի էնդեմիկ տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered B1ab(iii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տարածաշրջանում անհետացած»՝ RE:

**Տարածվածությունը:** Նախիջևան (սահմանամերձ գ. Սադարակի շրջակայք), հավանաբար, Թուրքիայի արալիխյան ավազուտներ: Արաքս գետի ձախափնյա շրջանում տարածման մակերեսը գնահատվում է մոտ 300 հա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայաստանում Դալի ավազամուկը հայտնաբերվել է զգ. Գոռավանի, Շիլլուի, Փոքր Վեդու, Ռանչպարի, Մարգարայի շրջակայքում՝ ռելիկտային ավազուտներում: Վերջին տարիների հետազոտությունների արդյունքում Հայաստանի տարածքում Դալի ավազամկան պոպուլյացիաներ չեն հայտնաբերվել:

**Ապրելավայրերը:** Ստենոբիոնտ է՝ տիպիկ պսամոֆիլ: Հայաստանի սահմաններում ապրելավայրերը կապված են ավազուտային, հիմնականում՝ բլրային, բույլ կապված ավազների հատվածների հետ, 600-1000 մ ծ.մ.թ. բարձրություններում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Ակտիվ է կլոր տարի: Զմռանը ակտիվ է ամբողջ օրվա ընթացքում, մակերես դրուր գալու պարբերականությունը և տևողությունը կապված են եղանակի պայմաններից: Գարնանը և աշնանը սովորաբար, ակտիվ են առավոտյան, ինչպես նաև մքնշաղին և գիշերը: Ամառային ակտիվությունը (մայիսից մինչև սեպտեմբեր) մքնշաղային-գիշերային է: Բները, սովորաբար, տեղադրվում են ավազուտային բլուրներում՝ ջուզգունի կամ թամարիքսային բլուրների առկայությամբ: Տարբերվում են պաշտպանական, կերպարին, ձմեռելու և բազմացման բներ: Սնվում են ապրելավայրերի շորջն աճող տարրեր բույսերով: Ամռանը և ձմռանը հիմնական կերպ սերմերն են: Սնվում են նաև միջատներով: Մաշկափոխությունը՝ տարեկան երկու անգամ: Մեռական ակտիվությունը դրսերվում է առաջին հերթին ձմռած, ծեր արուների մոտ: Բազմացումը տեղի է ունենում մարտի վերջին-ապրիլի սկզբին: Հղիության տևողությունը՝ 20-22 օր: Մեկ տարում տալիս են մինչև 3 սերունդ: Ձագերի թվաքանակը՝ 2-7 (ավելի հաճախ՝ 4-6):

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հազվադեպ, սակավաբիվ տեսակ է: Պոպուլյացիայի վիճակը ծայրաստիճան խոցելի է: Հայաստանում տեսակը կանգնած անհետացման եզրին: Ավազամկան պոպուլյացիաներ չեն հայտնաբերվել:

**Վտանգման հիմնական գործուները:** Մարդու տնտեսական գործունեությունը:  
Ենթարարչական պոպուլյացիաների համար՝ նաև գետի հորդությունները, որոնք  
ուժեղացել են՝ կապված կիխմայի փոփոխման հետ:

**Պահպանության միջոցառումները:** Դալի ավազամուկը «Գոռավանի ավազուտներ»  
արգելավայրում պահպանվող օբյեկտներից մեկն է:

**Պահպանության առաջարկվող միջոցառումները:** Անհրաժեշտ է ճշգրտել Դալի  
ավազամկան արդի կարգավիճակը Հայաստանում, արգել «Գոռավանի ավազուտներ»  
արգելավայրում ցանկացած տնտեսական գործունեությունը: Անհրաժեշտ է նաև ստեղծել  
կայուն լարորոտոր պոպուլյացիաներ Դալի ավազամկան բազմացման և Հայաստանի  
նախկին ասլելավայրերում ռեինտրոդուկցման համար:

140. Հայկական մկնիկ, *Sicista armenica* Sokolov et Baskevich, 1988  
Կարգ ԿՐԾՈՂՆԵՐ, RODENTIA

Ընտանիք՝ Սկնիկանմաններ, *Sicista*



**Կարգավիճակը:** Էնդեմ տեսակ է, փոքր թվաքանակով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered B1ab(iii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a:

**Տարածվածությունը:** Հայաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայկական մկնիկը (ընդամենը 9 կենդանիներ) հայտնաբերվել է Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների ենթալպյան գոտում, մասնավորապես՝ դրանց հատման տերում՝ գ. Հանքավանի, ք. Կիրովականի շրջակայրում, Մայմեխի լեռան վրա: Կան գրականության տվյալներ Սյունիքում մկնիկի հայտնաբերման մասին, սակայն հետագայում դրանք չեն հաստատվել:

**Ապրելավայրերը:** Բնակվում է բարձր և խիտ տարատեսակ խոտաբույսերի առկայությամբ ենթալպյան բիոտոպերում՝ անտառի վերին եզրին, 2000-2200 մ ծ.մ. բարձրության վրա:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Գրեթե հետազոտված չեն: Սնվում են խառը կերով, մեծ նաև մասամբ՝ կանաչ, սերմեր, պտուղներ: Կարող է նաև սնվել միջատներով և խմել ջուր: Ակտիվությունը, հավանաբար, ինչպես և այլ մկնիկների ակտիվությունը, մթնշաղային-գիշերային է:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Սակավաթիվ, հազվադեպ տեսակ է, որը հետազոտման և պահպանման կարիք ունի:


**Վտանգման հիմնական գործոնները:** Ենթալպյան գոտում մարդու գործունեությունը, մասնավորապես, անասունների արածեցումը, ինչպես նաև կլիմայի արիդացումը (ավելի չորայինի փոփոխվելը):

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:

Անհրաժեշտ է հայտնի բիոտոպերում ստեղծել արգելավայրեր:

141. Φոքρասիական գետնասկյուռ, *Spermophilus xanthopygmnus* Bennet 1835  
Կարգ՝ ԿՐԾՈՂՆԵՐ, RODENTIA

Հնտանիք՝ Սկյուռանմաններ, Sciuridae



**Կարգավիճակը:** Նեղ արեալային տեսակ է խիստ մասնատված արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միուրյան Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2ab (ii, iii, iv):

**Տարածվածություն:** Թուրքիա՝ Կենտրոնական և Արևելյան Անատոլիա, հավանաբար՝ Լևանու:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնակեցնում է հիմնականում Հայաստանի արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջանները: Արագածոտնի, Շիրակի և Լոռի հարավարևմտյան անտառազուրկ տարածքները:

**Ապրելավայրերը:** Բնակեցնում է նախալեռնային կիսաանապատի վերին մասերը, լեռնային տափաստանը, մարգագետնային տափաստանը և, երբեմն՝ ենթալպյան գոտու ստորին մասը 1100-2400 մ ծ.մ. բարձրություններում՝ գերադասելով խոպան հողերը: Գետնասկյունի ապրելատեղեր կարելի հանդիպել Փամբակի հովտում և Շիրակի հարթավայրում՝ ցանքատարածքների, դաշտերի ու բանջարանցների եզրերի մոտ, երբեմն՝ գյուղական գերեզմաններում, ինչն, լրված գյուղերի փլատակներում, երկարության գծերի մոտ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հիմնականում բուսակեր է՝ սնվում է բույսերի ավելի քան 30 տեսակներով: Զմեռմանն անցնելուց առաջ սնվում է, խիստ ճարպակալում և պահեստում վայրի ու մշակովի հացազգիների մեջ քանակությամբ սերմեր: Զմեռումից դուրս գալու ժամկետը կախված է ուղղահայաց գոտիականությունից և եղանակից և տատանվում է մարտի սկզբից մինչև ապրիլի վերջը: Արեալի տարբեր մասերում ձմեռման տևողությունը կազմում է 6,5-8,5 ամիս: Գետնասկյունի բները երկու տեսակի են՝ պաշտպանական և բազմացման: Բույնը, սովորաբար, գտնվում է 1,5 մ խորության վրա: Ակտիվ են ցերեկային ժամերին: Կերի հայրհայրման ժամանակ կարող են անցնել 300-500 մ: Տեղաշարժվում են արագ կրնավազքերով՝ օգտագործելով պոչը որպես դեկ վազքի ուղղությունը փոխելու ժամանակ: Շատ գգույշ են: Իրար հետ հաղորդակցվում են սովորով: Զուգավորման ակտիվությունը սկսվում է ձմեռումից դուրս գալուց 5-7 օր հետո և տևում 10-15 օր: Հղիությունը տևում է 28-30 օր: Զագերը արեալի հյուսիսային մասում ծնվում են, սովորաբար, մայիսին, հարավային մասում՝ ապրիլի երկրորդ կետում: Սաղմերի թիվը՝ կախված էզի տարիքից և ֆիզիոլոգիական վիճակից, հասում է 2-10 (առավել հաճախ՝ 4-6): Անբարենապատ պայմանների առկայության դեպքում կարող է դիտվել սաղմի ռեզորցիա (քայրայում):


**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Արեալի սահմաններում ֆռնային՝ ձմեռող տեսակ է, բավականին կայուն թվաքանակով: Միջին թվաքանակն արեալի տարբեր մասերում կազմում է. հյուսիսային և բարձր լեռնային շրջաններում՝ 0,5-2, արեալի այլ նաև 16,8-19,2 առանձնյակ 1 հա վրա: Հայաստանում արեալի մակերեսը կազմում է մինչև 350.000 հա: Տարածման փաստացի շրջանը չի գերազանցում 15-25 հազ. հա, քանի որ բնակեցման վայրերն ունեն ցրված բնույթ և տեղադրված են մարդաբնակ վայրերում, մեկուսացված փոքր (1-30, հազվադեպ՝ 100 հա) հատվածների տեսքով:

**Վտանգման իիմնական գործոնները:** Մարդածին սրբեսը, կլիմայի փոփոխությունները: Արեալի հարավային և կենտրոնական մասերում խոշոր բնակեցման վայրերը կամ լիովին ոչնչացել են, կամ ել լրվել գետնասկզբութի կողմից՝ այգիներ ստեղծելու և գյուղատնտեսական նպատակներով տարածքները յուրացնելու հետևանքով:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկում: Անհրաժեշտ է պահպանել խոպան հողերի բիոտոպերը:

142. Շիդլովսկու դաշտամուկ, *Microtus (Sumeriomys) schidlovskii* Argyropulo, 1933  
Կարգ՝ ԿՐԾՈՂՆԵՐ, RODENTIA

Հնտանիք՝ Համստերանմաններ, Cricetidae



**Կարգավիճակը:** Էնդեմիկ ենթատեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab (ii, iii, v):

**Տարածվածությունը:** Կենտրոնական Վրաստան:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արագածոտնի արևմտյան և հյուսիսային մասեր, Շիրակի մարզի հարավային, Փամբակի լեռնաշղթայի արևմտյան և կենտրոնական մասերը, 1400-1700 մ ծ.մ.ր. բարձրություններում:

**Ապրելավայրերը:** Չոր-լեռնային, լեռնային և մարգագետնային խոպան տափաստանները, դաշտերի միջակոսները, ցանքատարածությունները, այգիները և բանջարանոցները, որոնք գտնվում են համապատասխան բարձրություններում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայաստանը բնակեցնող, նոմինատիվ ենթատեսակ է, որը մի փոքր խոշոր է Վրաստանում ապրող *Microtus (S) schidgoriensis* Argyropulo, 1935 ենթատեսակից: Արտաքինապես շատ նման է Փոքր Ասիայում հանդիպող հարթալեռնային դաշտամկան՝ *Microtus guentheri*: Սուզացնում է գաղործներ: Բներն ավելի հասարակ են, քան հասարակական և սովորական դաշտամկներինը: Սնվում է հիմնականում խոտաբույսերով, սակայն ազրոցենոզներում կարող է սնվել նաև հացահատիկային, տեխնիկական և բանջարունացային կուլտուրաներով: Բազմացման ցիկլի սկիզբը կապված է գարնան եղանակային պայմաններից և կարող է դիտվել փետրվարի վերջից մինչև ապրիլի սկիզբը: Հղիության տևողությունը՝ 22 օր: Հասուն է գր տարեկան կարող է ծննդաբերել մինչև 4 անգամ՝ բերելով 10-11 (միջինը՝ 7-8) ձագ: Սուածին սերնդի երիտասարդ էգերը կարող է նույն սեզոնում զուգավորվել և ունենալ մինչև 2 սերունդ, սովորաբար, ավելի քիչ քանակությամբ ձագերով:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նեղ արեալային էնդեմ ենթատեսակ է կրծատվող թվաքանակով: Սկսած անցած դարի 80-ականների վերջից և, հատկապես 90-ականների կեսերին արեալի սահմաններում թվաքանակը զգալիորեն կրծատվել է, որից հետո՝ մինչև այսօր, միայն դաշտամկների համար բացառապես բարենպաստ՝ 2003 թ.-ին տեսակի թվաքանակն առանձին բիոտոպերում մոտ էր թվաքանակի երկարամյա միջին մեծություններին: Որոշ պոպուլյացիաներ, որոնք 70-ական թթ.-ին համարվել են կայուն (օր՝՝ Մաստարինի հարթակում), հանարյա անհետացել են:

**Վտանգման հիմնական գործոնները:** Մարդու տնտեսական գործունեությունը և կլիմայի փոփոխությունները, որոնք ուղեկցվում են հորդառատ անձրևներով վաղ գարնանը և դրանց հաջորդող ուժեղ երաշտներով ամռանը, որն ազդում է դաշտամկների կերային բազայի վրա:

**Պահպանության միջոցառումները:** Չեն իրականացվում:


Անհրաժեշտ է պահպանել խոպան հողերի բիոտոպերը:

143. *Փոքր ճագարամուկ, Allactaga elater* Lichtenstein, 1825  
Կարգ՝ ԿՐԾՈՂՆԵՐ, RODENTIA

Հնտանիք՝ ճագարամկնանմաններ, Allactagidae

Ենթատեսակ՝ Արալիխի փոքր ճագարամուկ,

*Allactaga elater aralychensis* Satunin, 1901



**Կարգավիճակը:** Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab (ii, iii, iv):

**Տարածվածությունը:** Արևմտյան սահմանը՝ գ. Ախուրյանի ցածրամասերը, հավանաբար, երկու, դեռ չհաստատված, մեկուսացված պոպուլյացիաներ՝ Ղարսի շրջանում, դեպի արևելք՝ մեկուսահատված թուրքիայում՝ Արարատի ստորոտում, հյուսիսային սահմանը՝ Հայաստանում և Նախիջևանում Արարատյան հարթավայրի նախալեռները՝ դեպի արևելք, մինչև Յայջի գյուղը: Հարավում՝ փոքր մեկուսացված Իրանի ք. Մարոլի շրջակայրում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզեր՝ 800-1200 մ ծ.մ.բ. բարձրություններում: Հայտնաբերված է նաև ք. Երևանի շրջակայրում:

**Ապրելավայրերը:** Կավային և խճաքարային կիսաանապատներ, աղուտներ և փոքր ավազուտներ (տակիրներ), չոր լեռնատափաստանի աղուտային և անապատացած բիոտոպեր, հաճախ աղուտային, ավելի հազվադեպ՝ օշինդրային բուսական խմբավորումներով:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Հայկական արեալի սահմաններում ստվրական, սակայն սակավաբանակ տեսակ է: Վարում է բացառապես մքնշաղագիշերային ապրելակերպ: Լստ սննան եղանակի սերմնակեր-կանաչակեր կրծող է, որը, սակայն, գերադասում է սերմերը: Կերարաժնում հատուկ տեղ են գրավում միջատները: Զմռանը քուն է մտնում նոյենքերի կեսերին-վերջին, ձմեռումից դուրս է գալիս մարտի սկզբին-կեսերին: Զմռան քունը խորը չէ, ընդհատվող, ձմռանը հալոցքի դեմքում կարող է արբնանալ և մի քանի օր ակտիվ լինել: Արևելյան Անսրկովկասում քուն չի մտնում: Բներն ունեն մեկ մուտք, երկարությունը՝ մինչև 2 մ, բնային խցիկը՝ 1 մ խորության վրա: Պաշտպանական բներ հազվադեպ են հանդիպում: Տեղաշարժվում է կամ վազքով՝ կատարելով անհամաշափ թոփքներ, կամ քայլելով: Բազմացման շրջանը սկսվում է

մարտից և ավարտվում նոյեմբերին: Հասուն էգերը ծննդաբերում են 2-3, առաջին տարվա էգերը՝ 1 անգամ: Զագերի միջին թվաքանակը՝ 3-6:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Նեղ արեալային էնդեմ ենթատեսակ է կրճատվող թվաքանակով և ապրելավայրերով՝ օպտիմալ բիոտոպերի ոչնչացման հետևանքով:


**Վտանգման հիմնական գործուները:** Մարդու տնտեսական գործունեությունը Արարատյան հարթավայրում: Համեմատաբար հարթ խոպան հողերի մշակումը ցանքատարածքներ, բանջարանցներ և բոստաններ ստեղծելու նպատակով: Այդ հողերում այգիների և ձկնարուծարանների ստեղծումը: Վայրիացած շների և շնագայլերի թվաքանակի մեծացումը:

**Պահպանության միջոցառումները:** Փոքր ճագարամկան ոչ մեծ պոպուլյացիաները պահպանվում են «Խորովի անտառ» արգելոցում: Հավանաբար, մի քանի առանձնյակներ կան «Էրեբունի» արգելոցում:

Անհրաժեշտ է նաև դեռևս պահպանված ապրելավայրերին տալ արգելավայրերի կարգավիճակ, և կարգավորել վայրիացած շների թվաքանակը համապատասխան տարածքներում և դրանց շրջակայքում:

144. Գորշ արջ, *Ursus arctos* Linnaeus, 1758  
Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, *CARNIVORA*

Ընտանիք՝ Արջեր, *Ursidae*



**Կարգավիճակը:** Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Գրանցված է եղել նաև ԲՊՍՄ Կարմիր ցուցակում, սակայն 1972 թ.-ից հետո՝ որպես անորոշ կարգաբանական ձև, հանվել է: Ներկայումս տեսակն ընդգրկված է ԲՊՍՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1 b(iii):

**Տարածվածությունը:** Շատ մեծ արեալ (Եվրասիա և Հյուսիսային Ամերիկա) ունեցող տեսակ է:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի, Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում: Երբեմն կարող է մտնել Շիրակի և Արագածոտնի մարզեր: Գրանցվել է 400-500 մինչև 3000 մ ծ.մ. բարձրություններում:

**Ապրելավայրերը:** Բնակվում է չորային նոսրանտառներում, սաղարբավոր անտառներում, լեռնային մարգագետնատափատաններում, ենթալպյան և ալպիական մարգագետիններում: Արեալը զգալի չափով ներառում է այն վայրերը, որտեղ աճում են պտղատու ծառեր, հատապտուղներ և ընկողենիներ, որոնցով արջը սնվում է: Երբեմն արջերը հարձակվում են վայրի կաթնատնների, ավելի հազվադեպ՝ ընտանի կենդանիների վրա:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բազմանում են մայիսին: Հոլիուրյունը տևում է մոտ 7 ամիս: Զագերը (առավել հաճախ՝ 2, հազվադեպ՝ 1 կամ 3-4) ծնվում են ընում դեկտեմբերի վերջից մինչև մարտ: Լավ բազմանում է անազատ պայմաններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը հայտնի չէ, սակայն կայուն է: Այս, որ արջերը հաճախ մտնում են զյուղեր՝ վնաս հասցնելով պտղառ այգիներին, դրանց մեծ թվաքանակի վկայություն չի կարելի համարել: Ավելի հավանական է, որ դա բիոտոպակեր քայլայման և կերային ռեսուրսների անբավարարության հետևանք է, որը բերում է պոպուլյացիայի մասնատմանը: Անազատ պայմաններում արջերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ չկան: Պահպում է Երևանի Կենդանաբանական այգում:


**Վտանգման հիմնական գործոնները:** Որսագողությունը, բիոտոպերի ոչնչացումը, մարդու կողմից անհանգստություն պատճառելը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Շիրակի» արգելոցներում, «Սևան», «Արևիկ» և «Դիլիջան» ազգային պարկերում և մի շարք արգելավայրերում:

Անհրաժեշտ է ուժեղացնել բիոտայի վրա մարդածին գործոնների ազդեցության վերահսկողությունը: Անհրաժեշտ է կատարել էկոլոգիական և կարգաբանական հետազոտություններ:

145. Խայտաքիս, *Vormela peregusna* (Guldenstaedt, 1770)  
Կարգ՝ ԳԻՇԱԾԻՉՆԵՐ, *CARNIVORA*

Ընտանիք՝ Կզաքիսներ, *Mustelidae*



**Կարգավիճակը:** Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄԿ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2c» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2c+B1 b(iii):

**Տարածվածություն:** Տեսակը տարածված է Հարավ-Արևելյան Եվրոպայից մինչև Մերձավոր Արևելք, Հարավային Չինաստան և Մոնղոլիա:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Հայաստանի համարյա բոլոր շրջաններում, 1000-2000 մ ծ.մ. բարձրություններում: Արեալը և էկոլոգիան բոլորովին ուսումնասիրված չեն:

**Ապրելավայրերը:** Կիսաանապատներ, լեռնային չոր տափաստաններ, լեռնային մարգագետնատափատաներ և ենթալային մարգագետիններ: Արեալը կապված է խայտաքիսի հիմնական կեր հանդիսացող՝ կրծողների տարածման շրջանների հետ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բազմանում են, հավանաբար, ձմռան վերջում: Հյուրացունը տևում է մոտ 2 ամիս, որից հետո՝ ապրիլ-մայիսին, ծնկում են 4-8 ձագեր: Լավ բազմանում է անազատ պայմաններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայտնի չե: Անհրաժեշտ է կատարել համապատասխան հետազատություններ: Հավանաբար, կրծատվում է բիոտոպերի՝ որպես գյուղատնտեսական տարածքների, օգտագործման հետ:


**Վտանգման հիմնական գործոնները:** Բիոտոպերի ոչնչացումը: Թվաքանակի աճին խոչընդոտող հիմնական սահմանափակող գործոնը կիսանապատային և լեռնատափատանային հողերի մշակումն է, դրանց ապրելավայրերում անասունների գարնանային արածեցումը, ինչպես նաև մեծ քանակությամբ պեստիցիդների և քիմիական պարարտանյութերի օգտագործումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Էրեբունի» արգելոցներում, «Սևան» և «Արփի լիճ» ազգային պարկերում և մի շարք արգելավայրերում:

Անհրաժեշտ է կատարել էկոլոգիական և կարգաբանական հետազոտություններ: Անհրաժեշտ է ուժեղացնել արեալի սահմաններում գյուղատնտեսական գործունեության վերահսկողությունը, դադարեցնել կրծողների դեմ պայքարում բունաքիմիկատների օգագործումը:

146. Ջրասամույր, *Lutra lutra* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԳԻՇԱՏԻՎՆԵՐ, *CARNIVORA*

Ընտանիք՝ Կզաքիսներ, *Mustelidae*



**Կարգավիճակը:** Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

**Տարածվածություն:** Տեսակը տարածված է Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Հայաստանի համարյա բոլոր շրջաններում:

**Ապրելավայրերը:** Մաքուր ջրով և ձկնապաշարներով հարուստ լճեր, գետեր և գետակներ:

**Կենսաքանության առանձնահատկությունները:** Բազմացումը սկսվում է ձմռանը՝ գարնանը: Ունենում են 1-5, ավելի հաճախ՝ 2-3 ձագեր, որոնք հիմնականում ծնվում են երկու տարին մեկ ամագամ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայտնի չէ, սակայն իսկստ կրճատված: Անհրաժեշտ է կատարել համապատասխան հետազատություններ: Հավանաբար, կրճատվում է բիոտոպերի՝ գետերի աղտոտման և հիդրոտեխնիկական կառույցների ստեղծման հետ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Բիոտոպերի ոչնչացումը, ջրերի աղտոտումը, ձկների գերորասը:


**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Սևան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում:

Անհրաժեշտ է ուժեղացնել արեալի սահմաններում, ջրավազանների մոռակայքում գյուղատնտեսական գործունեության վերահսկողությունը: Անհրաժեշտ է կատարել էկոլոգիական և կարգաբանական հետազոտություններ:

147. Անտառակատու, *Felis silvestris* Schreber, 1777  
Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, *CARNIVORA*

Ընտանիք՝ Կատվազգիներ, *Felidae*

Ենթատեսակ՝ Եվրոպական անտառակատու, *Felis silvestris silvestris* Schreber, 1775



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

**Տարածվածություն:** Ենթատեսակը տարածված է Եվրոպայում, իսկ տեսակը՝ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հանդիպում է Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի, Լոռու մարզերում, 700-2500 մ ծ.մ.բ. բարձրություններում:  
Հավանաբար, մտնում է նաև Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր:

**Ապրելավայրերը:** Սաղարթավոր անտառներ, չորային նոսրանտառներ: Հիմնական պայմանը՝ ապրելավայրում կերային բազայի (կրծողներ, բռչուններ) առատությունն է և խուլ, մարդու ազդեցությունից զուրկ տեղամասերի առկայությունը:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Բազմացումը սկսվում է փետրվար-մարտին: Ապրիլ-մայիսին ունենում են 3-8, ավելի հաճախ՝ 4-5 ձագեր: Հեշտությամբ բազմացվում են անազատ պայմաններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Թվաքանակը հայտնի չէ, սակայն կայուն: Անհրաժեշտ է կատարել հաշվառումներ և հետազոտել անտառակատվի էկոլոգիան հանրապետությունում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Տեսակի գոյատևման համար լուրջ վտանգ է ներկայացնում անտառակատվի հիբրիդացումը ընտանի, հատկապես վայրիացած կատունների հետ և մրցակցությունը տափաստանային կատվի (*Felis silvestris lybica*) հետ: Այդ տեսանկյունից, անհրաժեշտ է կատարել համապատասխան զիտական հետազոտություններ:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խորովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, «Դիլիջան» և «Արևիկ» ազգային պարկերում և մի քանի արգելավայրերում:

Անհրաժեշտ է ուժեղացնել սաղարթավոր անտառների և չորային նոսրանտառների գոտում մարդածին գործոնների ազդեցության (անտառահատումներ, ճանապարհաշնորհություն և այլն), ինչպես նաև վայրիացած կատունների թվաքանակի կարգավորման վերահսկողությունը:

148. Ընձառյուծ, *Panthera pardus* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, *CARNIVORA*

Ընտանիք՝ Կատվազգիներ, *Felidae*

Ենթատեսակ՝ Կովկասյան ընձառյուծ *Panthera pardus ciscaucasica* (Satunin, 1914) =

Պարսկական ընձառյուծ *Panthera pardus saxicolor* Pocock, 1927



**Կարգավիճակը:** Ենթատեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered C2a(i)», իսկ տեսակը՝ «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR C2a(i) + D:

**Տարածվածությունը:** Արեալը ներառում է Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Արևելյան Թուրքիան, Հարավային Թուրքմենստանը, Իրանը, Աֆղանստանը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Բնակեցնում է Հարավ-Արևմտյան և Հարավային Հայաստանը՝ «Խոսրովի անտառ» արգելոցի կենտրոնական և արևելյան հատվածներից (Խոսրով և Խաչաձոր տեղամասեր) մինչև հայ-իրանական սահմանը Գեղամա, Զանգեզուրի, Վայոց Ձորի, Քարգուչատի և Սեղրիի լեռնաշղթաների սահմաններում: Արեալի սահմաններն անցնում են. հյուսիս-արևմուտքում՝ Ազատ գետով, հյուսիսում՝ Վարդենիսի լեռնաշղթայով, արևմուտքում՝ Արարատյան հարթավայրի կիսաանապատային գոտիով, հարավ-արևմուտքում և արևելքում՝ Աղրբեջանի հետ սահմանագծով և ալպիական մարգագետինների և նիվալ գոտու միջև անցումային գոտիով, հարավում՝ Արաքս գետով, հայ-իրանական սահմանի երկարությամբ: Մինչև 70-ականների սկիզբը ընձառյուծը բնակվել է նաև Հայաստանի հյուսիս-արևելքում:

**Ապրելավայրերը:** Չոր լեռնատափաստաններ, արիդային նոսրանտառներ, հարավային լանջերի լեռնային, ենթալպիան և ալպիան մարգագետիններ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Մարգագետիններն ընձառյուծն օգտագործում է միայն ձևազուրկ ժամանակ տեղափոխվելու համար, քանի որ ձևածածկը կարևոր սահմանափակող գործոն է: Ծառ կարևոր է նաև դժվարհասանելի ժայռերի առկայությունը, որոնք հնարավորություն են տալիս ընձառյուծին բեզոարյան այծերին որսալու ժամանակ հանկարծակի դրւոս գալու, ինչպես նաև հանգստանալու համար: Բացի այդ, ժայռերը առավել դժվարհասանելի են մարդկանց և ընտանի կենդանիների համար: Բացի բեզոարյան այծերից, որսում են նաև վայրի խոզ, այծյամ, հնդկական մացառախոզ, գորշ նապաստակ: Որպես բույն օգտագործում են քարանձավները, ժայռաճեղքերը, խիս թփուտները:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հայաստանում ընձառյուծի պոպուլյացիայի առավելագույն մեծ թվաքանակը 10-15 առանձնյակ է՝ հասուն, երիտասարդ առանձնյակները և ձագերը ներառյալ: Պոպուլյացիան բազմացող է և կազմում է համաշխարհային պոպուլյացիայի 0,008-0,01%-ը (մոտ 1300 առանձնյակ): Ընձառյուծի ներկայիս տարածման տարածքը կազմում է 7497,2 կմ<sup>2</sup>, կամ Հայաստանի տարածքի 25,2%-ը: Բնակեցման տարածքը կազմում է 2856,8 կմ<sup>2</sup> (9,6%): Այն ներառում է մշտական և ժամանակավոր բնակեցման տարածքները և անցուղիները: Միայն երկու վայրերում՝ «Խոսրովի անտառ» արգելոցի կենտրոնական ու արևելյան տեղամասում (207.9 կմ<sup>2</sup>) և գ. Ըսնաձորից (Նյուվաղի) դեպի հյուսիս (296.9 կմ<sup>2</sup>) գտնվող տեղամասում գիշատիչը բնակվում է մշտապես: Նշված տեղամասերը գտնվում են արեալի հյուսիսարևմուտքում և հարավ-արևելքում և իրարից բաժանված են բավականին նեղ, խաչվող անցուղիների ցանցով: Պոպուլյացիայի նման կառուցվածքի պատճառով այն լիովին կախված է անցուղիների գործառնությունից:

**Վտանգման հիմնական գործոնները:** Առավել վտանգավոր գործոններից է արեալի մասնատված լինելը, որի հիմնական պատճառը որսագողությունն ու մարդու տնտեսական գործունեությունն է. բույսերի և սնկերի հավաքը, լեռնագործությունը, ճանապարհների կառուցումը, անտառահատումները, անտառային հրդեհները, անասունների արածեցումը: Լեռնային բիոտոպերն իրենց բնույթով միատարր չեն, ինչը խորացնում է արեալի մասնատման բացասական ազդեցությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, «Արևիկ» ազգային պարկում և «Զանգեզուր» արգելավայրում: 2002 թ-ից սկսած Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվում են ընձառյուծի պահպանության և մոնիթորինգի աշխատանքներ:

Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ արեալի մասնատման գործոնը նվազեցնելու նպատակով: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել կերային հարուստ բազա ունեցող բիոտոպերի միավորումը խոշոր (արգելոցներ, ազգային պարկեր) և մանր (արգելավայրեր) պահպանվող տարածքների ցանցում:

149. Մանուլ, *Otocolobus manul* (Pallas, 1776)  
Կարգ՝ ԳԻՇԱՏԻՎՆԵՐ, *CARNIVORA*

Ընտանիք՝ Կատվազգիներ, *Felidae*



**Կարգավիճակը:** Հանրապետության տարածքում, ամենայն հավանականությամբ, անհետացել է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տարածաշրջանում անհետացած»՝ RE:

**Տարածվածությունը:** Տարածված է Կենտրոնական Ասիայում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Հայտնաբերվել է միայն երկու կետերում՝ Ուրծի լեռնաշղթայում և Սեղրիի շրջանում, ընդ որում վերջինը՝ 1935 թ.-ին: Հանդիպման հարակից շրջաններն են Ղարաբաղը, Նախիջևանը և գ. Արարսին հարող Իրանի տարածմերը:

**Ապրելավայրերը:** Չոր տափաստանները և կիսաանապատները քարազանգվածների և ժայռերի առկայությամբ:

**Կենսաբնության առանձնահատկությունները:** 1927 թ. մայիսի 19-ին հայտնաբերված էղի արգանդում կային մորքիով ծածկված երեք սաղմեր: Կարող են ունենալ մինչև 10, սովորաբար՝ 3-4 ձագ:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ամենայն հավանականությամբ, Հայաստանի տարածքում այլևս չի հանդիպում: Մյուս կողմից, մանուլը լավ հայտնի է իր թաքնվելու ունակությամբ, որի պատճառով նրան դժվար է հայտնաբերել:

**Վտանգման իմնական գործոնները:** Պոտենցիալ վտանգ են ներկայացնում որսագողությունը և բիոտոպերի քայլայումը:

**Պահպանության միջոցառումները:** Խստացնել արեալի սահմաններում որսագողության և գյուղատնտեսական գործունեության վերահսկողությունը:

150. Բորենի, *Hyaena hyaena* (Linnaeus, 1758)  
Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, *CARNIVORA*

Հնտանիք՝ Բորենիներ, *Hyenidae*



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տարածաշրջանում անհետացած»՝ RE:

**Տարածվածությունը:** 1980-ականների սկզբին պահպանվել էր Արևելյան Վրաստանի, Աղբեջանի հարավ-արևելքի (Չուվաղանի ստորոտ, Թալիշի լեռներ) և հյուսիս-արևմուտքի (Սիսգեչանի ջրավազան) որոշ մասերում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Մինչև 1940-ականները հազվադեպ նկատվում էր Արարատյան հարթավայրի կիսաանապատային լանջաֆտներում, սակայն հետագայում Հայաստանում բորենու առկայության վերաբերյալ տվյալները բացակայում են: Հանդիպում է Ղարաբաղի և գ. Արաքսի միջև ընկած կիսաանապատային գոտում:

**Ապրելավայրերը:** Չոր տափաստաններ և կիսաանապատներ: Հայաստանում նման բիոտոպերի մակերևույթն ի սկզբանե մեծ չի եղել, և դրանք ինտենսիվորեն յուրացվում են մարդու կողմից գյուղատնտեսական նպատակներով, ուստի հանրապետությունում բորենու պահպանման հավանականությունը չնշին է:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Կարող են գուգավորվել և ձագեր ունենալ տարվա ցանկացած եղանակին:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ամենայն հավանականությամբ, Հայաստանում այլևս չի բնակվում: Պահվում է Երևանի Կենդանաբանական այգում:

**Վտանգման հիմնական գործոնները:** Որսագողությունը և բիոտոպերի ոչնչացումը:

**Պահպանության միջոցառումները:** Տվյալներ չկան:

Խստացնել որսագողության և գյուղատնտեսական գործունեության վերահսկողությունը:

151. Բեզոարյան այծ, *Capra aegagrus* Erxleben, 1777  
Կարգ՝ ԶՈՒՅԱՍՏՐԱԿԱՎՈՐՆԵՐ, ARTIODACTILA

Ընտանիք՝ Սնամեջ եղջուրավորներ, Bovidae



**Կարգավիճակը:**Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2cd» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU C2a(i):

**Տարածվածությունը:** Տեսակի արեալը ներառում է Հյուսիսային Կովկասից (Դաղստան) մինչև Պակիստան և Աֆղանստան ընկած տարածաշրջանը:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արեալը ներառում է Սևանի լեռնաշղթան (գ. Շորժայի շրջակայթերը), Գեղանա լեռնաշղթայի արևմտյան լանջերը («Խոսրովի անտառ» արգելոց), Գառնիի, Ուրձի, Վարդենիսի, Վայոց Ձորի, Զանգեզուրի, Բարգուշատի, Մեղրիի լեռնաշղթաները և Նորավանքի կիրճը: Մեկուսացած խմբեր պահպանվել են Խուստուաց լեռնա վրա, գ. Որոտանի կիրճում, գ. Արփայի հովտի վերին մասում: Փամբակի լեռնաշղթայում և Արագածի վրա տեսակն աճրողովին անհետացել է:

**Ապրելավայրերը:** Բնորոշ բիոտոպերն են ժայռային լեռները դժվար հասանելի ժայռերի և չորային նորանատառների առկայությամբ: Պարտադիր պայման է խիտ ծառարփային բուսականության, քարաթափվածքների և թաքսոնցների առկայությունը: Այնուամենաւ պարբերաբար կատարում են ուղղահայաց միգրացիաներ. ձմռանը՝ դեպի նախալեռներ, ամռանը՝ դեպի բարձունքներ: Տարածային մեծ տեղափոխություններ չեն կատարում՝ մնալով նույն բիոտոպերում:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Չուգավորումը տեղի է ունենում նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի սկիզբը, ձագերը (սովորաբար, զույգ) ծնվում են մայիսի կեսերին: Պահպում է Երևանի Կենդանաբանական այգում: Հեշտությամբ բազմացվում է անազատ պայմաններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս գնահատմամբ՝ բեզոարյան այժի թվաքանակը Հայաստանում կազմում է 1000-1500 առանձնյակ: Այն զգալիորեն գերազանցում է այլ հեղինակների ավելի վաղ տվյալները: Պոպուլյացիան խիստ մասնատված է մասն, իրարից տարանջատված խմբավորումների:

**Վտանգման իմմնական գործոնները:** Որսագողությունը, հողերի յուրացումը, լեռնային արդյունաբերության զարգացումը, բիոտոպերի քայլայումը, անասունների արածեցումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, «Արևիկ» և «Սևան» ազգային պարկերում, «Զանգեզուր» արգելավայրում և Հարավային Հայաստանի մի շարք այլ արգելավայրերում:

WWF աջակցում է բեզուարյան այծի արեալի սահմաններում նոր պահպանվող տարածքների ստեղծման և զարգացման աշխատանքներին:

Անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը որսագողության դեմ և խստացնել բնապահպանական ոեժիմը:

152. Վայրի ոչխար, մուֆլոն *Ovis orientalis* Gmelin, 1774  
Կարգ՝ ՉՈՒՅԱՆԱԿԱՎՈՐՆԵՐ, *ARTIODACTILA*

Ընտանիք՝ Սնամեջ եղջյուրավորներ, *Bovidae*

Ենթատեսակ՝ Հայկական մուֆլոն *Ovis orientalis gmelinii* (Blyth, 1841)



**Կարգավիճակը:** Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2cde» կարգավիճակով: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի շափորչիչներով ենթատեսակը գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

**Տարածվածություն:** Ենթատեսակը տարածված է Նախիջևանում, Հայաստանում և Հյուսիս-Արևմտյան Իրանում՝ մինչև Ուրմիա լիճը: Արևմտյան մուրբիայի սահմանակից շրջանում հանդիպող մուֆլոնի կարգավիճակը պարզ չէ: Ընդհուպ մինչև XX դարի կեսերը մուֆլոնի արեալի կովկասյան և իրանական մասերը փոխկապակցված էին՝ շնորհիվ գ. Արաքսով կենդանիների միգրացիաների, սակայն հետազայում դրանք ընդհատվեցին սահմանային ինքրակառուցվածքի ամրացման հետևանքով:

**Տարածվածությունը Հայաստանում:** Ենթատեսակի արեալը ներառում է Ուրծի (Արարատի մարզ), Վայոց Ձորի (գգ. Աղավնաձոր, Խնձորուտ, Սարտիրոս, Քարձրունի), Բարգուշատի և Զանգեզուրի (Սյունիքի շրջանի Դաստակերտ գյուղից դեպի հարավ) լեռնաշղթաները: Ամենայն հավանականությամբ, մուֆլոնի պոպուլյացիան կազմված է իրարից մեկուսացած երկու խմբավորումներից՝ Ուրծ-Վայոց Ձոր և Սյունիք:

**Ապրելավայրերը:** Լեռնային չոր տափաստաններ գիհու, նշենու և այլ չորասեր բուսականության առկայությամբ (Ուրծի լեռնաշղթա), ենթալպիան և ալպիական մարգագետիններ (Վայոց Ձոր և Սյունիք): Գերադասում են կիրճերի, ժայռաքնների և նման այլ տեղանատերի հետ համակցված բաց բիոտոպերը 1000-3000 մ ծ.մ.բ. բարձրություններում: Հայաստանում մուֆլոնը ապրում է մշտապես՝ չքոչելով ձմռանը, իսկ տարվա տար եղանակներին դիտվում է արուների ներհոսք Նախիջևանի կողմից: Մուֆլոնը պարբերաբար կատարում է ուղղահայաց միգրացիաներ, ձմռանը՝ դեպի նախալեռներ, ամռանը՝ դեպի բարձունքներ:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Զուգավորումը տեղի է ունենում նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի սկիզբը, ձագերը (սովորաբար, զույգ) ծնվում են մայիսի կեսերից մինչև հունիսի սկիզբը: Պահվում է Երևանի Կենդանաբանական այգում: Հեշտությամբ բազմացվում է անազատ պայմաններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Ներկայիս գնահատմամբ, մուֆլոնի բվաքանակը Հայաստանում չի գերազանցում 250-300 առանձնյակները: Պոպուլյացիայի հիմնական մասն ապրում է Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաներում (200 առանձնյակներից ոչ ավել):

**Վտանգման հիմնական գործոնները:** Որսագողությունը, հողերի յուրացումը, լեռնային արդյունաբերության զարգացումը, բիոտոպերի քայլայումը, անասունների արածեցումը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպանվում է «Զանգեզուր» արգելավայրում և «Արեփիկ» ազգային պարկում:

WWF աջակցում է մուֆլոնի արեալի սահմաններում նոր պահպանվող տարածքների ստեղծման և զարգացման աշխատանքներին:

Անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը որսագողության դեմ և խստացնել բնապահպանական վերահսկողությունը:

153. Ազնվացեղ եղջերու, *Cervus elaphus* Linnaeus, 1758

Կարգ՝ ԶՈՒՅԱՍՏՐԱԿԱՎՈՐՆԵՐ, *ARTIODACTILA*

Ընտանիք՝ Եղջերուներ, *Cervidae*

Ենթատեսակ՝ Կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ, *Cervus elaphus maral* Gray, 1840



**Կարգավիճակը:** Տեսակը և ենթատեսակը ընդգրկված չեն ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR D:

**Տարածվածությունը:** Ենթատեսակն հանդիպում է Կովկասի, Փոքր Ասիայի և Հյուսիսային Իրանի լեռնային անտառներում:

**Տարածվածությունը Հայաստանում:** Արդեն 1954 թ.-ից ազնվացեղ եղջերուն դիտարկել է որպես Վրաստանից և Ադրբեյջանից հանրապետության տարածք պատահականորեն մտած, իսկ մինչ այդ տեսակը լայնորեն տարածված է եղել Հյուսիսային, Արևելյան և Հարավային Հայաստանի անտառներում: 2005 թ.-ին Մեղրիի լեռնաշղթայի հարավային լանջին, գ. Ըսնաձորից (նախկին Նյուվադի) վերև հայտնաբերվել են առնվազն 5-10 տարբա վաղենության եղջուրներ: Զհաստաված տվյալներով՝ մի քանի առանձնյակներ հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկում, որոնք այստեղ են անցնում, ամենայն հավանականությամբ, Ադրբեյջանի հյուսիսարևմտյան շրջաններից:

**Ապրելավայրերը:** Լայնատերև լեռնային անտառներ խոտարուսածածկի առատությամբ և ենթապահիական մարզագետիններ: Զնուան իշխում են նախալեռներ կամ դեպի հարավային լանջեր, նույնիսկ զիհու նոսրանտառներ և չոր տափաստաններ (Մեղրիի լեռնաշղթա): Էկոլոգիակիս ազնվացեղ եղջերուն նման է այծյամին, սակայն սննդի հիմնական մասը կազմում է ծառարփայինն կերը:

**Կենսաբանության առանձնահատկությունները:** Չուգավորումը տեղի է ունենում աշնանը (սեպտեմբեր-հոկտեմբեր), հղիության տևողությունը՝ 249-269 օր: Բծավոր ձագերը (սովորաբար, մեկ, երբեմն՝ երկու) ծնվում են մայիս-հունիսին: Հեշտությամբ բազմացվում է անազատ պայմաններում:

**Թվաքանակը և դրա փոփոխման միտումները:** Հաշվառվում է առանձին անհատներով: Տեսակն իր գոյությունը ներկայումս պահպանում է բացառապես Ադրբեյջանից գաղթող առանձնյակների շնորհիվ:

**Վտանգման հիմնական գործոնները:** Որսագողությունը, բիոտոպերի քայրայումը՝ անտառահատումների, անասունների արածեցման և լեռնահանքավորության հետևանքով, գայլերի առատությունը:

**Պահպանության միջոցառումները:** Պահպում է Երևանի Կենդանաբանական այգում: Հարմար անտառային, մասամբ ենթալպիան բիոտոպերը պահպանվում են «Դիլիջան» ազգային պարկում և «Ծիկահող» արգելոցում: Մեղրիի լեռնաշղթայի հարավային լանջերը գտնվում են «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: 2006 թ-ին WWF շրջանակներում կատարվել են դաշտային հետազոտություններ՝ «Դիլիջան» ազգային պարկի և «Ծիկահող» արգելոցի սահմաններում մարալի ռեխնտրողուցման հնարավորության գնահատման ուղղությամբ:

Անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը որսագողության դեմ, ինչպես նաև անասունների արածեցման և լեռնահանքավորության վերահսկողությունը, զարգացնել «Դիլիջան» ազգային պարկի, «Ծիկահող» արգելոցի և հատկապես «Արևիկ» ազգային պարկի նյութատեխնիկական և մասնագիտական բազաները, բարձրացնել բնակչության էկոլոգիական տեղեկացվածությունը և խթանել տեղի բնակչության տնտեսական զարգացումը, որը կարող է նվազեցնել բնակչան ռեսուրսների օգտագործումը: Նպատակահարմար է ազնվացեղ եղջերուի ռեխնտրողուկցիան «Ծիկահող» արգելոցում: